Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի
համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի
N 232-Ա որոշման

ATKINS
Member of the SNC-Lavalin Group



Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար

Կանաչ քաղաքների շրջանակում S3 աջակցություն

ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

2019 թ. Նոյեմբեր

European Bank
for Reconstruction and Development

LDK Consultants

hcl Consultants

Ծանուցում

Սույն փաստաթուղթը և դրա բովանդակությունը նախապատրաստվել և նախատեսված են բացառապես որպես տեղեկություն Գյումրի քաղաքի համար և, Գյումրի քաղաքի համար «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մշակման հետ կապված օգտագործելու համար:

Atkins Limited-ը՝ սույն փաստաթղթի և (կամ) դրա բովանդակության առնչությամբ, կամ դրանից բխող, կամ դրա հետ կապված, ոչ մի այլ կողմի նկատմամբ պատասխանատվություն չի կրում:

Սույն փաստաթուղթն ունի 277 էջ, ներառյալ շապիկի էջը:

Բովանդակություն

Գլուխ		Էջ
Գործադիր ամփոփում		**ix**
1.	**Ներածություն**	**1**
1.1.	Ամփոփ ակնարկ	1
1.2.	ԿՔԳԾ-ի աջակիցները	1
1.3.	ԿՔԳԾ-ի կառուցվածքը	1
2.	**«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի (ԿՔԳԾ) մեթոդաբանությունը**	**3**
2.1.	Մոտեցման ամփոփ ներկայացումը	3
2.2.	Մեթոդաբանություն	7
3.	**Ծանոթացում Գյումրի քաղաքին**	**14**
3.1.	Ընդհանուր տեղեկություններ քաղաքի մասին	15
3.2.	Որոշումների կայացման գործընթացը և կառավարումը	20
4.	**«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի ելակետային ցուցանիշները**	**26**
4.1.	Հիմնական մարտահրավերները	26
4.2.	Գյումրիում իրականացվելիք նոր գործողությունների գերակա ուղղությունները	54
5.	**«Կանաչ քաղաքի» տեսլականը, ռազմավարական նպատակները և գործողությունները**	**59**
5.1.	ԿՔԳԾ-ի շրջանակը	59
5.2.	«Կանաչ քաղաքի» գործողությունները	66
6.	**Մոնիթորինգ**	**185**
6.1.	Մոնիթորինգ, վավերացում և հաշվետվության գործընթաց	185
6.2.	Շահագրգիռ կողմերի մասնակցությունը	192
7.	**ԿՔԳԾ ծախսերն ու ֆինանսավորման տարբերակները**	**194**
8.	**Հաջորդ քայլերը**	**222**
8.1.	ԿՔԳԾ-ն և նրա կարգավիճակը	222
8.2.	ԿՔԳԾ-ի իրականացման պլանավորում	222
8.3.	ԿՔԳԾ-ի հաշվետվություն	222
Հավելվածներ		
Հավելված Ա. Լրացուցիչ գործողություններ		**226**
Հավելված Բ. ԿՔԳԾ-ի շահառուներ		**257**

Աղյուսակներ

Գծապատկեր 2.1. Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ պաշտոնական հանդիպումների և աշխատաժողովների ցանկ	5
Աղյուսակ 2.2. Արձագանքի ցուցանիշների հենանիշային ցուցիչներ և չափանիշներ	9
Աղյուսակ 3.1. Գյումրու որոշ սոցիալ-տնտեսական առանձնահատկություններ	19
Աղյուսակ 3.2. Առկա գործողությունների ծրագրեր	24
Աղյուսակ 4.1. Շահագրգիռ կողմերի արձագանքը բնապահպանական թեմատիկ ոլորտների առաջնահերթությունների վերաբերյալ	27
Աղյուսակ 4.2. Շահագրգիռ կողմերի արձագանքը ոլորտների առաջնահերթությունների վերաբերյալ	28
Աղյուսակ 4.3. Ըստ բնապահպանական թեմայի և բնագավառի որոշված հիմնական մարտահրավերների ամփոփ ներկայացում	29
Աղյուսակ 4.4. Օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում, վիճակի ցուցանիշներ	31
Աղյուսակ 4.5. Շահագրգիռ կողմերի արձագանքն օդի որակին առնչվող մարտահրավերներին	31
Աղյուսակ 4.6. Ջրային ռեսուրսներ, վիճակի ցուցանիշներ	32

Աղյուսակ 4.7. Շահագրգիռ կողմերի արձագանքը ջրային ռեսուրսներին 33
Աղյուսակ 4.8. Էկոհամակարգեր, կենսաբազմազանություն և կանաչ տարածքներ, վիճակի ցուցանիշներ 34
Աղյուսակ 4.9. Շահագրգիռ կողմերի արձագանքը կանաչ տարածքներին, կենսաբազմազանությանը և էկոհամակարգերին 34
Աղյուսակ 4.10. Դիմակայություն և հարմարվողականություն բնական աղետների ռիսկին, վիճակի ցուցանիշներ 35
Աղյուսակ 4.11. Շահագրգիռ կողմերի արձագանքը բնական աղետների ռիսկերի դիմակայությանը և հարմարվողականությանը 35
Աղյուսակ 4.12. Վիճակի ցուցանիշներ 35
Աղյուսակ 4,13. Շահագրգիռ կողմերի արձագանքը հողերի վերաբերյալ 36
Աղյուսակ 4.14. Վիճակի ցուցանիշների միջինացված հենանիշների դրոշակավորում՝ ըստ տեսակի և թեմայի (աղբյուրի) 36
Աղյուսակ 4.15. Տրանսպորտի ճնշման ցուցանիշներ 37
Աղյուսակ 4.16. Տրանսպորտի քաղաքականության շրջանակի արձագանքի ցուցանիշներ 38
Աղյուսակ 4.17. Շահագրգիռ կողմերի արձագանքը տրանսպորտին 39
Աղյուսակ 4.18. Էներգամատակարարման ճնշման ցուցանիշներ 39
Աղյուսակ 4.19. Էներգասպառումը շենքերում, ճնշման ցուցանիշներ 40
Աղյուսակ 4.20. էներգիայի օգտագործում փողոցային լուսավորության նպատակով, ճնշման ցուցանիշներ 40
Աղյուսակ 4.21. Էներգամատակարարման, էներգաօգտագործման արդյունավետությունը շենքերում, արտաքին լուսավորություն, արձագանքի ցուցանիշներ 41
Աղյուսակ 4.22. Շահագրգիռ կողմերի արձագանքը շինարարությանը, էներգասպառմանը և լուսավորությանը 43
Աղյուսակ 4.23. Արդյունաբերության վրա գործադրվող ճնշման ցուցանիշներ* 45
Աղյուսակ 4.24. Արձագանքի ցուցանիշներն արդյունաբերության քաղաքականության շրջանակի մասով 46
Աղյուսակ 4.25. Թափոնների ճնշման ցուցանիշներ 48
Աղյուսակ 4.26. Թափոնների քաղաքականության շրջանակի արձագանքի ցուցանիշներ 49
Աղյուսակ 4.27. Շահագրգիռ կողմերի արձագանքը կոշտ թափոնների 49
Աղյուսակ 4.28. Ջրի ճնշման ցուցանիշներ 50
Աղյուսակ 4.29. Շահագրգիռ կողմերի արձագանքը ջրերին 51
Աղյուսակ 4.30. Ջրային քաղաքականության շրջանակին առնչվող արձագանքի ցուցանիշներ 52
Աղյուսակ 4.31. Կանաչ տարածքների ճնշման և արձագանքի ցուցանիշներ 53
Աղյուսակ 4.32. Շահագրգիռ կողմերի արձագանքը հողօգտագործմանը 53
Աղյուսակ 4.33. Գործողությունների առաջնահերթ ոլորտներ 55
Աղյուսակ 5.1. Թեմայի վրա հիմնված տեսլականներ, ռազմավարական նպատակներ, գործառնական նպատակներ և թիրախներ 61
Աղյուսակ 5.2. Գործողությունների դասակարգում 67
Աղյուսակ 5.3. Տրանսպորտային ոլորտի գործողություններ 72
Աղյուսակ 5.4. Շինարարությանը, էներգամատակարարմանը և լուսավորությանն առնչվող գործողություններ 93
Աղյուսակ 5.5. Արդյունաբերությանն առնչվող գործողություններ 117
Աղյուսակ 5.6. Կոշտ թափոններին առնչվող գործողություններ 124
Աղյուսակ 5.7. Ջրին առնչվող գործողություններ 140
Աղյուսակ 5.8. Հողօգտագործմանն առնչվող գործողություններ 160
Աղյուսակ 5.9. Միջոլորտային գործողություններ 175
Աղյուսակ 6.1. ՄՀՎ-ի համար պատասխանատու գերատեսչություններն ըստ ԿՔԳԾ-ի ոլորտների 187
Աղյուսակ 6.2. ԿՔԳԾ-ի պայմանական մոնիթորինգի սխեման, օրինակ՝ A_TR_15 գործողության համար 188
Աղյուսակ 6.3. ՄՀՎ գործընթացի տեղական շահագրգիռ կողմերը Տեղական շահագրգիռ կողմերն, ով կամ հաշվետու են, պատասխանատու են, կամ ում

հետ խորհրդակցվել է և շարունակեն խորհրդակցել ՄՀՎ գործընթացի վերաբերյալ: 193

Աղյուսակ 7.1. Կլիմայի փոփոխության հարմարվողականության մոտավոր ծախսերը Գյումրիի համար 199

Աղյուսակ 7.2. ԿՔԳԾ-ի առաջնային գործողությունները, ծախսերն ըստ ոլորտների (եվրո, ՀՀ դրամ) 200

Աղյուսակ 7.3. ԿՔԳԾ-ի գործողությունների առաջնահերթությունները. ծախսերը (եվրո և ՀՀ դրամ), ֆինանսավորման տարբերակները 201

Պատկերներ

Գծապատկեր 2.1. «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի իրականացման շրջանակի ընդհանուր բնութագիրն ու պարտականությունները 3

Գծապատկեր 2.2. ԿՔԳԾ-ի գործընթացը և առաջադրանքները 6

Գծապատկեր 2.3. Վիճակ, ճնշում, արձագանք մոդելը 8

Գծապատկեր 2.4. «Լուսացույցի» մեթոդաբանությունը տեխնիկական առաջնահերթությունների սահմանման համար 10

Գծապատկեր 2.5. ԿՔԳԾ-ի շրջանակը 12

Գծապատկեր 3.1. Գյումրիի աշխարհագրական դիրքը 16

Գծապատկեր 3.2. Գյումրիի քաղաքային քարտեզը 16

Գծապատկեր 3.3. Գյումրիում շենքերի ճակատների ընտրված օրինակներ 17

Գծապատկեր 3.4. Հայաստանի Հանրապետությունում և Գյումրիում տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականությունների, ծրագրերի, ռազմավարությունների, իրավական ակտերի և ենթաօրենսդրական ակտերի միջև փոխկապակցվածության հակիրճ նկարագիր 21

Գծապատկեր 3.5. Տեղական ինքնակառավարման մարմինների՝ ծրագրերի հաստատման գործընթաց (հիմնված Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին օրենքի և Գյումրու ավագանու կանոնակարգերի վրա) 22

Գծապատկեր 5.1. Տրանսպորտային ոլորտի գործողությունների ծրագիր 77

Գծապատկեր 5.2. Շինարարության, էներգամատակարարման և լուսավորության ոլորտների գործողությունների ծրագիր 96

Գծանկար 5.3. Արդյունաբերական ոլորտի գործողությունների ծրագիր 119

Գծապատկեր 5.4. Կոշտ թափոններին առնչվող ծրագիր 127

Գծապատկեր 5.5. Ջրին առնչվող գործողությունների ծրագիր 144

Գծապատկեր 5.6. Հողօգտագործման գործողությունների ծրագիր 163

Գծապատկեր 5.7. Միջոլորտային գործողությունների ծրագիր 177

Գծապատկեր 6.1. ՄՀՎ-ի գործընթացի գլխավոր մասնակիցները և այդ գործընթացների իրականացման կառավարման մեխանիզմները 186

Գծապատկեր 6.2. Գյումրիի համար առկա տվյալների բազայի ցուցանիշի էկրանի նկար 191

Գծապատկեր 6.3. Զարգացման մոնիթորինգի պլանի (ԶՄՊ) հաշվետվության մոդել 191

Գծապատկեր 6.4. Ազդեցության մոնիթորինգի պլանի (ԱՄՊ) հաշվետվության ներկայացման մոդել 191

Գծապատկեր 8.1. ԿՔԳԾ-ի Քայլ 3-ի և 4-ի գործողությունների ծրագիր 224

Հապավումների ցանկ

Հապավում	Նկարագրություն
ՄԱԿԱԶԿ	ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (UNIDO)
ԱՀԾ	Արևելյան հարևանության ծրագիր (Eastern Neighbourhood Programme - EaP)
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԾ	Ազդեցության մշտադիտարկման ծրագիր
ԱՄՊ	Առաջընթացի մոնիթորինգի պլան
ԱՆԳԾ	Արտահոսքի նվազեցման գործողությունների ծրագիր
ԱՎՆՎԳՀ	Աղետների վտանգների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամ
ԱՌՆ	Աղետների ռիսկերի նվազեցում (Disaster Risk Reduction-DRR)
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՏՀ	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (GIS)
ԱՖ	Անաերոբ ֆերմենտացիա
ԲԲՇ	Բազմաբնակարանային շենք
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ԳՂ/Տ	Գլխավոր դիրեկտորատ/տնօրինություն
ԳԾ	Գործառնական ծախս (OPEX)
ԵԲԳ	Եվրոպական բնապահպանական գործակալություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ՄԱԿ ԵՏՀ	ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE)
ԶՖԳ	Զարգացման ֆրանսիական գործակալություն (Agence Française de Développement-AFD)

Հապավում	Նկարագրություն
ԷԱ	Էներգաարդյունավետություն
ԷԽՀ	Էներգախնայողության աջակցման հիմնադրամ
ԷԿՊ	Էներգետիկ կատարողականի պայմանագիր
ԷՍԿՈ/ԷԾՄԸ	Էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություն (Energy Service Company -ESCO)
ԸԿՄ	Ընդամենը կախված մասնիկներ (կախված մասնիկների ընդհանուր քանակը)
ԹՎԿ	Թափոնների վերամշակման կայան
ԹՓԷ	Թափոնների փոխակերպումն էներգիայի (WtE)
ԻԺՈւՏՏ	Իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվություն
ԻԻ	Իրերի ինտերնետ
ԼԱԴ	Լուսարձակող դիոդ (LED)
Կգ	Կիլոգրամ
ՄԱԿ ԿԳՄԿ	ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (UNESCO)
ԿԴԿ	Կարմիր, Դեղին, Կանաչ
ԿԷԳԾ	Կայուն էներգետիկայի գործողությունների ծրագիր
ԿԷԿԳԾ	Կայուն էներգետիկայի և կլիմայի գործողությունների ծրագիր
ԿԿԹ	Կոշտ կենցաղային թափոններ
ԿԿՀ	Կանաչ կլիմայական հիմնադրամ
Կմ^2	Քառակուսի կիլոմետր
ԿՄԱ	Կեղտաջրերի մաքրման աշխատանքներ
ԿՄԿ	Կեղտաջրերի մաքրման կայան
ԿՇՓ	Կառուցել, շահագործել, փոխանցել (Build Operate Transfer - BOT)
ԿՋ	Կեղտաջրեր/կոյուղաջրեր

Հապավում	Նկարագրություն
ԿՏՖԳ	Կանաչ տնտեսության ֆինանսավորման գործիք (GEFF)
ԿՔԳ	Կանաչ քաղաքի գործողություն
ԿՔԳԾ	Կանաչ քաղաք գործողությունների ծրագիր
ԿՔԻԿ	Կանաչ քաղաքի իրազեկման կենտրոն
ԿՔՇԾ	Կայուն քաղաքային շարժունակության ծրագիր
ԼԶՀ	Լրիվ դրույքով զբաղվածության համարժեք (FTE-Full time equivalent)
ՀԱԷԿ	Հայաստանի ատոմային էլեկտրակայան
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԴ	Հայկական դրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՆԳ	Հեղուկացված նավթային գազ
ՀՆՀ	Հարևանության ներդրումային հարթակ
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության հիմնադրամ (R2E2)
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր (UNDP)
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն (UN)
ՄԶՍ	Մշտադիտարկում, զեկուցում, ստուգում
ՄԿՄ	Մեխանիկական կենսաբանական մշակում
ՄՎտժ	Մեգավատ ժամ
ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն

Հապավում	Նկարագրություն
ՆՎՄ	Նյութերի վերականգնման միջոց/գործիք
ՇՄՄՏԿ	Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն
ՉԶ	Չհաշվառված ջուր
ՊՄԳ	Պետություն, մասնավոր գործընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՋԳ	Ջերմոցային գազեր
ՌԱՄԱ	Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն
ՍԲԳ	Սեղմված բնական գազ
ՍԳԻ	Սպառողական գնային ինդեքս
ՎԲՀՀ	Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ (WWF)
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՎԷ	Վերականգնվող էներգիա
ՎԷԱ	Վերականգնվող էներգիայի աղբյուր
ՎԷՀ	Վերականգնվող էներգիայի համակարգ(եր)
ՎԹ	Վտանգավոր թափոններ
ԿՏԲԿ	Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն
ՏԲՆՄԽ	Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդ (ICLEA)
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀՀ	Տեղորոշման համընդհանուր համակարգ (GPS)
ՏՈՒԶ	Տարանցիկ ուղղվածությամբ զարգացում
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա

Հապավում	Նկարագրություն
ՑԱԳ	Ցածր արտանետման գոտի
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՔՏՄ	Քաղաքային տեղեկատվական մոդել (City Information Model - CIM)
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
CAPEX	Կապիտալ ծախսեր
CO_2	Ածխածնի երկօքսիդ, ածխաթթու գազ
EUR	Եվրո
NH_4	Ամոնիում
USD	ԱՄՆ դոլար

Գործադիր ամփոփագիր

Ներածություն

ԿՔԳԾ-ն ռազմավարական փաստաթուղթ է, որը ներկայացնում է Գյումրու՝ 2035 թվականի բնապահպանական տեսլականը: Փաստաթղթի նպատակն է բարելավել քաղաքի բնապահպանական կատարողականը ծախսարդյունավետ և ֆինանսապես կայուն եղանակով՝ միաժամանակ փորձելով առավելագույնի հասցնել լրացուցիչ տնտեսական և սոցիալական օգուտները: Տեսլականը հետևյալն է. *«Առողջացնել Գյումրի քաղաքի շրջակա միջավայրը և այն դարձնել առավել հարմար քաղաքացիների բնակության համար՝ օդի որակի, ջրային ռեսուրսների և հողօգտագործման բարելավման, էկոհամակարգերի պահպանման և կլիմայական փոփոխությունների հետևանքների մեղմման և հարմարողականության միջոցով: Պետք է նաև ստեղծել տնտեսական և տեխնոլոգիական աճի հնարավորություն, ինչի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, և կբարելավվեն Գյումրու քաղաքացիների կյանքի պայմանները՝ ապահովելով «կանաչ» տնտեսության, կայունության և դիմակայության սկզբունքները: Վերջնանպատակն է քաղաքի շրջակա միջավայրը ապահով, մաքուր և կանաչ դարձնելը, ինչպես նաև նորարարության խթանումը՝ Գյումրու ողջ համայնքի բարեկեցությունն ու բարօրությունն ապահովելու համար»:*

ԿՔԳԾ-ն մշակվել է տեղական և միջազգային փորձագետների թիմի կողմից, Գյումրու քաղաքապետարանի հետ սերտ համագործակցությամբ և պաշտոնապես ընդունվել Ավագանու կողմից: Այն մշակվել է Գյումրիին հարմարեցված միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության կիրառմամբ, ինչը պահանջում էր ապացուցահեն և մասնակցային մոտեցում՝ լուծում պահանջող բնապահպանական մարտահրավերները բացահայտելու և միջամտությունների համար ճանապարհային քարտեզ մշակելու նպատակով՝ բաղկացած տեսլականներից, ռազմավարական նպատակներից, թիրախներից և գործողություններից:

Գյումրու առջև ծառացած բնապահպանական մարտահրավերները

ԿՔԳԾ-ում նկարագրված մարտահրավերներն ի հայտ են եկել տեխնիկական գնահատման, շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվության և քաղաքական առաջնահերթությունների սահմանման գործընթացի կիրառմամբ: Գործընթացը հագեցած էր ցուցանիշների և ստուգաչափանիշների լայն շրջանակի և կատարողականի համեմատական վերանայման տեղեկատվությամբ: Դիտարկվել են ցուցանիշների երեք խմբեր՝ Վիճակ, Ճնշում և Արձագանք: Այս մոդելը հնարավորություն է տալիս գնահատելու մարդու գործունեության (Ճնշման/ներազդման ցուցանիշներ) բացասական ազդեցությունները բնապահպանական ակտիվների վրա (Վիճակի ցուցանիշներ) և վեր հանելու դրանց առնչվող բացերը քաղաքականության շրջանակում (Արձագանքի ցուցանիշներ): Տվյալները ներկայացված են Ցուցանիշների շտեմարանում, իսկ Վիճակի ու Ճնշման ցուցանիշների համար սահմանված մարտահրավերներն ամփոփված են ստորև տրվող աղյուսակներում: Արձագանքի ցուցանիշները քննարկվում են ԿՔԳԾ-ի հիմնական մասում:

Կանաչ քաղաքի մարտահրավերներն ըստ բնապահպանական թեմայի («Վիճակ»)

Բնապահպանական թեմա/ոլորտ	Մարտահրավերներ
Օդի որակ և ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների նվազեցում	Փոշով աղտոտվածության բարձր մակարդակ, ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիայի արդյունքում առաջացող վտանգ, CO_2-ի բարձր մակարդակ՝ յուրաքանչյուր շնչի հաշվով և ածխածնի արտանետումների քանակը ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր միավորի համար,

	օդի որակին առնչվող սահմանափակ տվյալներ և մշտադիտարկում
Ջրային ռեսուրսներ	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիան գետերում և լճերում, մասնավորապես Ախուրյան գետում, մակերեսային ջրի որակի անբավարար մշտադիտարկումը
Հողեր	Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թիվը, հողերին առնչվող տվյալների սահմանափակ հասանելիությունն ու մշտադիտարկման բացակայությունը
Կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	Կանաչ տարածքների սահմանափակություն/ կանաչ տարածքների և բնակչության թվաքանակի ցածր հարաբերակցություն, կենսաբազմազանությանն առնչվող տվյալների մշտադիտարկման բացակայություն
Հարմարվողականություն և դիմակայություն բնական աղետներին	Բնական աղետների՝ ջրհեղեղների, երաշտի, երկրաշարժերի հետևանքով հասցված գնահատված տնտեսական վնասը որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի բարձր տոկոսը, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների բարձր տոկոսը, բնական աղետների մասին իրազեկվածության և դրանց հանդեպ պատրաստվածության ցածր մակարդակ

Կանաչ քաղաքի մարտահրավերներն ըստ ոլորտի ('Ճնշու մ')

Ոլորտ	Մարտահրավերներ
Ջուր	Ջրի սպառման բարձր մակարդակ յուրաքանչյուր շնչի և քաղաքի ՀՆԱ-ի յուրաքանչյուր միավորի հաշվով, կեղտաջրերի (ԿՋ) հեռացման համակարգի անկատարություն և կեղտաջրերի մաքրման անբավարար կարողություն, կենցաղային, արդյունաբերական և առևտրային ԿՋ-ի տոկոսը և էներգաարտադրությանն առնչվող գործողությունների հետևանքով գոյացող ԿՋ-երը, որոնք մաքրվում են ըստ կիրառելի ազգային չափանիշների, չհաշվառված ջրի չափազանց բարձր մակարդակը ջրամատակարարման համակարգում, ոչ արդյունավետ ջրօգտագործում, տվյալների սահմանափակ հասանելիություն, մշտադիտարկում
Շինարարություն, էներգասպառում և լուսավորություն	Էլեկտրականության և ջերմային էներգիայի սպառման բարձր մակարդակները բնակելի և ոչ բնակելի շենքերում, փողոցային լուսավորության՝ ճանապարհի յուրաքանչյուր կիլոմետրի համար օգտագործվող էլեկտրականության բարձր մակարդակ, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի մասին հանրային իրազեկվածության բացակայություն, «Կանաչ» շինարարության գործելակերպի և հավաստագրման բացակայություն, սահմանափակ ներդրումներ էներգաարդյու-նավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում
Կոշտ թափոններ	Քաղաքային կոշտ թափոնների (ՔԿԹ) այն տոկոսը, որը հեռացվում է դեպի բաց աղբավայրեր, վերահսկվող աղբավայրեր, ջրային տարածքներ կամ այրվում է (ՔԿԹ-ի այն տոկոսը, որը հեռացվում է դեպի ժամկետանց աղբավայրեր),

Ոլորտ	Մարտահրավերներ
	ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր թափոնների (ՎԹ) այն տոկոսը, որը հեռացվել և տեղափոխվել է ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր, կոմպոստի վերածման նպատակով հավաքված ՔԿԹ-ի տոկոսը, ՔԿԹ-ի և այն արդյունաբերական թափոնների միջև հարաբերակցությունը, որոնք տեսակավորվում ու վերամշակվում են, գործող աղբավայրերի շահագործման սահմանափակ ժամկետը
Տրանսպորտ	Ավտոմեքենաների շարժակազմի (ընդհանուր և ըստ տրանսպորտային միջոցի տեսակի) բարձր միջին տարիքը, սարքինության վիճակը և օգտագործման վազքը, թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաների վառելիքի նկատմամբ անբավարար չափանիշները (Եվրո-4), մասնավոր ավտոմեքենաների օգտագործման բարձր և աճող տարածվածությունը, Ճանապարհի՝ բացառապես հանրային և անշարժիչ տրանսպորտի համար նախատեսված կարճ հատվածներ՝ արտահայտված կիլոմետրերով, հանրային տրանսպորտի վատ ենթակառուցվածք ու ծառայություններ և տրանսպորտային ոլորտի անարդյունավետ կառավարում
Արդյունաբերություն	Ցածր նյութական արդյունավետություն, թափոնների և աղտոտման բարձր մակարդակ, արդյունաբերական ռեսուրսների արդյունավետություն և ավելի մաքուր արտադրություն խրախուսող կամ պարտադրող քաղաքականության (կարգավորման գործիքների), արդյունաբերական ոլորտի և

Ոլորտ	Մարտահրավերներ
	քաղաքի միջև երկխոսության ու տեղեկատվական հոսքի բացակայություն
Հողօգտագործում	Հողօգտագործման և քաղաքաշինության միասնական պլանավորման բացակայություն, պլանավորման ուղեցույցի, գործիքների և կարողության բացակայություն, հողօգտագործմանն առնչվող տվյալների հավաքագրման սահմանափակ գործընթաց կամ մշտադիտարկում, ուրբանիզացիայի հանգեցնող անկանոն հողօգտագործում և կառուցապատում, կանաչ գոտիների սահմանափակություն և «կանաչ» ենթակառուցվածքի անջատվածություն, տնկարկների ոչնչացում անօրինական կառուցապատման և կառուցվող տարածքների ընդարձակման պատճառով, կառուցապատված տարածքների միջին տարեկան աճի տոկոս, քաղաքաշինության ցածր տոկոս քաղաքի ոչ թե կանաչ, այլ առկա տարածքում

Բնապահպանական միտումները

Հիմնական մարտահրավերներն օգտագործվել են որպես մեկնակետ՝ յուրաքանչյուր բնապահպանական թեմայի և քաղաքային ոլորտի համար տեսլական մշակելու նպատակով, առանցքային շահագրգիռ կողմերի հետ սերտ խորհրդատվությամբ: Տեսլականներն ամփոփում են, թե Գյումրին ինչ ձեռքբերումների է ձգտում հասնել ԿՔԳԾ-ի միջոցով: Նույն մոտեցումն է կիրառվել ռազմավարական նպատակների մշակման ժամանակ, մեկ նպատակ՝ յուրաքանչյուր բնապահպանական թեմատիկ ոլորտի, համապատասխան գործառնական նպատակների և թիրախների համար: Դրանք թվարկված են ստորև:

Տեսլականների սահմանումներն ըստ բնապահպանական թեմայի

Օդի որակ և ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների նվազեցում
«Գյումրին կունենա մաքուր օդ ամբողջ քաղաքում և կնպաստի բոլոր ոլորտներում ավելի ցածր ածխածնային լուծումների ընդունմանը՝ ՋԳ արտանետումները նվազեցնելու համար: Քաղաքի տվյալների հավաքը, վերլուծությունը և կառավարումը կլինեն ավելի որակյալ և ճշգրիտ»:

Ջրային ռեսուրս. *«Գյումրին կունենա մաքուր ջրամատակարարում, կոյուղաջրերի և հեղեղաջրերի հավաքման արդյունավետ համակարգ, որոնք հասանելի են բոլորին և համապատասխանում են ԵՄ չափանիշներին: Կբարելավվի նաև կենցաղային և ոչ կենցաղային ջրօգտագործողների վարքագիծը»:*

Հողեր. *«Գյումրիում հողերի որակը կվերականգնվի, կպահպանվի և կբարելավվի՝ մարդկանց և շրջակա միջավայրին սատարելու համար»:*

Կանաչ տարածք, կենսաբազմազանություն, էկոհամակարգեր. *«Գյումրին կդառնա Հայաստանի կանաչ մայրաքաղաքը, իսկ նրա՝ միջազգային չափանիշներին համապատասխան կանաչ տարածքները կնպաստեն կենսաբազմազանության և էկոհամակարգերի բարելավմանը: Կանաչ ենթակառուցվածքը կօգտագործվի ինչպես հարմարավետության, այնպես էլ կենսագործունեության ապահովման համար»:*

Դիմակայունություն և հարմարվողականություն տարերային աղետների ռիսկերին. *«Գյումրին կբարձրացնի դիմակայունությունը եղանակային ծայրահեղ պայմանների և այլ տարերային աղետների նկատմամբ (ինչպես երկրաշարժը) և դրանով իսկ ապահովելով կայուն զարգացման օգուտները»:*

Տեսլականների սահմանումներն ըստ ոլորտների

Տրանսպորտ. *«Գյումրին կունենա տրանսպորտային ոլորտ, որը կնպաստի հասարակական և առանց շարժիչ տրանսպորտի օգտագործմանը, կբարելավի ենթակառուցվածքները, կկիրառի նոր տեխնոլոգիա և արդյունավետ կօգտագործի տրանսպորտային տվյալները»:*

Շենքեր, էներգիա և լուսավորություն. *«Գյումրին նվազագույնի կհասցնի իր էներգետիկ և ածխածնային հետքը, կկառավարի էներգիայի պահանջարկը և կնվազեցնի փողոցային լուսավորության և հանրային ու բնակելի շենքերի համար էներգիայի վճարումները՝ խրախուսելով էներգաարդյունավետ և վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների կիրառումը, ծրագրելով և կառավարելով քաղաքային էներգասպառումը, խթանելով ցածր ածխածնային պետական գնումները և բարձրացնելով բոլոր խաղացողների տեղեկացվածության և ներգրավվածության մակարդակը մաքուր, խելացի և նորարարական էներգետիկ լուծումների վերաբերյալ»:*

Արդյունաբերություն. *«Գյումրին կվերականգնի իր արդյունաբերական ոլորտը՝ խթանելու տնտեսական աճը և ստեղծելու մաքուր արտադրության շեշտադրումով աշխատատեղեր (ջուր, օդ, հող), շեշտը դնելով ռեսուրսների արդյունավետության, արտադրության նորարարական և գիտակրթական ոլորտների վրա, թեթև արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիայի (ՏՏ), նորարարության և ծառայությունների մեջ ներդրողների ներգրավման և առկա լավագույն տեխնոլոգիաների կիրառման համար: Գյումրու քաղաքապետարանը կստեղծի տեղական կանաչ բիզնեսի խթանման, ներկայացման և ցուցադրման հարթակ»:*

Կոշտ թափոններ. *«Գյումրին սպասարկվելու է թափոնների կառավարման ժամանակակից ինտեգրված համակարգով, որը կիրառում է միջազգային չափանիշներ, և որը Գյումրիին ուղղորդում է դեպի շրջանաձև /ցիրկուլյար/ տնտեսություն, որտեղ բոլոր վերամշակելի թափոնները տեսակավորվում, հավաքվում և վերամշակվում են»:*

Ջուր. ըստ «ջրային ռեսուրսներ» բնապահպանական թեմայի:

Հողօգտագործում. *«Գյումրիում հողօգտագործման զարգացումը կունենա լիովին ամբողջական և համապարփակ մոտեցում՝ ապահովելով հավասարակշռություն քաղաքի զարգացման, վերակառուցման, կանաչ տարածքների պաշտպանության և բարելավման միջև»:*

Նպատակներ և թիրախներ

Մեկ ռազմավարական՝ բարձր մակարդակի և երկարաժամկետ բնապահպանական նպատակ, որին անհրաժեշտ է հասնել ԿՔԳԾ-ի տեսլականն իրականացնելու համար, սահմանվել է 2030-2035թթ. ժամանակահատվածում բնապահպանական թեմատիկ յուրաքանչյուր ոլորտի համար: Դրանք թվարկված են հաջորդ աղյուսակում՝ օժանդակ գործառնական նպատակների հետ մեկտեղ: Միջնաժամկետ ու երկարաժամկետ նպատակները ձևակերպվել են, և կօգտագործվեն՝ ռազմավարական նպատակներին հասնելու ուղղությամբ առաջընթացը մշտադիտարկելու համար: Նպատակներն ու թիրախները , որոնց մասին մանրամասն նշվում է սույն ԿՔԳԾ-ում,

անպայման հավակնոտ են, բայց դրանց պատշաճ լինելը և դրանցից յուրաքանչյուրին հասնելու իրագործելիությունը պարզվել և վավերացվել են ընթացիկ կատարողականի, ստուգաչափանիշների, այլ ոլորտներում / երկրներում փորձի վերանայման և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության միջոցով:

ԿՔԳԾ-ի նպատակները

Բնապահպանական թեմա	Ռազմավարական նպատակներ	Գործառնական նպատակներ	Թիրախներ		
			Ցուցանիշ	Միջնաժամկետ թիրախ (2025)	Երկարաժամկետ թիրախ (2030)
Օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումներ	SO_AQGHG. Մթնոլորտ արտանետվող փոշու և այլ աղտոտիչների ծավալների կրճատում (տեղական և համաշխարհային)	• Ավելացնել հետիոտնային, հեծանվային և հանրային տրանսպորտի օգտագործման չափաբաժինը • բարելավել տրանսպորտային միջոցների շարժակազմի էներգաարդյունավետությունը • նվազեցնել էներգիայի արտադրությունից առաջացող և օդն աղտոտող արտանետումները և դրանցում ածխածնի քանակությունը • նվազեցնել բոլոր շենքերի և փողոցային լուսավորության համար սպառվող էներգիան • խրախուսել կանաչ զնումների և պայմանագրերի կնքման գործելաոճը • բարելավել օդի որակին առնչվող տվյալների հավաքագրման և մշտադիտարկման ընթացակարգերի շրջանակն ու որակը	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան	0.15 մկգ/մ^3	10 μg/m^3-PM2.5 20 μg/m^3-PM10
			CO_2-ի տարեկան արտանետումները ՀՆԱ-ի միավորի հաշվով	20% նվազեցում՝ համեմատած 2014 թ. մակարդակների հետ	30% նվազեցում՝ համեմատած 2014 թ. մակարդակների հետ
			CO_2-ի՝ մեկ շնչին համարժեք տարեկան արտանետումները	3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով	2.5 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով
			Էներգասպառումն արդյունաբերության ոլորտում՝ ըստ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի	5% նվազեցում՝ համեմատած 2015 թ. մակարդակների հետ	10% նվազեցում՝ համեմատած 2015 թ. մակարդակների հետ
			Մասնավոր տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ամենօրյա երթևեկության մեջ	80%	50%
			Անշարժիչ տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ընդհանուր տեղաշարժի մեջ	2%	5%
			Էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային	60%	70%

			տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժինը		
			Էլեկտրականությամբ աշխատող քաղաքային տրանսպորտային միջոցների մասնաբաժինը	20%	50%
			Էներգասպառում շենքերում	23 կՎտժ	21 կՎտժ
			Էներգասպառում փողոցային լուսավորության համար	25,000 կՎտժ/կմ	20,000 կՎտժ/կմ
			Օդն աղտոտող աղբյուրների հայտնաբերված և մշտադիտարկվող մասնաբաժինը	30%	100%
			Տվյալների տարեկան հավաքագրման ենթակա տրանսպորտային միջոցները	100%	100%
Ջրային ռեսուրսներ	SO_WR՝ Բարելավված ջրամատակարարում, ջրի որակ (այդ թվում՝ մակերևութային) և ջրօգտագործման արդյունավետություն, չհաշվառված ջրի (ՉՀՋ) ընդհանուր կորստի նվազեցում	• Մշակել և խթանել ջրի սպառումը կառավարող նախաձեռնություններ • բարելավել ջրամատակարարման համակարգը և նվազեցնել ՉՀՋ-ի ընդհանուր կորուստը • բարելավել կեղտաջրերի (այդ թվում՝ կոյուղաջրերի), անձրևաջրերի, գրունտային ջրերի և քաղաքային կոշտ թափոնների նկատմամբ վերահսկողության, դրանց հեռացման և մաքրման կարողությունները • բարելավել քաղցրահամ ջրի աղբյուրների պահպանությունը			
			Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիան գետերում և լճերում	0.4-1.2 մգ/լ	<0.4 մգ/լ
			Արդյունաբերական ջրի սպառումը որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման տոկոս	25%	17%
			Ջրամատակարարման ցանցի ծածկույթը և արդյունավետությունը բարելավվում են պլանների ու ներդրումների միջոցով	75%	100%
			Անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի տարեկան քանակը՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով	50% նվազեցում՝ համեմատած 2017 թ. մակարդակների հետ	20% նվազեցում՝ համեմատած 2017 թ. մակարդակների հետ

		• բարելավել թափոններին և մակերևութային ջրերին առնչվող տվյալների հասանելիությունը, որակը և մշտադիտարկումը	Կենցաղային և առևտրային ԿՋ-ի այն տոկոսը, որը մաքրվում է համաձայն կիրառվող ազգային չափանիշների	60%	60%
			Չհաշվառված ջուր	25-35%	<25%
			Ջրի սպառումը քաղաքի ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով	0.4 մ³/տարի	<0.2 մ³/տարի
			Ջրի խնայողությունն ու կրկնակի օգտագործումը խրախուսվում են իրազեկման արշավների միջոցով	Հաղորդակցման մշակված ռազմավարություն և իրազեկման արշավ	Հաղորդակցման իրականացված ռազմավարություն և իրազեկման արշավ
			Ջրային ռեսուրսները, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվությունը, մինչև 2021թ. կներառվեն Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ)	50%	100%
			Կենցաղային նպատակներով ջրի սպառումը՝ մեկ շնչի հաշվով	120 լիտր ամեն օր՝ մեկ շնչի հաշվով	115 լիտր ամեն օր՝ մեկ շնչի հաշվով
Կանաչ տարածքներ, կենսաբազմա-զանություն և էկոհամակարգեր	SO_GSBIO՝ Ողջ քաղաքի տարածքում պաշտպանված, պահպանված, դիվերսիֆիկացված և բարելավված բնական ակտիվներ, ներառյալ կանաչ և կապույտ ենթակառուցվածքները	• Բարելավել կենսաբազմազանությանն առնչվող տվյալների հավաքագրման և մշտադիտարկման ընթացակարգերի շրջանակն ու որակը • ընդլայնել կանաչ տարածքներն ու ենթակառուցվածքները,	Բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը մեկ բնակչի հաշվով	6 մ²/բնակիչ	10.5 մ²/բնակիչ
			Թռչունների պոպուլյացիայի աճող բազմազանություն	Տարեկան աճ	Տարեկան աճ
			Քաղաքային ծառայությունների համապատասխան քաղաքականության և պլանավորման ոլորտում ժամանակակից	100%	100%

		բարձրացնել դրանց որակն ու ավելացնել բազմազանությունը • քաղաքաշինության մեջ կիրառել հետևողական մոտեցում (վերակառուցապատում, կետային կառուցապատում, շինարարություն չկառուցապատված տարածքում) ՝ խուսափելու համար անկանոն կառուցապատումից	պահանջներին համապատասխանող վերապատրաստում անցած աշխատակիցների ներգրավումը պլանավորման բաժին		
			Հողօգտագործմանը և բնապահպանությանն առնչվող տվյալների մասնաբաժինը հավաքագրված և հասանելի է ԱՏՀ հարթակում	50%	100%
Հողեր	SO_SL Ողջ քաղաքի տարածքում պաշտպանված, բարելավված և վերականգնված հողի որակ	• Բարելավել կոշտ և վտանգավոր թափոնների, ինչպես նաև կեղտաջրերի կատմամբ վերահսկողությունը (այդ թվում՝ վերամշակման միջոցով) • վերականգնել լքված արդյունաբերական հողերը և շինհրապարակները • ավելացնել հողի որակին առնչվող տվյալների հավաքագրումը, չափումը և մշտադիտարկումը	ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր (ՎԹ) այն տոկոսը, որը հեռացվել և տեղափոխվել է ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր	95%	100%
			Տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցությունը	25%	100%
			Վերամշակված արդյունաբերական թափոնների բաժնեմասը այդ թափոնների ընդհանուր ծավալում	25%	50%
			Թափոն արտադրողների այն տոկոսը, որոնք օգտվում են թափոնների հեռացման վճարովի, գործարքային ծառայությունից	80%	100%
			Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թիվը	40% նվազեցում՝ համեմատած 2017 թ.	80% նվազեցում՝ համեմատած 2017 թ.

				մակարդակների հետ	մակարդակների հետ
			Աղտոտված այն տարածքների մասնաբաժինը, որը գույքագրվել է, քարտեզագրվել և գնահատվել	50%	100%
Կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունու-թյուն և հարմարվողա-կանություն	SO_AR՝ Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունությունը բնական աղետների նկատմամբ	• Բարձրացնել տարերային աղետների դեպքում ջրային ենթակառուցվածքների դիմակայունությունը • Կանաչ ենթակառուցվածքների փուլային զարգացում և ծայրահեղ եղանակային պայմանների հանդեպ դիմակայունության և հարմարվողականության բարձրացում • Կլիմայական ռիսկերի գնահատում, աղետների ռիսկերի նվազեցման պլանավորում	Ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի տոկոսը	12%	10%
			Ռիսկի ենթակա տնային տնտեսությունների տոկոսը	12%	10%
			Բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված և գնահատված տնտեսական վնասը՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմաս	1%	0.5%
			Անցած 5 տարվա ընթացքում ծայրահեղ կլիմայական պայմաններում էլեկտրաէներգիայի երկարատև անջատումների ենթարկված բնակչության միջին մասնաբաժինը	5%	3%
			ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորումը	Բավարար է աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) տեղական պլանների իրականացման համար	Բավարար է աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) տեղական պլանների իրականացման համար

Գործողություններ

Ցանկ ներառված 64 գործողությունները, որոնք միասնականորեն կկարողանան հասնել ԿՔԳԾ- ի ռազմավարական նպատակներին, մշակվել են տեղական և միջազգային փորձագետների կողմից՝ Գյումրու քաղաքապետարանի և հիմնական շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվության արդյունքում: Գործողությունները հաշվի են առնում նրանց ներուժը առավելագույնի հասցնելու սոցիալական և տնտեսական օգուտները, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցությունները: Այս գործողությունները վավերացվել և առաջնահերթություն են ստացել՝ օգտագործելով տեխնիկական գնահատման գործընթաց և խորհրդատվություն պետական կառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Սա հանգեցրեց 46 «առաջնահերթ գործողությունների» նույնականացմանը: Առաջնային գործողությունները ներկայացվում են ստորև տրված աղյուսակում, յուրաքանչյուր գործողության բնույթի ամփոփ նկարագրության, յուրաքանչյուրի պատասխանատուի, կողմնորոշիչ արժեքի, ֆինանսավորման առաջարկվող աղբյուր(ներ)ի և իրականացման ժամկետների հետ մեկտեղ:

ԿՔԳԾ առաջնահերթ գործողություններ. Առաջնահերթ գործողությունների արժեքներն ու քանակն ըստ ոլորտների [1]

Ոլորտ	Ընդհանուր կապիտալ ծախսեր (Եվրո)	Ընդհանուր կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)	Միջնաժամկետ կապ. ծախսեր (Եվրո)	Միջնաժամկետ կապ. ծախսեր (ՀՀ դրամ)	Տարեկան գործառնական ծախսեր (Եվրո)	Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)	Գործողությունների քանակը
Տրանսպորտ	27,440,000	14,543,200,000	20,440,000	10,833,200,000	2,327,500	1,233,575,000	8
Շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն	22,630,000	11,993,900,000	15,270,000	8,093,100,000	405,000	214,650,000	10
Արդյունաբերություն	250,000	132,500,000	250,000	132,500,000	20,000	10,600,000	1
Կոշտ թափոններ	53,220,000	28,206,600,000	38,220,000	20,256,600,000	5,500,000	2,915,000,000	5
Ջուր	80,200,000	42,506,000,000	75,200,000	39,856,000,000	2,140,000	1,134,200,000	10
Հողօգտագործում	5,550,000	2,941,500,000	5,550,000	2,941,500,000	145,000	76,850,000	7
Միջոլորտային	16,700,000	8,851,000,000	16,700,000	8,851,000,000	20,000	10,600,000	5
Ընդամենը	**205,990,000**	**109,174,700,000**	**171,630,000**	**90,963,900,000**	**10,557,500**	**5,595,475,000**	**46**

[1] Այս գնահատականները ստանալու համար կիրառված գործընթացը նկարագրված է 7-րդ գլխում:

ԿՔԳԾ առաջնային գործողությունները՝ ըստ ոլորտների

Գործողութ-յան նույնացուցիչ	Գործողության անվանում	Դասակարգում՝	Իրականացման ժամկետները
ՏՐԱՆՍՊՈՐՏ			
A_TR_01	Նոր հանրային տրանսպորտի ցանցի օպերատորի մոդել, ավտոբուսային հավաքակազմի արդիականացում և միասնական սակագնային ու տոմսային համակարգ	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020 - 2024
A_TR_02	Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում, այդ թվում՝ իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության (ԻԺՈւՏ) (RTPI) համակարգի ներդրմամբ	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020 - 2024
A_TR_04	Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում, այդ թվում՝ իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության (ԻԺՈւՏ) (RTPI) համակարգի ներդրմամբ	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020 - 2024
A_TR_05	Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանց	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2021 - 2023
A_TR_06	Նոր հեծանվային ուղիների և հեծանվային կայանատեղի ենթակառուցվածք	Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում	2020 - 2021
A_TR_09	Կայուն քաղաքային շարժունակության ծրագիր (ԿՔՇԾ) Գյումրու համար	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2020 - 2021
A_TR_12	Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանց	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 - 2022
A_TR_14	Հանրային ավտոբուսների հանրակազմի արդիականացում՝	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2021 - 2024
ՇԵՆՔԵՐ, ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ			
A_BEL_01	Էներգաարդյունավետության մասին իրազեկում և տեղեկատվության տարածում բնակելի հատվածում	Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում	2020 - ongoing
A_BEL_02	Ցածր եկամուտ ունեցող սպառողների լուսատունը ԼԵԴ լամպերով փոխարինելու ծրագիր և արշավ	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020 - 2025

Գործողութ-յան նույնացուցիչ	Գործողության անվանում	Դասակարգում՝	Իրականացման ժամկետները
A_BEL_03	Ցածր եկամուտ ունեցող սպառողների լուսավորությունը ԼԵԴ լուսավորությամբ փոխարինելու արշավ	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2020 - 2030
A_BEL_04	Համայնքային էներգետիկ տեղակատվական համակարգ և էներգաառավարում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2022 - 2027
A_BEL_05	Բնակելի շենքերի ջերմային արդիականացման պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագիր	Հանրային գնումներ	2020 - 2022
A_BEL_06	Հանրային շենքերի ջերմային արդիականացման ծրագիր	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2022 - 2027
A_BEL_07	Հանրային գնումներում էներգաարդյունավետ ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման կանոնակարգում	Հանրային գնումներ	2020 - Ongoing
A_BEL_08	Էներգետիկ տեղեկատվական քաղաքային համակարգ և նրա կառավարում	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2021 - Ongoing
A_BEL_09	Էներգախնայողության կատարողականի պայմանագրերի (ԷԿՊ) և էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների (ԷԾՄԸ) հետ պայմանագրերի կնքում	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2020 - 2022
A_BEL_10	Վերականգնվող էներգիայի միջին և խոշոր համակարգերի (ՎԷՀ) ներդրում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 - 2022
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ			
A_IN_04	Աղտոտված արդյունաբերական տարածքների հետազոտում և ռիսկերի նվազեցում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 - 2022
ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐ			
A_SW_02	Ապօրինի բաց աղբավայրերի վերացում և աղտոտված տարածքների վերականգնում	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2020 - 2024
A_SW_03	Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020 - 2022
A_SW_04	Քաղաքային կոշտ թափոնների հեռացման և վերամշակման նոր ենթակառուցվածքի հիմնում	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020 - 2027
A_SW_05	Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 - 2024

Գործողութ-յան նույնացուցիչ	Գործողության անվանում	Դասակարգում՝	Իրականացման ժամկետները
A_SW_06	Քաղաքապետարանում բացել թափոններով զբաղվող բաժին և պարբերաբար իրականացնել թափոնների կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված արշավներ	Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում	2020 - 2024
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ			
A_WR_01	Գյումրու ջրամատակարարման ցանցի ենթակառուցվածքի և ակտիվների համար գույքագրման և ԱՏՀ-ի նախապատրաստում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 - 2022
	Ջրամատակարարման և ջրի պահանջարկի վերաբերյալ բարելավված տվյալներ և վերլուծություն	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 - 2023
A_WR_03	Արտահոսքի նվազեցման գործողությունների ծրագրի (ԱՆԳԾ) մշակում	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2021 - 2022
A_WR_04	ՀՆԳԾ-ն գործարկելու իրավական և ֆինանսական մեխանիզմները	Չափանիշներ, ուղեցույցներ և կանոնակարգեր	2020 - 2022
A_WR_05	ԱՆԳԾ-ի իրականացման համար իրավական և ֆինանսական մեխանիզմների մշակում	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	Քայլ 1: 2020 – 2022; Քայլ 2: 2022 – 2025; Քայլ 3: 2022 - 2026
A_WR_06	Պատրաստել գույքագրում և ԱՏՀ կեղտաջրերի ենթակառուցվածքի համար	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 - 2022
A_WR_07	Մատակարար-ման համակարգի՝ արտահոսքի ամենաբարձր մակարդակ ունեցող մասերի նորոգում և վերականգնում	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2021 - 2022
A_WR_08	Ջրհեռ համակարգերի վերականգնում և ընդլայնում	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2021 - 2025
A_WR_09	Պատրաստել գույքագրում և ԱՏՀ կեղտաջրերի ենթակառուցվածքի համար	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2021 - 2025
A_WR_10	Ջրհեռ համակարգերի վերականգնում և ընդլայնում Կանաչ տարածքներում հանրային օգտագործման ջրի ենթակառուցվածքի արդիականացում	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2021 - 2025
ՀՈՂՕԳԱԳՈՐԾՈՒՄ			

Գործողութ-յան նույնացուցիչ	Գործողության անվանում	Դասակարգում՝	Իրականացման ժամկետները
A_LU_01	Մշակել կայուն քաղաքային պլանավորման չափանիշներ Գյումրի քաղաքի համար և մշակել նորացված գլխավոր հատակագիծ և գոտևորման կանոնակարգեր	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2020 - 2021
A_LU_02	Մշակել ԱՏՀ-ի վրա հիմնված հողօգտագործման տվյալների բազա և քաղաքի տեղեկատվական մոդել (ՔՏՄ) Գյումրու համար	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2021 - 2023
A_LU_03	Ստեղծել նպատակային քաղաքային պլանավորման ուղեցույց և գործիքներ	Չափանիշներ, ուղեցույցներ և կանոնակարգեր	2022 - 2023
A_LU_04	Հանրային զբոսայգիների և կանաչ տարածքների կառավարման ռազմավարություն	Չափանիշներ, ուղեցույցներ և կանոնակարգեր	2021 – 2030
A_LU_05	Մշակել ԱՏՀ-ի վրա հիմնված հողօգտագործման տվյալների բազա և քաղաքի տեղեկատվական մոդել (ՔՏՄ) Գյումրու համար	Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում	2020 - Ongoing
A_LU_06	Հանրային զբոսայգիների և կանաչ տարածքների կառավարման ռազմավարություն	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2020 – 2029
A_LU_07	Կանաչ ենթակառուցվածքի, զբոսայգիների և բաց տարածքների ապահովում	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2022 - 2025
ՄԻՋՈՂՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
A_AQGHG_01	Մշակել համայնքի օդի որակի վերահսկման համակարգ	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ	2021 - 2023
A_AR_01	Իրականացնել կլիմայի ռիսկի գնահատում ջրի, տրանսպորտի, կոշտ թափոնների և շինարարության, էներգիայի և լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների համար	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2020 - 2021
A_AR_02	Նախապատրաստել կլիմայի նկատմամբ Գյումրու ենթակառուցվածքի դիմակայության բարձրացման գործողությունների ծրագիր	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2021 - 2022
A_AR_03	Մշակել արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործողությունների ծրագիր	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2023 - 2024

Գործողութ-յան նույնացուցիչ	Գործողության անվանում	Դասակարգում՝	Իրականացման ժամկետները
A_AR_04	Ներդրումներ կլիմայի փոփոխության հարմարվողականության և դիմակայության միջոցառումների համար	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2024 - Ongoing

Հետագա քայլեր

Ակնկալվում է, որ ԿՔԳԾ-ն կընդունվի Գյումրու Ավագանու և Քաղաքային վարչակազմի կողմից և կօգտագործվի որպես հիմք՝ Գյումրու տարեկան բյուջեն և միջնաժամկետ ու երկարաժամկետ զարգացման ծրագրերը մշակելու համար: Միասնական ջանքեր կգործադրվեն՝ երաշխավորելու, որ Կանաչ քաղաքի իրականացման ժամանակահատվածի առաջին փուլում ԿՔԳԾ-ի գործընթացի Քայլ 3-ի գործողությունները կսկսվեն ծրագրված ժամկետում՝ 2020-ի սկզբին : Սա կլինի 60 ամիս տևողությամբ ծրագրի իրականացման մեկնակետը, որի ընթացքում կիրականացվեն ԿՔԳԾ մի շարք գործողություններ՝ օգտագործելով ամբողջական և մանրամասն մշակված մոտեցում՝ լիովին համաձայնեցված և ներդրված ավելի ընդարձակ շրջանակներում:

ԿՔԳԾ-ի իրականացման առաջընթացը և ազդեցությունը պետք է մշտադիտարկվեն՝ բարելավման հնարավորությունները հասկանալու և պարզելու համար, թե ինչ անհրաժեշտ ուղղիչ միջոցառումներ պետք է ընդունվեն: Այն նաև հնարավորություն կտա պարբերաբար վերանայելու և, հնարավոր է, հստակեցնելու ԿՔԳԾ-ի մարտահրավերները, նպատակները, գործողությունները և թիրախները: Հետևաբար՝ ԿՔԳԾ-ի գործողությունների իրականացումը և դրանց նպաստումը միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներին հասնելուն կմշտադիտարկվեն և կանոնավոր հաշվետվությունների առարկա կհանդիսանան, որոնց արդյունքները կվերաբերեն բոլոր շահագրգիռ կողմերին: ԿՔԳԾ-ն նախանշում է մոնիթորինգի գործընթացը, ինչպես նաև կառավարման հետ կապված կարգավորումները, որոնք կօգտագործվեն, սակայն կվերանայվեն և կհստակեցվեն պատասխանատուների կողմից: Այս ամենն արտացոլված է ստորև բերվող նկարում, որը ներկայացնում է ԿՔԳԾ գործընթացում հաջորդ քայլերի հակիրճ նկարագիրը:



Գործողությունների ծրագիր ԿՔԳԾ-ի հաջորդ քայլերի իրականացման համար՝ ԿՔԳԾ Քայլ 3 («Կանաչ քաղաք» իրականացում) և Քայլ 4 («Կանաչ քաղաք» հաշվետվություն)

1.Ներածություն

1.1. Ամփոփ ակնարկ

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով (ԿՔԳԾ) սահմանվում է «կանաչ քաղաք» գործողությունների ցանկը, որի իրականացումը կարող է ի կատար ածել Գյումրու ձգտումը՝ դառնալ բարգավաճ, կանաչ, դիմակայուն և կայուն քաղաք, որը ռացիոնալ կօգտագործի ռեսուրսները՝ միաժամանակ իր քաղաքացիների համար ստեղծելով նախապայմաններ առողջ, նորարարական և երջանիկ կյանքի համար:

Քաղաքներն առաջ են բերում մի շարք բացասական էկոլոգիական ազդեցություններ՝ կապված, օրինակ, օդի որակի, հողօգտագործման, քաղաքային կոշտ թափոնների գոյացման և ջրային ռեսուրսների վրա ճնշման հետ: Դրանք հաճախ նաև հատկապես խոցելի են կլիմայի փոփոխությունների այնպիսի ազդեցությունների նկատմամբ, ինչպիսիք են երկրաշարժի բարձր ռիսկերը: Նման բնապահպանական խնդիրները խիստ արտահայտված են Գյումրիում: ԿՔԳԾ-ի նպատակն է ներկայացնել Գյումրու կայուն զարգացման տեսլականը և ռազմավարական նպատակները, որոնք բոլորը մշակվել են ԿՔԳԾ- գործընթացում՝ բոլոր ոլորտներում առաջնահերթ գործողությունների և ներդրումների հետ մեկտեղ ԿՔԳԾ-ի նպատակներն իրականացնելու համար: Սա հնարավորություն կտա նախանշված առաջնահերթ բնապահպանական խնդիրները լուծելու ծախսարդյունավետ եղանակով՝ թիրախավորված ներդրումների և բարեփոխումների միջոցով՝ բարձրացնելով կայունության մասին իրազեկվածության մակարդակը:

Գյումրու առջև ծառացած բնապահպանական մարտահրավերների և հնարավորությունների խրթին շղթայի հանգուցալուծման՝ ԿՔԳԾ-ով սահմանվող մոտեցումը մշակվել է Տնտեսական համագործակցության և զարգացման արդիականացման (ՏՀԶԱ), (OECD) և Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհրդի (ՏԲՆՄԽ) (ICLEI) կողմից կազմված ԿՔԳԾ-ի մեթոդաբանության[2] համաձայն:

ԿՔԳԾ-ն լրացնում է քաղաքաշինության առկա գործիքները և քաղաքականություններն ու համապատասխանում դրանց: ԿՔԳԾ-ի քաղաքականության շրջանակն արտացոլում է Հայաստանի աճող ներպետական հանձնառությունը «կանաչ քաղաքի» օրակարգին և Գյումրու ակտիվ մասնակցությունը:

1.2. ԿՔԳԾ-ի աջակիցները

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) «Կանաչ քաղաքներ» ծրագրի շրջանակներում ՎԶԵԲ-ը համագործակցեց Գյումրի քաղաքի հետ՝ մշակելու համար այս ԿՔԳԾ-ն: ՎԶԵԲ-ի ողջ տարածաշրջանում աճում է այն քաղաքների թիվը, որտեղ ծրագիրն ուղղված է բնապահպանական ակտիվների որակի պահպանմանը և ռեսուրսների կայուն օգտագործման խրախուսմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխություններին առնչվող ռիսկերը նվազեցնելուն և դրանց հարմարվելուն՝ ապահովելով, որ այս ջանքերը նպաստեն քաղաքացիների սոցիալական և տնտեսական բարեկեցությանը:

ԿՔԳԾ-ն մշակվել է տեղական, ինչպես նաև միջազգային խորհրդատուների թիմի գլխավորությամբ և Գյումրիի քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի առավել լայն շրջանակի հետ սերտ համակարգմամբ: ԿՔԳԾ-ն շահագրգիռ կողմերի ներգրավման և հանրային քննարկման մի քանի փուլի առարկա է: Մասնակիցների ամբողջական ցանկը ներառված է հավելված B-ում:

1.3. ԿՔԳԾ-ի կառուցվածքը

Ստորև հակիրճ ներկայացված է ԿՔԳԾ-ի հաջորդ մասերի կառուցվածքը.

2-րդ գլխումորպես Կանաչ քաղաքի գործողությունների ծրագրի մեթոդաբանություն ներկայացվում են ԿՔԳԾ-ի մշակման համար ընդունված մոտեցումն ու մեթոդաբանությունը, որին հաջորդում են հիմնական տեխնիկական գնահատման արդյունքները և քարտեզագրումը՝ հիմնված վիճակի, ճնշման և արձագանքի գլխավոր ցուցանիշների վրա: Նշված

[2] ՏՀԶԿ և ՏԲՆՄԽ «Կանաչ քաղաքներ» ծրագրի մեթոդաբանություն: Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.ebrd.com/documents/technical-cooperation/green-city-action-plan-in-tirana.pdf

հասկացությունները նկարագրված են այս գլխում: Այստեղ ներառված է նաև ուսումնասիրության արդյունքների հակիրճ նկարագրությունը:

3-րդ գլխում՝ Գյումրի քաղաքի ծանոթացում: Գյումրին ներկայացված է որպես քաղաք՝ իր աշխարհագրական դիրքի, քաղաքի կառուցապատման, ժողովրդագրական տվյալների, տնտեսության և ենթակառուցվածքների հակիրճ նկարագրությամբ: Գլխում նաև համառոտ շարադրված են տեղական ինքնակառավարման իրավիճակը և որոշումների կայացման՝ ԿՔԳԾ-ի հաստատման համար կիրառված գործընթացները:

4-րդ գլխում՝ Կանաչ քաղաքի գործողությունների ծրագրի բնապահպանական ելակետային տվյալներ, առանձնացվում են հիմնական տեխնիկական գնահատման գլխավոր արդյունքները, և վեր են հանվում քաղաքի առջև ծառացած բնապահպանական մարտահրավերները՝ հիմնված ստուգաչափային միջազգային ցուցանիշների հետ համեմատության վրա:

5-րդ գլխում՝ Կանաչ քաղաքի տեսլականը, խնդիրները և գործողությունները, ներկայացված են Կանաչ քաղաքի տեսլականը, ռազմավարական խնդիրների շարքը և յուրաքանչյուր քաղաքային ոլորտի համար առաջարկվող գործողությունները և թիրախները (տրանսպորտ, շենքեր, էներգիա և լուսավորություն, արդյունաբերություն, կոշտ թափոնների կառավարում, ջուր, հողօգտագործում), ինչպես նաև որոշակի ոլորտով չսահմանափակվող հարմարվողականության և դիմակայունության գործողությունները:

6-րդ գլուխը՝ Մշտադիտարկում, սահմանում է այն մոտեցումը, որին կհետևեն՝ գնահատելու ԿՔԳԾ-ի արդյունավետությունն ինչպես իրականացված գործողությունների, այնպես էլ ապահովված արդյունքների առումով: Գլխում նաև համառոտ նշվում են գործընթացի իրականացման կառավարման մեխանիզմները, և տրվում է ծրագրի ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավման համառոտ ակնարկ :

7-րդ գլուխը՝ ԿՔԳԾ-ի ծախսերն ու ֆինանսավորման տարբերակները, ամփոփ տրամադրում է **ԿՔԳԾ-ի գործողությունների** կապիտալ (CAPEX) և գործառնական (OPEX) ծախսերը, ինչպես նաև ֆինանսավորման հավանական տարբերակների վերաբերյալ մեկնաբանություններ:

8-րդ գլուխը՝ Հաջորդ քայլերը, սահմանում է ԿՔԳԾ-ի և դրա համապատասխան գործողությունների իրականացման հաջորդ քայլերը և ժամանակացույցը :

Հավելվածներում ներառված են լրացուցիչ մանրամասներ և ԿՔԳԾ-ի շահագրգիռ կողմերի ամբողջական ցանկը (**Հավելված B**):

2.«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի (ԿՔԳԾ) մեթոդաբանությունը

ԿՔԳԾ-ն ռազմավարական փաստաթուղթ է, որում ներկայացվում է Գյումրու՝ 2035 թվականի բնապահպանական տեսլականը: Դրա նպատակն է բարելավել քաղաքի բնապահպանական կատարողականը ծախսարդյունավետ և ֆինանսապես կայուն եղանակով՝ միևնույն ժամանակ փորձելով առավելագույնի հասցնել լրացուցիչ տնտեսական և սոցիալական օգուտները:Այս գլխում ներկայացվում է ԿՔԳԾ-ի մշակման մեթոդաբանությունը, որը շարունակվելու է կիրառվել՝ դրա իրականացման առաջընթացը ստուգելու համար:

2.1. Մոտեցման ամփոփ ներկայացումը

Գյումրու ԿՔԳԾ-ն մշակվել է ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» ծրագրի մեթոդաբանության՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), (OECD) և Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհրդի (ՏԲՆՄԽ), (ICLEI) կողմից սահմանված կարգով: Այն ԿՔԳԾ-ի՝ Գյումրու համատեքստին հարմարեցված գործընթացի արդյունքն է:

ԿՔԳԾ-ի մեթոդաբանությունը ծառայում է որպես ուղեցույց բնապահպանական տեսանկյունից ընդունելի գործողությունների մշակման համար և հիմնված է հետևյալ գլխավոր սկզբունքների վրա.

- փաստերի վրա հիմնված տեխնիկական վերլուծություն,
- շահագրգիռ կողմերի մասնակցություն և ներգրավում,
- «Կանաչ» օրակարգի քաղաքական հանձնառություն:

ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» ծրագրի մեթոդաբանությունը սահմանում է «Կանաչ քաղաքը» որպես քաղաք , որը ցույց է տալիս բնապահպանական բարձր արդյունավետություն՝ սահմանված չափանիշների համեմատ. 1) սոցիալ-տնտեսական կառուցվածքը և աշխարհագրական ու կլիմայական առանձնահատկությունները, **բնապահպանական ակտիվների** (օդ, ջուր, հող / հող և կենսաբազմազանություն) **որակի**, 2) **ռեսուրսների արդյունավետ օգտագործման** (ջուր, էներգիա, հող և նյութեր) և 3) **կլիմայի փոփոխությունից բխող ռիսկերին մեղմացման և հարմարեցման** առումով, միաժամանակ առավելագույնի հասցնելով **տնտեսական և սոցիալական համադրվող օգուտները** և հաշվի առնելով դրա համատեքստը (բնակչության թվաքանակը, սոցիալ-տնտեսական կառուցվածքը, աշխարհագրական ու կլիմայական բնութագրերը):



Գծապատկեր 2..1. «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի իրականացման շրջանակի ընդհանուր բնութագիրը

ԿՔԳԾ-ի գործընթացը բաղկացած է 2.1. գծապատկերում թվարկված չորս հիմնական քայլերից: Սա ընդհանուր բազմոլորտ գործընթաց է, որի միջոցով պարբերաբար վեր է հանվում և անդրադարձ կատարվում Գյումրի քաղաքի բնապահպանական մարտահրավերներին, ինչպես նաև սահմանվում է դրանց առաջնահերթությունն այնպիսի կարճաժամկետ գործողությունների միջոցով, ինչպիսիք են թիրախավորված ներդրումները և ծառայությունները, տեսլականներում ներառված կանոնակարգերն ու քաղաքականության այլ համապատասխան գործիքներ, ինչպես նաև համապատասխան

միջնաժամկետ թիրախներ ունեցող երկարաժամկետ ռազմավարական նպատակները:

ԿՔԳԾ-ն քաղաքական համատեքստի տեղական առանձնահատկություն-ների, քաղաքականությունների և պլանավորման փաստաթղթերի, ինչպես նաև բնապահպանական ցուցանիշների տեխնիկական գնահատականի մանրամասն ուսումնասիրության արդյունքն է: Այս գործընթացը մասնակցային է: Օրինակ, ԿՔԳԾ-ի մշակման ընթացքում տեղի են ունեցել աշխատաժողովներ և քննարկումներ քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի առավել լայն շրջանակի հետ (ցանկը ներկայացված է B հավելվածում)՝ բացակայող տվյալները նվազագույնի հասցնելու, տեղական սոցիալական, մշակութային, պատմական մարտահրավերների և համայնքի կարիքների ըմբռնումը բարելավելու, կանաչ քաղաքի մարտահրավերների մասնակցային վերհանման համար հնարավորություններ ստեղծելու, քաղաքային խնդիրների լուծումը համակարգված ապահովելու, առավելագույն ազդեցություն ունեցող գործողություններին առաջնահերթություն տալու, դոնորային համաֆինանսավորման ներգրավմանը պատրաստ լինելու և, ի վերջո, նախագծի կայունությունն այս առաջադրանքի ժամանակահատվածից դուրս ապահովելու համար կարողություններ զարգացնելու նպատակով: Շահագրգիռ կողմերի՝ քաղաքապետարանի հետ մշտական շփումների կարևորությունն աճում է՝ հաշվի առնելով վերջինիս պատասխանատվությունը ԿՔԳԾ-ի երրորդ և չորրորդ քայլերի համար (տե՛ս 2.1. գծապատկերը): 2.1. գծապատկերում նշված են շահագրգիռ կողմերի բոլոր պաշտոնական ներգրավման միջոցառումները, որոնք ԿՔԳԾ-ի ողջ ընթացքում լրացվել են տեղական խորհրդատվական թիմերի, քաղաքի ներկայացուցիչների և այլ շահագրգիռ կողմերի ոչ պաշտոնական քննարկումներով:

Գծապատկեր 2.1. Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ պաշտոնական հանդիպումների և աշխատաժողովների ցանկ

Ամսաթիվ	Մասնակցության տեսակը	Անվանում
2018թ. սեպտեմբեր	Աշխատաժողով շահագրգիռ կողմերի հետ	Պաշտոնական մեկնարկային հանդիպում և մեկնարկային աշխատաժողով ԿՔԳԾ-ի նպատակները, խնդիրները և մեթոդաբանությունը ներկայացնելու , ինչպես նաև հիմնական շահագրգիռ կողմերի հետ գործակցությունը նախաձեռնելու նպատակով սեմինար: 50 մասնակից
2018թ. դեկտեմբեր	Հանդիպում քաղաքապետարանում	Կանաչ քաղաքի քաղաքական շրջանակը և առաջացող մարտահրավերները *Համայնքապետարանի հետ ներքին աշխատաժողով՝ քաղաքական շրջանակի գնահատման արդյունքում բացահայտումների և առաջացող բնապահպանական մարտահրավերների վերաբերյալ*
2019թ. հունիս	Աշխատաժողով շահագրգիռ կողմերի հետ	Աշխատաժողով «Կանաչ քաղաք» ծրագրի մարտահրավերների, տեսլականների, ռազմավարական նպատակների և գործողությունների մասին Աշխատաժողով՝ ներկայացնելու և քննարկելու ԿՔԳԾ տեսլականը, ռազմավարական նպատակները և գործողությունների երկար ցանկը: Գործողությունների երկար ցանկի վերաբերյալ կարծիքը ստացվել է և ներառվել է ԿՔԳԾ-ի ճեպաթերթում: 55 մասնակից
2019թ. օգոստոս	Հանդիպում քաղաքապետարանում	Գործողությունների քաղաքական առաջնահերթությունների սահմանում Քաղաքապետարանի հետ ներքին աշխատաժողով՝ տեսլականների և գործողությունների աշխատաժողովի արդյունքում ձևավորված գործողությունների երկար ցանկը քննարկելու համար: Աշխատաժողովի արդյունքում կազմվեց գործողությունների համառոտ ցանկ և սահմանվեցին գործողությունների առաջնահերթությունները՝ 87-ից կրճատվելով մինչև 46 առաջնահերթություններ:
2019թ. դեկտեմբեր	Հանդիպում քաղաքապետարանում	Ավագանու խորհրդի նիստ *ԿՔԳԾ-ի բացահայտումների, հիմնական մարտահրավերների և առաջարկվող շտապ միջոցառումների, ապագա պլանավորման կարիքների, կողմնորոշիչ ժամանակացույցի հակիրճ ամփոփ ներկայացում: ԿՔԳԾ-ը ներկայացվեց ընտրված ավագանու անդամների քվեարկությանը և նրանց կողմից հաստատմանը:*
2019թ. դեկտեմբեր	Տեղեկատվության տարածում	ԿՔԳԾ-ի վերջնական ներկայացում ԿՔԳԾ-ի վերջնական տարբերակի ներկայացումը Համայնքապետարանին և ԿՔԳԾ-ի արտաքին շահագրգիռ կողմերին:
2020թ. հունվար	Աշխատաժողով քաղաքապետարանում	Կարողությունների զարգացման աշխատաժողով Քաղաքի պաշտոնատար անձանց համար բնապահպանական / ԿՔԳԾ-ի ոլորտային գործողությունների թեմաներով դասընթացներ:

2.2 գծապատկերում ներկայացված են այն առաջադրանքները, որոնք իրականացվել կամ իրականացվելու են գործընթացի յուրաքանչյուր փուլում, ինչպես նաև ուրվագծված են դրանց միջև տրամաբանական կապերը (կապույտ սլաքներ): Ինչպես կարելի է տեսնել 4-րդ առաջադրանքից, սա շրջանաձև գործընթաց է, որը պահանջում է պարբերական վերանայում և ռազմավարական շրջանակի հաջորդական թարմացում՝ արտացոլելու համար «կանաչ» նախագծերի իրականացման գործընթացը, ինչպես նաև այլ համապատասխան ազգային, տարածաշրջանային կամ տեղական զարգացումները:



Գծապատկեր 2.2. ԿՔԳԾ-ի գործընթացը և առաջադրանքները

2.2. Մեթոդաբանություն

Սույն ենթագլուխն ավելի մանրամասնորեն է ներկայացնում ԿՔԳԾ-ի՝ 2.1. գծապատկերում նշված գործընթացի չորս քայլերից յուրաքանչյուրը:

2.2.1. Քայլ 1. «Կանաչ քաղաք» ծրագրի ելակետային վիճակի գնահատում և աշխատանքի ծավալի որոշում

Այս քայլը ներառում էր ապացույցների բազայի մշակում և վերլուծություն՝ պարզելու Գյումրու առջև ծառացած բնապահպանական առավելագույն ճնշող մարտահրավերներն ու դրանց պատճառները: Այն ներառում էր երեք արդյունքների ապահովում, մասնավորապես.

քաղաքական շրջանակային հաշվետվություն *(գոյություն ունեցող գործիքների և ծրագրերի ոլորտային բազմակողմանի վերանայման և գնահատման արդյունքը, որոնք կարող են իրագեկել և ազդել ԿՔԳԾ- ի ուղղվածության վրա),*

չափորոշիչների տվյալների շտեմարան *(պահեստարան, որը պարունակում է տվյալներ Գյումրու վերաբերյալ՝ կապված բնապահպանական Կարգավիճակի, ճնշման և Արձագանքի հետ, մոդել, որը բացատրվում է այս ենթաբաժնում, և նրա միջազգային ստուգաչափանիշները),*

տեխնիկական գնահատման հաշվետվություն *(ուղեկցում է չափորոշիչների տվյալների բազային և պարունակում է Կանաչ քաղաքի առաջնահերթ մարտահրավերներ, որոնք բացահայտվել են տեխնիկական գնահատման, շահագրգիռ կողմերի և քաղաքական առաջնահերթություն-ների սահմանման միջոցով):*

«Կանաչ քաղաք» ծրագրի ելակետային փաստաթուղթը ԿՔԳԾ-ի ապացուցողական բազան է: Վերջինիս նպատակն է ուղղորդել քաղաքականությանն ու ռազմավարություններին առնչվող որոշումների կայացումը և հիմք ծառայել մարտահրավերների վերհանման և դրանց առաջնահերթության սահմանման, ինչպես նաև ԿՔԳԾ-ի գործողությունների ներդրման հաջողության մշտադիտարկման համար: Այն հիմնված է քաղաքական դաշտի վերլուծության և Գյումրուն առնչվող բնապահպանական տվյալների բացահայտման, հավաքագրման և մշակման վրա, ինչի արդյունքները ներկայացված են ցուցանիշների տվյալների բազայում: Այս երկու տարրերը մանրամասն ներկայացված են ստորև:

«Կանաչ քաղաք» ծրագրի ելակետի առաջին բաղադրիչի՝ **քաղաքական դաշտի** վերլուծության շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով պետական իրավակարգավորման շրջանակի, ինչպես նաև Գյումրու նախկին և գործող ռազմավարական փաստաթղթերի, զեկույցների ու գործողությունների վերլուծությունը: Նպատակն էր բացահայտել, վերանայել և գնահատել առկա գործիքները և ծրագրերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ ԿՔԳԾ-ի ուղղվածության վրա բոլոր ներառված ոլորտներում: ԿՔԳԾ-ում պարբերաբար հղում է կատարվում քաղաքական դաշտին, և համապատասխան հատվածներում տրամադրվում է ավելի մանրամասն տեղեկատվություն դրա վերաբերյալ:

«Կանաչ քաղաք» ծրագրի ելակետի երկրորդ բաղադրիչը՝ **ցուցանիշների տվյալների բազան**, քաղաքի բնապահպանական տվյալների համախումբ է: Տվյալները ներկայացված են ցուցանիշների երեք խմբի տեսքով՝ Վիճակ, Ճնշում և Արձագանք: Վիճակ-Ճնշում-Արձագանք մոդելը (տե՛ս 2.3. գծապատկերը) կիրառվել է, քանի որ այն հնարավորություն է տալիս գնահատելու մարդու գործունեության բացասական ազդեցությունները (ճնշման (ներազդման) ցուցանիշներ) բնապահպանական ակտիվների վրա (վիճակի ցուցանիշներ) և վեր հանում դրանց առնչվող բացերը քաղաքականության շրջանակում (արձագանքի ցուցանիշներ):

Այս համատեքստում շրջակա միջավայրի «վիճակին» առնչվող տվյալները ներկայացված են հետևյալ բնապահպանական թեմատիկ ոլորտների առնչությամբ.

- օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումներ,
- ջրի որակ,
- հողեր,
- կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր,
- դիմակայունություն և հարմարվողականություն բնական աղետների ռիսկին:

«Վիճակի» այս ցուցանիշների վրա ազդող մարդկային գործունեությունը՝ այսպես կոչված «ճնշումները», ներկայացված են քաղաքային տնտեսության հիմնական ոլորտների առնչությամբ, մասնավորապես.

- տրանսպորտ,
- շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն,
- արդյունաբերություն,
- կոշտ թափոններ,
- ջուր,
- հողօգտագործում:

Արձագանքի ցուցանիշները հաշվի են առնում քաղաքի բնապահպանական կատարողականի բարելավմանն ուղղված այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են աղտոտվածության նվազեցմանն ուղղված ընթացիկ գործողությունները, գործող քաղաքականությունները կամ կանոնակարգերը, ռեսուրսների սպառումը կամ բնական ակտիվների պահպանության համար կատարված ներդրումները: Ի տարբերություն վիճակի և ճնշման ցուցանիշների՝ այս դասակարգը հիմնականում որակական է և հիմնված է քաղաքական դաշտի զեկույցի եզրահանգումների վրա: Արձագանքները կարող են վերաբերել տարբեր դերակատարների, ինչպիսիք են.

- միջազգային կառավարությունները,
- ՀՀ կառավարությունը,
- պետական կառավարման ենթաազգային/մարզային մարմինները,
- մասնավոր դերակատարները:



Գծապատկեր 2.3. Վիճակ-Ճնշում-Արձագանք մոդելը

Ցուցանիշների տվյալների բազայի մշակմանն առնչվող որոշ մարտահրավերներից են տվյալների հասանելիությունն ու վստահելիությունը, ինչպես նաև տվյալների խմբերի ներդաշնակեցումը քաղաքային տարածքի տարբեր աշխարհագրական մասշտաբներ ընդգրկող բազմաբնույթ սեփականության հետ: Գյումրու՝ շրջակա միջավայրին առնչվող ելակետային տվյալները բացակայում են, ինչի պատճառով քաղաքի ներկայիս բնապահպանական կատարողականը և քաղաքային տնտեսության տարբեր ոլորտների ճնշումների (ներգործության) ազդեցությունը շրջակա միջավայրի վրա սահմանափակ են ընկալվում: Օրինակ, չնայած քաղաքացիները հստակ զգում են օդի որակի՝ փոշու բարձր մակարդակի հետ կապված խնդիրը, օդի

որակի մշտադիտարկման տվյալները սակավ են՝ պարզելու համար այս խնդրի բուն պատճառները: Ուստի ԿՔԳԾ-ն կենտրոնանում է բնապահպանական և քաղաքային տնտեսության տարբեր թեմատիկ ոլորտներում տվյալների հավաքագրման և վերլուծության, մշտադիտարկման բարելավման, ինչպես նաև իրագործելի բնապահպանական գործողությունների ներկայացման վրա:

Քաղաքական դաշտի վերլուծության եզրահանգումների համատեքստում ցուցանիշների տվյալների բազան օգտագործվում է որպես **Տեխնիկական գնահատման զեկույցում** ներկայացված «Կանաչ քաղաք» ծրագրի մարտահրավերների վերհանման և առաջնահերթությունների սահմանման հիմք: «Կանաչ քաղաք» ծրագրի մարտահրավերները վեր են հանվել, և դրանց առաջնահերթությունը սահմանվել է ստորև ներկայացված եռաքայլ գործընթացի միջոցով:

Տեխնիկական գնահատում

ԿՔԳԾ-ի մարտահրավերները վեր են հանվում ցուցանիշների տվյալների բազայում ներառված թվերի հիման վրա: ԿՔԳԾ-ի ցուցանիշների տվյալների բազան համալրելու նպատակով հավաքագրված տվյալները նախապես գնահատվում են՝ օգտագործելով կարմիր, դեղին և կանաչ (ԿԴԿ) «լուսացույցի» համակարգը, որը հիմնված է ԿՔԳԾ-ի մեթոդաբանության մեջ ներառված չափագրված հենանիշային արժեքների վրա: Ցուցանիշային արժեքների հենանիշների սահմանումը, համաձայն այս «լուսացույցի», հնարավորություն է ընձեռում իրականացնելու կատարողականի պարբերական համեմատություն ցուցանիշների խմբերի միջև (բնապահպանական արդյունքների մասով), ինչը համապատասխանում է հենանիշների միջազգային արժեքներին[3]: Վիճակի և ճնշման ցուցանիշների դեպքում Գյումրու առջև ծառացած ամենահրատապ բնապահպանական խնդիրները նշված են կարմիրով, իսկ բարձր առաջնահերթություն չունեցող, սակայն բարելավում պահանջող ոլորտները՝ դեղինով, և «Կանաչ քաղաք» ծրագրի չափանիշների սահմանաչափեին մեծապես համապատասխանող ոլորտները՝ կանաչով: Վիճակի և ճնշման ցուցանիշների դեպքում հենանիշային արժեքները տարբեր են յուրաքանչյուր ցուցանիշի համար՝ յուրաքանչյուր ԿԴԿ-ի դասակարգման համար սովորաբար ունենալով թվային արժեքի միջակայքեր: Արձագանքի ցուցանիշների դեպքում ուշադրություն է դարձվում ինչպես քաղաքականությունների առկայությանը կամ բացակայությանը, այնպես էլ դրանց որակին՝ օգտագործելով 2.2. աղյուսակում սահմանված «լուսացուցային» դասակարգումները:

Աղյուսակ 2.2. Արձագանքի ցուցանիշների հենանիշային ցուցիչներ և չափանիշներ

Հենանիշային ցուցիչ	Չափանիշ
Կարմիր	Առկա չէ
Դեղին	Առկա է, սակայն իրականացման ճանապարհին ի հայտ են եկել մարտահրավերներ, և (կամ) գործող քաղաքականությունները բավարար չեն խնդրահարույց հարցը լուծելու համար
Կանաչ	Առկա է և պատշաճ իրականացվում է, ուստի արձագանքի այս տեսակն ավելի ընդլայնելու կարիք չկա

Վիճակի կարմիր և դեղին ցուցանիշները հիմք են ծառայում բնապահպանական թեմատիկ մարտահրավերների, իսկ ճնշման ու արձագանքի կարմիր և դեղին ցուցանիշները՝ ոլորտի մարտահրավերների վերհանման համար: Այս մոտեցմամբ ապահովվում է կենտրոնացումը Գյումրու ամենահրատապ բնապահպանական մարտահրավերների վրա:

2.4. գծապատկերում պատկերված է Վիճակ-Ճնշում-Արձագանք ցուցանիշների միջև փոխադարձ կապը: Վիճակի՝ կարմիրով կամ դեղինով առանձնացված ցուցանիշը վկայում է Գյումրիում առկա բնապահպանական խնդրի մասին: Այսինքն՝ բնապահպանական ակտիվների որակը, ռեսուրսների հասանելիությունը կամ կլիմայի փոփոխությանն առնչվող

[3] ԿՔԳԾ-ի մեթոդաբանության մեջ օգտագործված միջազգային հենանիշները միավորում են այնպիսի առաջատար միջազգային կազմակերպությունների կողմից օգտագործվող հենանիշներ, ինչպիսիք են Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունը (ՇՄԵԳ), Միջամերիկյան զարգացման բանկը (ՄԱԶԲ), Դաթչ Վելյուզը (Dutch Values), ՏՀԶԿ-ն (OECD), ՏԲՆՄԽ-ն (ICLEI), Օդիսին (Odyssee), Շենքերի շահագործման գծով ճարտարագետների հավաստագրված հաստատությունը (CIBSE) և էներգետիկայի միջազգային գործակալությունը (IEA):

ռիսկը: Բնապահպանական խնդիրը կապված է ճնշման՝ մի քանի կարմիր կամ նարնջագույն ցուցանիշների հետ, որոնք ցույց են տալիս բնապահպանական խնդիր հարուցող քաղաքային տնտեսության ոլորտների թերությունները: Այս օրինակում օդի աղտոտման պատճառը տրանսպորտի և արդյունաբերության ոլորտներն են: Արձագանքի բացակայության (այս դեպքում ավտոմեքենաներին առնչվող կանոնակարգերի և արտանետումների ցածր մակարդակ ունեցող փոխադրամիջոցների համար ներդրումների բացակայություն) կամ այն դեպքում, երբ արձագանքի արդյունքում չի հաջողվում լուծել վերհանված բնապահպանական խնդիրը, ԿՔԳԾ-ն սահմանում է այդ ցուցանիշների առաջնահերթությունը՝ ընդգրկելով դրանք «Կանաչ քաղաք» ծրագրի մարտահրավերների շարքում:



Գծապատկեր 2.4. «Լուսացույցի» մեթոդաբանությունը տեխնիկական առաջնահերթությունների սահմանման համար

Առաջնահերթությունների սահմանում շահագրգիռ կողմերի արձագանքների հիման վրա և քաղաքական առաջնահերթությունների սահմանում

Գյումրու համար առաջնահերթությունների սահմանման երկրորդ և երրորդ քայլերը համակցվել են քաղաքապետարանի համաձայնությամբ: Ցուցանիշների տվյալների բազայի միջոցով և քաղաքին առնչվող տվյալների հիման վրա վերհանված մարտահրավերների նախնական ցանկը մշակվել և կատարելագործվել է բնակիչների, շահագրգիռ կողմերի և քաղաքապետարանի ներկայացուցիչների՝ տեղական առանձնահատկությունների իմացության և փորձի ներդրման շնորհիվ: Մարտահրավերների առաջնահերթության սահմանմանը վերաբերող մի քանի քննարկումներ անցկացվել են ինչպես երկկողմ, այնպես էլ հանրային աշխատաժողովների ձևաչափով՝ քաղաքապետարանի ներկայացուցիչների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

2018 թվականի դեկտեմբերին քաղաքապետարանում տեղի ունեցած աշխատաժողովի ընթացքում քաղաքապետարանի աշխատակազմը ներկայացրեց իր կարծիքը քաղաքի առաջնահերթ մարտահրավերների վերաբերյալ:

Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ երկու հանրային աշխատաժողովների ընթացքում բնապահպանական առաջնահերթությունները ներկայացվել են արտաքին շահագրգիռ կողմերին, մասնավոր հատվածին, կայուն զարգացման գծով գլխավոր տնօրեններին և իրականացնող միջազգային գործընկերներին, ինչպես նաև քաղաքապետարանի ներկայացուցիչներին: 2018 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած մեկնարկային աշխատաժողովի ընթացքում շահագրգիռ կողմերը և քաղաքապետարանի ներկայացուցիչները քննարկեցին գլխավոր մարտահրավերները և հնարավորությունները: Մարտահրավերներին, ռազմավարական նպատակներին և գործողություններին նվիրված աշխատաժողովի ընթացքում, որը տեղի ունեցավ 2019 թվականի հունիսին, շահագրգիռ կողմերը հնարավորություն ունեցան արձագանքի անանուն ձևաթղթերի վրա գնահատելու բնապահպանական մարտահրավերները 1-ից 5 սանդղակով՝ ինչպես նաև մեկնաբանելու և կարծիք հայտնելու հարց ու պատասխանի, տեղացի և միջազգային ոլորտի փորձագետների, անկախ

մասնագետների ու գիտաշխատողների մասնակցությամբ աշխատաժողովի ընթացքում:

Քայլ 2-ը ներառել է ԿՔԳԾ-ի համար ռազմավարական շրջանակի մշակումը՝ բաղկացած տեսլականներից և ռազմավարական նպատակներից, որոնք կապված են միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախների հետ և առաջնահերթ կարճաժամկետ գործողությունների շարքով, որոնք լուծում են Կանաչ քաղաքի ելակետային իրավիճակում նախանշված առաջնահերթ մարտահրավերները: ԿՔԳԾ-ի փաստաթուղթն այս քայլի արդյունքն է, որն ապահովվել է տեխնիկական գնահատման, շահագրգիռ կողմերի և քաղաքական առաջնահերթությունների սահմանման գործընթացով:

«Կանաչ քաղաք» ծրագրի մարտահրավերները այս գործընթացի երկրորդ քայլի ելակետն են:

2.2.2. Քայլ 2. «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մշակումը

Գծապատկեր 2.5.-ը ամփոփում է ԿՔԳԾ-ի ռազմավարական շրջանակի տարրերը: Ռազմավարական շրջանակը մշակվել է՝ կիրառելով համակարգային, ապացուցահեն և մասնակցային մոտեցում՝ ապահովելու համար, որ ԿՔԳԾ-ի մշակված գործողությունները հիմնված լինեն քաղաքի ամբողջական տեսլականի վրա: Սա ի վերջո կավելացնի դրա իրականացման արդյունավետությունը և մարտահրավերներից յուրաքանչյուրը ժամանակին լուծելու կարողությունը:

Տեսլականը: ԿՔԳԾ-ն ներկայացնում է քաղաքային ինտեգրված տեսլական Գյումրու համար, ինչպես նաև տեսլականներ յուրաքանչյուր բնապահպանական ոլորտի համար մինչև 2035 թվականը: Տեսլականները հիմնված են բնապահպանական թեմաների մարտահրավերների, ինչպես նաև ոլորտի համապատասխան մարտահրավերների վրա և թույլ են տալիս հասկանալ, թե ինչին պետք է հասնել Գյումրիում կյանքի որակի առումով: Տեսլականները հեշտացնում են մի կողմից՝ քաղաքի, մյուս կողմից՝ հանրային, ակադեմիական և մասնավոր հատվածի միջև կապը:

Ռազմավարական նպատակներ: ԿՔԳԾ-ն ներկայացնում է յուրաքանչյուր բնապահպանական թեմայի ոլորտի մեկ ռազմավարական նպատակ2020-2035 թվականների համար: Ռազմավարական նպատակները բարձր մակարդակի և երկարաժամկետ բնապահպանական նպատակներ են, որոնց անհրաժեշտ է հասնել՝ ԿՔԳԾ-ի տեսլականներն իրագործելու համար: Դրանք մշակվել են՝ հիմնվելով բնապահպանական թեմաների մարտահրավերներին վերաբերող պետական ցուցանիշների վրա:



Գծապատկեր 2.5. ԿՔԳԾ-ի շրջանակը

Գործառնական նպատակներ: Գործառնական նպատակները մատնանշում են այն ոլորտը, որի միջոցով կարելի է լուծել ռազմավարական բնապահպանական խնդիրները: Դրանք հիմնված են ցուցիչների տվյալների բազայի ճնշման և արձագանքման ցուցիչների վրա:

Թիրախներ: ԿՔԳԾ-ը ներկայացնում է 2025թ. համար հաշվարկված միջնաժամկետ թիրախային նպատակներ և 2035թ. համար երկարաժամկետ թիրախներ: Յուրաքանչյուր ռազմավարական նպատակ ունի փոխկապակցված մի շարք թիրախներ, որոնք ցույց են տալիս գործնական փուլանիշները ռազմավարական նպատակներին հասնելու ճանապարհին: Թիրախները թույլ են տալիս վերահսկել ռազմավարական նպատակներին հասնելու ուղղությամբ գործընթացը: Թիրախները մշակվում են կարմիր և դեղին կարգավիճակի ցուցիչի, Կանաչ քաղաքի մարտահրավերները սահմանող ճնշման և արձագանքի ցուցիչների արժեքը դեպի բարելավված և հասանելի արժեք փոխելու միջոցով:

Կարճաժամկետ գործողություններ: Առաջարկվող կարճաժամկետ գործողությունները , որոնք ԿՔԳԾ-ն առաջարկում է սկսել իրականացնել 2020 -2025 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, Գյումրու շրջակա միջավայրի համար ռազմավարական նպատակներին հասնելու միջոց են: Գործողությունների մեծ մասը տեղակայված են քաղաքային ոլորտների սահմաններում, բացի որոշ խաչվող գործողություններից, որոնք ուղղակիորեն լուծում են շրջակա միջավայրի մարտահրավերները: Գործողությունները մշակվել են ոլորտի ազգային և միջազգային փորձագետների կողմից և հաշվի են առնում բնապահպանական, ինչպես նաև տնտեսական և սոցիալական ազդեցությունը: Գործողությունների առաջնահերթությունները սահմանված են և մասամբ ներառվելու և հաշվառվելու են քաղաքապետարանի զարգացման հնգամյա և տարեկան ծրագրերում: Գործողության հաջողությունը մշտադիտարկվում է թիրախների համեմատ:

Ի սկզբանե նախանշվել է կարճաժամկետ գործողությունների երկար ցանկ, որից սահմանվել են առաջնահերթ գործողությունները: Գործողությունների առաջնահերթության սահմանման ստորև ներկայացված եռաքայլ գործընթացն ուղղված է բնապահպանական, տնտեսական և սոցիալական ամենամեծ օգուտներն ունեցող գործողությունների ընտրությանը՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով բյուջեի սահմանափակումները:

Տեխնիկական գնահատում

Յուրաքանչյուր գործողություն գնահատվել է 0-3 սանդղակով (զրոն նշանակում է՝ ազդեցություն չունի, իսկ երեքը՝ բարձր ազդեցություն ունի)՝ ըստ կայունության երեք հիմնական կողմերն (շրջակա միջավայր, տնտեսություն և հասարակություն) արտացոլող ֆիլտրերին նպաստելու չափի:

- Բնապահպանական ֆիլտրերի դեպքում գործողությունները կապված են ռազմավարական նպատակների հետ: Գնահատվում է գործողությունների ազդեցությունը ռազմավարական նպատակների վրա: Սա հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես են գործողությունները լուծում տարատեսակ խնդիրները:
- Տնտեսական ֆիլտրերը ներառում են ներդրողի տնտեսական եկամուտներ, տնտեսական աճ, զբաղվածության ապահովում և տնտեսական ներառում դասակարգերը:
- Սոցիալական ֆիլտրերը ներառում են այնպիսի դասակարգեր, ինչպիսիք են հասանելիությունը ծառայություններին, անվտանգությունը, գենդերային հավասարությունը, «կանաչ» վարքագիծն ու իրազեկվածությունը, սոցիալական դիմակայունությունը, քաղաքացիների ներգրավվածությունն ու մասնակցությունը, ինչպես նաև մշակութային ժառանգությունը:

Առաջնահերթությունների սահմանում շահագրգիռ խմբերի կողմից

2019 թվականի հունիսին շահագրգիռ կողմերի մասնակցությամբ տեղի ունեցած աշխատաժողովի ընթացքում վերջիններս գնահատել և քննարկել են մի շարք գործողություններ: Գործողությունները գնահատվել են 1-ից մինչև 5 սանդղակով (1-ը՝ ամենաբարձր, 5-ը՝ ամենացածր առաջնահերթություն ունեցող):

Քաղաքական առաջնահերթությունների սահմանում

2019 թվականի օգոստոսին տեխնիկական և շահագրգիռ կողմերի գնահատման արդյունքները ներկայացվել են քաղաքապետարանի ներկայացուցիչներին, որոնք գործողությունները գնահատել են 1-ից մինչև 3 սանդղակով (1-ը՝ ամենաբարձր, 3-ը՝ ամենացածր առաջնահերթություն ունեցող):

Առաջնահերթության սահմանման երեք քայլերի հիման վրա ընտրվել է բարձր առաջնահերթությամբ 42 գործողություն: Յուրաքանչյուր գործողության համար հաշվարկվել է առավելության գործակից, որի 30%-ը կազմում են տեխնիկական գնահատումը և շահագրգիռ խմբերի կողմից առաջնահերթությունների սահմանումը, իսկ 40%-ը՝ քաղաքական առաջնահերթությունների սահմանումը: Քաղաքական միավորի առավելությունը մի փոքր բարձր է, քանի որ ԿՔԳԾ-ի իրականացումը ղեկավարվում է քաղաքապետարանի կողմից:

Ամբողջական ԿՔԳԾ-ն ներկայացվելու է ավագանուն և քաղաքապետարանի աշխատակազմին 2019 թվականի դեկտեմբերին

: Ավագանու կողմից հաստատվելուց հետո ԿՔԳԾ-ն կօգտագործվի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից՝ Գյումրու տարեկան բյուջեն, ինչպես նաև զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը մշակելու համար:

2.2.3. Քայլ 3. «Կանաչ քաղաք» ծրագրի իրականացումը

3-րդ քայլը՝ «Կանաչ քաղաք» ծրագրի իրականացման համար նախատեսվում է 12-36 ամիս: Քայլ 3-ում ԿՔԳԾ-ի սահուն իրականացումը դյուրացնելու նպատակով ԿՔԳԾ-ի փաստաթուղթը պարունակում է հստակ ուղեցույցներ գործողությունների թիրախների, մշտադիտարկման մեխանիզմների և հաշվետու գործողությունների պատասխանատուների և շահագրգիռ կողմերի վերաբերյալ: Առանձին գործողությունների դեպքում կիրականացվի ֆինանսավորման կարիքների և տարբերակների, ինչպես նաև տնտեսումների ու եկամուտների հետագա վերլուծություն, կնախանշվեն և կօգտագործվեն ֆինանսավորման աղբյուրները: Իրականացվող գործողությունները կմշտադիտարկվեն 2-րդ քայլում սահմանված միջնաժամկետ թիրախների մասով: Այս գործընթացի մշտադիտարկման շրջանակի վերաբերյալ հետագա մանրամասները ներկայացված են 6-րդ գլխում:

2.2.4. Քայլ 4. «Կանաչ քաղաք»-ի զեկույցների կազմում

4-րդ քայլով՝ «Կանաչ քաղաք» ծրագրի զեկույցում գնահատվում է ԿՔԳԾ-ի գործընթացի հաջողությունը, և ձևակերպվում են քաղված դասերը: ԿՔԳԾ-ի՝ 3-րդ քայլի ընթացքում իրականացված մշտադիտարկման հիման վրա քաղաքը գնահատում է, թե ինչ արդյունքներ են ապահովվել Գյումրու շրջակա միջավայրի վերաբերյալ, և ծանուցում այդ մասին հանրությանն ու համապատասխան շահագրգիռ կողմերին: Չորրորդ քայլը ԿՔԳԾ-ի ոչ այնքան վերջին փուլն է, որքան Վիճակի, Ճնշման և Արձագանքի ցուցանիշների վերանայման, ԿՔԳԾ-ի մարտահրավերներին կրկին անդրադարձ կատարելու և անհրաժեշտության դեպքում դրանք վերամշակելու, ինչպես նաև ԿՔԳԾ-ի հետագա գործողությունները մշակելու գործընթացի սկիզբը:

3.Ծանոթացում Գյումրի քաղաքին

[4]**Գյումրու վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Տարածքը՝ 4,400 հեկտար:

Բարձրությունը՝ 1,580 մ /ծովի մակերևույթից/:

Միջին ջերմաստիճանը՝ ամռանը՝ 26°C, ձմռանը՝ -8.5 °C:

Տարերային աղետների ռիսկեր՝ երկրաշարժեր, սողանքներ, ջրհեղեղներ, երաշտ և կարկուտ:

Բնակչություն և ժողովրդագրություն [5]

- Գրանցված՝ 160,000:
- Ներկա (առանց բացակաների)՝ 114,200, որից կանայք՝ 59,384: տղամարդիկ՝ 54,816:

Քաղաքի ՀՆԱ-ն՝ 111,636 մլն ՀՀ դրամ (~210 մլն եվրո):

Քաղաքի բյուջեն՝ 3,470 մլն ՀՀ դրամ (~6 մլն եվրո):

Հիմնական տնտեսական ոլորտները՝ զբոսաշրջություն, ՏՏ և տեքստիլ:

Հիմնական զարգացման ծրագրեր

- Գյումրու երկարաժամկետ ռազմավարական զարգացման 2017-21թթ. ծրագիր:
- Գյումրու կայուն էներգիայի գործողությունների 2017-20թթ. ծրագիր:
- Գյումրու տեղական տնտեսական զարգացման 2019-2020թթ. ծրագիր:
- Շիրակի մարզային զարգացման 2017-25թթ. Ծրագիր: [6]

Գյումրին Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքն է և Շիրակի մարզի վարչական կենտրոնը: Այն գտնվում է Հայաստանի հյուսիսարևմտյան հատվածում՝ Երևանից 120 կմ հեռավորության վրա, ինչպես ցուցադրված է գծապատկեր 3.1.-ում:

Հնագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ ժամանակակից Գյումրին բնակեցված է եղել մ.թ.ա.առնվազն 3-րդ հազարամյակից ի վեր: Մ.թ.ա. 8-րդ դարի ուրարտական արձանագրություններում այն սկզբնապես նշվել է որպես Կումայրի: Կումայրին դարձավ խոշոր և ծաղկուն բնակատեղի, իսկ 19-րդ դարի վերջին վերածվեց Հարավային Կովկասի կարևոր առևտրային և մշակութային կենտրոնի: Քաղաքն առավել ազդեցիկ դարձավ Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղու կառուցման արդյունքում, որը Գյումրին կապում էր Պարսկաստանի Թավրիզ քաղաքի հետ: Հայաստանի 1991 թվականի անկախության հռչակումից, Խորհրդային Միության փլուզումից և 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո քաղաքը վերանվանվեց իր պատմական Գյումրի անվամբ. սկսվեց տնտեսական ճգնաժամ: Սա հանգեցրեց էական արտագաղթի, ինչի հետևանքով Գյումրին այժմ համարվում է նվազող բնակչությամբ քաղաք: Բնակչության կեսից ավելին 46 տարեկանից բարձր է, մինչդեռ ավելի երիտասարդ սերունդը

[1] Տվյալների աղբյուրներն են Գյումրու՝ 2016 թ. զարգացման ռազմավարական ծրագիրը, Գյումրու՝ «Բիոսոֆիա» ՀԿ-ի կողմից մշակված տեղական բնապահպանական գործողությունների ծրագիրը, Շիրակի մարզի՝ 2018 թ. արտակարգ իրավիճակների ռիսկի կառավարման ծրագիրը, Գյումրու քաղաքապետարանի կայքը՝ 2016-2018թթ., Գյումրու՝ 2018 թ. տեղական տնտեսական զարգացման պլանը, Գյումրու՝ 2018 թ. տեղական տարեկան գործողությունների ծրագիրը:

[5] «Գրանցված» բնակչության ցուցանիշը վերաբերում է այն մարդկանց ընդհանուր թվին, ովքեր նշել են, որ վերջին մարդահամարի պահին նրանք կամ եղել են «մշտապես (սովորաբար) ռեզիդենտ/բնակվող և ներկա» Գյումրիում, կամ «ժամանակավորապես ներկա» մարդիկ, ովքեր բնակվում էին Գյումրիում: մարդահամարի պահին, բայց նախատեսում էին այնտեղ ապրել մեկ տարուց պակաս ժամկետով (և ում մշտական բնակությունն այլուր է): «Ներկաների (բացառությամբ բացակայողների)» ցուցանիշը «գրանցված» բնակչության թվաքանակն է՝ հանածայն անձանց, ովքեր վերջին մարդահամարի ժամանակ իրենց անվանում էին «ժամանակավորապես բացակայող» (բնակվելով քաղաքից դուրս մեկ տարուց պակաս):

[6] Տվյալների աղբյուրներն են. Գյումրու ռազմավարական զարգացման պլան, 2016 թ.; Գյումրիում շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների տեղական պլան, Բիոսոֆիա ՀԿ; Շիրակի մարզի համար արտակարգ իրավիճակների ռիսկերի կառավարման պլան, 2018թ.; Գյումրու քաղաքապետարանի վեբ-կայք, 2016-2018; Գյումրու տեղական տնտեսական զարգացման պլան, 2018; Գյումրու տեղական տարեկան գործողությունների պլան 2018:

նախընտրում է տեղափոխվել Երևան կամ արտասահման, մասնավորապես Ռուսաստան կամ եվրոպական երկրներ՝ աշխատանք գտնելու նպատակով[7]:

3.1. Ընդհանուր տեղեկություններ քաղաքի մասին

3.1.1. Աշխարհագրական դիրքը

Գյումրին գտնվում է Շիրակի մարզում՝ Ախուրյան գետի ձախ ափին: Գյումրու սարահարթը, ծովի մակարդակից բարձր է մոտ 1,580 մետր, շրջապատված է Ջաջուռի և Կամխուտի լեռներով, ինչպես նաև հարավ-արևելքում սահմանակցում է Արագած լեռան լանջերին, հյուսիսում՝ Շիրակի լեռնաշղթային, հարավում՝ Արարատյան դաշտավայրին, իսկ արևելքում՝ Փամբակի լեռնաշղթային: Այն սահմանագծվում է Ջերքեզի, Ջաջուռի, Գյումրու և այլ ձորերով: Չնայած Գյումրին գտնվում է նույն բարձրության վրա, ինչ Նեապոլը և Սալոնիկը, այն ունի չափավոր ցամաքային կլիմա[8]:

Աշխարհագրական դիրքի առումով կարևորագույն կետերից մեկն այն է, որ Գյումրին խոցելի է բնական աղետների նկատմամբ: Հայաստանը ներառված է բազմաթիվ աղետների ենթակա 60 երկրների շարքում[9]: Գյումրու, ինչպես նաև ողջ երկրի համար բարձր ռիսկային են համարվում երկրաշարժերը, ջրհեղեղները, երաշտը, կարկուտը և սողանքները: Հայաստանն ավելի խոցելի է բնական աղետների նկատմամբ, քան որևէ այլ եվրոպական կամ Կենտրոնական Ասիայի երկիր: Բնակչության 80 տոկոսի մոտ առկա է աղետային իրավիճակներին ենթարկվելու ռիսկը[10]: Հայաստանի տարածքի 100 տոկոսը ենթակա է երկրաշարժերի, 91 տոկոսը՝ երաշտի, 31 տոկոսը՝ ջրհեղեղների ռիսկի[11]: Հայաստանի սողանքային գոտիները զբաղեցնում են մոտ 122 000 հա, ինչը կազմում է երկրի տարածքի ավելի քան 4 տոկոսը: Գյումրին դասվում է Հայաստանի բնակավայրերի այն 35 տոկոսի շարքում, որոնք գտնվում են սողանքներին ենթակա տարածքներում[12]:

Սեյսմիկ ռիսկը Գյումրու ամենամեծ բնական աղետի սպառնալիքն է՝ հաշվի առնելով քաղաքից 150 կմ-ի վրա գտնվող մի քանի ակտիվ խզվածքները: Գյումրիում տեղի են ունեցել Ռիխտերի սանդղակով ավելի քան ութ մագնիտուդ ուժգնությամբ բազմաթիվ երկրաշարժեր, որոնցից ամենաավերիչը եղել են 1846թ., 1926թ. և վերջերս՝ 1988թ. երկրաշարժերը: 1988թ. երկրաշարժը ծանր հետևանքներ է ունեցել Հայաստանի տնտեսության և բնակչության վրա. զոհվել է ավելի քան 25 000 և վիրավորվել 19 000 մարդ, վնաս են կրել 517 000 տուն[13]: Երկրաշարժի հետևանքով հասցվել է մոտ ԱՄՆ 20 միլիարդ դոլարին համարժեք վնաս[14]: Հայաստանը ներկայումս աշխատում է մի քանի միջազգային կազմակերպությունների հետ՝ իր բնական աղետների ռիսկն ավելի մանրամասն գնահատելու և ռիսկի նվազեցման ու արտակարգ իրավիճակների պատրաստության համապատասխան ծրագրեր մշակելու համար[15]:

---

[7] Գյումրու քաղաքապետարանի կայք, 2016-2018թթ.:
[8] Աղետների ռիսկի կառավարման պլան Շիրակի մարզի համար, 2018թ.:
[9] «Բնական աղետների թեժ կետեր: Ռիսկի գլոբալ վերլուծություն», Համաշխարհային բանկ, 2005թ.:
[10] ԴԱԳ Հայաստանի ազգային ուսումնասիրություն: Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) հայաստանյան գրասենյակ, 2013թ.:
[11] Հայաստան: Ինստիտուցիոնալ մեխանիզմներ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման համար, ԱՆՎԳԿ (GFDRR), 2009թ.:
[12] Սեյսմիկ պաշտպանության ազգային հետազոտությունը և Հայաստանի աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիրը Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից ֆինանսավորվող նախաձեռնություններ էին: ՀԲ-ն Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ կառույցի (GFDRR) հետ գործընկերության միջոցով իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ և օգնել Հայաստանի կառավարությանը մշակել արտակարգ իրավիճակների կառավարման ծրագրեր: Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը մշակել է 2010-2012 թթ. սեյսմիկ ռիսկի գնահատման և ռիսկերի կառավարման ծրագիր:
[13] ՃՊՀԳ հետազոտություն, 2009թ.:
[14] Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, 2016թ.:
[15] Սեյսմիկ պաշտպանության ազգային հետազոտությունը և Հայաստանի աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիրը Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից ֆինանսավորվող նախաձեռնություններ էին: ՀԲ-ն Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ կառույցի (GFDRR) հետ գործընկերության միջոցով իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ և օգնել Հայաստանի կառավարությանը մշակել արտակարգ իրավիճակների կառավարման ծրագրեր: 2010-2012 թթ. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը մշակել է սեյսմիկ ռիսկի գնահատման և ռիսկերի կառավարման ծրագիր:

Գծապատկեր 3.1.Գյումրու աշխարհագրական դիրքը

Գծապատկեր 3.2 . Գյումրու քաղաքային քարտեզը

3.1.2. Քաղաքի հատակագիծը

Գյումրին հայտնի է իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ և յուրահատուկ ճարտարապետական առանձնահատկություններով (տե՛ս 3.3. գծապատկերում ներկայացված օրինակները): 2019թ. ապրիլին Գյումրու քաղաքապետարանը դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ՝ վերջինիս մշակութային պահպանման տարածքների ցանկում ներառվելու համար:



Գծապատկեր 3.3. Շենքերի ճակատների ընտրված օրինակներ Գյումրիում

Գյումրու քաղաքային դիմագիծը ձևավորվել է ռազմական բերդերի կառուցումից հետո, երբ քաղաքը 19-րդ դարում գտնվում էր Ռուսաստանի ազդեցության ներքո: Երեք բերդերը՝ Ալեքսանդրապոլի, Հյուսիսային (Կարմիր) և Հարավային (Սև), մշակութային ժառանգության հայտնի հուշարձաններ են: Բնակելի տեղամասերը կառուցվել են աստիճանաբար՝ բնակիչների սոցիալ-տնտեսական և էթնիկական առանձնահատկություններով պայմանավորված [16]: 20-րդ դարի հետ Գյումրի ներթափանցեց խորհրդային ճարտարապետությունը: Այս «կոպիտ» ճարտարապետության մեջ լայն կիրառում ուներ բետոնը, ինչը հանգեցրեց մոդեռնիստական ոճի բազմահարկ տների տարածմանը:

Քաղաքի կենտրոնական հատվածը, ինչպես նաև սահմանակից Ախուրյանի կիրճը 1980թ. ստեղծված պահպանման տարածքի՝ «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի մաս են կազմում: Այս տարածքն ավելի քան 1 000 հեկտար է և ներառում է 1 200-ից ավելի պատմամշակութային հուշարձան, ինչպես նաև 18-րդ ու 19-րդ դարերով թվագրվող ավելի քան հազար շինություն: Տարածքը Հայաստանի Հանրապետության և աշխարհի այն եզակի վայրերից է, որտեղ կարելի է տեսնել իսկական հայկական քաղաքային ճարտարապետություն: Կումայրի թաղամասի գրեթե բոլոր կառույցները մնացել են կանգուն 1926 և 1988 թթ. ուժեղ երկրաշարժերից հետո, սակայն դրանք պահանջում են հրատապ վերանորոգում, քանի որ 1988թ. երկրաշարժից հետո Հայաստանի Հանրապետության առջև ծառացած խնդիրների, այդ թվում՝ տնտեսական մարտահրավերների պատճառով դրանց պահպանման համար ներդրվել են սահմանափակ միջոցներ:

Գյումրու բնակարանային ֆոնդի զգալի մասը՝ կարկաս-պանելային շենքերի 95%-ը և ծածկերի բարձրացման եղանակով կառուցված շենքերի 100%-ը (որոնք հիմնականում բազմաբնակարան բնակելի շենքեր էին), վնասվել է 1988թ. երկրաշարժի հետևանքով [17]: Ինչ վերաբերում է բնակելի թաղամասերին, Տեքստիլ (գտնվում է տեքստիլի հին գործարանի մերձակայքում) և Գորկու պատմական թաղամասերում (գտնվում է Գորկու այգու մերձակայքում) երկհարկանի տները դեռևս համեմատաբար լավ են պահպանված: Հիմնականում ավերվել են ավելի բարձրահարկ (5, 9-ը, 14 և 24-հարկանի) շենքերը, որոնց զգալի մասը տեղակայված էր առավել ժամանակակից բնակելի տարածքներում (20-րդ դարի կես/վերջ) և նպատակահարմար չէր Գյումրու կավահողերի համար: Ավերված շինությունների թաղամասերից դուրս գտնվող տարածքներում 1988թ.

[16] Սարգիս Մաթևոսյան, XVIII-XIX դդ. Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1985 թ., էջ 22:

[17] Նազարեթյան, Սուվարյան և Սուվարյան (2007թ.), Գյումրի քաղաքի սեյսմիկ ռիսկի հիմնական բաղադրիչները (Հայաստան), Սեյսմոլոգիայի և ինժեներական սեյսմոլոգիայի 5-րդ միջազգային համաժողով:

երկրաշարժից հետո միաժամանակ կառուցվել են մի քանի նոր թաղամասեր, ինչպիսիք են Անի, Մուշ, Ավստրիական և Շերամ թաղամասերը: Վերջիններս ինչպես հարկն է չեն հարմարեցվել հատակագծին, ինչի պատճառով բնակիչները դեռևս իրենց զգում են մեկուսացած քաղաքային կյանքից: Քաղաքի այլ հատվածներում (օրինակ՝ Սավոյան փողոց) ժամանակավոր կացարանների առկայությունը հանգեցրել է տնակային («դոմիկների») թաղամասերի ձևավորման, որոնք դեռևս չեն ստացել կառավարության աջակցությունը՝ սեփականության իրավունքի ճանաչման մի շարք խրթին հայցերի և փոխհատուցման չափի կամ պետությունից ակնկալվող փոխարինող բնակարանային ֆոնդի վերաբերյալ չլուծված վեճերի պատճառով: 2018-2019 թվականներին Գյումրու քաղաքապետարանն իրականացրեց տնակային թաղամասերի վերագնահատում՝ պատրաստելու համար բնակարանային ֆոնդի կարիքների գույքագրում, իսկ ՀՀ կառավարությունն իր հերթին 2019թ. տրամադրել է 3 միլիարդ ՀՀ դրամ՝ լուծելու համար այդ ընտանիքների բնակարանային հարցը: 1988թ. երկրաշարժից 30 տարի անց Գյումրիում դեռևս կա 2 300 ընտանիք, որոնք բնակվում են ժամանակավոր կացարաններում, իսկ քաղաքի բնակելի շենքերի 10%-ը դեռևս փլուզման վտանգի տակ է[18] 1988թ. երկրաշարժի հետևանքով կրած վնասի պատճառով[19]: Այս ենթակառուցվածքը պահանջում է հապճեպ վերակառուցում, վերանորոգում կամ քանդում:

1988թ. երկրաշարժը ցույց տվեց երկրի խոցելիությունը սեյսմիկ իրավիճակներում, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության բացակայությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի խնդիրները հաշվի առնող ու երկրաշարժերի նկատմամբ դիմակայունություն ունեցող քաղաքային նախագիծ և ենթակառուցվածքներ մշակելու անհրաժեշտությունը: Համաշխարհային բանկը և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (ՃՄՀԳ) կատարել են Հայաստանում բնակելի շենքերի և դպրոցների խոցելիության գնահատում, որի արդյունքում պարզվել է, որ խորհրդային ժամանակաշրջանում կառուցված դպրոցների 90%-ը սեյսմիկ անվտանգության մակարդակի բարելավման կարիք ունի: Սակայն տեղական նախագծաշինարարական արդյունաբերությունն արդյունավետ բարելավում իրականացնելու սահմանափակ կարողություն և փորձ ունի[20]:

3.1.3. Ժողովրդագրությունը

Գյումրին ունի մոտ 159 282 բնակչություն, որը 2018թ. հունվարի տվյալներով կազմում է Շիրակի մարզի բնակչության 50%-ը[21]: Քաղաքի բնակչության տարեկան աճը բացասական է՝ -3.5% (Շիրակի մարզի միջին ցուցանիշ): 2013-2018թթ. բնակչությունը 121 300-ից կա նվազել է՝ հասնելով 114 000-ի[22]: Անկումը համընկավ երկրում բնակչության թվաքանակի նվազեցման հետ, ինչը նկատվում է 1988 թվականից 2012 թվականից ի վեր հանրապետությունում բնակչության տոկոսն աճել է (դրական աճը չի գերազանցել 0.5%-ը), բայց ոչ Գյումրիում[23]:

Խորհրդային ժամանակահատվածում Գյումրին բարգավաճող արդյունաբերական, արտադրական և տեքստիլ կենտրոն էր, սակայն նրա արդյունաբերական առաջընթացը կանգնեց 1988 թվականի երկրաշարժի, Խորհրդային Միության փլուզման և 1992-1995 թթ. տնտեսական ճգնաժամի պատճառով: 3.1. աղյուսակում ներկայացված թվերը ցույց են տալիս Գյումրու ներկայիս ժողովրդագրական տվյալները:

[20] Հայաստան, Ավելի ապահով դպրոցների համաշխարհային ծրագիր, 2015թ.:
[21] Շիրակի մարզի 2007-2025թթ. զարգացման ծրագիր:
[22] Շիրակի մարզի 2007-2025թթ. զարգացման ծրագիր:
[23] Համաշխարհային բանկի ազգային զեկույց, 2017թ.:

Աղյուսակ 3.1. Գյումրու սոցիալ-տնտեսական որոշ առանձնահատկություններ

Սոցիալ-տնտեսական կացության բնութագիր	Արժեք		
Աշխատանքային տարիքի հասած բնակչություն (15- 75 տարեկան)	123 640	Տղամարդ	46.4%
		Կին	53.6%
Տնտեսապես ակտիվ բնակչություն	75 420 (61%)	Տղամարդ	46%
		Կին	54%
Գրանցված գործազուրկ բնակչություն (պաշտոնական թիվ)[24]	10 494 (8.5%)	Տղամարդ	30%
		Կին	70%
Համայնքի տնային տնտեսությունների թիվը	31 712[25]		
Աղքատության նպաստի պաշտոնական ցանկում ընդգրկված տնային տնտեսություններ	9 909 (31%)[26]		

Գյումրու և երկրի մյուս հատվածների առջև ծառացած սոցիալական մարտահրավերները նույնն են. երիտասարդների շրջանում գործազրկության բարձր մակարդակը և արտագաղթը, որոնք հանգեցրել են քաղաքային լանդշաֆտի փոփոխման: Վերջին երեք տասնամյակների ընթացքում 50 000 մարդ արտագաղթել է Գյումրիից՝ աշխատանք և ավելի լավ սոցիալ-տնտեսական հնարավորություններ փնտրելու նպատակով: Սակայն Գյումրին միշտ խաղացել և շարունակում է խաղալ կարևոր դեր Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացման գործում[27]: Տեղացիներն ասում են. «Գյումրու համուհոտը իր ժողովուրդն է»: Գյումրին նշանավոր արվեստագետների, երաժիշտների, մրցանակակիր մարզիկների, տաղանդավոր արհեստավորների և շինարարների բնօրրանն է:

3.1.4. Տնտեսությունն ու ենթակառուցվածքները

Գյումրու ՀՆԱ-ն մոտ 116 միլիարդ ՀՀ դրամ է: Համաձայն Շիրակի մարզի զարգացման ռազմավարության՝ մարզի յուրաքանչյուր շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմում է Հայաստանի յուրաքանչյուր շնչին բաժին ընկնող միջին ՀՆԱ-ի 52%-ը: 2017թ. երկրի յուրաքանչյուր շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն հաշվարկվել է 1.87 միլիոն ՀՀ դրամ:

1991 թվականին Հայաստանի՝ նախքան 1988թ. երկրաշարժը գրանցված ՀՆԱ-ի աճը 41%-ից նվազեց մինչև -11%[28]՝ 20 տարի անց դառնալով մոտ 7%[29]: Երկրաշարժի հետևանքով վնասվել էին էլեկտրամատակարարման և ջրամատակարարման համակարգերն ու գազատարները: Հայաստանը կորցրել էր իր արտադրական ներուժի մոտ 40%-ը, քանի որ շատ արդյունաբերական գործարաններ ավերվել էին կամ վնասվել: Չնայած վերջին ժամանակներում փոքր մասնավոր ձեռնարկություններում կատարված ներդրումներին՝ ներկայումս լուրջ արդյունաբերական զարգացում չկա: Մոտ 2150 գրանցված մասնավոր ձեռնարկությունների ավելի քան 80%-ն անհատ ձեռնարկատերեր են, իսկ միջին և մեծ ընկերությունները 1%-ից պակաս են: Վերջիններս արտադրական ձեռնարկություններ են, այդ թվում՝ սննդի, տեքստիլի, էլեկտրոնիկայի,

[24] Համաձայն ոչ պաշտոնական տվյալների՝ գործազրկության տոկոսը փոքր-ինչ ավելի բարձր է (տե՛ս, օրինակ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Շիրակի տարածքային բաժանմունք, առ 04.05.2017):

[25] Գյումրու 2018թ. տեղական տնտեսական զարգացման պլան:

[26] ՀՀ ՇՄ ԳՀ սոցիալական աջակցության «Գյումրի-1», «Գյումրի-2» տարածքային բաժիններ, առ 10.02.2017թ.:

[27] Արժեքավոր կառույցների շարքում են քաղաքի երեք բարձրագույն ուսումնական հաստատությունները, հինգ թանգարանները, երկու պատկերասրահները, հինգ գրադարանները, շախմատի, պարի և բազմաթիվ մարզադպրոցները, գեղարվեստի դպրոցը, հինգ երաժշտական դպրոցները, ինչպես նաև դրամատիկական ու տիկնիկային թատրոնները:

[28] 2013թ. ռիսկերի պետական համապարփակ գնահատման և խոցելիության նվազեցման շնորհիվ Հայաստանում խոշոր աղետի հավանականությունը 20% է և յուրաքանչյուր դեպքում կարող է հանգեցնել ՀՆԱ-ի 12.7% կորստի:

[29] Տվյալները հավաքագրվել են 1991թ. անկախության հռչակումից հետո: Համաձայն ՀԲ-ի զարգացման ցուցանիշների՝ 1990-2007թթ. Հայաստանի բնակչությունը նվազել է ավելի քան 500 000-ով:

մեքենայական սարքավորումների արտադրությամբ և մետաղի մշակմամբ զբաղվող, մինչդեռ մասնավոր ձեռնարկությունների մեծ մասը հիմնականում աշխատում է մանրածախ վաճառքի և ծառայությունների ոլորտում: Գյումրին Շիրակի մարզի բնակչության ֆինանսական կենտրոնն է, քանի որ քաղաքում գործում են Հայաստանի 12 բանկերի և 6 վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը: ՀՀ կառավարությունը գումարներ չի հատկացնում փոքր բիզնեսի զարգացման համար, սակայն Գյումրու զարգացման ռազմավարական ծրագրում նշվում է փոքր և միջին ձեռնարկությունների հիմնադրման համար ազատ տնտեսական գոտի և նպաստավոր ֆինանսական (ինստիտուցիոնալ) պայմաններ ստեղծելու, ինչպես նաև քաղաքի կիրթ երիտասարդներին վերապատրաստելու ու դրանցում ներգրավելու խթանների ստեղծման կարևորությունը: Արդեն իսկ մշակվել են մի քանի առանձին նախաձեռնություններ՝ քաղաքի տնտեսությունը վերականգնելու համար: Դրանք ներառում են բնակարանային ֆոնդի աստիճանական, բայց շարունակական ստեղծումը՝ 1988 թվականի երկրաշարժից հետո մնացած ժամանակավոր տնակներից աստիճանաբար ձերբազատվելու համար, Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի ստեղծումը[30], ինչպես նաև «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի վերանորոգումն ու ընդլայնումը:

Գյումրու տնտեսության գլխավոր զարգացող ճյուղը զբոսաշրջությունն է, որն արագ աճ է ապրում, ինչի մասին վկայում է զբոսաշրջիկների և վերջին երկու տարվա ընթացքում բացված զբոսաշրջային ընկերությունների ու հաստատությունների աճող թիվը: Զբոսաշրջության զարգացմանը նպաստել է քաղաքը սպասարկող թռիչքների թվի աճը: 2018 թվականի առաջին կիսամյակում թռիչքների և վայրէջքների թիվը 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ավելացավ 104-ով (84%): Գյումրու պատմամշակութային կենտրոնը՝ «Կումայրի արգելոց-թանգարանը», զբոսաշրջության զարգացման կիզակետն է [31] : Ի դեպ, Գյումրու քաղաքապետարանի առաջնահերթություններից մեկն է քաղաքը դարձնել միջազգային և Հայաստանի ներքին զբոսաշրջության հիմնական ուղղություն[32]:

Գյումրին խոշոր տրանսպորտային հանգույց է, որը միջպետական մայրուղով և երկաթուղային կայարանով կապված է Հայաստանն ու Վրաստանը միմյանց կապող Երևան-Թբիլիսի-Բաթումի երկաթուղու և Շիրակի միջազգային օդանավակայանի հետ: 2016 թվականից ի վեր ռուսական բյուջետային ավիաուղիների մուտք գործելուց հետո օդանավակայանի ուղևորափոխադրումների թիվը զգալիորեն աճել է՝ 2018 թվականին 12 000-ից հասնելով ավելի քան 165 000 ուղևորի[33]: Ուղևորների մեծ մասը Հայաստանից Ռուսաստան և հակառակը մշտապես երթևեկող սեզոնային արտագնա աշխատողներ են: Երկաթուղին տնտեսական առումով խիստ կարևոր է, քանի որ այն օգտագործվում է՝ Հայաստանի արտահանումների մոտ երկու երրորդը փոխադրելու համար[34], իսկ օդանավակայանը միջազգային փոխադրումներով Հայաստանի համար իր կարևորությամբ երկրորդն է[35]: Հայաստանի համար երկաթուղին Եվրոպայի և Ռուսաստանի հետ առևտրային բեռնափոխադրումների հիմնական վերգետնյա տարբերակն է, քանի որ Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանները փակ են՝ երկարատև ռազմական հակամարտության պատճառով:

3.2. Որոշումների կայացման գործընթացը և կառավարումը

3.2.1. Հակիրճ նկարագրություն

Գյումրին վարչական կենտրոն է, որը գտնվում է Շիրակի մարզի ուղղակի իրավազորության ներքո: Քաղաքը չունի օրենսդրական գործառույթ, սակայն ղեկավարվում է պետական օրենքներով, որոնք ընդունվում են Ազգային ժողովի և ՀՀ կառավարության կողմից ու այնուհետև տեղայնացվում

[30] Կենտրոնը, որը բացվել է 2014 թվականին, ամենախոշորն է տարածաշրջանում: 25 միջազգային և տեղական կազմակերպություններ այստեղից աշխատեցնում են իրենց SS բիզնեսը:
[31] Գյումրու տեղական տնտեսական զարգացման պլան (2018թ.):
[32] Տեղական տնտեսական զարգացման պլան, Գյումրի, 2018թ.:
[33] ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, 2018թ. Վիճակագրություն:
[34] Հայաստան: Ինստիտուցիոնալ մեխանիզմներ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման համար, ԱՆՎԳԿ (GFDRR), 2009թ.:
[35] Հայաստան: Ինստիտուցիոնալ մեխանիզմներ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման համար, ԱՆՎԳԿ (GFDRR), 2009թ.:

մարզային մակարդակով՝ համաձայն զարգացման երկարաժամկետ ռազմավարությունների (տե՛ս 3.2.2 գլուխը):

Գյումրու կառավարումն իրականացվում է ավագանու կողմից, որն ընտրում է քաղաքապետ և վերահսկում նրա գործունեությունը: Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդունում են հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրեր և հաստատում տարեկան բյուջեները, որոնք տեղական համայնքի առաջնահերթությունները և գործողությունները կարգավորող միակ փաստաթղթերն են: Ինչպես ցուցադրված է գծապատկեր 3.4.-ում, պետական քաղաքականությունն ու ռազմավարություններն իրականացվում են քաղաքային մակարդակով, եթե դրանք ներառված են քաղաքի հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրում և այնուհետև ֆինանսավորվում են քաղաքի տարեկան բյուջեից կամ արտաքին աղբյուրներից:

Միջազգային և ազգային քաղաքականություն, պլաններ, ծրագրեր և ռազմավարություններ



Գծապատկեր 3.4. Հայաստանի Հանրապետությունում և Գյումրիում տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականությունների, ծրագրերի, ռազմավարությունների, իրավական ակտերի և ենթաօրենսդրական ակտերի միջև փոխկապակցվածության հակիրճ նկարագիր

Գյումրու քաղաքապետարանը նպատակ ունի մատուցելու թափանցիկ, հասանելի և արդյունավետ ծառայություններ իր քաղաքացիներին և գործարարության ոլորտի ներկայացուցիչներին: Օրինակ, խոշոր ծրագրերի վերաբերյալ վերջնական որոշումներ կայացնելուց առաջ քաղաքապետարանն արդիականացնում է հանրային քննարկումներ՝ հրավիրելով զանգվածային լրատվության միջոցներին և տեղեկացնելով բոլոր շահագրգիռ կողմերին այդ ծրագրերի մասին: Քննարկումների ժամանակ ներկայացված հիմնական առաջարկություններն այնուհետև ներառվում են ծրագրի իրականացման քայլերի շարքում[36]: Դա արտացոլված է գծապատկեր 3.5.ում, որտեղ ներկայացված են քաղաքապետարանի հաստատման գործընթացի հիմնական քայլերը:

Ծրագրերի ընդունումից հետո Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմը քաղաքի տեղական բյուջեից ֆինանսավորում է ծրագրային միջոցառումների իրականացումը (տե՛ս 3.2.2. գլուխը), կամ եթե ծրագրերը պահանջում են լրացուցիչ ֆինանսավորում, ներկայացնում դիմումներ՝ պետական բյուջեից սուբվենցիա կամ արտաքին վարկային միջոցներ ստանալու համար:



Գծապատկեր 3.5. Տեղական ինքնակառավարման մարմինների՝ ծրագրերի հաստատման գործընթաց (ըստ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին օրենքի և Գյումրու ավագանու կանոնակարգերի):

[36] Տեղական տնտեսական զարգացման պլան, Գյումրի, 2018թ.:

3.2.2. Տարեկան բյուջեն

3.2.3. Գյումրու տարեկան քաղաքային բյուջեն 3.274 միլիոն ՀՀ դրամ է (մոտավորապես 6 միլիոն եվրո), որից համայնքի՝ տեղական հարկերից ստացված սեփական եկամուտները կազմում են 37.6%: Մնացածը սուբսիդավորվում է պետական բյուջեից: Այս բյուջեն լրացվում է միջազգային հաստատություններից ստացված ֆինանսավորմամբ քաղաքային բազմաթիվ ծրագրերի և վերականգնման խոշոր նախաձեռնությունների Առկա գործողությունների ծրագրեր

Սույն ԿՔԳԾ-ն մշակվել է որպես նրա ավելի լայն կառուցվածքային շրջանակի բաղադրիչ՝ գործող քաղաքականություններին ու ծրագրերին համապատասխան: Կարևոր փաստաթղթերն ամփոփ ներկայացված են 3.2. աղյուսակում, սակայն դա, իհարկե, վերջիններիս սպառիչ ցանկը չէ, քանի որ քաղաքականության ավելի լայն շրջանակը կազմված է այլ էական համատնտեսական և ոլորտային ռազմավարություններից ու ծրագրերից:

Գյումրու քաղաքապետարանը ինքնուրույն ոլորտային ուսումնասիրություններ մշակելու, համապարփակ ներդրումային ծրագրեր նախագծելու և իրականացնելու սահմանափակ կարողություն ունի: Մինչ օրս ուսումնասիրությունները և ծրագրերը հիմնականում մշակվել և իրականացվել են իրականացնող գործընկերների զգալի աջակցությամբ:

Սույն շրջանակը քննադատվում է այն պատճառով, որ չի պարունակում Գյումրու տնտեսության կառուցվածքի երկարաժամկետ տեսլական, չի սահմանում հստակ ներդրումային առաջնահերթություններ, ինչպես նաև գնահատական չի տալիս զարգացման տարբերակներին: Քաղաքը հավասարակշռության բերելու, այն պահպանելու և դրա տնտեսական, ժողովրդագրական աճին աջակցելու, ինչպես նաև դեպի ավելի կանաչ տնտեսություն շարժվելու համար պահանջվող տնտեսական գործիքների և ծրագրերի բացակայությունը դիտվում է որպես խոչընդոտ:

Աղյուսակ 3.2. Առկա գործողությունների ծրագրեր

Փաստաթուղթ	Նկարագրություն
Գյումրու հնգամյա զարգացման ռազմավարական ծրագիր (2017-2021թթ.)	ՀՀ օրենսդրության համաձայն՝ ազգային քաղաքականությունները պետք է ներառվեն զարգացման ռազմավարական ծրագրերում, ինչը դյուրացնում է դրանց իրականացումը: 2016 թվականին ընդունված գործող ծրագրով սահմանվում են հետևյալ հիմնական առաջնահերթությունները՝ շրջակա միջավայրի պահպանություն, համայնքի ուժեղացված դիմակայունություն բնական աղետների դեպքում, արդյունավետ քաղաքաշինության պահպանում, վերականգնում և կանաչ տարածքների ստեղծում, ինչպես նաև թափոնների հավաքման և քաղաքացիների կենսապայմանների բարելավում: Բազմոլորտ առաջնահերթություններն արդիականացված են 19 հատուկ ծրագրային նախաձեռնությունների՝ պատասխանելու համար Գյումրու ներկայիս տնտեսական, սոցիալական և բնապահպանական մարտահրավերներին
Գյումրու տեղական տնտեսական զարգացման պլան	Սույն պլանը, որը մշակվել է «Քաղաքապետները հանուն տնտեսական զարգացման» (Mayors for Economic Growth) նախաձեռնության անմիջական աջակցությամբ, կենտրոնանում է ներկայիս ռեսուրսների և հնարավորությունների օգտագործման վրա՝ համառոտ շարադրելով համայնքի տեսլականը և ներկայացնելով այն իրագործելի նպատակները, որոնք այդ տեսլականը կյանքի կկոչեն: Փաստաթուղթը մշակվել է համագործակցային գործընթացի միջոցով՝ տեղացի շահագրգիռ կողմերի և անմիջական շահառուների ներգրավմամբ՝ նրանց նաև իրականացման փուլում ներգրավելու համար: Պլանը նպատակ ունի դարձնելու Գյումրին ներգնա և ներքին զբոսաշրջության հիմնական ուղղություններից մեկը, ձևավորել մրցակցային կրթական և տեխնիկական կենտրոն, վերականգնել քաղաքի նախկին առևտրաարդյունաբերական ներուժը, դարձնել այն տարածաշրջանային նշանակության տրանսպորտային և նյութատեխնիկական հանգույց
Գյումրի քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիր	Գյումրին «Քաղաքապետները հանուն կլիմայի և էներգետիկայի» դաշնագրի ստորագրող կողմ է և համապատասխանաբար պարտավորություն է ստանձնել մինչև 2020 թվականը նվազեցնել իր ջերմոցային գազերի արտանետումները 9607 տոննա CO_2-ի չափով, ինչը համարժեք է տարեկան մոտ 227 տոննա CO_2-ի: Ծրագիրը, որն ընդունվել է 2017 թվականին, ներառում է բոլոր ոլորտներում այդ թիրախի ապահովմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ էներգաարդյունավետ ծրագրեր և այնպիսի ներդրումներ, որոնք ծածկում են մեծ դրամական միջոցներ պահանջող և այնպիսի կազմակերպչատեղեկատվական միջոցառումներ, ինչպիսիք են վարքագծային փոփոխություններն ու իրազեկումը: Փաստաթղթում առաջարկվում են միջոցառումներ՝ Գյումրու կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի թիրախին հասնելու համար մինչև 2020 թվականը Գյումրի քաղաքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումը կրճատել 20%-ով
Գյումրու՝ 2005 թվականի գլխավոր հատակագիծ	Փաստաթուղթն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2015 թվականին՝ նպատակ ունենալով ուղղորդել քաղաքի մեծածավալ վերակառուցումը՝ հիմնվելով քաղաքի հնարավորությունների գնահատման վրա: Սակայն ծրագիրը չիրականացվեց, և դրան փոխարինեցին հակասական կառուցապատումն ու

Փաստաթուղթ	Նկարագրություն
	նախաձեռնությունները: Օրինակ, բազմաթիվ բնակելի և արդյունաբերական շենքեր գտնվում են գլխավոր հատակագծի բնօրինակում նշված «կանաչ տարածքներում»: Այս գլխավոր հատակագիծը, որն այժմ հնացած է, դեռևս հրապարակումից հետո քննադատվել է՝ ոչ իրատեսական լինելու համար
Գյումրու՝ 2018թ. աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ծրագիր	Այս ծրագիրը, որը հաստատվել է քաղաքապետի կողմից և համակարգվում է Արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) ու Շիրակի մարզի վարչակազմի կողմից, ԱՌՆ-ի համար առաջնահերթություն համարվող բարձրագույն ռիսկեր է առանձնացրել ճանապարհների և արտաքին լուսավորության վատ վիճակը, սեյսմիկ սպառնալիքներն ու ջրհեղեղները, հեղեղաջրերի արտահոսքը, ինչպես նաև բնակչության համեմատաբար ցածր իրազեկվածությունը նման վտանգների մասին: ԱՌՆ-ի ծրագիրը սեզոնային բարձր ռիսկերի շարքում նշում է նաև սառնամանիքը, ուժեղ քամիները, անտառային հրդեհները և կլիմային առնչվող այլ սպառնալիքներ
Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր	Այս ռազմավարական ծրագիրը, որը մշակվել է Հայաստանի՝ Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) շրջանակներում, առանձնացնում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները և նպատակները: Այն նաև ներկայացնում է դրանց ապահովման հետ կապված հիմնական մարտահրավերները և կարևոր բարեփոխումները, այդ թվում՝ գերակա նպատակներին հասնելու համար պահանջվող քաղաքականության միջոցառումները: Բնապահպանությունը նույնպես ներառված է, սակայն փաստաթուղթը հիմնականում

Փաստաթուղթ	Նկարագրություն
	կենտրոնանում է տնտեսական և սոցիալական առաջնահերթություններին հասնելու վրա (կայուն)
Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություն	Այս փաստաթուղթն ազգային զարգացման ռազմավարությունը տեղայնացնում է մարզային (Շիրակի մարզի) մակարդակով: Ուստի այն պարունակում է մարզային մակարդակի զարգացման նպատակներ և ուղղություններ, որոնք սահմանվել են ներկայիս վիճակի, մարտահրավերների և հնարավորությունների համատեքստում: Բացի ազգային նպատակները տեղայնացնելուց, այն նաև սահմանում է առնչակից գործողություններ տեղական ձեռնարկությունների և հաստատությունների համար

4.«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի ելակետային ցուցանիշները

Սույն գլխում ներկայացված եզրահանգումները ԿՔԳԾ-ի ելակետային ցուցանիշների հիմքն են և ԿՔԳԾ-ի գործընթացի առաջին քայլի՝ ելակետային ցուցանիշների գնահատման մի մասը: Դրանք հիմնված են Գյումրուն առնչվող մեծածավալ տեղեկատվության վերհանման, հավաքագրման, մշակման և վերլուծության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվության արդյունքների վրա: Ինչպես բացատրվել է 2-րդ գլխում, ելակետային ցուցանիշները բաղկացած են Ճնշում-Վիճակ-Արձագանք առանցքի վրա հիմնված ցուցանիշների երեք խմբից, որոնց միջոցով կարելի է վեր հանել մարդու գործունեության (ճնշման ցուցանիշներ) բացասական ազդեցությունը բնապահպանական ակտիվների (վիճակի ցուցանիշներ) վրա քաղաքականության, իրավական և կարգավորման շրջանակի (արձագանքի ցուցանիշներ) բացերի հետ մեկտեղ:

Սույն գլխում ներկայացված գնահատման համար օգտագործվում է եռամակարդակ սանդղակ, որտեղ.

- Գյումրու առջև ծառացած ամենահրատապ բնապահպանական խնդիրները նշված են կարմիրով,
- բարձր առաջնահերթություն չունեցող, սակայն, այնուամենայնիվ, բարելավում պահանջող ոլորտները նշված են դեղինով,
- «Կանաչ քաղաք» ծրագրի հարաչափերին մեծապես համապատասխանող ոլորտները նշվում են կանաչով:

Սույն գլխում նախ՝ սահմանվում են յուրաքանչյուր բնապահպանական թեմայի հիմնական մարտահրավերները վիճակի համապատասխան ցուցանիշների հիման վրա, և այնուհետև յուրաքանչյուր ոլորտի մարտահրավերները՝ հիմնված ճնշման ու արձագանքի ցուցանիշների վրա: Վերջում ներկայացվում են առաջնահերթ գործողությունների ոլորտները, որոնք որոշվել են ցուցանիշների վերլուծության և գլխավոր մարտահրավերների վերհանման արդյունքում: Առաջնահերթ գործողությունների ոլորտները կապում են «Կանաչ քաղաքի» ելակետային ցուցանիշները ԿՔԳԾ-ի գործողությունների մշակման հետ, որոնք ներկայացված են 5-րդ գլխում :

4.1. Հիմնական մարտահրավերները

Բնապահպանական թեմայի մարտահրավերներն այստեղ ներկայացված են «վիճակի» ցուցանիշի հետևյալ թեմատիկ վերնագրերի ներքո.

- օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում,
- կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր,
- ջուր,
- դիմակայունություն բնական աղետների ռիսկի նկատմամբ և հարմարեցում դրան,
- հողեր:

Այնուհետև «վիճակի» այս ցուցանիշներից յուրաքանչյուրի վրա ազդող «ճնշման» և «արձագանքի» ցուցանիշները հակիրճ ներկայացված են որպես ոլորտային մարտահրավերներ, մասնավորապես.

- տրանսպորտ ,
- շինարարություն, էներգամատակարարում և լուսավորություն,
- արդյունաբերություն ,
- կոշտ թափոններ,
- ջուր,
- հողօգտագործում:

Շահագրգիռ կողմերի արձագանքը ներկայացված է յուրաքանչյուր բնապահպանական թեմայի և ոլորտի առնչությամբ: Դասակարգումը հիմնված է ԿՔԳԾ-ի՝ Գյումրու առջև ծառացած մարտահրավերների, տեսլականների, ռազմավարական նպատակների և գործողությունների

վերաբերյալ 2019 թվականի հունիսին տեղի ունեցած երկրորդ աշխատաժողովի ընթացքում շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Գյումրու քաղաքապետարանի անդամների հետ խորհրդակցության վրա: Այն լրացվել է ԿՔԳԾ-ի խորհրդատվական խմբի կողմից նույնպես 2019 թվականի հունիսին կազմակերպված ֆոկուսային խմբում կայացած լրացուցիչ խորհրդակցության երկրորդ փուլով[37]:

Շահագրգիռ կողմերի արձագանքներին նվիրված հանդիպումից հետո մարտահրավերներն ավելի են որոշակիացվել, ուստի 4.3. աղյուսակում և այս գլխում ներառված համապատասխան այլ աղյուսակներում նշված մարտահրավերների միջև որոշ տարբերակման աստիճան կա :

Շահագրգիռ կողմերի արձագանքը գրանցվել է խորհրդատուների թիմի կողմից աշխատաժողովի հետևյալ երեք թեմատիկ խմբերին առնչվող արձագանքի ձևաթղթերի միջոցով.

- խումբ 1. օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումներ,տրանսպորտ, կոշտ թափոններ,
- խումբ 2. ջրային ռեսուրսներ և ջուր, կանաչ տարածքներ և կենսաբազմազանություն, հող և հողօգտագործում, հողեր,
- խումբ 3. էներգամատակարարում, շինարարություն, լուսավորություն, արդյունաբերություն և դիմակայունություն:

Արձագանքի ձևաթղթերն ամբողջացվել են մարտահրավերները, նպատակներն ու գործողությունները ներկայացնելուց, ինչպես նաև խմբային քննարկումներից հետո: Բոլոր մասնակիցները գնահատել են բնապահպանական թեմաների և ոլորտների ողջ ցանկը, ինչպես նաև դրանց համապատասխան խմբերին առնչվող մարտահրավերները: Մասնակիցները բաժանվել են խմբերի՝ համաձայն իրենց որակավորման և փորձառության:

Պատասխանողների ընդհանուր ստանդարտ թիվը 30 է, նրանց թիվը, ըստ խմբերի, հետևյալն է.

- խումբ 1՝ 10
- խումբ 2՝ 12
- խումբ 3՝ 8

Յուրաքանչյուր թեմա, ոլորտ և մարտահրավեր կարող էր գնահատվել 1-5 սանդղակով, որտեղ 1-ն ամենաբարձր առաջնահերթությունն էր, իսկ 5-ը՝ ամենացածրը: Տվյալները վերլուծվել են միավորի, միջին միավորի, ըստ ոլորտի գնահատման և ընդհանուր գնահատման:

Համաձայն 4.1. աղյուսակում ներկայացված վերլուծության արդյունքների և 4.2. աղյուսակում օդի որակն ու ջերմոցային գազերի արտանետումները գնահատվել են որպես ամենաբարձր առաջնահերթություն ունեցող բնապահպանական թեմատիկ ոլորտ, իսկ «Ջուրը»՝ որպես ամենաբարձր առաջնահերթություն ունեցող ոլորտ:

Չնայած պատասխանողների ստանդարտ թիվը փոքր է, նրանց փորձառության մակարդակը կարող է համարվել բարձր՝ հաշվի առնելով տեխնիկական փորձառությունն ու տեղական համատեքստի իմացությունը:

Աղյուսակ 4.1. Շահագրգիռ կողմերի արձագանքը բնապահպանական թեմատիկ ոլորտների առաջնահերթությունների վերաբերյալ

Դաս	«Կանաչ քաղաքի» բնապահպանական թեմատիկ ոլորտը	Միջին միավորը
1	Օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում	2.23
2	Ջրային ռեսուրսներ	2.67
3	Կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	2.70
4	Հարմարեցում բնական աղետների ռիսկին և դիմակայունություն դրանց նկատմամբ	3.60
5	Հողեր	3.73

[37] Ֆոկուսային խումբը ստեղծվել է Գյումրու ԿՔԳԾ-ի թիմի կողմից՝ "Success Lane" ՀԿ-ի (տկն Մարիա Կարապետյան), «Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն ՀԿ-ի (տկն Հեղինե Ադամյան), Նոր ՔՀԿ-ների ստեղծման նախաձեռնող խմբի (տկն Նաիրա Համբարձումյան), արվեստագետ Իրինա Հովակիմյանի, ուսուցիչ-հոգեբան պրն Կարեն Գևորգյանի և ձեռնարկատեր պրն Հայկ Բաղալյանի մասնակցությամբ:.

Աղյուսակ 4.2. Շահագրգիռ կողմերի արձագանքը ոլորտների առաջնահերթություններին

Դաս	«Կանաչ քաղաքի» ոլորտները	Միջին միավոր
1	Ջուր	2.27
2	Կոշտ թափոններ	2.87
3	Արդյունաբերություն	3.25
4	Տրանսպորտ	3.24
5	Շինարարություն, լուսավորություն և էներգամատակարարում	3.20
6	Հողօգտագործում	3.30

4.3. Աղյուսակը ներկայացնում է «Կանաչ քաղաք» ծրագրի՝ տեխնիկական գնահատման և շահագրգիռ կողմերի արձագանքների ստացման ողջ ընթացքում վերհանված մարտահրավերների ամփոփ նկարագրությունը:

Աղյուսակ 4.3. Ըստ բնապահպանական թեմայի և ոլորտի որոշված հիմնական մարտահրավերների ամփոփ ներկայացում

	Բնապահպանական թեմա/ և ոլորտ	Հիմնական մարտահրավեր
Բնապահպանական թեմայի ոլորտ	Օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում	• Փոշով աղտոտվածության բարձր մակարդակ, • ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիայի արդյունքում առաջացող վտանգ, • CO_2-ի բարձր մակարդակ՝ յուրաքանչյուր շնչի հաշվով ու ածխածնի արտանետումների քանակ ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր միավորի համար, • օդի որակին առնչվող սահմանափակ տվյալներ ու մշտադիտարկում:
	Ջրային ռեսուրսներ	• Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի մակարդակը գետերում և լճերում, մասնավորապես Ախուրյան գետում, • մակերևութային ջրերի որակի անբավարար մշտադիտարկում:
	Կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	• Կանաչ տարածքների անբավարար չափ/կանաչ տարածքների ու բնակիչների ցածր հարաբերակցություն, • կենսաբազմազանությանն առնչվող անբավարար տվյալները/մշտադիտարկման բացակայություն:
	Հողեր	• Աղտոտված ու աղտոտման ենթակա տարածքների քանակ, • հողերի մասով սահմանափակ տվյալների հասանելիություն ու մշտադիտարկման բացակայություն:
	Հարմարվողականություն բնական աղետներին և դիմակայունություն դրանց նկատմամբ	• Բնական աղետների՝ ջրհեղեղների, երաշտի, երկրաշարժերի հետևանքով հասցված գնահատված տնտեսական վնասը որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, • ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի բարձր տոկոս, • ռիսկի ենթակա տնային տնտեսությունների բարձր տոկոս, • բնական աղետների մասին իրազեկվածության և պատրաստվածության ցածր մակարդակ:
Քաղաքային տնտեսության ոլորտներ	Տրանսպորտ	• Ավտոմեքենաների շարժակազմի (ընդհանուր և ըստ տրանսպորտային միջոցի տեսակի) բարձր միջին տարիք, սարքինության վիճակ և օգտագործման վազք, • թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաների վառելիքի այրումից առաջացած արտանետումներին ներկայացվող չափանիշներ (Եվրո-4), • մասնավոր ավտոմեքենաների օգտագործման բարձր և աճող տարածվածությունը, • ճանապարհի՝ բացառապես հանրային և անշարժիչ տրանսպորտի համար նախատեսված կարճ հատվածներ՝ արտահայտված կիլոմետրերով, • հանրային տրանսպորտի վատ ենթակառուցվածք, ծառայություններ, • տրանսպորտային ոլորտի ոչ արդյունավետ կառավարում:
	Շինարարություն, էներգամատակարարում և լուսավորություն	• Էլեկտրականության և ջերմային էներգիայի սպառման բարձր մակարդակներ բնակելի և ոչ բնակելի շենքերում, • փողոցային լուսավորության՝ ճանապարհի յուրաքանչյուր կիլոմետրի համար օգտագործվող էլեկտրականության բարձր մակարդակ:

	Բնապահպանական թեմա/ և ոլորտ	Հիմնական մարտահրավեր
		• Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի մասին հանրային իրազեկվածության բացակայություն, • «Կանաչ» շինարարության գործելակերպի և հավաստագրման բացակայություն, • սահմանափակ ներդրումներ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում:
	Արդյունաբերություն	• Արդյունաբերական նյութերի ցածր արդյունավետություն, • թափոնների և աղտոտման բարձր մակարդակ, • արդյունաբերական ռեսուրսների արդյունավետություն և ավելի մաքուր արտադրություն խրախուսող կամ պարտադրող քաղաքականության (կարգավորման գործիքների) բացակայություն, • արդյունաբերական ոլորտի և քաղաքի միջև երկխոսության ու տեղեկատվական հոսքի բացակայություն:
	Կոշտ թափոններ	• Քաղաքային կոշտ թափոնների (ՔԿԹ) բարձր տոկոս, որոնք հեռացվում են դեպի բաց աղբավայրեր, վերահսկվող աղբավայրեր, ջրային տարածքներ կամ այրվում են (ՔԿԹ-ի այն տոկոսը, որը հեռացվում է դեպի շահագործման ժամկետանց աղբավայրեր), • ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր թափոնների (ՎԹ) ցածր տոկոս, որոնք հեռացվել և տեղափոխվել են ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր, • կոմպոստի վերածման նպատակով հավաքված ՔԿԹ-ի ցածր տոկոս, • տեսակավորվող ու վերամշակվող ՔԿԹ-ի և արդյունաբերական թափոնների ցածր հարաբերակցություն, • գործող աղբավայրերի շահագործման համար մնացած կարճ ժամկետ:
	Ջուր	• Ջրի սպառման բարձր մակարդակ յուրաքանչյուր շնչի և քաղաքի ՀՆԱ-ի յուրաքանչյուր միավորի հաշվով, • կեղտաջրերի (ԿՋ) հեռացման անբավարար ցանց և կեղտաջրերի մաքրման անբավարար կարողություն, • կենցաղային, արդյունաբերական և առևտրային ԿՋ-ի ցածր տոկոս և էներգաարտադրությանն առնչվող գործողությունների հետևանքով գոյացող ԿՋ-եր, որոնք մաքրվում են կիրառելի ազգային չափանիշների համաձայն, • չհաշվառված ջրի չափազանց բարձր մակարդակ ջրամատակարարման համակարգում, • ջրօգտագործման ոչ արդյունավետ վարքագծեր, տվյալների սահմանափակ հասանելիություն և մշտադիտարկում:
	Հողօգտագործում	• Հողօգտագործման և քաղաքաշինության միասնական պլանավորման բացակայություն, • պլանավորման ուղեցույցի, գործիքների և կարողության բացակայություն, • հողօգտագործմանն առնչվող տվյալների հավաքագրման սահմանափակ գործընթաց կամ մշտադիտարկում, • ուրբանիզացիայի հանգեցնող անկանոն հողօգտագործում և կառուցապատում, • կանաչ գոտիների անբավարար ապահովում և «կանաչ» ենթակառուցվածքի անջատ ցանց, • տնկարկների ոչնչացում ապօրինի կառույցների և կառուցապատված տարածքների ընդլայնման հետևանքով, • կառուցապատված տարածքների միջին տարեկան աճի ցածր տոկոս, • քաղաքաշինության ցածր տոկոս ոչ թե կանաչ, այլ քաղաքի առկա տարածքում:

4.1.1. Բնապահպանական թեմաների մարտահրավերները

4.1.1.1. Օդի որակն ու ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը

Օդի որակին առնչվող տվյալները համադրվել են օդի հիմնական աղտոտիչների հետ՝ օգտագործելով ՀՀ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված հանրամատչելի աղբյուրները: 4.4. աղյուսակում ամփոփված են այդ կենտրոնի կողմից կատարված ստուգման արդյունքները միջազգային հենանիշների համատեքստում:

Աղյուսակ 4.4. Օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում՝ վիճակի ցուցանիշներ

Վիճակի ցուցանիշ	Ցուցանիշի արժեք
Փոշու միջին տարեկան կոնցենտրացիա	325.6 մկգ/մ³ տարեկան միջին
Ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին օրական կոնցենտրացիա	36.7 մկգ/մ³ օրական միջին
Ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացի	18.6 մկգ/մ³ տարեկան միջին
CO_2-ի համարժեքի տարեկան արտանետումներ մեկ շնչի հաշվով	3.36 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով
CO_2-ի տարեկան արտանետումներ ՀՆԱ-ի միավորի հաշվով	ՀՆԱ-ի՝ 0.94 տ/մ. ԱՄՆ դոլար

Ինչպես կարելի է տեսնել 4.4. աղյուսակում, «կանաչ քաղաքի»՝ Գյումրու առջև ծառացած և օդի որակին առնչվող հիմնական մարտահրավերներն են.

- փոշով աղտոտվածության բարձր մակարդակ,
- ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիայի հետևանքով առաջացող վտանգ,
- CO_2-ի՝ յուրաքանչյուր շնչին բաժին ընկնող բարձր մակարդակ և ածխածնի արտանետումների քանակ ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր միավորի համար:

Չորրորդ մարտահրավերը, որն արձանագրվել է շահագրգիռ կողմերի՝ առնչակից մարտահրավերների (տե՛ս 4.5. աղյուսակը) մասով արձագանքի մեջ, «օդի որակին առնչվող տվյալների սահմանափակ հասանելիությունն» է: **Տվյալների որակին** առնչվող խնդիրը կարելի է տեսնել ծծմբի երկօքսիդի (SO_2) մակարդակների համատեքստում, որտեղ չափումները ցույց են տալիս կոնցենտրացիաների մեծ տատանումներ դիտարկված տարիների ընթացքում (2009-2017) 9-82 մգ/մ³ միջակայքում՝ կապակցված չլինելով արտանետման արձանագրված արժեքների հետ: ԿՔԳԾ-ի ցուցանիշների քարտեզագրման արդյունքում նաև վեր են հանվել օդն աղտոտող արտանետումների տվյալների հասանելիությանն առնչվող խնդիրներ: Օդի աղտոտիչների համալիր մշտադիտարկում չի իրականացվում, ուստի տվյալների հավաքագրման բոլոր համակարգերի բարելավման անհրաժեշտություն կա: Օդի աղտոտվածության՝ ազգային կառույցների կողմից ղեկավարվող ընթացիկ համակարգային մշտադիտարկումը, զեկուցումն ու ստուգումը պետք է լրացվեն քաղաքային մշտադիտարկմամբ և օդի աղտոտվածության գնահատմամբ:

Աղյուսակ 4.5. Շահագրգիռ կողմերի արձագանքն օդի որակին առնչվող մարտահրավերներին

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	1.75	Կախված մասնիկների ընդհանուր քանակության (փոշու) բարձր մակարդակ
2	2.50	Էներգասպառման բարձր մակարդակ փողոցային լուսավորության համար
3	2.82	Օդի որակին առնչվող սահմանափակ տվյալներ և մշտադիտարկում
4	3.09	Էլեկտրականության և ջերմային էներգիայի սպառման բարձր մակարդակ շենքերում
5	3.27	Հանածո վառելիքով աշխատող մասնավոր ճանապարհային տրանսպորտի աստիճանական տարածում
6	3.91	Ջերմոցային գազերի բարձր մակարդակների արտանետում յուրաքանչյուր շնչի և ՀՆԱ-ի յուրաքանչյուր միավորի հաշվով

Հարկ է նշել, որ «յուրաքանչյուր շնչին բաժին ընկնող ջերմոցային գազերի արտանետումներ» վիճակի ցուցանիշը որպես դեղին նշելով՝ մենք շեղվել ենք ԿՔԳԾ-ի մեթոդաբանության շեմերից: Ստանդարտ շեմերի դեպքում այն սովորաբար կառանձնացվեր կանաչ գույնով (Գյումրու արտանետումների քանակը յուրաքանչյուր շնչին բաժին ընկնող 5 տոննայի հենանիշից պակաս է): Այսպիսով՝ վերոնշյալ մարտահրավերի կարգավիճակն ուժեղացվել է, քանի որ ՄԱԿ-ի՝ կլիմայի փոփոխությունների մասին շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) Փարիզյան համաձայնագրի «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» հայեցակարգային փաստաթղթով սահմանվում է, որ ՀՀ-ն մինչև 2050 թվականը կփորձի ապահովել ջերմոցային գազերի՝ էկոհամակարգերի համար չեզոք արտանետումների քանակ՝ տարեկան 2.07 տոննա/մեկ շնչի հաշվարկով: Հաշվի առնելով, որ ներկայումս Հայաստանում արտանետումների մակարդակը մեկ շնչի համար մոտ 3.4 տոննա է, և այդ թիվն աճում է՝ գերազանցելով ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների (ներդրումների), (INDC) թիրախը, մենք հաշվի չենք առել ԿՔԳԾ-ի մեթոդաբանության շեմը՝ ցույց տալու իրական մարտահրավերն ազգային համատեքստում (ազգային թիրախին համապատասխան):

Ինչպես նշված է 4.5. աղյուսակում, Գյումրու օդի որակի վիճակի վրա ճնշում գործադրող (ներազդող) հիմնական ոլորտներն են տրանսպորտը, շինարարությունը, էներգասպառումն ու լուսավորությունը, որոնք քննարկվում են 4.1.2. գլխում:

4.1.1.2. Ջուր

4.6. աղյուսակում ամփոփված են ջրային ռեսուրսների ելակետային վիճակի ցուցանիշների քարտեզագրման արդյունքները:

Ինչպես նշված է աղյուսակ 4.6.-ում, ջրային ռեսուրսին առնչվող Գյումրու առջև ծառացած կանաչ քաղաքի հիմնական մարտահրավերներն են.

- ամոնիումի կոնցենտրացիայի մակարդակը գետերում և լճերում, մասնավորապես Ախուրյան գետում,
- մակերևութային ջրի որակի անարդյունավետ մշտադիտարկում:

Աղյուսակ 4.6. Ջրային ռեսուրսներ՝ վիճակի ցուցանիշներ

Վիճակի ցուցանիշ	Վիճակի ցուցանիշի արժեք
Խմելու ջրի որակ	
Խմելու ջրի որակի ազգային չափանիշներին համապատասխանող նմուշներ (%)	100%
Մակերևութային ջրերի որակ	
Թթվածնի կենսաքիմիական պահանջարկը (ԹԿՊ$_5$) գետերում և լճերում, մասնավորապես Ախուրյան գետում	3.44 մգ/լ
Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիան գետերում և լճերում, մասնավորապես Ախուրյան գետում	1.78 մգ/լ

Խմելու ջրի որակի ցուցանիշներն արտացոլում են այն փաստը, որ Գյումրին շահում է իր ստորգետնյա ռեսուրսների ջրի բարձր որակից: Հայաստանի քաղաքների մեծ մասը, այդ թվում՝ Գյումրուն ջուր մատակարարելու համար օգտագործվող մաքուր, բարձրորակ արտեզյան աղբյուրների առատությունը նշանակում է, որ քաղաք հասնող ջուրը միշտ բարձրորակ է՝ մասնավորապես հաշվի առնելով այն փաստը, որ ջրամատակարարման համակարգը նույնպես արդյունավետ է: Բնակիչների մեծ մասը (76%) ներկայումս ունի 24 ժամ հասանելիություն ջրամատակարարմանը, իսկ մնացած մասին խմելու ջուրը հասանելի է 17-23.5 ժամ: «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն, որը Գյումրու ջրամատակարարման և կեղտաջրերի (ԿՋ) հեռացման օպերատորն է 2017 թվականից, ներկայումս աշխատում է ջրամատակարարման և ԿՋ-ի հեռացման նախկին օպերատորի՝ «Շիրակ ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի հետ՝ լուծելու համար ջրամատակարարման՝ վերականգնման ծրագրի ավելի վաղ փուլերում ծագած խնդիրները: Նրանք նաև ներգրավված են քաղաքացիներին մատակարարվող ջրի որակն առավել բարելավելու վերջին փուլի աշխատանքներին առնչվող քննարկումների մեջ: Չնայած այս աշխատանքներին՝ գնահատման արդյունքում պարզվել է, որ չհաշվառված ջրի (ՉՀՋ), այսինքն՝ սպառողներին բաշխվելու ընթացքում կորչող և չհաշվառվող ջրի ծավալի խոշոր բաժնեմասը, ըստ չափումների, շատ բարձր է (85-87%): ՉՀՋ-ի բարձր արժեքները պայմանավորված են

մատակարարման համակարգից ջրի ֆիզիկական կորստի բարձր մակարդակով (օրինակ՝ ստորգետնյա աղբյուրից ջրահավաքման և բաշխման համակարգ), մատակարարման համակարգին հնարավոր ապօրինի միացումների առկայությամբ և կենցաղային սպասարկման համար հետագա վճարման բացակայությամբ: Արդյունքում ՉՀՋ-ի բաժնեմասը ջրի ընդհանուր ծավալի մեջ ազդում է սպառողների համար ջրի գնի վրա, ինչպես նաև մասամբ նպաստում քաղաքի ջրի սպառման բարձր մակարդակին (ջրի համեմատաբար ցածր գների պատճառով սպառման մակարդակն արդեն բարձր է):

Մակերևութային ջրերի վիճակի ցուցանիշի հենանշման արդյունքում պարզ է դառնում, որ մակերևութային ջրերի որակը վատն է ամենայն հավանականությամբ մարդածին գործունեության հետևանքով, ինչը ենթադրում է բարելավման էական ներուժ: Սա հաստատվում է շահագրգիռ կողմերի արձագանքով, որը ներկայացված է 4.7. աղյուսակում: Գյումրու տարածքով հոսող երեք փոքր՝ Գյումրու, Ղոր-Ղոբիի և Չերքեզի ձորի գետերի մակերևութային ջրի որակը ներկայումս չի թեստավորվում կամ մշտադիտարկվում: Այս գետերից հոսող չմշակված ջուրը հոսում է դեպի Ախուրյան գետ և այնուհետև սահմանային գոտում գտնվող Ախուրյանի ջրամբար, որը ոռոգման համար հիմնական ջրամատակարարման աղբյուրն է: ԿՔԳԾ-ի՝ ջրի որակի հարաչափներին առնչվող հենանիշը, որը հիմնված է Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության (ՇՄԵԳ) մոտեցման վրա, ավելի խիստ է սահմանված, քան Հայաստանի կարգավորման դաշտը (թիվ 75 հրահանգ): Վերջինս ընդհանուր առմամբ ավելի մեղմ է և օգտագործում է տարբեր շեմային արժեքներ ջրօգտագործման տարբեր տեսակների համար: Ախուրյան գետի մասով առաջարկվում է օգտագործել գետի որակին առնչվող պահանջները՝ ձկների գոյությունը պահպանելու համար: ՀՀ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ չնայած Ախուրյան գետի ԹԿՊ$_5$-ի մակարդակներն էականորեն ցածր են, ամոնիումի մակարդակներն էականորեն բարձր են ծածանազգի ձկների և սաղմոնազգիների պոպուլյացիաների առողջության և կենսական գործառույթների համար անհրաժեշտ անվտանգ մակարդակներից, ինչպես նաև ՇՄԵԳ-ի կողմից սահմանված չափանիշներից (2.19 մգ/լ ԹԿՊ$_5$ և 0.16 մգ/լ NH_4): Չափազանց բարձր աղտոտվածության նման մակարդակները ենթադրում են մարդածին աղտոտման բարձր մակարդակ, որը մասամբ Գյումրու ջրահեռացման հետևանքն է: Չնայած մակերևութային ջրերի կենսաբանական աղտոտիչների և անմիջական շփումից հնարավոր առողջական ռիսկերի ցուցանիշների (այսինքն՝ աղիքային կոլիֆորմի բակտերիաների) մասով մշտադիտարկում չի կատարվում, Գյումրու անասնապահության գործելակերպը, ինչպես նաև հիվանդանոցային արտահոսքերը ենթադրում են Ախուրյան գետի կենսաբանական աղտոտման բարձր ռիսկեր:

Աղյուսակ 4.7. Շահագրգիռ կողմերի արձագանքը ջրային ռեսուրսներին

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	1.56	Կեղտաջրերի (ԿՋ) հավաքման անբավարար համակարգ և դրանց հեռացման անբավարար կարողություն, ինչն առաջացնում է հեղեղների, վատ ջրային միջավայրի և առողջական ռիսկեր
2	2.78	Ջրամատակարարման համակարգում չհաշվառված ջրի (ՉՀՋ) չափազանց բարձր մակարդակ
3	3.22	Մակերևութային ջրերի որակի ոչ արդյունավետ մշտադիտարկում
4	3.33	Ջրի ոչ արդյունավետ օգտագործման վարքագծեր և տվյալների սահմանափակ հասանելիություն ու մշտադիտարկում

4.1.1.3. Կանաչ տարածք, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Կանաչ տարածքը, կենսաբազմազանությունն ու էկոհամակարգերը դիտարկվում են միասին, քանի որ կենսաբազմազանությունը սերտ կապակցված է կանաչ տարածքների տարածվածության և հասանելիության հետ: Գյումրու կատարողականը համապատասխան ցուցանիշների առնչությամբ ցուցադրված է 4.8. աղյուսակում, որում կարելի է տեսնել տեխնիկական գնահատման արդյունքում վերհանված մարտահրավերները.

- կանաչ տարածքների անբավարար քանակ/կանաչ տարածքների և բնակիչների ցածր հարաբերակցություն,
- կենսաբազմազանությանն առնչվող անբավարար տվյալներ/մշտադիտարկման բացակայություն:

Աղյուսակ 4.8. Էկոհամակարգեր, կենսաբազմազանություն և կանաչ տարածքներ՝ վիճակի ցուցանիշներ

Վիճակի ցուցանիշ	Ցուցանիշի արժեք
Բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը յուրաքանչյուր բնակչի հաշվով	3.91 մ²/բնակիչ
Թռչունների աճող պոպուլյացիայի բազմազանությունը	Շենոնի ցուցանիշի արժեքը չի կարող հաշվարկվել երկարամյա տվյալների բացակայության պատճառով

Գյումրու կանաչ տարածքները պաշտոնական տվյալներով կազմում են մոտ 552 հա (2017), ինչը քաղաքի ընդհանուր մակերեսի 10%-ն է: **Բաց կանաչ տարածքները** նվազել են 1988 թվականի երկրաշարժի հետևանքով և 1990-ականների սկզբի էներգետիկ ճգնաժամի ընթացքում, երբ զգալի թվով ծառեր հատվում էին և օգտագործվում որպես վառելիք՝ տները ջեռուցելու համար: Սա երևում է 4.8. աղյուսակում, որտեղ կարելի է տեսնել, որ բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը Գյումրու յուրաքանչյուր բնակչի հաշվով բավականին ցածր է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից առաջարկվող 9 մ² արժեքից: Գյումրու՝ 2006 թվականին հաստատված հատակագծով նախատեսվում էր 17 մ² բաց կանաչ տարածք յուրաքանչյուր բնակչի հաշվով, սակայն այս հարաբերակցությունը երբեք չապահովվեց: Նման հավակնոտ թիրախի հասնելու համար կարևոր է կանաչ տարածքների վերականգնումը և նորացումը ներառել համապատասխան քաղաքաշինական նախագծերում: Բացի այդ, քաղաքի գլխավոր պողոտաներում աճող ծառերի խտությունը նույնպես անբավարար է: Պահպանման գոտում ներառված արվարձանների բուֆերային գոտիների ճամփեզրերին գտնվող ծառերը նույնպես հատվել են 1988 թվականից ի վեր: Ծառուղիների մեծ մասն ընդհատվում է կամ մնացել է մեկ շարքով, ինչը նվազեցնում է դրանց նշանակությունը:

Ինչ վերաբերում է **կենսաբազմազանությանը**, այն գնահատելու համար ԿՔԳԾ-ի մեթոդաբանության մեջ օգտագործվում է թռչնատեսակների առատության (թռչնաֆաունա) արժեքը: Քանի որ թռչունները զգայուն են իրենց ապրելավայրի կառուցվածքային փոփոխությունների նկատմամբ, ապա դրանց պոպուլյացիաների բազմազանությունը կարող է համարվել կենսաբազմազանության պատշաճ ցուցանիշ՝ արտացոլելու մարդու գործունեության արդյունքում ստեղծված ճնշումները: Սակայն Գյումրու կենսաբազմազանությունը վատ է ուսումնասիրվել, ինչի պատճառով համապատասխան կարգավիճակի վերաբերյալ գնահատական չի կարող տրվել: Մշտադիտարկումն ու գիտական ուսումնասիրությունները չեն իրականացվում պարբերաբար, և չնայած որոշակի տեղեկատվություն առկա է հրապարակված հետազոտության տեսքով, այն այդուհանդերձ սահմանափակ է: Կենսաբազմազանության երկարաժամկետ, կանոնավոր դիտարկմները բացակայում են, ինչի պատճառով փոփոխությունները չեն կարող գնահատվել:

Տեխնիկական գնահատման եզրահանգումները հաստատվել և այնուհետև դիտարկվել են համատեքստի մեջ շահագրգիռ կողմերից ստացված արձագանքի միջոցով, որն ամփոփված է 4.9. աղյուսակում:

Աղյուսակ 4.9. Շահագրգիռ կողմերի արձագանքը կանաչ տարածքներին, կենսաբազմազանությանը և էկոհամակարգերին

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	1.70	Կանաչ գոտիների ոչ բավարար սպասարկում և մասնատված «կանաչ» ենթակառուցվածք
2	2.20	Տնկարկ-այգիների ոչնչացում ապօրինի կառույցների և կառուցապատված տարածքների ընդլայնման հետևանքով
3	2.89	Ուրբանիզացիայի հանգեցնող անկանոն հողօգտագործում և կառուցապատում
4	3.44	Ոչ բարվոք և անբավարար վիճակում գտնվող հանրային օգտագործման ջրային ենթակառուցվածք («կապույտ» ենթակառուցվածք)

4.1.1.4. Դիմակայունություն և հարմարվողականություն բնական աղետների ռիսկին

Բնական աղետների առկա ռիսկը էական մարտահրավեր է **հնարավոր տնտեսական կորստի** տեսանկյունից: Համապետական ուսումնասիրությունների հիման վրա **ռիսկի ենթակա ենթակառուցվածքները և տնային տնտեսությունները** ճանաչվել են որպես հիմնական մարտահրավերներ: Գյումրու Աղետների ռիսկի նվազեցման 2018 թվականի պլանով սահմանվում է Գյումրու համար ռիսկ ներկայացնող աղետների, այդ թվում՝ ճանապարհների և արտաքին լուսավորության ոչ բարվոք վիճակի, սեյսմիկ ռիսկերի, ջրհեղեղների և անձրևաջրերի արտահոսքի, գրունտային ջրերի բարձրացման, ինչպես նաև բնակչության ցածր իրազեկվածության մակարդակի առաջնահերթությունը: Սա ներկայացված է բնապահպանական թեմայի՝ 4.10. աղյուսակում պատկերված վիճակի հիմնական ցուցանիշներում, որոնք վերահաստատվել են շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների՝ 4.11. աղյուսակում ներկայացված եզրահանգումների արդյունքում:

Աղյուսակ 4.10. Դիմակայունություն և հարմարվողականություն բնական աղետների ռիսկին՝ վիճակի ցուցանիշներ

Վիճակի ցուցանիշ	Ցուցանիշի արժեք
Բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասը՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմաս	12%
Հանրային ենթակառուցվածքի տոկոսը ռիսկի գոտում	15%
Տնային տնտեսությունների տոկոսը ռիսկի գոտում	15%
Իրազեկվածություն և պատրաստվածություն բնական աղետներին	Քաղաքացիները տեղյակ են բնական աղետների ռիսկերից, սակայն չունեն կայուն մոտեցումներ

Աղյուսակ 4.11. Շահագրգիռ կողմերի արձագանքը դիմակայունությանը և բնական աղետների ռիսկին հարմարվողականությանը[38]

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	1.57	Սոցիալական, տնտեսական և ենթակառուցվածքային հնարավոր մեծ կորուստներ բնական աղետներից
2	1.71	Կլիմային հարմարվողականության և աղետների դիմակայունության խնդիրների ներառված չլինելը ռազմավարություններում և ծրագրերում

4.1.1.5. Հողեր

Գյումրու հողի որակը հիմնախնդիր է, որը պահանջում է լուծում: Սա ներկայացված է 4.11. աղյուսակում, որը ցույց է տալիս, որ հողի աղտոտվածության և որակի ընդհանուր մակարդակները և մշտադիտարկման բացակայությունը երկու առաջնահերթ փոխկապակցված մարտահրավերներ են:

Աղյուսակ 4.12. Վիճակի ցուցանիշներ

Իրավիճակային չափանիշներ	Իրավիճակային չափանիշների արժեք
Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թիվը	Համաձայն որոշ գիտական ուսումնասիրությունների՝ նախկին արդյունաբերական ձեռնարկությունների տարածքում առկա են նման վայրեր: Քաղաքացիների և ՀԿ-ների հարցումների արդյունքում հաստատվել է չլիազորված աղբավայրերի գոյություն:
Վերամշակող արդյունաբերության ոլորտների կողմից ծանր մետաղների՝ կապարի (Pb) արտանետումների քանակը	Տվյալների բացակայություն

[38] Արձագանքի ձևաթղթի վրա նշված էին դիմակայունության և բնական աղետների ռիսկին հարմարվողականության ռազմավարական նպատակները: Քանի որ դրանք ձևակերպվել են անմիջապես մարտահրավերից հետո, մենք համարում ենք, որ արձագանքը վերաբերում է մարտահրավերին:

Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թիվը կարող է վերագրվել Գյումրու արդյունաբերական ոլորտի պատմությանը, ինչպես նաև ներկա դրությանը և շինարարության ու կենցաղային թափոնների ներազդումներին: Ուստի անհրաժեշտ է միջամտություն՝ ուշադրությունը սևեռելով լքված հողերի և անավարտ շինհրապարակների հարևանությամբ գտնվող տարածքների հողի որակի ավելի մանրամասն ստուգման և ուսումնասիրության վրա: Սա կապված է մեկ այլ էական մարտահրավերի հետ՝ **հողի որակին առնչվող տվյալների սղություն և պարբերական մշտադիտարկման բացակայություն:** Օրինակ, ներկայումս քաղաքի աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների հողերը գույքագրված չեն, և առկա չէ աղտոտված տարածքների գրանցամատյան: Ուստի աղտոտման աղբյուրների ավելի լավ ըմբռնումն ու մշտադիտարկման առավել արդյունավետ գործիքների ներդրումը պետք է լինեն ուշադրության կենտրոնում: Սակայն որոշ գիտական ուսումնասիրություններ մատնանշում են աղտոտիչների մտահոգիչ մակարդակը: Օրինակ, հողում ծանր մետաղների առկայության վերլուծությունը Գյումրու 22 մանկապարտեզների հարակից տարածքներում ցույց տվեց, որ այնտեղ առկա է չափավոր և միջին մակարդակների աղտոտվածություն: Բարձր աղտոտվածություն ունեցող տարածքները գրանցված են քաղաքի որոշ բնակելի հատվածներում:

Ջրային ռեսուրսների վիճակի վրա ճնշում գործադրող (ներազդող) հիմնական ոլորտներն են ջուրը, շենքերը և թափոնները: Հողերի որակի վրա հիմնական ճնշումները ներկայացված են 4.1.2. գլխում: Դրանք տրված են 4.13. աղյուսակում, որը նաև ցույց է տալիս, որ շահագրգիռ կողմերի արձագանքը հիմնավորում է տեխնիկական գնահատման եզրահանգումները:

Աղյուսակ 4.13. Շահագրգիռ կողմերի արձագանքը հողերին

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	2.33	Արդյունաբերական հոսքաջրերը ներկայումս չեն մաքրվում
2	2.67	Քաղաքային կոշտ և վտանգավոր թափոնների հեռացումը չի վերահսկվում
3	3.33	Լքված արդյունաբերական հողերի և անավարտ շինհրապարակների մշտադիտարկման բացակայություն
4	3.89	Հողերին առնչվող տվյալների սահմանափակ հասանելիություն և մշտադիտարկման բացակայություն

4.1.1.6. Բնապահպանական մարտահրավերների ամփոփ ներկայացում

Գյումրու ԿՔԳԾ-ի ցուցանիշների տվյալների բազայում համապատասխան տվյալների գնահատումը հնարավորություն է տվել դասակարգելու վիճակի ցուցանիշների խմբերն ըստ բնապահպանական թեմաների (տե՛ս 4.14. աղյուսակը): Կարմիրով (մարտահրավեր) կամ դեղինով (ի հայտ եկող սպառնալիք) նշվածներն ընտրվել են հետագա գործողությունների համար:

Աղյուսակ 4.14. Վիճակի ցուցանիշների միջինացված հենանիշների դրոշակավորում ըստ տեսակի և թեմայի (աղբյուրի)

Ցուցանիշի տեսակը և թեման (աղբյուրը)	Հենանիշի դրոշակավորումը	Ընտրված
Բնապահպանական ակտիվների որակը		
Օդի որակ	Դեղին	Այո
Ջրային ռեսուրսներ	Կարմիր	Այո
Խմելու ջուր	Կանաչ	Ոչ
Ջրօգտագործում	Կարմիր	Այո
Հող	Դեղին	Այո
Ռեսուրսների հասանելիություն		
Կանաչ տարածք	Կարմիր	Այո
Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	Մոխրագույն [տվյալներ չկան]	Այո
Կլիմայի փոփոխության ռիսկեր		
Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում	Կարմիր	Այո

Ցուցանիշի տեսակը և թեման (աղբյուրը)	Հենանիշի դրոշակավորումը	Ընտրված
Բնապահպանական ակտիվների որակը		
Բնական աղետներին հարմարվողականություն և դիմակայունություն	Կարմիր	Այո

4.1.2. Ոլորտային մարտահրավերներ

4.1.2.1. Տրանսպորտ

Աղյուսակ 4.15.-ը ամփոփ ներկայացնում է ելակետային ճնշման ցուցանիշի քարտեզագրման արդյունքները տրանսպորտի ոլորտի համար: Այս քարտեզագրումը հիմք է ծառայում մարտահրավերների հետագա ներկայացման համար:

Աղյուսակ 4.15. Տրանսպորտի մասով ճնշման ցուցանիշները

Ճնշման ցուցանիշ	Ճնշման ցուցանիշի արժեք
Մարդատար ավտոմեքենաների շարժակազմի միջին տարիքը (ընդհանուր և ըստ տեսակների)	22 տարի
Դիզելային շարժիչով մարդատար ավտոմեքենաների տոկոսը փոխադրամիջոցների շարժակազմում	Դիզելային շարժիչով ավտոմեքենաներ՝ 5%
Թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաների վառելիքի այրումից առաջացած արտանետումներին ներկայացվող չափանիշները	Եվրո-4
Էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող մարդատար ավտոմեքենաների ընդհանուր շարժակազմի մասնաբաժինը (ընդհանուր և ըստ տեսակների)	56%
Տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն առօրա երթևեկության մեջ (ավտոմեքենաներ, մոտոցիկլետներ, տաքսի, ավտոբուս, մետրո, տրամվայ, հեծանիվ, հետիոտն)	90%
Տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ընդհանուր շարժի մեջ	33%
Մեքենազինվածության մակարդակը (մեկ շնչին ավտոմեքենաների քանակը)	0.18
Տրանսպորտային միջոցների միջին թիվը (ավտոմեքենաներ և մոտոցիկլետներ) ՝ տնային տնտեսությունների հաշվով	0.54
Բացառապես հասարակական տրանսպորտի համար հատկացված ճանապարհների երկարությունը 100 000 բնակչի հաշվով՝ արտահայտված կիլոմետրերով	0
Հեծանվային արահետների երկարությունը 100 000 բնակչի հաշվով՝ արտահայտված կիլոմետրերով	0
Բնակչության այն մասնաբաժինը, ում անհրաժեշտ է քալել մինչև 15 րոպե՝ հանրային տրանսպորտին հասանելիություն ունենալու համար:	100%
Ավտոբուսային ծառայության հաճախականությունը	22
Գլխավոր փողոցներում ծանրաբեռնված ժամերին վագքի միջին արագությունը	20 կմ/ժ
Ավտոբուսային ծառայության արագությունը հիմնական փողոցներում (միջին օրական)	15 կմ/ժ
Հանրային տրանսպորտի համակարգերի խափանումներն աղետների դեպքում	Տվյալներ չկան
Տրանսպորտի վթարային համակարգերի արդյունավետությունն աղետների դեպքում	Տվյալներ չկան

4.16. աղյուսակում ներկայացված է քաղաքականության համապատասխան շրջանակի գնահատում քարտեզագրված արձագանքի ցուցանիշների հիման վրա:

Աղյուսակ 4.16. Տրանսպորտի քաղաքականության շրջանակի մասով արձագանքի ցուցանիշները

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
Աղտոտման բարձր մակարդակ ունեցող տրանսպորտային միջոցները կարգավորվում են/ էներգախնայող (էներգաարդյունավետ) տրանսպորտային միջոցները խրախուսվում են հարկաբյուջետային (ֆիսկալ) գործիքների միջոցով:	Գոյություն ունեն արտանետումների չափանիշներ[39] և ներկրվող մարդատար ավտոմեքենաների վրա վնասակար արտանետումների չեզոքացուցիչ տեղադրելու պահանջ[40], սակայն դրանք ամբողջովին և պատշաճ չեն գործադրվում: Թեպետ մարդատար ավտոմեքենաների տարիքի հետ մաքսատուրքի դրույքաչափն աճում է[41], սակայն էական հարկաբյուջետային գործիքներ չեն առաջարկվում, որոնք կխթանեն էներգախնայող տրանսպորտային միջոցների ձեռքբերումը և գործածումը: ՍԲԳ-ով աշխատող փոխադրամիջոցներին անցնելը խրախուսվում է քաղաքի շրջանակներում ՍԲԳ-ի լցակայաններում տեղերի հատկացմամբ և անվտանգության պահանջների ապահովմամբ: Հետագա արդյունավետ և խելամիտ միջոցառումներ սահմանելու համար մարդատար ավտոմեքենաների շարժակազմին վերաբերող տեխնիկական տվյալները բավարար չեն
Հասարակական և ոչշարժիչային տրանսպորտի ներդրման ընդլայնումը և բարելավումը ծրագրված են և աջակցվում են առկա ներդրումներով	Կատարվել են որոշ ներդրումներ՝ նոր ավտոբուսներ գնելու նպատակով: Անշարժիչ տրանսպորտի համար պայմաններ ստեղծելու մասով ներդրումներ չեն պլանավորվել՝ չնայած Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրով (ԿԷԶԳԾ) առաջարկվում է ստեղծել հեծանվային ուղիներ և կայանատեղեր
Հասարակական և ոչշարժիչային տրանսպորտը խրախուսվում է տեղեկատվական և իրազեկման արշավների միջոցով	Վերջին տասնամյակում հասարակական տրանսպորտի խրախուսումը եղել է սահմանափակ
Երթևեկության պահանջարկը կառավարվում է (գերծանրաբեռնվածության վճարներ, «խելացի» տեխնոլոգիաներ)	Նման լուծումներ չեն իրականացվել
Հասարակական տրանսպորտի վթարային կառավարումը (պետական և (կամ) մասնավոր ցանցերում) պլանավորվում և փորձարկվում է	Տրանսպորտի վթարային համակարգերը կարող են աշխատել ադեկվատ դեպքում, սակայն սահմանափակ արդյունավետությամբ

Այս մարտահրավերները հաստատվել են շահագրգիռ կողմերի հետ անցկացված խորհրդակցությունների եզրահանգումների արդյունքում: Համապատասխան արձագանքի հիման վրա առանձնացվել են «կանաչ քաղաքի»՝ տրանսպորտին առնչվող երեք հիմնական մարտահրավեր, որոնք ամփոփված են 4.17. աղյուսակում:

[39] ՀՀ կառավարության՝ 2006թ. հունիսի 22-ի թիվ 965-Ն որոշում (արտանետումների նորմեր):
[40] ՀՀ կառավարության՝ 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 902 որոշում: Տե՛ս 2-րդ բաժնի «գ» կետը (վնասակար արտանետումների չեզոքացուցիչ):
[41] 2006թ. դեկտեմբերի 20-ին ընդունված «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք: Տե՛ս 1-ին գլխի 4-րդ հոդվածի աղյուսակի վերջին 3 տողերը (մաքսեր):

Աղյուսակ 4.17. Շահագրգիռ կողմերի արձագանքը տրանսպորտին

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	1.73	Հանրային և անշարժիչ տրանսպորտի անբավարար ենթակառուցվածք և համակարգեր
2	1.75	Տրանսպորտի կառավարման, տվյալների հասանելիության և ընդհանուր իրազեկվածության անբավարար մակարդակ
3	2.18	Վատ պահպանվող և հին մասնավոր (պետական) տրանսպորտային միջոցներ, հանածո վառելիքով աշխատող տրանսպորտային միջոցների օգտագործում

Ինչ վերաբերում է առաջին երկու մարտահրավերներին՝ **տրանսպորտային ենթակառուցվածքին և համակարգերին ու դրանց կառավարմանը,** Գյումրին պետք է վերանայի հանրային ճանապարհային տրանսպորտին և այնպիսի ոչշարժիչային տրանսպորտային միջոցներին առնչվող ռազմավարությունը, ինչպիսին է հեծանիվը: Քաղաքին նաև պետք են հետիոտնի համար նախատեսված բարելավված ճանապարհային ենթակառուցվածքները, այդ թվում՝ մայթերը և կանաչ տարածքները: Տրանսպորտային միջոցների պահանջարկը և դրանց կառավարումը նույնպես պետք է ընդհանուր առմամբ բարելավվեն՝ սատարելու համար անցումն այլընտրանքային տրանսպորտային միջոցների՝ այդպիսով պայմաններ ստեղծելով աղտոտող գազերի արտանետումների և կախված մասնիկների նվազեցման համար: Հետագա պլանավորման տեսանկյունից հիմնական խնդիրը, որ պետք է լուծել, տրանսպորտին առնչվող տվյալների հասանելիությունն ու որակն է:

Ճնշման այս ոլորտի համար մեկ այլ խնդրահարույց հարց է Գյումրու **փոխադրամիջոցների շարժակազմը**, որը հաճախ վատ է պահպանված, և որի տարիքն ընդհանուր առմամբ 12-ից բարձր է: Սա բացասաբար է ազդում քաղաքի շրջակա միջավայրի վրա, քանի որ սովորաբար որքան հին է փոխադրամիջոցը, այնքան բարձր է վառելիքի սպառման և արտանետումների մակարդակը: Սա էական մարտահրավեր է, քանի որ քաղաքում աճում է հանածո վառելիքով աշխատող մասնավոր փոխադրամիջոցների թիվը:

4.1.2.2. Շինարարություն, էներգասպառում, լուսավորություն

Գյումրու **էներգամատակարարումը** համեմատաբար հուսալի է երկրի ամբողջական էլեկտրականացման շնորհիվ (Գյումրին Հայաստանի միասնական բաշխիչ էլեկտրական ցանցերի մասն է կազմում, քանի որ միայն Գյումրու համար քաղաքային էներգիայի առանձին ծառայություններ չեն գործում): Բնական գազը հասանելի է Գյումրու քաղաքացիների ճնշող մեծամասնությանը (95%): Ընդհանուր առմամբ ցածր ածխածնային էներգիայի տարբեր տեսակների համադրության շնորհիվ աղբյուրները նույնպես բազմազան են՝ ողջ հանրապետության էներգիայի տարբեր տեսակների համադրության մեջ վերականգնվող էներգիայի աղբյուրների (ՎԷԱ) էական և աճող մասնաբաժնով, ինչը պայմանավորված է քաղաքականության շրջանակով: Սա արտացոլված է ճնշման համապատասխան ցուցանիշ-ներում, որոնք ներկայացված են 4.18. աղյուսակում:

Աղյուսակ 4.18. Էներգամատակարարման ոլորտի ճնշման ցուցանիշներ

Ճնշման ցուցանիշներ	Ցուցանիշի արժեք
Էլեկտրական ցանցին օրինական միացում ունեցող բնակչության բաժնեմասը	100%
Էներգամատակարարման խափանումների միջին տարեկան թիվը յուրաքանչյուր սպառողի հաշվով	5.05
Ջեռուցման (հովացման) համակարգին հասանելիություն ունեցող բնակչության բաժնեմասը	95%
Վերականգնվող էներգիայի աղբյուրներից (ՎԷԱ) ստացվող ընդհանուր էներգիայի քանակությունը՝ որպես քաղաքի ընդհանուր էներգասպառման մասնաբաժին՝ արտահայտված ՏՋ-ներով	12%
Բնակչության այն միջին մասնաբաժինը, ում մոտ վերջին 5 տարվա ընթացքում ծայրահեղ կլիմայական պայմաններում նկատվել են հոսանքի երկարատև անջատումներ	6.7%

Շենքերում էներգասպառման արդյունավետությանն առնչվող ճնշման ցուցանիշները, որոնք այս ոլորտի մեկ այլ կողմն են հանդիսանում, ներկայացված են 4-19-րդ աղյուսակում: Այստեղ կարելի է նկատել, որ էներգասպառումը հիմնականում բարձր է ինչպես բնակելի, այնպես էլ հանրային շենքերում, ինչի պատճառը կարող է լինել սարքերի ցածր արդյունավետությունը, անարդյունավետ լուսավորությունը և ջեռուցման սարքերը, ինչպես նաև ջերմային էներգիայի մեծ կորուստները՝ Գյումրու շատ շենքերի վատ ջերմամեկուսացման պատճառով:

Աղյուսակ 4-19. Էներգասպառումը շենքերում՝ ճնշման ցուցանիշներ [42]

ճնշման ցուցանիշներ	Ցուցանիշի արժեք
Էներգասպառումը շենքերում	47.42 կՎտժ/մ^2
Էներգասպառումը բնակելի շենքերում	26.57 կՎտժ/մ^2
Էներգասպառումը ոչ բնակելի շենքերում	7.98 կՎտժ/մ^2
Ջեռուցման/ հովացման էներգասպառումը[43] շենքերում, հանածո վառելիքով	353.54 կՎտժ/մ^2
Ջեռուցման/ հովացման էներգասպառումը բնակելի շենքերում, հանածո վառելիքով	374.97 կՎտժ/մ^2
Ջեռուցման/ հովացման էներգասպառումը ոչ բնակելի շենքերում, հանածո վառելիքով	57.38 կՎտժ/մ^2
ԻՍՕ50001/EMAS (Էկո-կառավարման եւ աուդիտի համակարգ) կամ այլ հավաստագրմամբ քաղաքային ձեռնարկությունների մասնաբաժինը	0.00%
«Կանաչ շենքի» հավաստագրմամբ նախագծերի ընդհանուր արժեքը որպես յուրաքանչյուր տարի շինարարության թույլտվություն ստացող նախագծերի ընդհանուր արժեքի մասնաբաժին	0.00%

Գյումրու քաղաքային էներգիայի 79%-ը սպառվում է փողոցային լուսավորության [44] նպատակով, ուստի Գյումրու ԿՔԳԾ-ի տեխնիկական գնահատման մեջ փողոցային լուսավորության նպատակով էներգիայի օգտագործումը չափվել է՝ ավելացնելով Վիճակի՝ 4-20-րդ աղյուսակում ներկայացված երեք լրացուցիչ ցուցանիշները:

Աղյուսակ 4-20. Էներգիայի օգտագործում փողոցային լուսավորության նպատակով՝ ճնշման ցուցանիշներ

ճնշման ցուցանիշներ	Ցուցանիշի արժեք
Լուսավորված փողոցների ընդհանուր թվի բաժնեմասը	87%
Ճանապարհի յուրաքանչյուր կիլոմետրի համար օգտագործվող էլեկտրաէներգիան	35,984 կՎտժ/կմ
Մեկ լուսավորության սյան հաշվով սպառված էլեկտրաէներգիան	426.6 կՎտժ/տարի

4-21-րդ աղյուսակում ամփոփված է պատասխանների, քաղաքականությունների և պլանների քարտեզագրումը՝ Վիճակի և ճնշման վերլուծության հիման վրա:

Աղյուսակ 4.21. Էներգամատակարարման և էներգաօգտագործման արդյունավետությունը շենքերում, արտաքին լուսավորությունը՝ արձագանքի ցուցանիշներ

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
«Կանաչ» շինարարությունը խթանվում է չափանիշների և հարկաբյուջետային խրախուսման մեխանիզմների միջոցով	Առկա չէ
Շենքերի էներգաարդյունավետությունը խթանվում է չափանիշների միջոցով	Վերջերս ընդունվել են նոր շինարարական նորմեր, անձնագրման, աուդիտի և սերտիֆիկացման չափորոշիչներ, սակայն դրանց կիրարկումը դեռևս հապաղում է, համապատասխան կարողությունները բացակայում են
Պետական և մասնավոր ներդրումներ շենքերի էներգաարդյունավետության ոլորտում	Խթանվում է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությամբ, որով պահանջվում է ԷԱ տեխնոլոգիաների կիրառում բոլոր նոր կառուցվող և կապիտալ վերակառուցվող շենքերում: ՀՀ կառավարության՝ 2014թ. դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» թիվ 1504 որոշման և ՀՀ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը փոփոխող 2016թ. մայիսի՝ «Էներգախնայողության և վերականգնվող

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
	էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում բացակայում են պետական ներդրումային նախագծերում և բնակելի շենքերի շինարարության մեջ էներգախնայողության պահանջներին պարտադիր համապատասխանության մասով կիրարկում ապահովող դրույթները
Էներգիայի անձնական օգտագործման չափումը և հաշիվների դուրսգրումը կարգավորվում են	100% էլեկտրաէներգիայի և գազի (ջեռուցման) հաշիվների տրամադրումը հիմնված է յուրաքանչյուր առանձին սպառողի/ տնային տնտեսության սպառման, շուկայական գնորոշման, անջատելու հնարավորության վրա: Էլեկտրահաշվիչները մասամբ փոխարինվել են թվայնացված հաշվիչներով, որոնք թույլ են տալիս կիրառել երկդրույք սակագին (գիշերային և ցերեկային սակագների տարբերությունը 25% է)
Էլեկտրա- և ջերմամատակարարման ծածկույթն ու որակը բարելավվում են ներդրումների միջոցով	Թեև էլեկտրամատակարարման ծածկույթը բարելավվում է, սակայն որակը դեռևս մնում է խնդրահարույց: Շրջանի փլուզված կենտրոնացված ջերմամատակարարման համակարգը փոխարինվել է անհատական ջեռուցման լուծումներով, որոնք կատարելագործված և արդյունավետ են անհատ սպառողների համար տեխնոլոգիաների մատչելիության չափով: Սակայն մատչելիության սահմանափակումների պատճառով ոչ

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
	ռացիոնալ մթերված վառելափայտի մասնաբաժինը ջեռուցման վառելիքի տեսակների շարքում մնում է էական
Վերականգնվող էներգիայի սարքավորումները մասնավոր շենքերում խրախուսվում են հարկաբյուջետային գործիքների միջոցով	Ընդունվել է զուտ չափման փոխհաշվարկի (net metering) հնարավորություն տվող օրենսդրություն, որով խրախուսվում է մինչև 150 կՎտ և 500 կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների օգտագործումը համապատասխանաբար անկախ էներգաարտադրողների և իրավաբանական անձանց համար: Սահմանվել է 4.2 ցենտ/կՎտ արտոնյալ սակագին մինչև 5 մՎտ հզորությամբ էլեկտրականություն արտադրողների արևային ՖՎ-ի համար: ՄՖՀ-երի մի քանի «կանաչ» վարկային գծեր առաջարկում են դրամաշնորհային համաֆինանսավորում ԷԱ և ՎԷ ներդրումների համար (10-20% դրամաշնորհ՝ տրամադրվող ներդրումային վարկերի համար) և լիզինգ շուկայականից ցածր պայմաններով: Անհրաժեշտ է առավել մեծ օժանդակություն՝ շուկան զարգացնելու և այս ոլորտում կատարվող մասնավոր ներդրումները խթանելու նպատակով, այդ թվում՝ պետական հատվածի կողմից առաջնորդության ստանձնում, մասնավոր հատվածի համար առավել մատչելի ֆինանսավորում և այլն
Վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների զարգացումն ու ֆինանսական	Մասնավոր ֆինանսավորումն առկա է բանկային հատվածում, սակայն պայմանները մնում են անհասանելի զանգվածային օգտագործման համար

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
օժանդակությունն իրականացվում է պետական և մասնավոր ներդրումների հաշվին	
Վերականգնվող էներգիայի սարքավորումները խթանվում են իրազեկման արշավների միջոցով	Առկա չէ
Էլեկտրական ցանցերի դիմակայունությունն աղետների դեպքում փորձարկվում և ուժեղացվում է ներդրումների միջոցով:	Ստեղծվել է Գյումրու արտակարգ իրավիճակների ծառայություն, սակայն էլեկտրական ցանցի դիմակայունությունը գնահատված կամ բարելավված չէ

Ազգային քաղաքականության վերջին զարգացումների արդյունքում ստեղծվել է օրենսդրական դաշտ, որով խրախուսվում են էներգաարդյունավետությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը շենքերում: Նշված դաշտը ներառում է ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի թիվ 1405 որոշումը, որով էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ինտեգրման պարտադիր պահանջներ ներդրվեցին պետական միջոցների հաշվին կառուցվող նոր շենքերում և վերակառուցվող օբյեկտներում, ինչպես նաև «Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին» ՀՀ օրենքում 2016 թվականի մայիսին կատարված փոփոխությունները, որոնցով էներգաարդյունավետությունը դարձել է պարտադիր պայման բոլոր նոր կառուցվող և վերակառուցվող շենքերի համար: Սակայն համապատասխան կիրարկման մեխանիզմները դեռևս չեն ներդրվել:

Հարկ է նաև նշել, որ շինարարության ոլորտ են ներմուծվել նոր պահանջներ[45]: Այս օրենսդրական դրույթների կիրարկումը դեռ պահանջում է ժամանակ, իրազեկվածության բարձրացում, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, գնումների ընթացակարգեր և ներդրումային մեխանիզմներ: Թե՛ հանրային և թե՛ բնակելի հատվածների ֆինանսական միջոցներն անբավարար են, ինչի պատճառով այս ոլորտներում էներգաարդյունավետության (ԷԱ) ներուժն իրացնելու համար կպահանջվեն տարբեր հարմարեցված ֆինանսական գործիքներ:

Վերոնշյալ որոշ խնդիրների անդրադարձ է կատարվել Գյումրի համայնքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրում (ԿԷԶԳԾ, 2017թ.): ԿԷԶԳԾ-ն միայն կենտրոնացած է էներգիայի և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նպատակների վրա: ԿԷԶԳԾ-ում ներառված գործողություններից շատերը դեռևս պահանջում են ֆինանսավորման լուծումներ: ԿԷԶԳԾ-ն սահմանափակ է նաև իր ժամկետներով. թիրախը հիմնականում 2020 թվականն է: Ուստի սույն ԿՔԳԾ-ն կարող է հիմնվել ԿԷԶԳԾ-ի վրա՝ հիմնականում կայուն էներգետիկայի զարգացմանը և կլիմային վերաբերող գործողությունների ծրագրի մշակմամբ:

Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքում հաստատվել են ելակետային գնահատականի եզրահանգումները: Մարտահրավերներին առնչվող արձագանքը ներկայացված է 4.22. աղյուսակում:

Աղյուսակ 4.22. Շահագրգիռ կողմերի արձագանքը շինարարության, էներգասպառմանը և լուսավորությանը

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	2.13	Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի մասին հանրային իրազեկվածության բացակայություն
2	2.25	Էլեկտրականության և ջերմային էներգիայի սպառման բարձր մակարդակ բնակելի շենքերում
3	3.13	Հանրային ենթակառուցվածքներում օգտագործվող էլեկտրաէներգիայի բարձր մակարդակներ
4	3.50	«Կանաչ» շինարարության գործելակերպի և հավաստագրման բացակայություն բազմաթիվ համակարգերի ու չափանիշների առկայության պատճառով. պետք է ընտրել ամենապատշաճները
5	3.71	Սահմանափակ ներդրումներ վերականգնվող էներգիայի ոլորտում
6	3.75	Էլեկտրականության և ջերմային էներգիայի սպառման բարձր մակարդակ ոչ բնակելի շենքերում

Ընդհանուր առմամբ ոլորտի առջև ծառացած հիմնական մարտահրավերներն են.

- Ճանապարհի յուրաքանչյուր կիլոմետրի լուսավորության համար ծախսվող մեծաքանակ էլեկտրականությունը,
- լուսավորության յուրաքանչյուր սյան համար ծախսվող միջինից ավել քանակությամբ էլեկտրականություն (ցածրահարկ շենքերով նման քաղաքի համար),
- հանրային ոլորտում էներգետիկ պլանավորման և ինստիտուցիոնալ ու ֆինանսական կարողությունների բացակայություն՝ շենքերի համար էներգաարդյունավետության (ԷԱ) ծառայություններ գնելու համար,
- ցածր հանրային իրազեկվածություն ԷԱ ժամանակակից լուծումների ծախքերի և օգուտների վերաբերյալ,
- բնակելի շենքերում ԷԱ ներդրումների համար արդյունավետ ֆինանսավորման մեխանիզմների բացակայություն,
- շենքերի ԷԱ մասով ազգային օրենսդրության կիրարկման մեխանիզմների բացակայություն,
- համայնքային միջոցների բացակայություն լուսավորության համակարգերի ԷԱ վերափոխումների համար,
- քաղաքապետարանի սահմանափակ փոխատվությունների հնարավորություններ,

- արտաքին լուսավորության նկատմամբ ամբողջական հայեցակարգային մոտեցման բացակայություն,
- միջոցների բացակայություն՝ վերականգնվող էներգիայի (ՎԷ) օգտագործումն ավելացնելու համար,
- արդյունավետ հանրային և մասնավոր գործընկերությունների լուծումների բացակայություն՝ ՎԷ ներդրումներն առավելագույնս շահեկանորեն օգտագործելու համար,
- սահմանափակ փորձ ՎԷ համակարգերի գնման մասով:

Գյումրու քաղաքապետարանն ունի 57 հանրային շենք, որոնք բոլորն ունեն էներգասպառման բարձր մակարդակ (օրինակ՝ կՎտ/մ^2/տարի)՝ ԿՔԳԾ-ի մեթոդաբանության շեմերի և շենքերի էներգախնայողության կատարողականի Հայաստանի ազգային չափորոշչի համեմատ (համադրելի է «F» կարգի հետ): Սրա հիմնական պատճառներն են անբավարար ջեռուցումը կամ ներքին լուսավորության տեխնոլոգիաները, շենքերի տարիքը, անբավարար պահպանման, էներգիայի համակարգված կառավարման բացակայությունը և ներդրումների սահմանափակ կարողությունները: **Շենքերի էներգետիկ անարդյունավետության** այս խնդիրը պետք է լուծվի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր շենքի համար մանրամասն էներգետիկ աուդիտ իրականացնելու անհրաժեշտությունը: Բացի այդ, պետք է նաև լուծել էներգասպառման բարձր մակարդակի, այդ թվում՝ մասնավորապես **ջեռուցման** նպատակով էներգիայի սպառման առավել լայն խնդիրը՝ հաշվի առնելով դրա բարձր մակարդակը հանրային և բնակելի շենքերում: Չնայած կառավարության կողմից նոր շենքերի համար ընդունվել են նորմեր, չափանիշներ և քաղաքականության դրույթներ, բացակայում են քաղաքականության՝ գործող շենքերի մասով համապատասխան միջոցառումները կամ պլանները:

Արտաքին լուսավորության ենթակառուցվածքն ունի էներգասպառման բարձր ցուցանիշ, ինչպես նաև բարձր դրվածքային հզորություն (լուսավորվող ճանապարհի մեկ կիլոմետրի հաշվով): Ինչ վերաբերում է **արտաքին լուսավորության էներգաարդյունավետությանն** առնչվող այս մարտահրավերներին, լուսավորության համակարգերի էներգաարդյունավետ վերափոխումները սովորաբար բավականին ծախսարդյունավետ են և ունեն ծախսերի ողջամիտ փոխհատուցվելիություն: Սակայն քաղաքապետարաններին դժվար է դրանք ֆինանսավորել սեփական միջոցների հաշվին՝ նախնական կապիտալ ներդրումների հասանելիության բացակայության պատճառով: Ինչ վերաբերում է փոխառված միջոցներին, Գյումրու քաղաքապետարանի սահմանափակ վարկունակությունը մեծ խոչընդոտ է վարկային ռեսուրսների ներգրավման համար: Ի վերջո, **վերականգնվող էներգիային առնչվող մարտահրավերները** հանգեցրել են նրան, որ վերականգնվող էներգետիկայի ռեսուրսներից ստացված էներգիայի մասնաբաժինը գնահատվել է ավելի ցածր, քան ընդունված է Գյումրու հարաբերական կայուն էներգետիկ մակարդակի համար: Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը նաև ցածր է՝ հաշվի առնելով հայտարարված ՎԷԱ-ների ազգային թիրախները, որոնք պետք է ավելի խրախուսվեն քաղաքականության գործիքների և մասնավոր ոլորտի ֆինանսավորման համապատասխան հասանելի գործիքների մասին հանրությանն իրազեկելու և տեղեկացնելու միջոցով:

Գյումրու հանրային միջոցները սահմանափակ են և հավանաբար կմնան այդ վիճակում, ուստի համապատասխան ներդրումները պետք է վճարվեն խնայողություններից: Սխեմայի արդյունավետ նախագծման դեպքում գոյացած խնայողությունները կարող են ներառվել կայուն և կրկնօրինակելի ֆինանսավորման սխեմայի մեջ, ինչը թույլ կտա շրջանառու (բազմապատկող) մեխանիզմի միջոցով խնայողություններն ուղղորդել դեպի ավելի շատ ներդրումներ: Հայաստանի Հանրապետության կողմից համայնքային նախագծերում ներդրումներ կատարելու համար պետական վարկեր վերցնելու ներուժը ներկայումս սահմանափակ է: Ոչ պետական փոխառությունները (համայնքի ուղղակի վարկավորումը) իրենց հերթին չուսումնասիրված ուղղություն են, որոնք պետք է հաշվի առնվեն ՄՖՀ-ների կողմից առաջարկվող՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության (ՀՎԷԷ) հիմնադրամի կամ այլ գործիքների կողմից: Տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերող օրենսդրությունը դժվարացնում է համայնքների կողմից փոխատվությունների ստացումը. ներկայումս օրենսդրությունը ենթարկվում է իրավական բարեփոխումների, որպեսզի քաղաքապետարաններն ազատ լինեն փոխառնելու առանց սահմանափակումների:

Չնայած Գյումրու հանրային միջոցները սահմանափակ են, սակայն դրանք հույժ կարևոր են մասնավոր ներդրումներ ներգրավելու տեսանկյունից՝

ստեղծելու համար ինքնուրույն շուկա էներգաարդյունավետության առևտրային ֆինանսավորման համար: Այլ ԵՄ քաղաքներում էներգախնայողության կատարողականի պայմանագրերը (ԷԿՊ) դարձել են շատ օգտակար բիզնես մոդել՝ նման շուկա ստեղծելու համար: ԷԿՊ-ները նախատեսում են էներգիայի խնայողություն՝ առանց շենքի սեփականատերերից կապիտալ պահանջելու, և միաժամանակ երաշխավորում են էներգախնայողություն և տեխնիկական սպասարկում:

Քաղաքապետարանին անհրաժեշտ կլինեն լրացուցիչ կարողություններ և տեխնիկական աջակցություն Էներգաաուդիտի անցկացման ծառայությունների գնումները, ԷԱ տեխնիկական նախագծման, այդ թվում՝ ջերմաարդիականացման նախագծերի կառուցումը և դրանց վերահսկողությունը, դրան հաջորդող համապատասխան ԷԱ մշտադիտարկումը, գնահատումը, սերտիֆիկացումը և պիտակավորումը համարժեք կազմակերպելու համար:

4.1.2.3. Արդյունաբերություն

Գյումրու տնտեսությունն ուներ հզոր արդյունաբերական առանցք, որը 20-րդ դարում կենտրոնացած էր տեքստիլի, սննդի վերամշակման, թեթև արդյունաբերության և մեքենաշինության վրա: Այս արդյունաբերական հզորությունը հիմնականում անկում ապրեց 1988 թվականի երկրաշարժի հետևանքով, սակայն վերջին 30 տարվա ընթացքում Գյումրու արդյունաբերական ոլորտը մասամբ վերականգնվել է՝ զարգանալով այլ ուղղությամբ: Այժմ կենտրոնացումը դրվել է մետաղների վերամշակման, սննդի արդյունաբերության, կահույքագործության և տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) վրա: Այս անցումը վերամշակման և թեթև արդյունաբերության իր ազդեցությունն է ունեցել էներգաօգտագործման կառուցվածքի վրա: Արդյունաբերական ձեռնարկություններից շատերն օգտագործում են էլեկտրաէներգիան պարզապես տարածքների լուսավորության և ջեռուցման նպատակով, ուստի ներկայումս էներգիայի լայնածավալ օգտագործումը որևէ կերպ չի կապվում արդյունաբերական գործընթացների հետ: Սա արտացոլված է արդյունաբերության վրա ճնշումների ցուցանիշներում, որոնք ներկայացված են 4.23. աղյուսակում:

Աղյուսակ 4.23. Արդյունաբերության վրա գործադրվող ճնշման ցուցանիշներ*

Ճնշման ցուցանիշները	Ցուցանիշների արժեք
Էներգասպառումն արդյունաբերության ոլորտում՝ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի հաշվով	0.29 կՎտ/2010 ԱՄՆ դոլար
Ջերմային էներգիայի սպառումն արդյունաբերության մեջ՝ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի հաշվով	0.01 մՋ/2010 ԱՄՆ դոլար
Հանածո վառելիքի այրումն արդյունաբերական գործընթացներում՝ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի հաշվով	Տվյալներ չկան
Արդյունաբերության ոլորտում վերականգնվող էներգիայի սպառման մասնաբաժինը	12%
Վերամշակվող արդյունաբերական թափոնների բաժինը՝ որպես գոյացող ընդհանուր արդյունաբերական թափոնների տոկոս*	0%
Արդյունաբերական հոսքաջրերի այն տոկոսը, որը մաքրվում է կիրառելի ազգային չափանիշներին համապատասխան*:	0%

**Նշում: Թափոններին և կեղտաջրերին առնչվող ցուցանիշներին անդրադարձ է կատարվում նաև համապատասխան գլուխներում:*

Ազգային և տեղական վիճակագրությունը չի ներառում տվյալներ Գյումրու ողջ տեղական ՀՆԱ-ի կամ դրա՝ տնտեսության հատվածների մասնաբաժինների վերաբերյալ, ուստի հնարավոր չի եղել հաշվարկել էներգատարության ցուցանիշը Գյումրու ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության մասնաբաժնի մասով: Փոխարենը ներկայացված են միջին ազգային տվյալները: Ինչ վերաբերում է թափոններին, արդյունաբերական թափոնների հեռացումը կամ կեղտաջրերի մաքրումը կազմակերպված և կարգավորված չէ: Համաձայն գործարաններում իրականացված աուդիտների արդյունքների՝ ծառացած տնտեսական մարտահրավերների պատճառով որոշ գործարաններ օգտագործում են մետաղյա թափոնները՝ ուղարկելով դրանք մետաղյա թափոնների աղբավայրեր շատ փոքր վարձատրության դիմաց: Կահույքագործները փայտի թեփը տալիս են աշխատողներին՝ որպես ջեռուցման համար վառելիք: Սակայն սրանք բավականին եզակի գործելակերպեր են, որոնց մասով բացակայում են ռազմավարական տեսլական, բոլոր հնարավոր տարբերակների վերլուծություն և ընտրություններին առնչվող ծախսերի օպտիմալացում, ուստի դրանք չեն ներառվել 4.23. աղյուսակում:

4.24. աղյուսակում ներկայացված է քաղաքականության դաշտի գնահատումը՝ քարտեզագրված արձագանքի ցուցանիշների միջոցով:

Աղյուսակ 4.24. Արձագանքի ցուցանիշներն արդյունաբերության քաղաքականության շրջանակի մասով

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
Էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի սպառում /էներգաարդյունավետ արդյունաբերական գործընթացներ: Էներգաարդյունավետ արդյունաբերական մեքենաների օգտագործումը կարգավորվում և խթանվում է հարկաբյուջետային խրախուսման մեխանիզմներով (էլեկտրաէներգիա, ջերմային էներգիա, արդյունաբերական գործընթացներ)	Էներգաարդյունավետ արդյունաբերական սարքավորումների մասով հարկաբյուջետային գործիքներ չկան
Էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի սպառում/ էներգաարդյունավետ արդյունաբերական գործընթացներ: Էներգաարդյունավետ արդյունաբերական տեխնոլոգիաները (էլեկտրաէներգիա, ջերմային էներգիա, արդյունաբերական գործընթացներ) խրախուսվում են մասնավոր ներդրումներով	Կան մի շարք «կանաչ» վարկային գծեր, որոնք փոխատվություն են տրամադրում համեմատաբար նպաստավոր պայմաններով (շուկայական միջին տոկոսադրույքների հետ համեմատած)՝ ՄՓՄԶ-ներում և խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներ կատարելու համար: Դրանց թվին են պատկանում ՎԶԵԲ-ի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագիրը (նախկինում՝ «Էներգակրեդիտ»), ՄՖԿ-ի Կայուն էներգետիկայի ֆինանսավորման ծրագիրը և Գերմանական զարգացման բանկի (KfW) «Էներգաարդյունավետություն ՄՓՄԶ-ների համար» ծրագիրը
Արդյունաբերական թափոնների/ նյութերի սպառում: Նորակառույց արդյունաբերական շինությունների և թափոնների վերամշակման նյութական արդյունավետությունը կարգավորվում և խրախուսվում է հարկաբյուջետային գործիքներով	Ազգային օրենսդրության մեջ մշակված չեն որոշակի մեխանիզմներ կամ կարգավորումներ
Արդյունաբերական հոսքաջրերի մաքրումը/ կրկնակի օգտագործումը/ հեռացումը խթանվում են կանոնակարգերով և հարկաբյուջետային խրախուսման մեխանիզմներով	Ներառված չէ ազգային օրենսդրության մեջ

Այս ճնշումների և արձագանքների հիման վրա թիրախավորված հիմնական մարտահրավերներն են.

- ցածր նյութական արդյունավետություն,
- թափոնների/աղտոտման բարձր մակարդակ,
- արդյունաբերական ռեսուրսների արդյունավետություն և ավելի մաքուր արտադրություն խթանող կամ պահանջող քաղաքականության/ կանոնակարգող գործիքների բացակայություն,

- քաղաքի և արդյունաբերական ոլորտի միջև տեղեկատվության և երկխոսության բացակայություն:

Առաջին երկու մարտահրավերների համար՝ **ցածր նյութական արդյունավետություն և թափոնների աղտոտման բարձր մակարդակ**, արդյունաբերության ոլորտում էներգիայի օգտագործման մակարդակը մնում է ցածր ծանր արդյունաբերությունից դեպի վերամշակում և թեթև արդյունաբերություն անցում կատարելու պատճառով: Սակայն որոշ արտագնա աուդիտների արդյունքում պարզվել է, որ նյութական արդյունավետությունը, այնուամենայնիվ, մնում է ցածր արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններում, այդ թվում՝ արդյունաբերական թափոնների վերամշակման և հոսքաջրերի մաքրման համատեքստում, ինչին անդրադարձ է կատարվել նախորդ համապատասխան գլուխներում: Տեղական իշխանությունները, բնապահպանական ազգային չափանիշներից բացի, չունեն ընթացիկ նախաձեռնություններ կամ իրավական գործիքներ՝ արդյունաբերությունը կարգավորելու համար: Ավելի կանաչ, մաքուր և արդյունավետ արդյունաբերական արտադրանք ունենալու նպատակով Գյումրու քաղաքապետարանը պետք է մշակի գործիքներ՝ արդյունաբերական ընկերությունների հետ գործընկերային հարաբերություններ հաստատելու համար:

Երրորդ մարտահրավերը՝ **արդյունաբերական ռեսուրսների արդյունավետություն և ավելի մաքուր արտադրություն խթանող կամ պահանջող քաղաքականության/կանոնակարգող գործիքների բացակայություն**, պայմանավորված է նրանով, որ առկա չեն արդյունաբերական ոլորտում ռեսուրսների արդյունավետությանը կամ աղտոտմանն ուղղակիորեն առնչվող պետական նախաձեռնություններ: Վերջին երկու տասնամյակների ընթացքում կառավարության մոտեցումը մասնավոր հատվածին հիմնվել է նվազագույն կարգավորման վրա՝ խրախուսելու ներդրումները և օգնել նրանց խթանելու տնտեսական աճը: Արդյունաբերական գործընթացներում ջերմային էներգիայի սպառման և հանածո վառելիքի այրման կարգավորման շրջանակը ներկայումս նույնպես չի նախատեսում խրախուսման բավարար մեխանիզմներ: Էներգիայի սակագներում էներգաարդյունավետության խրախուսման մեխանիզմներ ներառված չեն: Բնական գազի սակագինը նույնիսկ պարունակում է հակախրախուսական տարր. սակագինը խոշոր սպառողների համար (ամսական 10.000մ^3-ից ավելի) ավելի ցածր է, քան սովորական մանրածախ սակագինը: 2017թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլն էներգաարդյունավետության և էներգախնայողության հարցերում շեշտադրում է հանրության իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը:

Սակայն առկա են ուղղության փոփոխության նշաններ: Օրինակ, վերջերս առաջ են քաշվել մի շարք օրենսդրական նախաձեռնություններ՝ ուղղված գործառնության և գործընթացների արդյունավետության բարելավմանը, ինչպես նաև արդյունաբերական ոլորտում վերականգնվող էներգիայի աղբյուրների խթանմանը: Նման նախաձեռնությունների օրինակ է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Ռեսուրսների արդյունավետ օգտագործում և մաքուր արտադրություն» (ՌԱՄԱ) ծրագիրը, որը ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման (ՄԱԱԶԿ), (UNIDO) և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն՝ ԿՏԲԿ, կազմակերպությունների ծրագիրն է 2013 թվականից ի վեր՝ Տնտեսական համագործակցության և զարգացման արդիականացման (ՏՀԶԿ), (OECD), ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ ՄԱԿ), (UNECE) և ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (ՄԱԿ ՇՄԾ), (UNEP) հետ համագործակցությամբ՝ որպես «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի (EaP Green) մաս: ՌԱՄԱ-ն, որը տարածվում է ողջ երկրի վրա, անցկացրել է վերապատրաստման դասընթացներ և հավաստագրում երկու տասնյակ ՌԱՄԱ փորձագետների և թվով 55 ՓՄՁ-ների համար:

Գյումրիում գտնվող արդյունաբերական հաստատություններին առնչվող վերահսկողության և կարգավորման պարտավորությունների համար պատասխանատու է Բնապահպանության նախարարությունը (ԲՆ), որն ունի սահմանափակ գործիքներ՝ արդյունաբերական ոլորտի վրա ուղղակիորեն ներազդելու համար, սակայն պատասխանատու է նաև չորրորդ մարտահրավերի՝ **քաղաքի և արդյունաբերական ոլորտի միջև տեղեկատվության և երկխոսության բացակայության** համար: Պատճառն այն է, որ, համաձայն ՀՀ օրենսդրության, տեղական ինքնակառավարման մարմինները չունեն արդյունաբերական ոլորտի միջոցառումներին առնչվող որևէ պատվիրակված լիազորություն կամ իրավազորություն: Արդյունքում

տեղական ինքնակառավարման մարմինների ծրագրերը, ռազմավարությունները և նույնիսկ ինստիտուցիոնալ կառուցվածքը չեն պարունակում տարրեր, որոնցով կարող են կամ պարտավոր են արդյունաբերական ոլորտում ձեռնարկել մեղմման որոշակի գործողություններ:

4.1.2.4. Կոշտ թափոններ

4.25 աղյուսակում ամփոփված են ելակետային ճնշման ցուցանիշների քարտեզագրման արդյունքները թափոնների ոլորտի համար: Այս քարտեզագրումը հիմք է ծառայում մարտահրավերների հետագա ներկայացման համար:

Աղյուսակ 4.25. Թափոնների ոլորտի ճնշման ցուցանիշներ

Ճնշման ցուցանիշ	Ճնշման ցուցանիշի արժեք
Կենցաղային կոշտ թափոնների ընդհանուր գոյացումը մեկ շնչի հաշվով	301.03 կգ/անձ/տարի
ՀՆԱ-ն՝ նյութի ներքին օգտագործման հաշվով	Տվյալներ չկան
Համայնքի կանոնավոր աղբահանության ծառայությունից օգտվող բնակչության բաժնեմասը	100%
Քաղաքային կոշտ թափոնների (ՔԿԹ) այն տոկոսը, որը հեռացվում է դեպի բաց աղբավայրեր, վերահսկվող աղբավայրեր, ջրային տարածքներ կամ վառվում է (ՔԿԹ-ի այն տոկոսը, որը հեռացվում է դեպի շահագործման ժամկետն անցած աղբավայրեր)	100%
ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր թափոնների (ՎԹ) այն տոկոսը, որը հեռացվել և տեղափոխվել է ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր	0%
Կոմպոստի վերածման նպատակով հավաքված ՔԿԹ-ի տոկոսը	0%
Տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցությունը	<15%
Վերամշակված արդյունաբերական թափոնները՝ որպես ընդհանուր արդյունաբերական թափոնների բաժնեմաս	0%
Գործող աղբավայրի (աղբավայրերի) շահագործման մնացած ժամկետը	0 տարի

4.26. աղյուսակում ներկայացված է ոլորտի քաղաքականության շրջանակը՝ քարտեզագրված արձագանքի ցուցանիշների հիման վրա:

Աղյուսակ 4.26. Թափոնների քաղաքականության շրջանակի արձագանքի ցուցանիշները

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
Նյութերի սպառման/ կոշտ թափոնների գոյացման կրճատումը խրախուսվում է իրազեկման արշավների միջոցով	Իրականացվել են նյութերի սպառումը կրճատելուն ուղղված որոշ գործողություններ, սակայն իրականացվող միջոցառումները նյութերի սպառումը և թափոնների գոյացումը կրճատելու համար բավարար չեն
Կոշտ թափոնների հեռացման համակարգի ծածկույթը բարելավվում է ծրագրերի և ներդրումների միջոցով	Բարելավմանն ուղղված միջոցառումներր նախատեսված են Գյումրու՝ 2017-2021 թթ. հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրով
Փողոցում աղբ նետելը և տեսակավորման համակարգերի պահանջները չկատարելը պատժվում են տուգանքների և տույժերի միջոցով	Փողոցում աղբ նետելու համար Գյումրիում սահմանված են և գանձվում են տուգանքներ: Գյումրիում դեռևս գոյություն չունի աղբի տեսակավորման պաշտոնական համայնքային և տեսակավորումը խրախուսող համակարգ
Կոմպոստավորող, վերամշակող և թափոններից էներգիա ստացող ձեռնարկությունները ստեղծվում են ծրագրերի և ներդրումների միջոցով	ՀՀ կառավարությունն ընդունել է ԿՔԹ-ի կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն 2017-2036 թթ. համար, սակայն դեռևս էական զարգացումներ տեղի չեն ունեցել
Կոշտ թափոնների կրկնակի օգտագործումը, տեսակավորումը և վերամշակումը խրախուսվում են տեղեկատվական և իրազեկման արշավների միջոցով	Տեղեկատվական կամ իրազեկման արշավներ չեն իրականացվում
Թափոնների հեռացման վայրերի գերբեռնվածության խնդիրներին անդրադարձ է կատարվում ծրագրերի և ներդրումների միջոցով	Շիրակի մարզի՝ 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը ներառում է հետևյալ դրույթը. «…ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան տարածաշրջանի Բենիամին համայնքի վարչական տարածքում կառուցել և անհրաժեշտ սարքավորումներով համալրել եվրոպական ստանդարտներին համապատասխանող մարզային աղբավայր»: Մինչ օրս որևէ էական տեղաշարժ չկա

Ընդհանուր առմամբ ոլորտի հիմնական մարտահրավերները կարող են ամփոփվել շահագրգիռ կողմերի վերհանած մարտահրավերների հիման վրա, որոնք նշված են 4.27. աղյուսակում:

Աղյուսակ 4.27. Շահագրգիռ կողմերի արձագանքը կոշտ թափոններին

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	1.64	Թափոնների վերամշակման ոչ բավարար գործելակերպ
2	2.09	Ելանյութերի ցածր արդյունավետություն և սահմանափակություն

Այս երկու մարտահրավերներից առաջինին՝ **Թափոնների վերամշակման ոչ բավարար գործելակերպ** և մասնավորապես ՔԿԹ-ի հեռացման համար նախատեսված սանիտարական աղբավայրերի հրատապ անհրաժեշտությանն անդրադառնալու համար ՀՀ կառավարությունն ընդունել է ՔԿԹ-ի հավաքման և հեռացման ռազմավարություն: Այս ռազմավարությունն ամբողջապես բավարարում է ՔԿԹ-ի հեռացման առկա բացը՝ ԵՄ-ի չափանիշներին համապատասխանելու համար, ինչը նույնպես առաջնահերթություն է Գյումրու համար: Սակայն Գյումրու քաղաքապետարանը կարճաժամկետ կտրվածքով դեռ պետք է պայքարի թափոնների հեռացման գործող համակարգի հետևանքների դեմ, որոնք կշարունակվեն մինչև նոր սանիտարական աղբավայրի նախագծումը, ֆինանսավորումը, կառուցումն ու շահագործումը: Թափոնների հավաքման ներկայիս գործելակերպերը չեն կարող համարվել եվրոպական չափանիշներին համապատասխանող, քանի որ աղբավայրերը պարզապես բաց վերահսկվող աղբատեղիներ են: Թափոնների ճնշող մեծամասնության հեռացումն առկա վերահսկվող աղբավայրեր բացասաբար է անդրադառնում շրջակա միջավայրի որակի վրա, քանի որ այն նվազեցնում է քաղաքի կենսաբազմազանությունը (օրինակ՝ թռչունների պոպուլյացիան) և հանգեցնում մակերևութային ջրերի ու հողի աղտոտմանը թափոնների հեռացման վայրերում և դրանց մերձակայքում: Չնայած քաղաքականության առկա միջոցառումներով ծրագրվում են ԵՄ-ի չափանիշներին համապատասխանող ՔԿԹ-ի հավաքում և հեռացում (թափոնների կրկնակի օգտագործում, տեսակավորող և վերամշակող, կոմպոստավորող, թափոններից էներգիա ստացող ձեռնարկություններ), սակայն այլ, այդ թվում՝

վտանգավոր թափոնների կառավարման հարցերը դեռևս չեն ընդգրկվել երկարաժամկետ ծրագրում:

Ինչ վերաբերում է երկրորդ հիմնական մարտահրավերին՝ **ցածր նյութական արդյունավետությանը**, վերջինիս համար մարտահրավեր է թափոնների վերամշակման համար սահմանափակ տեսակավորումը հավաքման վայրում. Գյումրիում այս ցուցանիշը հենանշված է «կարմիրով» (ներկայումս գոյացող ընդհանուր թափոնների նախանշված 15%-ից պակասն է տեսակավորվում՝ ըստ ԿՔԳԾ-ի մեթոդաբանության ներքին շեմի): Այլ քաղաքների փորձը ցույց է տալիս, որ քաղաքի տնտեսության բարձր նյութական արդյունավետությունը կարող է էական և զգալի օգուտ բերել քաղաքացիներին, ինչպես նաև քաղաքի բյուջեին: Նյութերի կրկնակի բարելավված օգտագործմանը նպաստող գործողությունները կարող են ներառել ՔԿԹ-ի հումքի արդյունավետ վերամշակման համակարգի ներդրումը և խթանվող բարձր նյութական արդյունավետությունն արդյունաբերական և ծառայությունների ոլորտում: Կոշտ թափոնների գոյացման կանխարգելմանը, դրանց կրկնակի օգտագործմանը, հավաքման վայրում տեսակավորմանը և վերամշակմանն առնչվող իրազեկման արշավները նույնպես արդյունավետ միջոցառումներ են այս ոլորտում:

4.1.2.5. Ջուր

Այս ենթագլուխը լրացնում է ջրային ռեսուրսների որակի վերաբերյալ 4.1.1.2. գլխում ներկայացված քննարկումը, իսկ 4.28. աղյուսակում ամփոփված են ճնշման ցուցանիշները: Քարտեզագրումը հիմք է ծառայում մարտահրավերների հետագա ներկայացման համար:

Աղյուսակ 4.28. Ջրի վրա ճնշումների ցուցանիշներ

Ճնշման ցուցանիշներ	Ցուցանիշի արժեք
Ջրի սպառումը յուրաքանչյուր շնչի հաշվով	1324 լ/օր/մեկ շնչին
Ջրի սպառումը քաղաքի ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով	0.661 լ/օր/ԱՄՆ դոլար
Էլեկտրակայաններում սպառվող ջրի մեկ միավորը՝ արտադրված առաջնային էներգիայի մեկ միավորի հաշվով	Կիրառելի չէ
Արդյունաբերական ջրի սպառումը որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման տոկոս	Կիրառելի չէ
Չհաշվառված ջուր	86%
Էլեկտրակայաններում սպառվող ջրի մեկ միավորը՝ արտադրված առաջնային էներգիայի մեկ միավորի հաշվով	Կիրառելի չէ
Կենցաղային և առևտրային ԿՋ-ի այն տոկոսը, որը մաքրվում է կիրառելի ազգային չափանիշների համաձայն	0%
Կեղտաջրերի կրկնակի օգտագործման հնարավորություն ունեցող ոչ արդյունաբերական շենքերի տոկոսը	0%
Էներգիայի արտադրության գործողությունների հետևանքով առաջացած կեղտաջրերի այն տոկոսը, որը մաքրվում է կիրառելի ազգային չափանիշների համաձայն	0%
Արդյունաբերական ԿՋ-ի այն տոկոսը, որը մաքրվում է կիրառելի ազգային չափանիշների համաձայն	0%
Վերջին 10 տարում սաստիկ հեղեղներից տուժած բնակելի տների տոկոսը	Կիրառելի չէ
Անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի տարեկան քանակը՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով	Կիրառելի չէ

Հիմնական մարտահրավերներն ամփոփվել են շահագրգիռ խմբերի կողմից, որոնք հակիրճ ներկայացված են 4.29. աղյուսակում:

Աղյուսակ 4.29. Շահագրգիռ կողմերի արձագանքը ջրի հիմնախնդիրներին

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	1.56	Կեղտաջրերի (ԿՋ) հեռացման ոչ բավարար կարողություններ և մաքրման համակարգ, ինչն էլ պատճառ է դառնում հեղեղների, առողջապահական ռիսկերի և ջրային միջավայրի վատթարացման
2	2.78	Ջրամատակարարման համակարգում չհաշվառված ջրի (ՉՀՋ) չափազանց բարձր մակարդակ
3	3.22	Մակերևութային ջրերի որակի ոչ արդյունավետ մշտադիտարկում
4	3.33	Ջրի ոչ արդյունավետ օգտագործում, տվյալների սահմանափակ հասանելիություն և մշտադիտարկում

Առաջին մարտահրավերի վերաբերյալ՝ **Կեղտաջրերի (ԿՋ) հեռացման ոչ բավարար կարողություններ և մաքրման համակարգ,** կարևոր է նշել, որ Գյումրու ջրահեռացման համակարգը ծայրահեղ վատ վիճակում է՝ հաշվի առնելով, որ քաղաքում օրական գոյանում է միջինը 20 մլն մ³ կեղտաջուր: Գյումրու ջրահեռացման համակարգը գրավիտացիոն է և նախատեսված է միայն կեղտաջրերի հեռացման համար. այն անջատ է ջրհեռ համակարգից: Ջրահեռացման հիմնական ջրագիծը, որը գտնվում է Գյումրի գետի աջ ափին, հեռացնում է քաղաքային կեղտաջրերի միայն 25%-ը: Ձախ ափի ջրահեռացման համակարգը նախագծվել է, սակայն չի կառուցվել: Կոյուղու որոշ հատվածներ միացված են ստորգետնյա ջրերի հեռացման համակարգերին՝ քահրիզներին, սակայն կեղտաջրերի մեծ մասը թափվում է երեք փոքր գետերի՝ Գյումրու, Ղոր-Ղոբիի և Չերքեզի ձորի մեջ: Այս գետերը ներկայումս ծառայում են որպես քաղաքում գոյացած կեղտաջրերի կոյուղատեղեր: Հեռացվելուց առաջ կեղտաջրերը չեն մաքրվում՝ չնայած այն փաստին, որ դրանք պարունակում են հիվանդանոցից արտահոսող հոսքաջրեր: Գյումրի գետի ջրի մոտ 70%-ը կեղտաջուր է: Վերջին տարիներին անբավարար սպասարկումն ու քառսային շինարարությունը պարբերաբար հանգեցնում են ջրահեռացման համակարգերի խցանման կամ վնասման: Ձեռնարկվել են վերանորոգման աշխատանքներ՝ առանց հաշվի առնելու համակարգի այնպիսի տեխնոլոգիական կողմերը, ինչպիսիք են ջրագծի տրամագիծը, տարբեր հատվածների հավասարեցումը և միացումների շարունակականությունը: Դրենաժային և ջրահեռացման համակարգերի միջև առկա են շատ միացումներ: Սա հանգեցրել է ջրահեռացման համակարգի վատ կազմակերպման, ինչի հետևանք են ներքին կառավարմանն առնչվող խնդիրները, տվյալների բացակայությունը և ընդհանուր համակարգի վատ վիճակը: 1988թ. երկրաշարժի և դրան հաջորդող չկանոնակարգված շինարարության հետևանքով վնասվեց քարիզների համակարգը, որը ապահովում էր մակերեսային գրունտային ջրերի հեռացումը՝ հանգեցնելով քաղաքի տարածքում մակերեսային գրունտային ջրերի մակարդակի բարձրացման, ստեղծելով աղետային ռիսկեր, վտանգելով շինությունների հիմքերը և բարձրացնելով նկուղային ենթակառուցվածքների պահպանման ծախսերը: Բացի այդ, ինչպես նշել են շահագրգիռ կողմերը, **կեղտաջրերի ոչ բավարար մաքրումը** մարտահրավեր է: 1984-1985 թթ. կառուցված կեղտաջրերի մաքրման կայանը (ԿՄԿ) չի գործում, իսկ դրա վերականգնման ծրագրերը չեն համարվում տնտեսապես հիմնավորված (ԿՄԿ-ի ամբողջական վերականգնման համար պահանջվում է մոտ 2 մլն ԱՄՆ դոլար): Հաշվի առնելով կեղտաջրերի մաքրման արդյունավետության և մակերևութային ջրերի միջև ուղիղ կապը՝ կեղտաջրերի հեռացման և մաքրման համակարգի արդիականացումն դրական ազդեցություն կունենա մակերևութային ջրերի որակի վրա:

Չհաշվառված ջրին առնչվող մարտահրավերները մանրամասն ներկայացված են 4.1.1.3. գլխում, իսկ **ջրի ոչ արդյունավետ օգտագործմանն** առնչվող մարտահրավերները կապված են բարելավում պահանջող մի քանի խնդիրների հետ: Վերջիններս կապված են ջրի մաքրման և կրկնակի օգտագործման, անձրևաջրերի կառավարման (ներծծում, կուտակում, կրկնակի օգտագործում) և ընդհանրապես ջրի տնտեսման հետ: Ջրի արդյունավետ օգտագործումը խթանելու նպատակով շահագրգիռ կողմերի և քաղաքացիների համար անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան իրազեկման արշավներ և աշխատաժողովներ: Ջրի մաքրման և կրկնակի օգտագործման ազգային չափանիշների մշակումը, ինչպես նաև

հարկաբյուջետային ու տնտեսական խրախուսման մեխանիզմները կարող են կարևոր լինել ոչ միայն Գյումրիում, այլ նաև ընդհանուր առմամբ Հայաստանում ջրի արդյունավետ օգտագործման համար: Բացերն ակնհայտորեն երևում են 4.30. աղյուսակում, որտեղ ներկայացված է քաղաքականության շրջանակի գնահատումը՝ քարտեզագրված արձագանքի ցուցանիշների միջոցով: 4.30. աղյուսակում նաև կարելի է տեսնել, որ ջրօգտագործման արդյունավետությունը բարելավելու համար մշակված շատ կանոնակարգերի, խրախուսման մեխանիզմների և քաղաքականությունների, ինչպես նաև ավելի ընդհանուր ջանքերի իրականացումը վերածվել է մարտահրավերի, այնինչ մյուսների ազդեցությունը բավարար չի եղել: Օրինակ, ջրամատակարարման և ավելի քիչ չափով ջրահեռացման համակարգերի շրջանակն ու դրանց արդյունավետությունը մշտապես բարելավվում են՝ ջրահեռացման և համակարգի կառավարումը բարելավելու համար:

Վերջին մարտահրավերը՝ **մակերևութային ջրերի որակի մշտադիտարկման անարդյունավետությունը և տվյալների հասանելիության սահմանափակումները**, նույնպես հիմնական խնդիր է:

Աղյուսակ 4.30. Ջրային քաղաքականության շրջանակին առնչվող արձագանքի ցուցանիշները

Արձագանքի ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշի գնահատում
Ջրօգտագործման չափումն ու հաշիվների դուրսգրումը կարգավորվում են	Առկա է, սակայն նկատվում են իրականացման մարտահրավերներ, և (կամ) գործող քաղաքականությունները ներկայումս բավարար չեն՝ ծառացած խնդիրը լուծելու համար
Ջրի խնայողությունն ու կրկնակի օգտագործումը խրախուսվում են իրազեկման արշավների միջոցով	Առկա չէ
Ջրամատակարարման ցանցի ծածկույթը և արդյունավետությունը բարելավվում են	Առկա է, սակայն նկատվում են իրականացման մարտահրավերներ,
պլանների և ներդրումների միջոցով	և (կամ) գործող քաղաքականությունները ներկայումս բավարար չեն՝ ծառացած խնդիրը լուծելու համար
Շենքերի հասանելիությունը կեղտաջրերի հեռացման և մաքրման համակարգերին բարելավվում է պլանների ու ներդրման միջոցով	Առկա է, սակայն նկատվում են իրականացման մարտահրավերներ, և (կամ) գործող քաղաքականությունները ներկայումս բավարար չեն՝ ծառացած խնդիրը լուծելու համար
Կեղտաջրերի մաքրումը խթանվում է կանոնակարգերի և հարկաբյուջետային խրախուսման մեխանիզմների միջոցով	Առկա չէ
Կեղտաջրերի համար հաշիվների դուրսգրումը կանոնակարգվում է	Առկա է
Խմելու ջրի նախնական մաքրումը բարելավվում է պլանների և ներդրումների միջոցով	Առկա է
Ցամաքուրդային համակարգերը ստեղծվում են պլանների և ներդրումների միջոցով	Առկա է, սակայն նկատվում են իրականացման մարտահրավերներ, և (կամ) գործող քաղաքականությունները ներկայումս բավարար չեն՝ ծառացած խնդիրը լուծելու համար
Բիզնեսի և համայնքի դիմակայունությունը խրախուսվում է իրազեկման արշավների միջոցով	Առկա չէ

4.1.2.6. Հողօգտագործում

Այս ենթագլուխը լրացնում է հողօգտագործման մասով 4.1.1.3. գլխում ներկայացված քննարկումը, իսկ Ճնշման ու Արձագանքի՝ կանաչ տարածքներին առնչվող ցուցանիշներն ամփոփված են 4.31. աղյուսակում: Այս քարտեզագրումը հիմք է ծառայում մարտահրավերների հետագա ներկայացման համար:

Աղյուսակ 4.31. Կանաչ տարածքների ճնշման և արձագանքի ցուցանիշներ

Ճնշման ցուցանիշ	Արձագանքի ցուցանիշ
Կառուցապատված տարածքների միջին տարեկան աճի տոկոսը	Չկա արձագանք քաղաքականության, ռազմավարության կամ պլանի մասով
Քաղաքաշինության այն տոկոսը, որը տեղի է ունենում ոչ թե կանաչ, այլ քաղաքի առկա տարածքում	Չկա արձագանք քաղաքականության, ռազմավարության կամ պլանի մասով

Այս ոլորտի՝ 4.4.1. գլխում ամփոփված տեխնիկական գնահատման մեջ առանձնացվել են Գյումրու **սահմանափակ կանաչ տարածքները՝** համեմատելով դրանք միջազգային հենանիշերի հետ: Ինչպես նշվել է 4.31. աղյուսակում, խնդիրը կարող է վերագրվել կառուցապատման խտության, տարանցային ուղղորդվածությամբ քաղաքաշինական զարգացման և գոտևորման կանոնակարգերի կամ խրախուսման մեխանիզմների միջոցով խառը կառուցապատման խթանման մասով կանոնակարգման բացակայությանը: Այս խնդիրների մեծ մասին պետք է անդրադարձ կատարվեր Գյումրու՝ 2005 թվականի գլխավոր հատակագծում: Սակայն, ինչպես վերը նշվել է, իրականության և հատակագծում նշված միտումների միջև առկա էր որոշակի հակասություն: Հատակագծի դրույթները չեն պահպանվել: 2005 թվականի գլխավոր հատակագծով հաստատված գոտևորումը չգործարկելը, օրինակ, հանգեցրել է կառուցապատման կանաչ գոտիների համար նախատեսված տարածքների հաշվին: Այդ կառուցապատումների թվում են նաև հանրային կանաչ գոտիներում գտնվող արդյունաբերական ձեռնարկությունները (կառուցված նախքան 2005 թվականը): Սա, քաղաքից ինտենսիվ արտագաղթի հետ մեկտեղ, վերջին 20 տարում հանգեցրել է բնակչության մոտ 30%-ի կրճատման և կառուցապատված տարածքների ոչ արդյունավետ օգտագործման: Քաղաքը լի է շենքերն ու ենթակառուցվածքները զբաղեցնող սահմանափակ բնակչությամբ ընդարձակ տարածքներով: ԿՔԳԾ-ի ցուցանիշները պատշաճ չեն արտացոլում նման խնդիրները:

Շահագրգիռ կողմերի՝ 4.32. աղյուսակում ներկայացված համապատասխան արձագանքը հաստատում է հողօգտագործման ոլորտի կողմից գործադրվող բնապահպանական ճնշումները, այդ թվում՝ հողօգտագործման ընդհանուր պլանավորման ու կառուցապատման բացակայությունը և ուրբանիզացիայի հանգեցնող անկանոն հողօգտագործումը:

Աղյուսակ 4.32. Շահագրգիռ կողմերի արձագանքը հողօգտագործմանը

Դաս	Միջին միավոր	Մարտահրավեր
1	2.00	Համալիր հողօգտագործման և քաղաքաշինական պլանավորման բացակայություն
2	2.88	Հողօգտագործմանն առնչվող տվյալների հավաքագրման կամ մշտադիտարկման սահմանափակ գործընթաց
3	2.63	Ուղեցույցների, գործիքների և կարողությունների պլանավորման բացակայություն
4	2.63	Ոչ ռացիոնալ հողօգտագործման տարածում, ինչը հանգեցնում է քաղաքային տարածքների ընդլայնման

Շահագրգիռ կողմերի՝ կանաչ տարածքներին, կենսաբազմազանությանը և էկոհամակարգերին առնչվող արձագանքը ներկայացվել է 4.1.1.3. գլխի 4.9. աղյուսակում: Անդրադարձ է կատարվել ճնշմանն առնչվող մի շարք հատուկ մարտահրավերների, մասնավորապես հետևյալ մարտահրավերներին, որոնց հասցեագրման համար քաղաքականության արձագանքներն անբավարար են.

- կանաչ գոտիների անբավարար ապահովում և «կանաչ» ենթակառուցվածքի անջատ ցանց,
- տնկարկների ոչնչացում ապօրինի կառույցների և կառուցապատված տարածքների ընդլայնման հետևանքով,

- ուրբանիզացիայի հանգեցնող անկանոն հողօգտագործում և կառուցապատում,
- Ո:չ բարվոք և անբավարար վիճակում գտնվող հանրային օգտագործման ջրի ենթակառուցվածք («կապույտ» ենթակառուցվածք):

Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունից հետո վերհանված, սակայն չգնահատված լրացուցիչ մարտահրավերները ներառում են.

- հիվանդությունների կանխարգելման միջոցառումների և կենսաբազմազանության հանդեպ կանոնավոր խնամքի բացակայությունը,
- կառուցապատված տարածքների միջին տարեկան աճի տոկոսը,
- քաղաքաշինության այն տոկոսը, որը տեղի է ունենում ոչ թե կանաչ, այլ առկա տարածքում:

Շահագրգիռ խմբերի կողմից վերհանված հիմնական մարտահրավերը **տնկարկների ոչնչացումն** է: Դրանք քաղաքի հատակագծի օրգանական մասն են, և դրանց ոչնչացումը հանգեցնում է շրջակա միջավայրի որակի վատթարացման, ինչը բացասաբար է անդրադառնում բնակչության առողջության վրա: Քաղաքի կանաչ գոտու նույնիսկ մասնակի ոչնչացումը հանգեցնում է այն տնկարկների պաշտպանիչ և էկոլոգիական գործառույթների վերացմանը, որոնք տարիներ ի վեր աճեցվել են, և որոնց համար ներդրումներ են կատարվել:

4.2. Գյումրիում իրականացվելիք առաջնահերթ գործողությունների նոր առաջացող ոլորտները

Վերը նշված վերլուծության և «Կանաչ քաղաք» ծրագրի շրջանակներում վերհանված մարտահրավերների հիման վրա ԿՔԳԾ-ն պետք է անդրադառնա մի շարք ոլորտների առաջնահերթ գործողությունների՝ Գյումրու շրջակա միջավայրի վիճակը համալիր բարելավելու համար: 4.33. աղյուսակը սահմանում է առաջնահերթ գործողություններ յուրաքանչյուր բնապահպանական թեմայի և բնագավառի համար:

Աղյուսակ 4.33. Առաջնահերթ գործողությունների ոլորտներ

	Բնապահպանական թեմա/ոլորտ	Մարտահրավեր	Առաջնահերթ գործողությունների ոլորտներ
Բնապահպանական թեմայի ոլորտ	Օդի որակ և ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների նվազեցում	• Փոշով աղտոտվածության բարձր մակարդակ, • ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիայի արդյունքում առաջացող վտանգ, • CO_2-ի բարձր մակարդակ յուրաքանչյուր շնչի հաշվով և ածխածնի արտանետումների քանակը ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր միավորի համար, • օդի որակին առնչվող սահմանափակ տվյալներ ու մշտադիտարկում:	• **Տրանսպորտ.** բարելավել հանրային և ոչ շարժիչային տրանսպորտի ենթակառուցվածքը, • **տրանսպորտ.** հանածո վառելիքով աշխատող փոխադրամիջոցների ուժեղացված կառավարում ու վերահսկողություն, • **շինարարություն, էներգամատակարարում, փողոցային լուսավորություն.** նվազեցնել շենքերի և փողոցային լուսավորության համար սպառվող էներգիայի քանակը, • **հողօգտագործում.** ավելացնել քաղաքի կանաչապատումը, • **օդի որակ.** դիտարկել փոշով աղտոտվածությունը նվազեցնելու միջոցառումներ, • **օդի որակ.** բարելավել օդի որակը և աղտոտվածության մշտադիտարկումը:
	Ջրային ռեսուրսներ	• Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիան գետերում և լճերում, մասնավորապես Ախուրյան գետում, • մակերեսային ջրի որակի անբավարար մշտադիտարկում:	• **Ջուր.** նվազեցնել չհաշվառված ջրի ընդհանուր մակարդակը, • **ջուր.** բարելավել կեղտաջրերի հեռացման համակարգի որակը, • **ջուր.** ուժեղացնել կեղտաջրերի մաքրման ընդհանուր կարողությունը, • **ջուր.** բարելավել մակերևութային ջրերի որակի մշտադիտարկման ընդհանուր արդյունավետությունը, • **ջուր.** խրախուսել արդյունաբերական ոլորտի, քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ջրի օգտագործման վարքը, • **կոշտ թափոններ.** բարելավել կոշտ և վտանգավոր թափոնների հեռացման վերահսկողությունն ու կառավարումը:
	Հողեր	• Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թիվը, • հողերին առնչվող տվյալների սահմանափակ հասանելիությունն ու մշտադիտարկման բացակայությունը:	• **Կոշտ թափոններ.** արդյունաբերական հոսքաջրերի մաքրման բարելավում, • **կոշտ թափոններ.** բարելավել կոշտ և վտանգավոր թափոնների հեռացման վերահսկողությունն ու կառավարումը, • **Արդյունաբերություն.** հողերի վերականգնում լքված արդյունաբերական կառուցապատման համար նախատեսված տարածքներում և անավարտ շինհրապարակներում,

	Բնապահպանական թեմա/ոլորտ	Մարտահրավեր	Առաջնահերթ գործողությունների ոլորտներ
			• **հող.** հողի որակին առնչվող տվյալների հավաքագրման մշտադիտարկում:
	Կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	• Կանաչ տարածքների անբավարար չափ/կանաչ տարածքների և բնակիչների ցածր հարաբերակցություն, • կենսաբազմազանությանն առնչվող անբավարար տվյալներ/մշտադիտարկման բացակայություն:	• **Հողօգտագործում.** ապօրինի շինարարության կարգավորում, • **հողօգտագործում.** քաղաքաշինության և «կանաչ» ենթակառուցվածքի ապահովում, • **հողօգտագործում.** ավելացված խտության ծրագիր, • **ջուր.** ջրի հանրային ենթակառուցվածքի սպասարկում ու արդիականացում, • **կոշտ թափոններ.** սահմանափակ նյութական արդյունավետություն և վերամշակման բացակայություն:
	Հարմարեցում և դիմակայունություն բնական աղետների նկատմամբ	• Բնական աղետների՝ ջրհեղեղների, երաշտի, երկրաշարժերի հետևանքով հասցված գնահատված տնտեսական վնասը՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, • ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի բարձր տոկոս, • ռիսկի ենթակա տնային տնտեսությունների բարձր տոկոս, • բնական աղետների մասին իրազեկվածության և դրանց պատրաստվածության ցածր մակարդակ:	• Սոցիալական, տնտեսական և ենթակառուցվածքային հնարավոր մեծ կորուստներ բնական աղետների հետևանքով, • կլիմային հարմարվողականության և աղետների նկատմամբ դիմակայունության դրույթները ռազմավարություններում և ծրագրերում չներառելը:
Ոլորտներ	Տրանսպորտ	• Ավտոմեքենաների շարժակազմի (ընդհանուր և ըստ տրանսպորտային միջոցի տեսակի) բարձր միջին տարիք, սարքինության վիճակ և օգտագործման վազք, • թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաների վառելիքի այրումից առաջացած արտանետումներին ներկայացվող չափանիշներ (եվրո-4), • մասնավոր ավտոմեքենաների օգտագործման բարձր և աճող տարածվածություն, • Ճանապարհի՝ բացառապես հանրային և ոչ շարժիչային տրանսպորտի համար նախատեսված կարճ հատվածները՝ արտահայտված կիլոմետրերով, • հանրային տրանսպորտի վատ ենթակառուցվածքն ու ծառայությունները, • տրանսպորտային ոլորտի ոչ արդյունավետ կառավարումը:	• Բարելավել հանրային տրանսպորտի ենթակառուցվածքը, • բարելավել հետիոտնի և հեծանվով երթևեկելու համար նախատեսված ենթակառուցվածքը, • բարելավել տրանսպորտի ընդհանուր կառավարումը, • տրանսպորտին առնչվող տվյալների ավելի լայն հասանելիություն և մշտադիտարկում, • բարելավել կայուն տրանսպորտի մասին իրազեկվածությունն ու դրա խթանումը, • բարելավել հանածո վառելիքով աշխատող փոխադրամիջոցների կարգավորումը:

	Բնապահպանական թեմա/ոլորտ	Մարտահրավեր	Առաջնահերթ գործողությունների ոլորտներ
	Շինարարություն, էներգասպառում և լուսավորություն	• էլեկտրականության և ջերմային էներգիայի սպառման բարձր մակարդակները բնակելի և ոչ բնակելի շենքերում, • փողոցային լուսավորության՝ ճանապարհի յուրաքանչյուր կիլոմետրի համար օգտագործվող էլեկտրականության բարձր մակարդակ, • էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի մասին հանրային իրազեկվածության բացակայություն, • «Կանաչ» շինարարության գործելակերպի և հավաստագրման բացակայություն, • սահմանափակ ներդրումներ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում:	• Բարելավել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի մասով իրազեկվածությունը, • բարելավել էներգիայի և ջերմության օգտագործման արդյունավետությունը շենքերում ու հանրային ենթակառուցվածքներում, • զարգացնել «կանաչ» շինարարության գործելակերպն ու հավաստագրումը, • ավելացնել վերականգնվող էներգիայի ոլորտում կատարվող ներդրումները:
	Արդյունաբերություն	• Ցածր նյութական արդյունավետություն, • թափոնների և աղտոտման բարձր մակարդակ, • արդյունաբերական ռեսուրսների արդյունավետություն և ավելի մաքուր արտադրություն խրախուսող կամ պարտադրող քաղաքականության (կարգավորման գործիքների) բացակայություն, • արդյունաբերական ոլորտի և քաղաքի միջև երկխոսության ու տեղեկատվական հոսքի բացակայություն:	• բարելավել նյութական արդյունավետությունը, • նվազեցնել արդյունաբերական թափոններով աղտոտվածությունը, • մշակել քաղաքականություններ և կանոնակարգեր՝ կառավարելու համար ռեսուրսների արդյունավետությունն ու թափոններով աղտոտվածությունը, • ուժեղացնել համագործակցությունը, գիտելիքների փոխանցումն ու երկխոսությունը քաղաքի և արդյունաբերական ոլորտի միջև:
	Կոշտ թափոններ	• Քաղաքային կոշտ թափոնների (ՔԿԹ) այն տոկոսը, որը հեռացվում է դեպի բաց աղբավայրեր, վերահսկվող աղբավայրեր, ջրային տարածքներ կամ այրվում է (ՔԿԹ-ի այն տոկոսը, որը հեռացվում է դեպի ժամկետանց աղբավայրեր), • ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր թափոնների (ՎԹ) այն տոկոսը, որը հեռացվել և տեղափոխվել է ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր, • կոմպոստի վերածման նպատակով հավաքված ՔԿԹ-ի տոկոսը, • ՔԿԹ-ի և այն արդյունաբերական թափոնների միջև հարաբերակցությունը, որոնք տեսակավորվում ու վերամշակվում են, • գործող աղբավայրերի շահագործման մնացած ժամկետը:	• Բարելավել ենթակառուցվածքը և դրան առնչվող գործընթացները՝ կոշտ թափոնների հեռացումը վերահսկելու և կառավարելու համար, • բարելավել ենթակառուցվածքը և դրան առնչվող գործընթացները՝ վտանգավոր թափոնների հեռացումը վերահսկելու և կառավարելու համար, • բարելավել ենթակառուցվածքը և դրան առնչվող գործընթացները՝ ավելացնելու համար վերամշակված թափոնների քանակը, • բարձրացնել տեղական բնակչության իրազեկվածության մակարդակը թափոնների վերամշակման վերաբերյալ և խթանել այդ գործելակերպը:

	Բնապահպանական թեմա/ոլորտ	Մարտահրավեր	Առաջնահերթ գործողությունների ոլորտներ
	Ջուր	• Ջրի սպառման բարձր մակարդակ յուրաքանչյուր շնչի և քաղաքի ՀՆԱ-ի յուրաքանչյուր միավորի հաշվով, • կեղտաջրերի (ԿՋ) հեռացման անբավարար ցանց և մաքրման անբավարար կարողություն, • կենցաղային, արդյունաբերական և առևտրային ԿՋ-ի տոկոսը և էներգաարտադրությանն առնչվող գործողությունների հետևանքով գոյացող ԿՋ-երը, որոնք մաքրվում են կիրառելի ազգային չափանիշների համաձայն, • չհաշվառված ջրի չափազանց բարձր մակարդակ ջրամատակարարման համակարգում, • ջրօգտագործման ոչ արդյունավետ վարքագծեր ու տվյալների սահմանափակ հասանելիություն և մշտադիտարկում:	• *Ջրային ռեսուրսների մասով առաջնահերթ գործողությունների ոլորտները տե՛ս բնապահպանական թեմաների տակ*
	Հողօգտագործում	• Հողօգտագործման և քաղաքաշինության միասնական պլանավորման բացակայություն, • պլանավորման ուղեցույցի, գործիքների և կարողությունների բացակայություն, • հողօգտագործմանն առնչվող տվյալների հավաքագրման սահմանափակ գործընթաց կամ մշտադիտարկում, • ուրբանիզացիայի հանգեցնող անկանոն հողօգտագործում ու կառուցապատում, • կանաչ գոտիների ոչ բավարար ապահովում և «կանաչ» ենթակառուցվածքի անջատվածություն, • տնկարկների ոչնչացում ապօրինի կառույցների և կառուցապատված տարածքների ընդլայնման հետևանքով, • կառուցապատված տարածքների միջին տարեկան աճի տոկոսը, • քաղաքաշինության ցածր տոկոսը, որը տեղի է ունենում ոչ թե կանաչ, այլ քաղաքի առկա տարածքում:	• Բարելավել հողօգտագործմանն առնչվող տվյալների հավաքագրումն ու մշտադիտարկումը, • որդեգրել ընդհանուր մոտեցումներ քաղաքաշինության ոլորտում, • զարգացնել ընդհանուր քաղաքաշինության կարողությունները, մշակել ուղեցույցներ ու գործիքներ, • ծրագրել ավելացված խտություն՝ խուսափելու համար ուրբանիզացումից:

5.«Կանաչ քաղաքի» տեսլականը, ռազմավարական նպատակները և գործողությունները

Այս գլխում հակիրճ ներկայացված է ԿՔԳԾ-ի գործընթացի 2-րդ քայլը՝ «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մշակումն ու ընդունումը: Այն ներառում է ԿՔԳԾ-ի՝ նախորդ գլխում նշված գլխավոր մարտահրավերների և առաջնահերթ գործողությունների ոլորտների վրա հիմնված տեսլականները, ռազմավարական և գործառնական նպատակները, միջնաժամկետ թիրախները: Այնուհետև ներկայացված են կարճաժամկետ գործողությունների մանրամասները և դրանց առաջնահերթությունների սահմանումը:

5.1. ԿՔԳԾ-ի շրջանակը

«Կանաչ քաղաքի» վերհանված մարտահրավերներին ի պատասխան՝ Գյումրու համար մշակվել է «կանաչ քաղաքի» ամբողջական տեսլականը: Ընդհանուր համաքաղաքային տեսլականը հաշվի է առնում «կանաչ քաղաքի» վերհանված մարտահրավերները և համադրում դրանք քաղաքի՝ հետագա զարգացման ձգտումի հետ՝ ձևավորելով «կանաչ» իդեալներ և ձգտումներ: Ընդհանուր տեսլականը նաև հաշվի է առնում քաղաքականության՝ քաղաքային շրջանակի զեկուցմամբ սահմանված առավել լայն օրակարգը, ինչպես նաև ԿՔԳԾ-ի աշխատաժողովների ընթացքում քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներից և շահագրգիռ կողմերից ստացված արձագանքը: Սա կօգնի ստանձնել ԿՔԳԾ-ի համար պատասխանատվություն և աջակցություն ստանալ ողջ քաղաքային վարչակազմից:

Քաղաքի տեսլականով սահմանվում է Գյումրու «կանաչ» փոխակերպման ուղղությունը: ԿՔԳԾ-ի շրջանակը գործիք է, որն ուղղորդում է քաղաքի անցումն այս գործընթացով՝ բաժանելով այն հինգ տարրի: Վերջիններս ներկայացվել են 2-րդ գլխում (գծապատկեր 2.5.): Մասնավորապես յուրաքանչյուր բնապահպանական թեմատիկ ոլորտի և բնագավառի համար վեր են հանվել տեսլականներ, որոնք վերածվել են բնապահպանական ռազմավարական նպատակների՝ հիմնված Վիճակի ցուցանիշների միջոցով վերհանված մարտահրավերների վրա: Դրանց հիմքում ընկած են գործառնական նպատակներ, որոնք մատնանշում են քաղաքային տնտեսության այն ոլորտները, որոնց կարող է անդրադառնալ յուրաքանչյուր ռազմավարական նպատակ: Գործառնական նպատակները հիմնված են Ճնշման և Արձագանքի ցուցանիշների միջոցով վերհանված մարտահրավերների վրա: Այս ոլորտների շրջանակներում մշակվել են կարճաժամկետ գործողություններ, և սահմանվել է դրանց առաջնահերթությունը: Ուստի իրականացման ընթացքում դրանք նպաստում են Ցուցանիշների տվյալների բազայի վրա հիմնված միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախների իրականացմանը:

Էջի հակառակ կողմում ներկայացված 5.1. աղյուսակում կարելի է ավելի մանրամասն տեսնել տեսլականները, ռազմավարական նպատակները, ինչպես նաև կարճաժամկետ և երկարաժամկետ թիրախները:

Գյումրու ԿՔԳԾ-ի տեսլականը

«Առողջացնել Գյումրի քաղաքի շրջակա միջավայրը և այն դարձնել առավել հարմար քաղաքացիների բնակության համար՝ օդի որակի, ջրային ռեսուրսների և հողօգտագործման բարելավման, էկոհամակարգերի պահպանման և կլիմայական փոփոխությունների հետևանքների մեղմման և հարմարողականության միջոցով: Պետք է նաև ստեղծել տնտեսական և տեխնոլոգիական աճի հնարավորություն, ինչի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, և կբարելավվեն Գյումրու քաղաքացիների կյանքի պայմանները՝ ապահովելով «կանաչ» տնտեսության, կայունության և դիմակայության սկզբունքները: Վերջնանպատակն է քաղաքի շրջակա միջավայրը ապահով, մաքուր և կանաչ դարձնելը, ինչպես նաև նորարարության խթանումը՝ Գյումրու ողջ համայնքի բարեկեցությունն ու բարօրությունն ապահովելու համար»:

Աղյուսակ 5.1. Թեմայի վրա հիմնված տեսլականներ, ռազմավարական և գործառնական նպատակներ, թիրախներ

Գերակա մարտահրավեր բնապահպանական թեմա	Տեսլական, ռազմավարական նպատակներ, թիրախներ			Գործառնական նպատակներ
1. Օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում	***Տեսլականի սահմանում օդի որակի և ջերմոցային գազերի արտանետումների աղբյուրների մասին.*** *«Գյումրու ողջ տարածքում օդը կլինի մաքուր և առողջարար, իսկ քաղաքը կխրախուսի ավելի ցածր ածխածնային և ցածր էներգիայի սպառման լուծումներ բոլոր ոլորտներում՝ ջերմոցային գազերի մակարդակը նվազեցնելու նպատակով: Քաղաքը կունենա տվյալների ավելի լավ հավաքագրում, վերլուծություն և կառավարում՝ օդի որակն առավել լավ հասկանալու ու այն կառավարելու համար»:*			• Ավելացնել հետիոտնային, հեծանվային և հանրային տրանսպորտի օգտագործման տարածվածությունը, • բարելավել տրանսպորտային միջոցների շարժակազմի էներգաարդյունավետությունը, • նվազեցնել էներգիայի արտադրությունից առաջացող և օդն աղտոտող արտանետումները և ածխածնի արտանետումների քանակությունը, • նվազեցնել բոլոր շենքերի և փողոցային լուսավորության համար սպառվող էներգիան, • Խրախուսել կանաչ գնումների և կատարողականի պայմանագրերի գործելակերպը, • բարելավել օդի որակին առնչվող տվյալների հավաքագրման և մշտադիտարկման ընթացակարգերի շրջանակն ու որակը:
	Ռազմավարական նպատակ՝ ***SO_AQGHG՝ փոշու և օդի աղտոտիչների այլ արտանետումների քանակության նվազեցում (տեղական և համաշխարհային մակարդակով)***			
	Ցուցանիշ	**Միջնաժամկետ թիրախ**	**Երկարաժամկետ թիրախ**	
	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան	0.15 մկգ/մ³	10 μg/m³-PM2.5 20 μg/m³-PM10	
	CO_2-ի տարեկան արտանետումները ՀՆԱ-ի միավորի հաշվով	20% նվազեցում՝ համեմատած 2014 թ. մակարդակների հետ	30% նվազեցում՝ համեմատած 2014 թ. մակարդակների հետ	
	CO_2-ի համարժեքի տարեկան արտանետումները մեկ շնչի հաշվով	3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով	2.5 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով	
	Էներգասպառումն արդյունաբերության ոլորտում՝ ըստ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի	5% նվազեցում՝ համեմատած 2015 թ. մակարդակների հետ	10% նվազեցում՝ համեմատած 2015 թ. մակարդակների հետ	
	Մասնավոր տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն առօրյա երթևեկության մեջ	80%	50%	
	Ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ	2%	5%	
	Էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժինը	60%	70%	

Գերակա մարտահրավեր բնապահպանական թեմա	Տեսլական, ռազմավարական նպատակներ, թիրախներ			Գործառնական նպատակներ
	Էլեկտրականությամբ աշխատող քաղաքային տրանսպորտային միջոցների մասնաբաժինը	20%	50%	
	Էներգասպառումը շենքերում	23 կՎտժ	21 կՎտժ	
	Էներգասպառումը փողոցային լուսավորության համար	25,000 կՎտժ/կմ	20,000 կՎտժ/կմ	
	Օդն աղտոտող աղբյուրների հայտնաբերված և մշտադիտարկվող մասնաբաժինը	30%	100%	
	Տվյալների տարեկան հավաքագրման ենթակա տրանսպորտային միջոցները	100%	100%	

2. Ջրային ռեսուրսներ	***Տեսլականի սահմանում ջրային ռեսուրսների մասով.*** *«Գյումրին կունենա մաքուր ջրի մատակարարման, ջրահեռացման և անձրևաջրերի հեռացման՝ ԵՄ չափանիշներին համապատասխանող ու բոլորին հասանելի արդյունավետ համակարգ: Ջրի կենցաղային ու ոչ կենցաղային օգտագործման վարքագիծը նույնպես կբարելավվի»:*			• Մշակել և խթանել նախաձեռնություններ ջրի սպառումը կառավարելու համար, • բարելավել ջրամատակարարման համակարգը և նվազեցնել ՉՀՋ-ի ընդհանուր կորուստը, • բարելավել կեղտաջրերի (այդ թվում՝ կոյուղաջրերի), անձրևաջրերի, գրունտային ջրերի և քաղաքային կոշտ թափոնների նկատմամբ վերահսկողության, դրանց հեռացման և մաքրման կարողությունը, • բարելավել քաղցրահամ ջրի աղբյուրների պահպանությունը, • բարելավել թափոններին և մակերևութային և գրունտային ջրերին առնչվող տվյալների
	Ռազմավարական նպատակ՝ ***SO_WR՝ Բարելավված ջրամատակարարում, ջրի որակ (այդ թվում՝ մակերևութային ջրի) և ջրօգտագործման արդյունավետություն, չհաշվառված ջրի (ՉՀՋ) ընդհանուր նվազեցված կորուստ***			
	Ցուցանիշ	**Միջնաժամկետ թիրախ**	**Երկարաժամկետ թիրախ**	
	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիան գետերում և լճերում	0.4-1.2 մգ/լ	<0.4 մգ/լ	
	Արդյունաբերական ջրի սպառումը որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման տոկոս	25%	17%	
	Ջրամատակարարման ցանցի ծածկույթը և արդյունավետությունը բարելավվում են պլանների ու ներդրումների միջոցով	75%	100%	
	Անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի տարեկան քանակը՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով	50% նվազեցում՝ համեմատած 2017 թ.	20% նվազեցում՝ համեմատած 2017 թ. մակարդակների հետ	

		մակարդակների հետ		հասանելիությունը, որակը և մշտադիտարկումը:
	Կենցաղային և առևտրային ԿՋ-ի այն տոկոսը, որը մաքրվում է կիրառելի ազգային չափանիշների համաձայն	30%	60%	
	Չհաշվառված ջուր	25-35%	<25%	
	Ջրի սպառումը քաղաքի ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով	0.4 մ³/տարի	<0.2 մ³/տարի	
	Ջրի խնայողությունն ու կրկնակի օգտագործումը խրախուսվում են իրազեկման արշավների միջոցով	Հաղորդակցման մշակված ռազմավարություն և իրազեկման արշավ	Հաղորդակցման իրականացված ռազմավարություն և իրազեկման արշավ	
	Ջրային ռեսուրսները, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվությունը մինչև 2021թ. կներառվեն Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ)	50%	100%	
	Ջրի սպառումը կենցաղում օգտագործողների համար մեկ շնչի հաշվով	120 լիտր ամեն օր՝ մեկ շնչի հաշվով	115 լիտր ամեն օր՝ մեկ շնչի հաշվով	

3. Կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	***Տեսլականի սահմանում՝ կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր.*** *«Գյումրին կլինի Հայաստանի կանաչ մայրաքաղաքը, որտեղ կանաչ տարածքը կհամապատասխանի լավագույն միջազգային փորձին, ինչն էլ կնպաստի կենսաբազմազանության և էկոհամակարգերի կատարելագործմանը: Կանաչ ենթակառուցվածքը կօգտագործվի հարմարավետության, ինչպես նաև համապատասխան գործառույթների իրականացման համար»:*			• Բարելավել կենսաբազմազանությանն առնչվող տվյալների հավաքագրման և մշտադիտարկման ընթացակարգերի շրջանակն ու որակը, • ընդլայնել կանաչ տարածքներն ու այլ կանաչ ենթակառուցվածքներ, բարձրացնել դրանց որակն ու ավելացնել բազմազանությունը, • կիրառել հետևողական մոտեցում (վերակառուցապատում, կետային կառուցապատում,
	Ռազմավարական նպատակ՝ ***SO_GSBIO՝ Պաշտպանվող, պահպանվող, բազմազան և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, ողջ քաղաքի տարածքում***			
	Ցուցանիշ	**Միջնաժամկետ թիրախ**	**Երկարաժամկետ թիրախ**	
	Բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը յուրաքանչյուր բնակչի հաշվով	6 մ²/բնակիչ	10.5 մ²/բնակիչ	
	Թռչունների աճող պոպուլյացիայի բազմազանությունը	Տարեկան աճ	Տարեկան աճ	

	Քաղաքային ծառայությունների՝ համապատասխան քաղաքականության և պլանավորման ոլորտում ժամանակակից պահանջներին համապատասխանող վերապատրաստում անցած աշխատակիցների ներգրավումը պլանավորման բաժին	100%	100%	շինարարություն չկառուցապատված տարածքում) քաղաքաշինության մեջ՝ խուսափելու համար անկանոն կառուցապատումից
	Հողօգտագործմանը և բնապահպանությանն առնչվող տվյալների մասնաբաժինը՝ հավաքագրված և հասանելի դարձված ԱՏՀ-ի հարթակում	50%		

4. Հողեր	***Տեսլականի սահմանում՝ հողեր*** *«Հողի որակը Գյումրիում կվերականգնվի, կպահպանվի և կբարելավվի՝ մարդկանց և բնության համար գոյության պայմաններ ապահովելու համար»:*			• Բարելավել կոշտ և վտանգավոր թափոնների, ինչպես նաև կեղտաջրերի նկատմամբ վերահսկողությունը (այդ թվում՝ վերամշակման միջոցով), • վերականգնել լքված արդյունաբերական հողերը և շինհրապարակները, • ավելացնել հողի որակին առնչվող տվյալների հավաքագրումը, չափումը և մշտադիտարկումը
	Ռազմավարական նպատակ՝ ***SO_SL՝ Պաշտպանված, բարելավված և վերականգնված հողի որակ ողջ քաղաքում***			
	Ցուցանիշ	**Միջնաժամկետ թիրախ**	**Երկարաժամկետ թիրախ**	
	ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր թափոնների (ՎԹ) այն տոկոսը, որը հեռացվել և տեղափոխվել է ԵՄ-ի չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր	95%	100%	
	Տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցությունը	25%	100%	
	Վերամշակված արդյունաբերական թափոնների բաժնեմասը այդ թափոնների ընդհանուր ծավալում	25%	50%	
	Թափոն արտադրողների այն տոկոսը, որոնք օգտվում են թափոնների հեռացման վճարովի, գործարքային ծառայությունից	80%	100%	
	Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թիվը	40% նվազեցում՝ համեմատած 2017 թ. մակարդակների հետ	80% նվազեցում՝ համեմատած 2017 թ. մակարդակների հետ	

	Աղտոտված այն տարածքների մասնաբաժինը, որը գույքագրվել, քարտեզագրվել և գնահատվել է	50%

5. Հարմարվողականություն բնական աղետներին և դիմակայունություն դրանց նկատմամբ	***Տեսլականի սահմանում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունություն և հարմարվողականություն*** *« Գյումրին կավելացնի դիմակայունությունը եղանակային պայմանների և բնական աղետների (ինչպիսիք են, օրինակ, երկրաշարժերը) նկատմամբ և կապահովի կայուն զարգացման օգուտներ»*			• Բարձրացնել տարերային աղետների դեպքում ջրային ենթակառուցվածքների դիմակայունությունը • Ապահովել կանաչ ենթակառուցվածքների փուլային զարգացում և ծայրահեղ եղանակային պայմանների հանդեպ դիմակայունության և հարմարվողականության բարձրացում • Կլիմայական ռիսկերի գնահատում, աղետների ռիսկերի նվազեցման պլանավորում
	Ռազմավարական նպատակ՝ ***SO_AR՝ Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունությունը բնական աղետների նկատմամբ***			
	Ցուցանիշ	**Միջնաժամկետ թիրախ**	**Երկարաժամկետ թիրախ**	
	Ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի տոկոսը	12%	10%	
	Ռիսկի ենթակա տնային տնտեսությունների տոկոսը	12%	10%	
	Բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասը՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմաս	1%	0.5%	
	Բնակչության այն միջին մասնաբաժինը, ում մոտ վերջին 5 տարվա ընթացքում ծայրահեղ կլիմայական պայմաններում նկատվել են հոսանքի երկարատև անջատումներ	5%	3%	
	ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորումը	Բավարար է աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) տեղական պլանների իրականացման համար	Բավարար է աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) տեղական պլանների իրականացման համար	

5.2. «Կանաչ քաղաքի» գործողությունները

Այս գլխում ներկայացված է **Կանաչ քաղաքի 64 գործողությունների (ԿՔԳ)** շարք: Գործողությունների առաջնահերթությունը սահմանվել է՝ օգտագործելով առաջնահերթությունների սահմանման՝ 2-րդ գլխում համառոտ ներկայացված եռաքայլ գործընթացը, այդ թվում՝ բնապահպանական, տնտեսական և սոցիալական օգուտների տեխնիկական գնահատումը, շահագրգիռ խմբերի կողմից առաջնահերթությունների սահմանումը, ինչպես նաև քաղաքական հաստատումը:

Որպես «առաջնահերթ» սահմանվել է ընդհանուր 46 գործողություն, իսկ Ա հավելվածում ներկայացված են ևս 18 «լրացուցիչ գործողություն»:

ԿՔԳ-ները Գյումրու՝ «կանաչ» քաղաքի վերափոխման առաջնային գործիքն են: Ուղղակիորեն համապատասխանելով ռազմավարական նպատակներին՝ դրանք նաև նպաստում են միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախների ապահովմանը: ԿՔԳ-ները մշակվել են հատուկ Գյումրու համար՝ շահագրգիռ կողմերի և Գյումրու քաղաքապետարանի հետ ինտերակտիվ խորհրդատվության հիման վրա: Եթե ռազմավարական նպատակները սահմանված են բնապահպանական թեմայի մակարդակով, ապա գործողությունները սահմանված են հետևյալ ոլորտների մակարդակով.

- տրանսպորտ,
- շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն,
- կոշտ թափոններ,
- ջուր,
- արդյունաբերություն,
- հողօգտագործում,
- միջոլորտային գործողություններ:

Միջոլորտային գործողությունները միակ բացառությունն են, քանի որ դրանք ներառված չեն քաղաքային տնտեսության որևէ ոլորտ, այլ ուղղակիորեն անդրադառնում են բնապահպանական մարտահրավերներին: Քաղաքի օդի որակի մշտադիտարկման համակարգի մշակումը նման միջոլորտային գործողության օրինակ է:

Գործողությունները նույնպես դասակարգված են ըստ ներկայացված յոթ տարբեր դասերի:

Աղյուսակ 52. Գործողությունների դասակարգում

Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ՝ նոր տվյալների հավաքագրում, տեղեկատվության մշտադիտարկում և իրականացում՝ ֆոկուսային ուսումնասիրությունների նախաձեռնման հետ մեկտեղ:

Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում՝ հանրային իրազեկվածության նախաձեռնություններ, որոնք ներառում են հանրային տեղեկատվական արշավներ, համայնքային նախագծեր և շփումներ տեղական գործարարների հետ՝ շրջակա միջավայրը տեղական մակարդակով բարելավելու համար: Ինստիտուցիոնալ զարգացման նախաձեռնություններն առնչվում են այն գործողություններին, որոնք թույլ են տալիս քաղաքապետարանին և այլ պաշտոնական ստորաբաժանումների բարելավել տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև զարգացնել հմտություններ և գիտելիքներ՝ որոշումների ընդունման և կառավարման գործընթացները համակարգելու համար:

Չափանիշներ, ուղեցույցներ և կանոնակարգեր՝ նախնական չափանիշներ, ուղեցույցներ և կանոնակարգեր, որոնք կիրականացվեն Գյումրու քաղաքապետարանի, Շիրակի մարզի վարչակազմի կամ ՀՀ կառավարության (այդ թվում՝ նախարարությունների, գերատեսչությունների կամ օրենսդրությամբ սահմանված այլ մարմինների) կողմից:

Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր՝ այն ռազմավարությունները, պլանները և ծրագրերը, որոնք կապահովեն նախնական իրագործելիություն և պլանավորում՝ հետագայում ավելի մանրամասն գնահատելու շարունակվող գործողությունների նպատակահարմարությունը և կուղղորդեն դեպի խոշոր կապիտալ ներդրումներ:

Պետական գնումներ՝ ներքին ընթացակարգեր, գնման կանոններ, տեխնիկական մասնագրեր և մրցույթի (տենդերի) արձանագրության վերանայումներ՝ շրջակա միջավայրի համար անվտանգ, էներգաարդյունավետ, կայուն և «կանաչ» ապրանքների ու ծառայությունների գնման համար կենսաշրջանի նվազագույն ծախսով պայմաններ ստեղծելու նպատակով:

Կապիտալ ներդրումներ քաղաքի նոր ակտիվների, ենթակառուցվածքի և տեխնոլոգիաների մեջ՝ նոր ենթակառուցվածքի, ակտիվների (օրինակ՝ շարժակազմի) և տեխնոլոգիաների (օրինակ՝ կայքի հավելվածների) մեջ ուղղակի ներդրումներ ներառող գործողություններ:

Կապիտալ ներդրումներ քաղաքի առկա ակտիվների, ենթակառուցվածքի և տեխնոլոգիաների մեջ՝ առկա ենթակառուցվածքի, ակտիվների (օրինակ՝ շարժակազմի) և տեխնոլոգիաների (օրինակ՝ կայքի հավելվածների) մեջ ուղղակի ներդրումներ ներառող գործողություններ: Սա ներառում է անհրաժեշտության դեպքում ենթակառուցվածքի արդիականացում:

Այս գլխի յուրաքանչյուր ենթագլխի կառուցվածքը մանրամասն ներկայացված է ստորև:

Նախ, կարճաժամկետ գործողությունները ներկայացված են աղյուսակի տեսքով՝ ԿՔԳԾ-ի 5-րդ գլխում հակիրճ ներկայացված շրջանակի առնչությամբ՝ ցույց տալով դրանց կապը ռազմավարական նպատակների և միջնաժամկետ թիրախների հետ, ուստի մատնանշելով, թե որ բնապահպանական մարտահրավերներին են դրանք անդրադառնում: Առաջնահերթ գործողությունները պարզորոշ առանձնացված և նշված են յուրաքանչյուր աղյուսակի ամենասկզբում: Դրանց հաջորդում են լրացուցիչ գործողություններ:

Երկրորդ, յուրաքանչյուր ոլորտի համար ներկայացված է ծրագիր՝ գործողությունների ծրագրի հաջորդականության և գործողությունների միջև կապի նշմամբ: Ոլորտի ծրագրերը կենտրոնացած են ԿՔԳԾ-ի՝ 2020-2025թթ. իրականացվելիք առաջին փուլի վրա: Հարկ է նշել, որ առաջին (կարճաժամկետ) ժամանակաշրջանը ներկայացված է վեցամյա կտրվածքով, քանի որ հնարավոր է՝ 2020 թվականը դառնա անցումային տարի քաղաքի համար՝ ծրագիրը զարգացման իր հնգամյա պլանում ամբողջապես ներառելու տեսանկյունից:

Երրորդ, յուրաքանչյուր առաջնահերթության և լրացուցիչ գործողության համար ներկայացված են գործողության տիպային ձևեր. առաջինները ներառված են փաստաթղթի հիմնական տեքստում, իսկ վերջիններս՝ Ա հավելվածում: Յուրաքանչյուր գործողության տիպային ձևը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

- գործողության հղում,
- գործողության անվանում,
- գործողության նկարագրություն,
- գործողության համապատասխանեցումը ռազմավարական նպատակներին,
- գործողության օգուտներ,
- գործողության կապիտալ ծախսեր,
- գործողության շահագործման ծախսեր,
- գործողության ֆինանսավորման տարբերակներ,
- գործողության իրականացման մեկնարկի և ավարտի ամսաթվեր,
- գործողության պատասխանատու,
- իրականացնող գործընկեր (գործընկերներ),
- գործողության շահագրգիռ կողմեր:

Գյումրին պետք է ունենա տրանսպորտային
ոլորտ, որը կխրախուսի հանրային և անշարժիչ
տրանսպորտային միջոցների առավել
լայն կիրառություն, կունենա դիմակայուն
ենթակառուցվածք, կներդնի նոր տեխնոլոգիաներ
և արդյունավետ կերպով կօգտագործի
տրանսպորտին առնչվող տվյալները»:

5.2.1. Տրանսպորտ

Գյումրու տրանսպորտային ոլորտի համար քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակվել է 14 գործողություն՝ ԿՔԳԾ-ի գործընթացի միջոցով: 14 գործողություններից ութը ներառված են առաջնահերթ գործողությունների ցանկում, այնինչ մնացած վեցը ընդգրկված են որպես լրացուցիչ գործողություններ:

Գյումրու համար սահմանված՝ տրանսպորտին առնչվող բոլոր գործողությունների նպատակն է բարելավել օդի որակը և նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները: Բացի այդ, որոշ գործողություններ՝ հատկապես նոր ենթակառուցվածքի ապահովմանն առնչվող, կնպաստեն Գյումրին ավելի դիմակայուն դարձնելուն և կլիմայի փոփոխությանը հարմարվելու կարողությանը:

Տրանսպորտին առնչվող առաջնահերթ գործողությունները կենտրոնանում են **նոր, արդիական և գործառնական առումով արդյունավետ հանրային տրանսպորտի ծառայության** մատուցման վրա, ինչը հիմնված է լինելու ավտոբուսային կանգառների նոր ենթակառուցվածքի ստեղծման, հանրային տրանսպորտի արդիականացված շարժակազմի և օպերատորների վերանայված մոդելի վրա: Հանրային տրանսպորտի ոլորտում հիմնական շեշտը դրվելու է առավել մաքուր տրանսպորտային շարժակազմի ապահովման, օդի տեղայնացված աղտոտման մասով իրավիճակի բարելավման և մասնավոր տրանսպորտային միջոցներով իրականացվող ուղևորափոխադրումների գործելակերպի փոփոխության վրա: Հանրային տրանսպորտային միջոցների շարժակազմի արդիականացումը նաև հնարավորություններ կստեղծի մասնավոր հատվածի ներդրումների համար: Հարկ է նշել, որ որպես Գյումրու հանրային տրանսպորտի ցանցի արդիականացմանն ուղղված վարկային և դրամաշնորհային շրջանակի մաս ներկայումս ՎԶԵԲ-ն իրականացնում է «Գյումրու միջհամայնքային ուղևորային երթևեկության և ծառայողական շարժակազմի ծրագիրը»: Այն մասնավորապես նպատակ ունի ներմուծելու և շրջանառության մեջ դնելու միջին չափի ավտոբուսներ, ներդնելու տոմսերի միասնական համակարգ, ստեղծելու նոր ավտոբուսային կանգառներ՝ ապահովելով հանրային տրանսպորտի լավ կառավարվող համակարգ:

Հեծանվային ենթակառուցվածքի բարելավումները նույնպես ծրագրի հիմնական ուղղվածություններից են՝ հաշվի առնելով ողջ քաղաքում նոր հեծանվային արահետներ և հեծանվային կանգառներ ունենալու անհրաժեշտությունն ու ցանկությունը: Ինչպես հայտնի դարձավ ԿՔԳԾ-ի աշխատաժողովների արդյունքում, ցանկություն կա ամբողջ քաղաքում խրախուսելու հեծանիվների օգտագործումը, ինչը նաև կնպաստի ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությանը: Նաև պետք է ստեղծվի հետիոտնի համար նախատեսված **բարելավված ճանապարհային կողմնորոշիչ ենթակառուցվածք**՝ հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանցի ներդրմամբ: Սա կխրախուսի նոր մշակութային և զբոսաշրջային ծրագրերի պլանավորում՝ զբոսանքի համար առավել հարմարեցված տարածքների հետ մեկտեղ:

Ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծումից բացի, նաև կարևոր է, որ Գյումրին համախմբի իր կայուն տրանսպորտային քաղաքականությունն ու գործողությունները **Կայուն քաղաքային շարժունակության միասնական ծրագրում** կամ **ԿՔՇԾ**-ում: ԿՔՇԾ-ն կմշակվի **տվյալների բարելավված հավաքագրման ծրագրի** հետ մեկտեղ (խոշոր մարտահրավեր Գյումրու բոլոր ոլորտներում)՝ միաժամանակ ստեղծելով նոր բազմամոդալ տրանսպորտային մոդել, որն արդյունաբերության մեջ ճանաչված գործիք է և կարող է օգտագործվել՝ փորձարկելու համար տրանսպորտային ոլորտում ձեռնարկվող այնպիսի խոշորամասշտաբ միջոցառումների ազդեցությունն ու օգուտները, ինչպիսիք են քաղաքականությունը և (կամ) նոր ենթակառուցվածքը:

Աղյուսակ 5.3. Տրանսպորտային ոլորտի գործողությունները

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
Առաջնահերթ			
A_TR_01	Նոր հանրային տրանսպորտի ցանցի օպերատորի մոդել, ավտոբուսային հավաքակազմի արդիականացում և միասնական սակագնային ու տոմսային համակարգ	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3 , CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժնի մինչև 60% ավելացում, առօրյա երթևեկության մեջ մասնավոր տրանսպորտային միջոցների բաժնեմասը նվազեցումը մինչև 80%-ի մակարդակը
A_TR_02	Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում, այդ թվում՝ իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության (ԻԺՈւՏ) (RTPI) համակարգի ներդրմամբ	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3 , CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժնի մինչև 60% ավելացում, առօրյա երթևեկության մեջ մասնավոր տրանսպորտային միջոցների բաժնեմասը նվազեցումը մինչև 80%-ի մակարդակը: ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում, որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում;
A_TR_04	Նոր հեծանվային ուղիների և հեծանվային կայանատեղի ենթակառուցվածք	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3 , CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ավելացնել 2%-ով, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում

Գործողութ-յան նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
			Որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում;
A_TR_05	Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանց	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3 , CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ավելացնել 2%-ով, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում, որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում:
A_TR_06	Քայլելուն և հեծանվավազքին նվիրված գովազդային արշավներ	SO_AQGHG	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ավելացնել 2%-ով:
A_TR_09	Կայուն քաղաքային շարժունակության ծրագիր (ԿՔՇԾ) Գյումրու համար	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, Առօրյա երթևեկության մեջ մասնավոր տրանսպորտային միջոցների բաժնեմասը նվազեցումը մինչև 80%-ի մակարդակը , էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժնի մինչև 60% ավելացում, ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ավելացնել 2%-ով, էլեկտրականությամբ աշխատող քաղաքային տրանսպորտային միջոցների մասնաբաժինն ավելացնել 20%-ով, տվյալների տարեկան հավաքագրման ենթակա տրանսպորտային միջոցներն ավելացնել մինչև 100%, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում,

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
			որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում: ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորման ավելացում՝ ԱՌՆ-ի տեղական պլանների իրականացման համար բավարար մակարդակով:
A_TR_12	Տվյալների հավաքագրման համաքաղաքային ծրագիր և տրանսպորտային մոդել	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան նվազեցնել մինչև 0.15 մգ/մ^{3}, նվազեցնել CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումները 20%-ով՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, տվյալների տարեկան հավաքագրման ենթակա տրանսպորտային միջոցներն ավելացնել մինչև 100% :
A_TR_14	Հանրային ավտոբուսների հանրակազմի արդիականացում՝ արտանետումների նվազեցված մակարդակով տրանսպորտային միջոցների համալրմամբ	SO_AQGHG	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան նվազեցնել մինչև 0.15 մգ/մ^{3}, նվազեցնել CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումները 20%-ով՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, Առօրյա երթևեկության մեջ մասնավոր տրանսպորտային միջոցների բաժնեմասը նվազեցումը մինչև 80%-ի մակարդակը, էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժնի մինչև 60% ավելացում:
Լրացուցիչ գործողություններ			
A_TR_03	Հանրային տրանսպորտի նոր հանգույցներ	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^{3} , CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, առօրյա երթևեկության մեջ մասնավոր տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածության մինչև 80% նվազեցում, էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժնի մինչև 60% ավելացում, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում,

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
			որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում:
A_TR_07	Քաղաքի կենտրոնական փողոցներում արգելել ավտոմեքենաների շարժը	SO_AQGHG: SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, ընդհանուր ուղևորությունների մեջ անշարժիչ տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ավելացնել 2%-ով, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում, որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում:
A_TR_08	Նվազեցված արտանետումների գոտի (ՆԱԳ) Գյումրու կենտրոնի համար	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժնի մինչև 60% ավելացում, Առօրյա երթևեկության մեջ մասնավոր տրանսպորտային միջոցների բաժնեմասը նվազեցումը մինչև 80%-ի մակարդակը, Ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ավելացնել 3%-ով:
A_TR_10	Մեքենաների ռոպեավճարով վարձույթի (քարշեյրինգ) համաքաղաքային սխեմա	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի նվազեցում մինչև 0.15 մգ/մ^3, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, տվյալների տարեկան հավաքագրման ենթակա տրանսպորտային միջոցներն ավելացնել մինչև 100%:
A_TR_11	Համաքաղաքային տրանսպորտային շարժունակության կիրառում	SO_AQGHG	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան նվազեցնել մինչև 0.15 մգ/մ^3, նվազեցնել CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումները 20%-ով՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, Առօրյա երթևեկության մեջ մասնավոր տրանսպորտային միջոցների բաժնեմասը նվազեցումը մինչև 80%-ի մակարդակը

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
			ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ավելացնել 2%-ով:
A_TR_13	Քաղաքապետարանի տրանսպորտային միջոցների հավաքակազմի մասնակի էլեկտրաֆիկացում	SO_AQGHG SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան նվազեցնել մինչև 0.15 մգ/մ^3: Նվազեցնել CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումները 20%-ով՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/ մեկ շնչի հաշվով, Էլեկտրականությամբ աշխատող քաղաքային տրանսպորտային միջոցների մասնաբաժին:



Գծապատկեր 5.1. Տրանսպորտային ոլորտի գործողությունների ծրագիրը

Նույնականացման համար A TR 01	
Անվանում՝ Նոր հանրային տրանսպորտի ցանցի օպերատորի մոդել և միասնական սակագնային ու տոմսային համակարգ	
Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	
Նկարագրություն **Ավտոբուսային օպերատորի նոր մոդել** Գյումրու ավտոբուսային ծառայությունն աչքի է ընկնում իր ոչ արդյունավետությամբ և վատ որակով, այդ թվում՝ փոխադրամիջոցներով ու ուղեվարձի ոչ արդյունավետ կառուցվածքով: Պահանջվում է ավտոբուսի նոր օպերատորի մոդել՝ ավտոբուսային պայմանագրի՝ համախառն կամ զուտ վարձատրություն ներառող տեսակների տարբերակներով: Համախառն վարձատրությամբ պայմանագրերի դեպքում մրցույթի (տենդերի) կազմակերպիչը վճարում է օպերատորին ծառայությունների մատուցման համար՝ իրեն պահելով ուղևորափոխադրումներից ստացված եկամուտը և հաճախ նշելով երթուղիները և փոխադրամիջոցների տեսակները: Զուտ վարձատրությամբ պայմանագրերի դեպքում օպերատորն իր վրա է վերցնում ինչպես եկամտի, այնպես էլ վարձատրության ռիսկը, սակայն իրեն է պահում ուղևորափոխադրումներից ստացված ողջ եկամուտը: Քաղաքի ավտոբուսային օպերատորի մոդելի արդիականացման գործողությունը կներառի. • նոր առևտրային և պայմանագրային պայմանավորվածություններ, • հստակ և չափելի գործող կատարողականի հիմնական ցուցանիշների (ԿՀՑ) և ծառայության մակարդակի պայմանագրերի (ԾՄՊ) հաստատում, • ավտոբուսային երթուղիների կատարելագործում և ռացիոնալացում, • արդիականացված, տարածության վրա հիմնված ուղեվարձի կառուցվածքի մշակում, • տրանսպորտային միջոցների որակին առնչվող գնման չափանիշների իրականացում, • տրանսպորտային միջոցների արտանետումներին առնչվող գնման չափանիշների իրականացում: **Միասնական սակագնային ու տոմսային համակարգ** Միասնական սակագնային ու տոմսային համակարգն ուղևորին թույլ է տալիս օգտվել ծառայություն մատուցող տարբեր կազմակերպությունների կողմից գործարկվող տրանսպորտային միջոցներից կամ ավտոբուսներից մեկ տոմսով, որը վավեր է ողջ ուղևորության ընթացքում: Սա նպաստում է օգտվողների սահուն երթևեկությանը և կարող է ավելացնել հանրային տրանսպորտի գրավչությունը՝ հեշտացնելով տրանսպորտային միջոցներ փոփոխելը և բարելավելով ծառայությունների արդյունավետությունը: Միասնական տոմսային համակարգի ներդրումը կարող է լինել շատ արդյունավետ էլեկտրոնային տոմսերի այնպիսի տեխնոլոգիաների հասանելիության շնորհիվ, ինչպիսիք են «խելացի» կամ մագնիսական քարտերը: Միասնական էլեկտրոնային տոմսը լայնորեն կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում: Նման համակարգի գործարկումը պետք է հիմնված լինի լավ հաղորդակցման վրա: Բացի այդ, գործարքը պետք է համապատասխանի Հայաստանի՝ «Էլեկտրոնային փողի» մասով ազգային կանոնակարգին: Գյումրիում միասնական տոմսային համակարգը հիմնականում կներառի ավտոբուսային ծառայությունները, սակայն այն պետք է մշակվի՝ նաև հաշվի առնելով այլ տրանսպորտային միջոցներ, այդ թվում՝ երկաթուղին:	
Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտները**

<table>
<tr><td colspan="2">SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)՞</td><td rowspan="2">• Սոցիալական՝ բարելավված հասանելիություն ծառայություններին, ուժեղացված սոցիալական ներառում, ինչպես նաև «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն:
• Տնտեսական՝ տնտեսական ներառում, ներդրողի տնտեսական եկամուտներ:
• Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ:</td></tr>
<tr><td colspan="2">SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետներին:</td></tr>
<tr><td>Կապիտալ ծախսեր (եվրո)
2,500,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
1,325,000,000</td><td>Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)
220,000
Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)
116,600,000</td><td>Ֆինանսավորման տարբերակներ
• ՀՀ կառավարություն
• ՄՖՀ-ներ և նվիրատուներ
• Մասնավոր հատված</td></tr>
<tr><td colspan="3">Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024 թթ.</td></tr>
<tr><td>Գործողության պատասխանատու՝
Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին</td><td>Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝ հանրային տրանսպորտի օպերատորներ</td><td>Հիմնական շահագրգիռ կողմեր՝ Շիրակի մարզային վարչակազմ, կառավարություն</td></tr>
</table>

Նույնականացման համար
A_TR_02

Անվանում՝ Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում, այդ թվում՝ իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության (ԻԺՈՒՏ) (RTPI) համակարգի ներդրմամբ

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում

Նկարագրություն

Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում

Ավտոբուսային ցանցը և դրա հիմքում ընկած ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքը էականորեն ազդում է քաղաքի հանրային տրանսպորտի ընդհանուր ենթակառուցվածքի որակի վրա, և դրա բարելավումը կարող է նպաստել հանրային տրանսպորտից օգտվող ուղևորների թվի աճին և քաղաքի կարևորագույն ենթակառուցվածքային օբյեկտներին առավել լավ ընդհանուր հասանելիությանը: Լավ պլանավորած, նախագծված և պահպանվող ավտոբուսային կանգառները նպաստում են ներառական ավտոբուսային ծառայություններին և այդպիսով նվազեցնում են սոցիալական մեկուսացումը՝ ավելացնելով այն քաղաքացիների թիվը, որոնք կարող են օգտվել այդ ծառայություններից:

Ցանկացած նոր ավտոբուսային կանգառի ենթակառուցվածք պետք է պլանավորված և նախագծված լինի միջազգային լավագույն փորձի համաձայն: Ավտոբուսային կանգառների պլանավորումն ու նախագծումը պետք է հիմնված լինեն փողոցների (ճանապարհների) տեսակների շրջանակի վրա՝ հաշվի առնելով, որ ավտոբուսային կանգառների տարբեր նախագծեր կառուցվում են ըստ ճանապարհի դասակարգման: Մասնավորապես Գյումրու համատեքստում ավտոբուսային կանգառի առկա ենթակառուցվածքը պետք է արդիականացվի: Այս գործողության շրջանակներում արդիականացման ենթակա կանգառները տեղակայված կլինեն ամենազբաղված և ամենապահանջված երթուղիների վրա: Առաջարկվում է Գյումրիում արդիականացնել 500 ավտոբուսային կանգառ:

Իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության ապահովում

Իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվությունը ավտոմատ համակարգ է, որը հանրային տրանսպորտից օգտվող անձանց տրամադրում է տեղեկատվություն հանրային տրանսպորտի ծառայության բնույթի և վիճակի մասին՝ օգտագործելով իրական ժամանակում տրանսպորտային միջոցների տեղայնացման ավտոմատ համակարգերից ստացվող տեղեկատվություն, որը շարունակաբար փոխվում է իրադարձությունների պատճառով և սովորաբար օգտագործվում ուղևորության ընթացքում: Մասնավորապես Գյումրու համատեքստում առաջարկվում է ԻԺՈՒՏ համակարգերն աստիճանաբար ներդնել նախ ավտոբուսների հիմնական կայարաններում և այնուհետև ամենածանրաբեռնված երթուղիների վրա: Համակարգը պետք է ներդրվի ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի ընդհանուր վերակառուցմանն ու արդիականացմանը զուգահեռ:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)		**Հիմնական օգուտները**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)		• Սոցիալական՝ բարելավված հասանելիություն ծառայություններին, ուժեղացված սոցիալական ներառում, ինչպես նաև «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն, • տնտեսական՝ տնտեսական ներառում, • բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ:
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ		
Կապիտալ ծախսեր (եվրո) 4,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 2,120,000,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 200,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 106,000,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և նվիրատուներ • Մասնավոր հատված

Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.

Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** հանրային տրանսպորտի օպերատորներ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, ՄՖՀ-ներ, կառավարություն

Նույնականացման համար
A_TR_04

Անվանում՝ Նոր հեծանվային արահետներ և հեծանվային կայանատեղի ենթակառուցվածք

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն

Հեծանվային արահետների կառուցում

Գյումրիում հեծանիվների օգտագործման տարածվածությունն ավելացնելու համար անհրաժեշտ է բանուկ փողոցներում կառուցել հեծանվային արահետներ: Դրանք նախագծելիս հարկավոր է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են օգտագործողի փորձը, երթևեկության առկա տեսակները, անվտանգությունը, տեսանելիությունը և հողօգտագործման հիմնական տեսակների հետ ինտեգրումը: Ներկայումս Գյումրիում չկան հեծանվային արահետներ, և այժմ առաջարկվում է ներդնել մոտ 60կմ հեծանվային արահետներ՝ քաղաքում հեծանվի օգտագործումը խրախուսելու համար: Երթուղիները պետք է փոխկապակցվեն այնպիսի կարևոր տեղանքների հետ, ինչպիսիք են քաղաքի կենտրոնի ավտոբուսային, երկաթուղային կայարանները, քաղաքի կենտրոնի տեսարժան վայրերը և աշխատավայրերի տեղանքները:

Հեծանվային կայանատեղերի համաքաղաքային ցանց

Լավագույն միջազգային փորձի համաձայն՝ Գյումրիում հեծանվային կայանատեղերը պետք է պլանավորվեն, նախագծվեն և տեղադրվեն՝ հաշվի առնելով հետևյալ հիմնական սկզբունքները.

- տեսանելի և հասանելի՝ հեշտ գտնվող, նշաններով պատշաճ առանձնացված և նպատակակետից 20-30մ-ի վրա գտնվող,
- անվտանգ և ապահով՝ անվտանգ հիմնակմախք և տեսահսկողության ներդրված համակարգ,
- կառավարման, պահպանման և մշտադիտարկման առումով դյուրին՝ կարող է օգտագործվել հեծանիվների տարբեր տեսակների համար և ունի դիմացկուն ու ամուր մակերես,
- մշտապես հասանելի՝ թվերի ստույգ պլանավորում՝ ապահովելու համար պատշաճ հասանելիությունը,
- կապակցված՝ միացված է երթուղիների ռազմավարական ցանցին և այլ ծառայությունների (ռեժիմների), (օրինակ՝ գտնվում է երկաթուղային կամ ավտոբուսային կայանատեղերում),
- ծածկապատ՝ հատկապես կարևոր է հեծանիվը երկարատև կայանելու դեպքում,
- գրավիչ՝ բարձրորակ և շրջակա միջավայրին հարմարեցված սարքավորումներ:

Հեծանվային կայանատեղերը պետք է տեղակայվեն հեծանվային երթուղու հիմնական ցանցի հարևանությամբ և ամբողջ քաղաքում տարածված ռազմավարական նշանակության կետերում՝ նախընտրելի է այն տարածքներում, որտեղ կենտրոնացած են մեծաքանակ զբոսաշրջիկներ, մշտական ուղևորներ և կամ ուսանողներ: Առաջարկվում է ապահովել հեծանվային կայանատեղերի համար նախատեսված թվով 40 տարածք՝ յուրաքանչյուր հեծանվային երթուղու 1 կմ-ի համար, ինչը մոտավորապես հավասար է 2400 հեծանվային տարածքի:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	Հիմնական օգուտներ

<table>
<tr><td colspan="3">Նույնականացման համար
A_TR_04</td></tr>
<tr><td colspan="3">Անվանում՝ Նոր հեծանվային արահետներ և հեծանվային կայանատեղի ենթակառուցվածք</td></tr>
<tr><td colspan="3">Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում</td></tr>
<tr><td colspan="2">SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ</td><td>• Սոցիալական՝ ուժեղացված սոցիալական ներառում, ինչպես նաև «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն
• Տնտեսական՝ տնտեսական ներառում
• Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ</td></tr>
<tr><td>Կապիտալ ծախսեր (եվրո)
Հեծանվային արահետներ՝ 3,000,000
Հեծանվային կայանատեղի՝ 240,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
Հեծանվային արահետներ՝ 1,590,000,000
Հեծանվային կայանատեղի՝ 127,200,000
:</td><td>Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)
Հեծանվային արահետներ՝ 148,000
Հեծանվային կայանատեղի՝ 12,000
Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)
Հեծանվային արահետներ՝ 78,520,000
Հեծանվային կայանատեղի՝ 6,280,000</td><td>Ֆինանսավորման տարբերակներ
• ՀՀ կառավարություն
• ՄՖՀ-ներ և նվիրատուներ
• Մասնավոր հատված</td></tr>
<tr><td colspan="3">Իրականացման մեկնարկի և ավարտի ամսաթիվ՝ 2020 – 2024թթ.</td></tr>
<tr><td>Գործողության պատասխանատու՝
Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին</td><td>Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝ մասնավոր հատված</td><td>Հիմնական շահագրգիռ կողմեր՝ Շիրակի մարզային վարչակազմ, ՀԿ-ներ, ՄՖՀ-ներ</td></tr>
</table>

Նույնականացման համար
A_TR_05

Անվանում՝ Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանց

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն

Գյումրին հարթավայրային քաղաք է, ինչի շնորհիվ այն հարմար է զբոսանքի համար: Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանցի ներդրումը կօգնի խրախուսել և խթանել զբոսանքը, ապահովել ուժեղացված կապ քաղաքի տարբեր մասերի միջև՝ հասանելիության և տեսանելիության մասով, և կապահովի հետևողական մոտեցում զբոսանքին ու ճանապարհային կողմնորոշիչ նշաններին առնչվող տեղեկատվությանը: Ճանապարհային կողմնորոշիչ նշանների ցանցը կարող է նաև ինտեգրվել հետիոտնի վրա կենտրոնացած այլ ենթակառուցվածքային բարեփոխումներին, ինչպիսիք են բարելավված հետիոտնային անցումները՝ սահմանափակ շարժունակությամբ անձանց համար ավելի ցածր մայթեզրով, առավել լայն շավիղները և բոլոր եղանակներին հետիոտնի համար հասանելիության (մակերեսի) բարելավումների ապահովումը: Ճանապարհային կողմնորոշիչ նշանների ցանցը կազմված կլինի հստակ և հետևողական նշաններից, ինչպես նաև համապատասխան գետնանշումներից, այդ թվում՝ փողոցում տեղադրվող և տեղեկատվության տարբեր մակարդակներ ներառող կողմնորոշիչ ցուցանակներից: Նշանները կներառեն այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են «բռնած ուղղությանը համապատասխանող քարտեզագրումը» (որի դեպքում նշանների ուղղվածությունը համապատասխանում է այն ուղղությանը, դեպի որը կանգնած է օգտագործողը՝ ի հակադրություն իրական հյուսիսի ընդունված ուղղվածության), քայլելու ժամանակը, քայլելու ուղղությունները, շենքերի տեղանքները, որոշակի օբյեկտների տեղանքը նշող քարտեզագրումը, ինտեգրված տրանսպորտային հանգույցները և փողոցի անունները: Համոզվելու համար, որ ցանկացած հնարավոր ճանապարհային կողմնորոշիչ նշան պատշաճ է և օգտագործման տեսանկյունից դյուրին՝ մասնավորապես Գյումրու դեպքում առաջարկվում է պիլոտային ծրագրի համար նախնառաջ առանձնացնել քաղաքի փոքր տարածք, որտեղ հնարավոր կլինի փորձարկել ցանցի նշանները և հավաքել օգտագործողների կարծիքները՝ ապրանքը բարելավելու համար: Այս պիլոտային ծրագիրը կիրականացվի քաղաքի կենտրոնի համապատասխան վայրում, որը պետք է ունենա հետիոտնի կողմից հաճախելիության բարձր մակարդակ և որոշակի հետաքրքրություն ներկայացնի: Պիլոտային ծրագրի իրականացումից հետո ցանցային նշումները և նշաններն ավելի լայնորեն կներդրվեն, ինչը ցանկալի է, որ բխի հետիոտնային և ճանապարհային կողմնորոշիչ համակարգի առավել լայն համաքաղաքային ռազմավարությունից: Նախատեսվում է, որ նշանների ցանցը կկարողանա գործարկել մինչև 50 քարտեզ և նշան:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ ուժեղացված սոցիալական ներառում, ինչպես նաև «կանաչ» վարքագիծ, իրազեկվածություն և նվազեցված առողջական ռիսկեր • Տնտեսական՝ տնտեսական աճ • Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
250,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 132,500,000	15,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 7,950,000	• ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և նվիրատուներ • Մասնավոր հատված

Իրականացման մեկնարկի և ավարտի ամսաթիվ՝ 2021 – 2023թթ.

Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, տեղական բիզնես, ՀԿ-ներ, ՄՖՀ-ներ, ՀՀ կառավարություն

Նույնականացման համար՝ A_TR_06
Անվանում՝ Քայլելուն և հեծանվավազքին նվիրված գովազդային արշավներ
Դասակարգում՝ Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում
Նկարագրություն **Հեծանիվների օգտագործման՝ քաղաքային մակարդակով գովազդային արշավ** Այս գործողության շրջանակներում կորոշվեն, կնախագծվեն և կապահովվեն Գյումրու համար գովազդային արշավների ամենապատշաճ ձևերը, որոնք նպատակ ունեն ավելացնել հեծանիվների օգտագործումը ողջ քաղաքում: Քաղաքում հեծանիվների առավել լայն օգտագործումը խրախուսող գործողությունները, որոնք կարող են ձեռնարկվել, ներառում են. • քաղաքի/կառավարության/աշխատավայրի՝ հեծանիվներ գնելու խրախուսման համակարգը, • հեծանիվների օգտագործման խրախուսում տարբեր ԶԼՄ-ներով, այդ թվում՝ բաժանվող թռուցիկներով, հեռուստացուցային և ռադիո գովազդով և փողոցում տեղադրվող գովազդային պաստառներով, • գովազդային արշավների անցկացում աշխատավայրերում՝ հեծանվով աշխատանքի հասնելու տարբերակը խրախուսելու համար, • հեծանիվ վարելու համաքաղաքային ամիս, • իրազեկող խորհրդատվության տրամադրում հեծանվորդներին ճանապարհային անվտանգության վերաբերյալ, • հեծանիվ վարելուն նվիրված գրպանի ուղեցույցներ, • հեծանվորդների խմբերի ստեղծում: Գովազդային արշավը պետք է համապատասխանեցվի պահանջարկի կարգավորման այլ նախաձեռնություններին և աստիճանաբար իրականացվի՝ համապատասխանելու համար Գյումրու հեծանվային ենթակառուցվածքի մասով առաջարկվող առավել լայն և ընդհանուր բարելավումներին (ինչպես A TR 04-ը): **Քաղաքային մակարդակով անցկացվող և քայլելուն նվիրված գովազդային արշավ** Գյումրիում քայլելու մակարդակը համեմատաբար բարձր է, ինչը Գյումրու համեմատաբար հարթ տեղագրության և ընդհանուր անցանելիության արդյունք է: Այլ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործումն ավելացնող նախաձեռնությունների հետ մեկտեղ նպատակ ունի խրախուսել Գյումրիում քայլելու կենսակերպն ակտիվ խթանող նախաձեռնությունները: Արշավը կարող է ներառել. • քայլելու համաքաղաքային ամիս, • դեպի դպրոց քայլելու օրեր (շաբաթներ), • որոշ փողոցներում առանց ավտոմեքենայի օրեր, • ավտոմեքենաների սահմանափակ մուտք (երթուղիներ/փողոցներ/գոտիներ/համաժամանակյա), • իրազեկող խորհրդատվություն հետիոտնի անվտանգության վերաբերյալ,

Նույնականացման համար՝ A_TR_06		
Անվանում՝ Քայլելուն և հեծանվավազքին նվիրված գովազդային արշավներ		
Դասակարգում՝ Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում		
• քայլելուն նվիրված գրպանի ուղեցույց:		
Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին) SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)		**Հիմնական օգուտներ** • Սոցիալական՝ ուժեղացված սոցիալական ներառում, ինչպես նաև «կանաչ» վարքագիծ, իրազեկվածություն և նվազեցված առողջական ռիսկեր • Տնտեսական՝ տնտեսական ներառում • Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
Կապիտալ ծախսեր (եվրո) 300,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 159,000,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 10,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 5,300,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և նվիրատուներ
Իրականացման մեկնարկի և ավարտի ամսաթիվ՝ 2020 – 2021թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, տեղական բիզնես, համալսարաններ, ՀԿ-ներ, տրանսպորտի պետական և մասնավոր հատվածի օպերատորներ, ՄՖՀ-ներ

Նույնականացման համար
A_TR_09

Անվանում՝ Կայուն քաղաքային շարժունակության ծրագիր (ԿՔՇԾ) Գյումրու համար

Դասակարգում՝ Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր

Նկարագրություն

ԿՔՇԾ-ն տրանսպորտին նվիրված պլան է, որը պարունակում է ինտեգրված, կայուն տրանսպորտային լուծումներ որոշակի գործառնական քաղաքային տարածքին, այս դեպքում՝ Գյումրուն և նրա շրջաններին հատուկ բոլոր տրանսպորտային միջոցների համար: ԿՔՇԾ-ները մշակվում են մասնակցային գործընթացի միջոցով և կառավարության ու համապատասխան մարմինների, տրանսպորտային բոլոր միջոցների ներկայացուցիչների, քաղաքացիների և քաղաքի այլ շահագրգիռ կողմերի բոլոր մակարդակների հետ համագործակցությամբ: Այս ԿՔՇԾ-ն կկապակցվի այս ԿՔԳԾ-ին, ինչպես նաև քաղաքի առավել լայն գլխավոր հատակագծի նոր տարբերակին (A LU 01), Գյումրիում նախատեսվող լոգիստիկ կենտրոն(ներ)ի և Հյուսիսային Մաքսակետի հետ կապված տրանսպորտային նոր հոսքերի ենթատեքստում, և քաղաքի ածխածնային ոտնահետքի նվազեցումը խթանող այլ պլանների ու ռազմավարությունների: ԿՔՇԾ-ի հիմնական նպատակն է բարելավել քաղաքային տարածքների մատչելիությունը և ապահովել բարձրորակ ու կայուն շարժունակություն և տրանսպորտ դեպի քաղաքային տարածք, դրա միջով և ներսում: Այն ներառում է երկարաժամկետ տեսլական և իրականացման հստակ ծրագիր, քաղաքային տրանսպորտի համակարգի ներկայիս և հետագա կատարողականի գնահատում, տեխնիկական, բնապահպանական, ենթակառուցվածքային՝ քաղաքականության վրա հիմնված և փափուկ միջոցառումների ինտեգրված հավաքակազմ՝ ուղղված կատարողականի ու ծախսարդյունավետության բարելավմանը, և մշտադիտարկման գործընթաց, որը կարող է որպես հիմք ծառայել իրականացման վերանայման համար:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ բարելավված հասանելիություն ծառայություններին, ապահովություն և սոցիալական դիմակայունություն • Տնտեսական՝ տնտեսական աճ և ներառում • Բնապահպանական՝ բարելավված օդի որակ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ և ուժեղացված դիմակայունություն կլիմայի փոփոխություններին
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետներին	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
1,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 530,000,000	0 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 0	• Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և նվիրատուներ

Իրականացման մեկնարկի և ավարտի ամսաթիվ՝ 2020 – 2021թթ.

Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** ՄՖՀ-ներ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, տեղական բիզնես, ՀԿ-ներ, տրանսպորտի պետական և մասնավոր հատվածի օպերատորներ, ընդհանուր հանրություն

Նույնականացման համար՝ A_TR_12
Անվանում՝ Տվյալների հավաքագրման համաքաղաքային ծրագիր և տրանսպորտային մոդել
Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ
Նկարագրություն **Երթևեկությանն առնչվող տվյալների մշտական հավաքագրման համաքաղաքային համակարգ** Գործողության ընթացքում պետք է գործարկվի տվյալների հավաքագրման մշտական համակարգ, որը միացված կլինի տվյալների կենտրոնական շտեմարանին, որը տվյալներ է հավաքագրում սարքավորումներից՝ օգտագործելով հետևյալ մեթոդները. • ճանապարհի տակ թաղված ինդուկտիվ հանգուցային տվիչներ՝ երթևեկության հոսքերն արձանագրելու համար (50 խաչմերուկ/հանգույց), համարանիշների ավտոմատ ճանաչման (ՀԱՃ) տեսախցիկներ՝ տրանսպորտային միջոցների շարժը վերահսկելու համար (50 տեսախցիկ), • ճանապարհի որոշակի հատվածի վրա տեղադրված տեսահսկման տեսախցիկ՝ վարքագծի վերահսկման համար (50 տեսախցիկ) , • հանրային տրանսպորտի և տաքսու ուղևորաքանակին առնչվող տվյալների տարեկան հավաքագրում և ուսումնասիրություն (ամեն տարի), • ծագմանն ու նպատակակետերին առնչվող ուսումնասիրություններ (ամեն տարի), • ուսումնասիրություններ աշխատանքի ուղևորվելու վերաբերյալ (ամեն տարի), • բջջային հեռախոսների տեղորոշման համընդհանուր համակարգի (GPS) (ՏՀՀ) տվյալների օգտագործում: Տվյալների հավաքագրման վերոնշյալ սարքավորումների՝ մասնավորապես ինդուկտիվ հանգուցային տվիչների և Ավտոմատ կերպով պետհամարանիշը ճանաչող տեսախցիկների /ANPR/ տեղադրման համար պահանջվում են շինարարական աշխատանքներ: Սարքավորումները պետք է տեղադրվեն երթևեկության ոչ միայն ներքաղաքային շարժը, այլ նաև միջքաղաքային և քաղաքի միջով անցնող շարժը սպասարկող հիմնական միջանցքներում: **Տրանսպորտի և երթևեկության քաղաքային մոդել** Տրանսպորտի հզոր համաքաղաքային մոդելը կօգնի քաղաքապետարանին կանխատեսել, մոդելավորել և գնահատել տրանսպորտային այն առաջարկությունները, որոնք կունենան կիրառության լայն շրջանակ՝ առավել ընդհանուր քաղաքաշինությանն առնչվող և փաստերի վրա հիմնված որոշումների կայացման համար: Հասանելի են արդյունաբերության չափանիշների մոդելավորման մի շարք հարթակներ, որոնք կարող են օգտագործվել որպես բազմամոդալ մոդելի մշակման հիմք: Երթևեկությանն առնչվող տվյալների հասանելիությունը կարևոր պայման է այս մոդելների տեսակների հաջող մշակման համար: Ուստի մոդելի մշակման և սպասարկման համար պահանջվող տեղեկատվության հասանելիությունն ապահովելու համար կպահանջվի այս գործողության առաջին բաղադրիչը՝ երթևեկությանն առնչվող տվյալների մշտական հավաքագրման համաքաղաքային համակարգի ստեղծումը: Քաղաքի սահմանը պետք է լինի մոդելի հիմնական տարածքը, իսկ քաղաքի մնացած մասը պետք է բաժանվի մի քանի ներքին գոտիների՝ հաշվի առնելով երթուղիների կազմակերպման այնպիսի վայրեր, ինչպիսիք են բնակելի, առևտրային և արդյունաբերական տարածքները: Դրսից եկող և տարանցիկ երթևեկությունը, որն անցնում է քաղաքի միջով, պետք է արձանագրվի՝ ներառելով քաղաքի առավել լայն արտաքին գոտիները:

<table>
<tr><td colspan="3">Նույնականացման համար՝ A_TR_12</td></tr>
<tr><td colspan="3">Անվանում՝ Տվյալների հավաքագրման համաքաղաքային ծրագիր և տրանսպորտային մոդել</td></tr>
<tr><td colspan="3">Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում, ուսումնասիրություններ</td></tr>
<tr><td colspan="2">Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ</td><td>Հիմնական օգուտներ
• Սոցիալական՝ բարելավված հասանելիություն ծառայություններին, ապահովություն և սոցիալական դիմակայունություն
• Տնտեսական՝ տնտեսական աճ և ներառում
• Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ</td></tr>
<tr><td>Կապիտալ ծախսեր (եվրո)
2,150,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
1,139,500,000</td><td>Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)
322,500
Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)
170,925,000</td><td>Ֆինանսավորման տարբերակներ
• Քաղաքապետարանի բյուջե
• ՄՖՀ-ներ և նվիրատուներ
• Մասնավոր հատված</td></tr>
<tr><td colspan="3">Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.</td></tr>
<tr><td>Գործողության պատասխանատու՝
Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին</td><td>Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝ ՄՖՀ-ներ</td><td>Հիմնական շահագրգիռ կողմեր՝ Շիրակի մարզային վարչակազմ, մասնավոր հատված, համալսարաններ, ՀԿ-ներ, տրանսպորտի պետական և մասնավոր հատվածի օպերատորներ</td></tr>
</table>

Նույնականացման համար՝
A_TR_14

Անվանում՝ Հանրային ավտոբուսների հանրակազմի արդիականացում՝ նվազեցված արտանետումներով տրանսպորտային միջոցների համալրմամբ

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն

Գործողության շրջանակներում պլանավորվում է տրամադրել էլեկտրական ավտոբուսներ՝ որպես ավտոբուսների առկա հանրակազմի համալրման կամ արդիականացման մաս: Սա կլինի պայմանագրային պահանջ քաղաքի ցանկացած նոր ավտոբուսային օպերատորի մոդելի համար: Օպերատորներին կխնդրեն ավտոբուսների իրենց առկա հավաքակազմը փոխարինել էլեկտրական տրանսպորտային միջոցներով: Հիմնվելով երթուղու պահանջարկի բարձր մակարդակի գնահատման վրա՝ մենք հաշվարկեցինք, որ ընթացիկ գործառնությունները սպասարկելու համար պահանջվում է 20 հատ 12 մ ավտոբուսների և 50 հատ 15-20 տեղանոց միկրոավտոբուսների խառնուրդ:

Դեպի էլեկտրական տրանսպորտային միջոցներ այս փոփոխությանն աջակցելու համար կարող է պահանջվել նոր մեքենաների գնման ծախսի զգալի տարրերի պետական սուբսիդավորում:

Նախքան գործողության ընդունումը քաղաքապետարանին անհրաժեշտ կլինի ձեռնարկել որոշակի նախնական քայլեր: Այն պետք է

- անցկացնի արշավ՝ հանրությանը տեղեկացնելու այն օգուտների մասին, որ օպերատորները կստանան այս քաղաքականությունից,
- ապահովի շահագրգիռ կողմերի հավանությունը,
- անցկացնի ուսումնասիրություն՝ մշակելու համար տեխնոլոգիայի համապատասխան չափանիշ և իրականացման, մշտադիտարկման ու գնահատման ծրագիր:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)		**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)		• Սոցիալական՝ ուժեղացված սոցիալական ներառում, «կանաչ» վարքագիծ, ինչպես նաև իրազեկվածություն և նվազեցված առողջապահական ռիսկեր • Տնտեսական՝ տնտեսական ներառում • Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետներին		
Կապիտալ ծախսեր (եվրո) 14,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 7,420,000,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 1,400,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 742,000,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և նվիրատուներ • Մասնավոր հատված
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2021 – 2024թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** ՄՖՀ-ներ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** հանրային տրանսպորտի օպերատորներ, մասնավոր հատված

“Գյումրին կնվազեցնի քաղաքի էներգետիկ և ածխածնային ոտնահետքը, կկառավարի իր էներգետիկ պահանջարկը և կնվազեցնի էներգիայի ծախսերը հանրային և մասնավոր շենքերում, արտաքին լուսավորության ենթակառուցվածքներում՝ խրախուսելով էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և վերականգնվող էներգիայի կիրառությունը, պլանավորելով և կառավարելով համայնքային էներգասպառումը, խթանելով ցածր ածխածնատարությամբ հանրային գնումները, իրազեկելով և ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին մաքուր, խոլացի և նորարարական էներգետիկ լուծումներում”

5.2.2. Շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն

Գյումրու՝ շենքերի, էներգամատակարարման և լուսավորության ոլորտի համար ԿՔԳԾ-ի գործընթացի միջոցով մշակվել են տասը գործողություն՝ քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի հետ համատեղ: Բոլոր 10 գործողությունները ներառված են առաջնահերթ գործողությունների ցանկում:

Ներկայումս Գյումրին ներառված է էներգամատակարարման ազգային միասնական համակարգում, և որպես այդպիսին քաղաքապետարանի կողմից քաղաքային մասշտաբով հնարավոր միջամտությունները սահմանափակ են: Ուստի ուղղվածության երկարաժամկետ փոփոխությունը դեպի ավելի «կանաչ» էներգետիկ ոլորտ պետք է ուղղահայաց ընդգրկվի կառավարման ազգային և տեղական մասշտաբների բոլոր մակարդակներում՝ մասնավոր և պետական հատվածների հետ համագործակցությամբ: ԿՔԳԾ-ն ուստի կենտրոնանում է մի շարք գործողությունների վրա, որոնք տեղական մակարդակով կխթանեն ավելի «կանաչ» գործելակերպ էներգետիկայի ոլորտում: ԿՔԳԾ-ում ներառված մի շարք գործողություններ համապատասխանեցված են Գյումրու՝ 2017թ. ԿՋԳԾ-ին, սակայն ԿՔԳԾ-ն ընդլայնում է դրանց շրջանակը և երկարացնում ժամկետները:

Ծրագիրը հիմնականում կենտրոնանում է **բնակելի շենքերում էներգաարդյունավետությունը բարելավելու վրա:** Սա հնարավոր է ապահովել ընտրված միջոցառումների, այդ թվում՝ էներգիայի վերաբերյալ բարելավված իրազեկվածություն ապահովող արշավների, ցածր էներգասպառման ԼԵԴ լուսավորության և քաղաքի ընտրված բնակելի շենքերի ու բնակարանների ջերմային արդյունավետության բարելավմանն ուղղված ծրագրի միջոցով:

Էներգիայի բարելավված կառավարումը, էներգետիկ կատարողական պայմանագրերի կնքումը և հանրային (քաղաքային) շենքերի ենթակառուցվածքը նույնպես ուշադրության կենտրոնում են: Սա ներառում է քաղաքային էներգիայի մասով մշտադիտարկում, պլանավորում և կառավարում՝ ապահովելու համար որոշումների կայացման բարելավում՝ էներգաարդյունավետության նորարարական լուծումների կիրառման միջոցով: Քաղաքի գլխավոր ենթակառուցվածքները նույնպես ընտրվել են արդիականացման համար՝ հիմնականում կենտրոնանալով խոշոր հանրային շենքերի վրա: Բացի այդ, քաղաքի փողոցային լուսավորության մասով կիրականացվի արդիականացման շարունակական ծրագիր:

Նաև առկա է **էներգաարդյունավետությունն ապրանքների և ծառայությունների հանրային գնումների գործընթաց** ներդնելու անհրաժեշտություն: Այսպես՝ գործողություններից մեկով սահմանվում է հայեցակարգային շրջանակի մշակում՝ էներգախնայողության կատարողականի պայմանագրերը (ԷԿՊ) քաղաքային գնումների և ապրանքների ու ծառայությունների գնման գործընթացում կիրառելու նպատակով:

Աղյուսակ 5.4. Շինարարությանը, էներգամատակարարմանը և լուսավորությանն առնչվող գործողություններ

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
A_BEL_01	Էներգաարդյունավետության մասին իրազեկում և տեղեկատվության տարածում բնակելի հատվածում	SO_AQGHG SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեքի տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, արդյունաբերության ոլորտում էներգասպառման 5% նվազեցում ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի հաշվով՝ համեմատած 2015թ. մակարդակի հետ:
A_BEL_02	Ցածր եկամուտ ունեցող սպառողների լուսատուները ԼԵԴ լամպերով փոխարինելու արշավ	SO_AQGHG SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, Բնակելի շենքերում էներգասպառման՝ մինչև 23կՎտժ նվազեցում:
A_BEL_03	Բնակելի շենքերի ջերմային արդիականացման պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագիր	SO_AQGHG SO_GSBIO SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ջերմային էներգիայի սպառման մինչև 104կՎտժ/մ^2 նվազեցում բնակելի շենքերում, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների մինչև12% նվազեցում:
A_BEL_04	Համայնքային Էներգետիկ տեղեկատվական համակարգ և Էներգակառավարում	SO_AQGHG	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, օդի աղտոտման՝ հայտնաբերված և մշտադիտարկվող աղբյուրների բաժնեմասի մինչև 30% աճ, փողոցային լուսավորության համար սպառվող էներգիայի մինչև 25,000 կՎտժ/կմ կրճատում:
A_BEL_05		SO_AQGHG	

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
	Էներգախնայողության կատարողականի պայմանագրերի (ԷԿՊ) և էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների (ԷԾՄԸ) հետ պայմանագրերի կնքում	SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ջերմային էներգիայի սպառման մինչև 96կՎտժ/մ^2 նվազեցում բնակելի շենքերում, փողոցային լուսավորության համար սպառվող էներգիայի մինչև 25,000 կՎտժ/կմ կրճատում:
A_BEL_06	Հանրային շենքերի ջերմային արդիականացման ծրագիր	SO_AQGHG SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ջերմային էներգիայի սպառման մինչև 96կՎտժ/մ^2 նվազեցում բնակելի շենքերում, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում, որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում:
A_BEL_07	Հանրային գնումներում էներգաարդյունավետ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հայեցակարգային փաստաթղթի մշակում	SO_AQGHG SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, Ջերմային էներգիայի սպառման մինչև 96կՎտժ/մ^2 նվազեցում բնակելի շենքերում:

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
A_BEL_08	«Կանաչ» շենքերի խրախուսում	SO_AQGHG SO_SL SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ջերմային էներգիայի սպառման մինչև 104կՎտժ/մ^2 նվազեցում բնակելի շենքերում, որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում:
A_BEL_09	Քաղաքի փողոցային լուսավորության էներգաարդյունավետ արդիականացում	SO_AQGHG SO_SL SO_AR	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, փողոցային լուսավորության համար սպառվող էներգիայի մինչև 25,000 կՎտժ/կմ կրճատում, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, որպես ՀՆԱ-ի բաժնեմաս՝ բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի մինչև 1% նվազեցում:
A_BEL_10	Վերականգնվող էներգիայի միջին և խոշոր համակարգերի (ՎԷՀ) ներդրում	SO_AQGHG	CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20%-ով նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով:



Գծապատկեր 5.2. Շինարարության, էներգամատակարարման և լուսավորության ծրագիր

Նույնականացման համար
A_BEL_01

Անվանում՝ Էներգաարդյունավետության մասին իրազեկում և տեղեկատվության տարածում բնակելի հատվածում

Դասակարգում՝ Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում

Նկարագրություն

Գյումրի քաղաքը կմշակի ջերմային արդիականացման համապարփակ ծրագիր՝ բազմաբնակարան շենքերում բնակելի հատվածի էներգաարդյունավետության ծրագրերի համալիր ֆինանսավորման լուծումներով, որոնք կարող են ներառել վարկեր, դրամաշնորհներ և օժանդակություն բնակիչների կողմից: Ծրագիրը կներառի արժեթղթերի խրախուսում և փոխառություն՝ ֆինանսավորելու համար էներգաարդյունավետության ներդրումն առևտրային վարկերի մեխանիզմների միջոցով՝ բնակելի շենքերի էներգաարդյունավետությունն ավելացնելու համար: Ծրագրի շրջանակներում նաև գործընկերային հարաբերություններ կստեղծվեն համալսարանների և տեխնոլոգիաների զարգացման հիմնադրամների, բանկերի և ՄՖՀ-ների (Տեխնոլոգիական կենտրոն, Թումո, համալսարաններ) հետ, կկազմակերպվեն միջոցառումներ և նախաձեռնություններ, կավելացվեն ներդրումները, ու կձևավորվեն պետական-մասնավոր գործընկերություններ և միավորումներ՝ էներգաարդյունավետության և կայունության օրակարգը համատեղ խթանելու համար: Բացի այդ, կիրականացվեն իրազեկման և տեղեկատվության տարածման միջոցառումներ, կնախատեսվեն ռեսուրսներ տեղեկատվության տարածման միջոցառումների համար, կփնտրվեն նվիրատուներ ու աջակիցներ համատեղ տեղեկատվական միջոցառումների համար, որոնք կարող են ներառել Երկրի ժամը, Կայուն էներգիայի շաբաթը և նման այլ նախաձեռնություններ (այն միջոցառումների թիվը, որոնք հնարավոր կլինի իրականացնել, կախված կլինի գործընկերների ռեսուրսների ավելացման հնարավորությունից): Սա կօգնի ներգրավել ֆինանսավորում էներգախնայողության այնպիսի ցածրարժեք (անվճար) միջոցառումների համար, ինչպիսիք են վարքագծային սովորույթները, շարժման սենսորները, ռեժիմի ավտոմատացումն ու հեռակառավարման համակարգի միջոցով վերահսկումը՝ արդյունավետ վարքագծեր խրախուսելու նպատակով:

Հայաստանում կիրառվող իրազեկման բարձրացման նման ջանքերի առավել հաճախ օգտագործվող առաքման մեխանիզմներից երկուսն են՝ (i) փոքր դրամաշնորհների տրամադրում տեղական ՔՀԿ-ներին / համալսարաններին՝ նմանատիպ արշավների մշակման և իրականացման համար, կամ (ii) համագործակցություն իրականացնող գործընկերների շարունակական ծրագրերի հետ՝ իրենց արդեն իսկ պլանավորված իրազեկման միջոցառումների ծավալը զարգացնելու ուղղությամբ՝ ավելի լայն լուսաբանման, միջոցառումների ավելի հաճախ իրականացմանը հասնելու համար՝ քաղաքապետարանի աշխատակազմի, ռեսուրսների և տարածքի աջակցությամբ:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ բարելավված «կանաչ» վարքագիծ, իրազեկվածություն և սոցիալական դիմակայունություն • Տնտեսական՝ բարելավված էներգաանվտանգություն • Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_WR Ջրամատակարարման համակարգի, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում	
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
25,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 13,250,000	5,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 2,650,000	• Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և նվիրատուներ • Մասնավոր հատված

Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – մինչև այժմ

Գործողության պատասխանատու՝	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝**	**Շահագրգիռ կողմեր՝**
Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	ՄՖՀ-ներ	ՀԿ-ներ, համալսարաններ, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների գծով մասնագիտացած կենտրոններ, նորարարական հանգույցներ, մասնավոր հատված

Նույնականացման համար
A_BEL_02

Անվանում՝ Ցածր եկամուտ ունեցող սպառողների լուսատուները ԼԵԴ լամպերով փոխարինելու ծրագիր և արշավ

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն

Քաղաքը կմշակի էներգաարդյունավետության ոչ թանկ ծրագրեր՝ օգնելու համար անապահով տնային տնտեսություններին՝ նվազեցնելու էլեկտրաէներգիայի բարձր ծախսերը: Սա կներառի աշխատանք նվիրատուների, ՀԿ-ների և տեղական կոմունալ ծառայությունների հետ: Նաև փորձ կարվի գտնել քրաուդֆանդինգային լուծումներ՝ մեկնարկելու լամպերի փոխարինման ոչ թանկ արշավ, որի շրջանակներում Գյումրու յուրաքանչյուր ցածր եկամուտ ունեցող ընտանիքին (Աղքատության նպաստների պետական ծրագրի պաշտոնական ստացողներ/շահառուներ) կտրվի 5 ԼԵԴ լամպ:

Քաղաքապետարանին անհրաժեշտ կլինի մշակել հայեցակարգային փաստաթուղթ և հաստատել այն՝ հայցելով համագործակցություն դոնորների հետ, ՄՖՀ-ների, LED լուսադիոդային լամպերի մատակարարների, համայնքային բնակչության հետ աշխատող խմբերի հետ, փոխըմբռնման հուշագրեր ստորագրել (MOU)՝ սկսելու ռեսուրսների ապահովումը և մրցակցային հիմունքներով ձեռք բերելու LED լամպեր, որոնք ունեն լաբորատոր թեստերում հավաստագրված առավելագույն կատարողական: Այս փուլը կարող է տևել 6-8 ամիս: Զուգահեռաբար, համատեղ ջանքերով կմշակվի վեբ կայք և սոցիալական լրատվամիջոցների քարոզարշավ՝ քարոզարշավը հանրայնացնելու և դրամահավաք սկսելու՝ «Օգնեք յուրաքանչյուր կարիքավոր գյումրեցի ընտանիքին՝ խնայելու էլեկտրաէներգիայի վճարների հաշվին»: Քաղաքապետարանը կաշխատի ՔՀԿ-ների և համայնքային բնակչության հետ աշխատող խմբերի հետ՝ մոբիլիզացնելու կամավորներին՝ ռիսկի ենթարկված ընտանիքներին այցելելու և լամպերն առաքելու նպատակով, և անհրաժեշտ փաստաթղթեր ստորագրելու համար: Ծրագրի մասշտաբը և տևողությունը կախված կլինեն դրամահավաքի ջանքերի արդյունավետությունից, քարոզարշավի նկատմամբ վստահությունից և դրա հրապարակայնությունից: Ծրագիրը մեծապես ապավինելու է «A_BEL_01» - ին՝ քարոզարշավ սկսելու և տարածելու համար:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ սոցիալական դիմակայունություն, ներառականություն, քաղաքացիների ներգրավում և մասնակցություն • Տնտեսական՝ ներդրողի տնտեսական եկամուտներ և տնտեսական աճ • Բնապահպանական՝ բարելավված օդի որակ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_WR Ջրամատակարարման համակարգի, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում	
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ	

Կապիտալ ծախսեր (եվրո) 260,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 137,800,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 5,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 2,650,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և նվիրատուներ • Մասնավոր հատված
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2025թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** ՄՖՀ-ներ	**Շահագրգիռ կողմեր՝** նվիրատուներ, կոմունալ սպասարկման ընկերություններ, բանկեր/լիզինգային կազմակերպություններ, մասնավոր հատված

Նույնականացման համար
A_BEL_03

Անվանում՝ Բնակելի շենքերի ջերմային արդիականացման պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագիր

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում

Նկարագրություն

Գործողությունը ներառում է էներգաարդյունավետության մասով վերափոխման այն միջոցառումների իրականացումը, որոնց համար առկա է հանձնառություն Գյումրու կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրում (ԿԷԶԳԾ): Դրանք ներառում են.

- 189 բազմաբնակարան, մոնոլիտ, երկաթբետոնե բնակելի շենքերի ջերմային արդիականացում (նախնական՝ Չարենցի փողոց, Մ. Ավետիսյան, Տ. Ճարտարապետի փողոցներ, Անի թաղամասի 5-րդ, 9-րդ և 7-րդ ու 13-րդ փողոցներ, Խորենացի փողոց, Մուշ-2 թաղամաս, Սևակի փողոց, Ա. Խաչատրյանի փողոց, Մինաս Ավետիսյանի փողոց), և
- Բնակելի շենքերում ներքին լուսավորության էներգաարդյունավետ արդիականացում (շիկացման լամպերի փոխարինում ԼԵԴ լամպերով):

Այս գործողությունն արդեն ընդունվել է Գյումրի համայնքի կողմից ԿԷԶԳԾ-ի շրջանակներում՝ ենթադրելով, որ քաղաքային բյուջեով կնախատեսվեն բնակելի շենքերի վերափոխման համար պահանջվող գումարները, ինչպես ընդունված է բնակարանային ֆոնդի և կոմունալ բարելավումների դեպքում: Նաև կշարունակվի ֆինանսավորումն այնպիսի նվիրատուների կողմից, ինչպիսիք են ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ)/ (ԿԿՀ) Կանաչ կլիմայի հիմնադրամ (GCF), ԵՄ դրամաշնորհներ՝ Հարևանության ներդրումային հարթակի միջոցով, Արևելյան Եվրոպայի Էներգաարդյունավետության և Բնապահպանության Գործընկերության հնարավորությունները նույնպես կդիտարկվեն, առկա ԷԱ վարկային միջոցների հետ համատեղ:

Վերը նշվածը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով շենքերում ԷԱ իրականացման այլ ծրագրերի լավագույն փորձը, որոնք կիրառում են էներգետիկ կատարողականի պայմանագրեր և ենթա-սուվերեն (համայնքային) փոխառություններ:

Այդպիսի ծրագրի հիմնումը կանցնի փուլային գործընթացով, մոտավորապես այսպես.

1-ին տարի. (i) դոնորների և ՄՖՀ-ների հետ համագործակցության զարգացում, փոխըմբռնման հուշագրերի ստորագրում՝ դրամաշնորհների և ցածր դրույքով վարկերի մեծ մասնաբաժին ապահովելու համար, (ii) գործառնական կազմակերպչական և ֆինանսական մոդելի մշակում՝ ներդրումները դեպի բնակելի շենքեր ուղղորդելու համար, բազմաբնույթ աղբյուրներից դրամաշնորհային-փոխառու համակցված ֆինանսավորմամբ;

2-րդ տարի. (iii) շահագրգիռ շենքերից հայտադիմումների ընդունման հրավեր, բնակիչների 2/3-ի մեծամասնության համաձայնության ապահովում ՝ շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների ուղղությամբ համատեղ ներդրումների համար. iv) ընտրված շենքերում կառուցվածքային ամբողջականության և էներգետիկ աուդիտի իրականացման համար գնումների փաստաթղթերի մշակում և մրցակցային հիմունքներով ծառայությունների գնումների կատարում; ջերմա-արդիականացման համար տեխնիկական նախագծերի պատրաստում;

3-րդ տարի. (v) առաջարկվող տեխնիկական նախագծերի հիման վրա, մրցակցորեն շինարարական ծառայությունների գնումներ կատարել՝ վերափոխման աշխատանքների իրականացման համար (հնարավոր է ՝ էներգետիկ կատարողականի պայմանագրերի կնքման միջոցով);

4րդ-5րդ տարի. (vi) իրականացնել էներգախնայողության մոնիտորինգ, հաշվետվություն և ստուգում; (vii) շրջանառու ֆոնդի միջոցով տրամադրված վարկային միջոցների վերադարձի ապահովում; (viii) շարունակել ավելի շատ շենքերից հայտադիմումներ ընդունել մշտապես; (ix) ապահովել ծրագրի երկարաժամկետ կայունությունն աստիճանաբար:

<table>
<tr><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="2">Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)</td><td rowspan="5">Հիմնական օգուտներ
• Սոցիալական՝ բարելավված անվտանգություն, կենցաղսպասարկման ծառայությունների մատչելիություն, վառելիքային աղքատության կրճատում
• Տնտեսական՝ տնտեսական աճ
• Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ</td></tr>
<tr><td colspan="2">SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)</td></tr>
<tr><td colspan="2">SO_WR Ջրամատակարարման համակարգի, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում</td></tr>
<tr><td colspan="2">SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում</td></tr>
<tr><td colspan="2">SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ</td></tr>
<tr><td>Կապիտալ ծախսեր (եվրո)
15,000,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
7,950,000,000</td><td>Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)
150,000
Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)
79,500,000</td><td>Ֆինանսավորման տարբերակներ
• Քաղաքապետարանի բյուջե
• ՄՖՀ-ներ և նվիրատուներ
• Մասնավոր հատված
• ՎԷԷԽ հիմնադրամ</td></tr>
<tr><td colspan="3">Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2030թթ.</td></tr>
<tr><td>Գործողության պատասխանատու՝
Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին</td><td>Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝ բազմապրոֆիլ կազմակերպություններ</td><td>Հիմնական շահագրգիռ կողմեր՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Քաղաքաշինության պետական կոմիտե, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2), նվիրատուներ/ՄՖՀ-ներ և մասնավոր հատված</td></tr>
</table>

Նույնականացման համար
A_BEL_04

Անվանում՝ Համայնքային Էներգետիկ տեղեկատվական համակարգ և էներգակառավարում

Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ

Նկարագրություն

Քաղաքը կներդնի էլեկտրաէներգիային առնչվող տեղեկատվության կառավարման արդյունավետ համակարգ՝ հանրային շենքերում էլեկտրաէներգիայի և ջերմային արդիականացման մասով վերափոխումների հենանշմամբ ու առաջնահերթության սահմանմամբ: Գյումրին կսկսի իրականացնել էլեկտրաէներգիայի մշտադիտարկում, պլանավորում և կառավարում՝ իրազեկ որոշումների կայացման հնարավորություն ստեղծելու, այդ թվում՝ էներգաարդյունավետության համապատասխան նորարարական լուծումների հայտնաբերմանն ու իրականացմանն օժանդակելու համար: Այս գործողության շրջանակներում կմշակվի էլեկտրաէներգիային առնչվող տեղեկատվության կառավարման համակարգ, ինչպես նաև կապահովվեն դրան առնչվող ինստիտուցիոնալ զարգացման գործողություններ, և կձևավորվի տվյալների պարբերական մուտքագրման ու կառավարման գործելակերպ: Սա կներառի հետևյալը.

- չափման և հաշիվների ներկայացման «խելացի» համակարգերի ներդրում,
- էլեկտրաէներգիայի մշտադիտարկման տեղեկատվական համակարգի ստեղծում (առցանց),
- ուսումնական ձեռնարկների և վերապատրաստման նյութերի մշակում,
- հիմնական կենտրոնների ընտրություն էներգասպառմանն առնչվող տվյալների նույնականացման և էներգիայի քաղաքական տեղեկատվական համակարգ դրանց մուտքագրման համար,
- աշխատակազմի գործնական վերապատրաստում,
- էներգիայի օգտագործման պարբերական մշտադիտարկում, հենանշում, վերլուծություն և զեկուցում համայնքի ղեկավարին և «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնությանը,
- հնարավորության դեպքում չափման, հաշիվների ներկայացման և էներգետիկ կատարողականի մշտադիտարկման այլ խելացի լուծումների ներդրում:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն • Տնտեսական՝ ներդրողի տնտեսական եկամուտներ և տնտեսական աճ • Բնապահպանական՝ բարելավված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում	
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ	

Կապիտալ ծախսեր (եվրո) 5,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 7,950,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 5,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 2,650,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և նվիրատուներ • Մասնավոր հատված
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2022 – 2027թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Էներգախնայողության հիմնադրամ (ESF), Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2), ՄՖՀ-ներ/նվիրատուներ

Նույնականացման համար **A_BEL_05**		
Անվանում՝ Էներգախնայողության կատարողականի պայմանագրեր (ԷԿՊ) և Էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ պայմանագրեր (ԷԾՄԸ)		
Դասակարգում՝ Պետական գնումներ		
Նկարագրություն Էներգախնայողության կատարողականի պայմանագրերի ներուժը բացահայտելու նպատակով Գյումրիում կգնահատվեն Էներգախնայողության՝ Գյումրու քաղաքային տնտեսության մեջ առկա հնարավորությունները (օրինակ՝ հանրային շենքերն ու փողոցային լուսավորությունը), ինչպես նաև ակնկալվող ֆինանսական եկամուտները: ԷԿՊ-ի ու ԷԾՄԸ-ի պայմանագրերի ներուժը հավանաբար բարձր է, և եթե սա ապացուցվի, ապա կմշակվի հայեցակարգային ու պայմանագրային շրջանակ՝ էներգախնայողության կատարողականի պայմանագրերի միջոցով մասնավոր հատվածի մասնակցությունը հետևյալ նպատակով ապահովելու համար. • Հանրային շենքերի էներգաարդյունավետության վերափոխում (օրինակ՝ ՀՎԷԷ-ի միջոցով) • Արտաքին լուսավորություն՝ էներգաարդյունավետ լուսավորության սարքեր տրամադրողների կողմից տրվող մատակարարների վարկերի միջոցով (լուսադիոդային լամպեր և լուսատուներ) <u>Նշում:</u> Քաղաքապետարանն անմիջականորեն չի ֆինանսավորելու նման ներդրումները, սակայն հնարավորություններ է ստեղծելու ֆակտորինգի կիրառման միջոցով բանկային ֆինանսավորման համար:		
Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին) SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ) SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ		**Հիմնական օգուտներ** • Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողի համար և տնտեսական աճ • Բնապահպանական՝ օդի բարելավված որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
Կապիտալ ծախսեր (եվրո) 10,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 5,300,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 5,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 2,650,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և դոնորներ • Մասնավոր հատված
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Էներգախնայողության հիմնադրամ (ESF), Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2), դոնորներ/ՄՖՀ-ներ

Նույնականացման համար
A_BEL_06

Անվանում՝ Հանրային շենքերի ջերմային արդիականացման ծրագիր

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում

Նկարագրություն

Գյումրու ԿԷԶԳԾ-ով և «Քաղաքապետների դաշնագիրը» ստորագրող կողմի կարգավիճակով, ինչպես նաև կլիմայի և էներգետիկայի ոլորտներում ԵՄ-ի «Քաղաքապետների դաշնագրին» անցումով պայմանավորված քաղաքական հանձնառությունները կատարելու նպատակով Գյումրին պետք է իրականացնի ԿԷԶԳԾ-ի մասով միջոցառումները, վերահսկի դրանք և հաշվետվություն ներկայացնի դրանց վերաբերյալ:

Դրա համար կպահանջվեն այնպիսի միջոցառումների իրականացում, ինչպիսիք են մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) ջերմամեկուսացումն ու ջերմային արդիականացումը, դպրոցներում և նախադպրոցական կրթական կազմակերպություններում արևային ջրատաքացուցիչների, ինչպես նաև համայնքային շենքերում և ենթակառուցվածքներում ՖՎ մոդուլների տեղադրումը: Նաև կպահանջվի ներքին լուսավորության էներգաարդյունավետության արդիականացում (շիկացման լամպերի փոխարինում լուսադիոդային լամպերով) նախադպրոցական կրթական համալիրներում, մարզական, երաժշտական, արվեստի դպրոցներում, թանգարաններում և քաղաքապետարանում:

Այս գործողությունը կներառի այնպիսի ծրագրի մշակում, որի դեպքում նշված միջոցառումներն իրականացնելու արդյունքում ստացված օգուտները քանակապես կգնահատվեն, կանցկացվեն էներգաաուդիտներ, կսահմանվի միջոցառումների իրականացմանն առնչվող ֆինանսավորման սխեման, ինչպես նաև կներկայացվի իրականացման մանրամասն պլան: Կապիտալ ներդրումների աղբյուր է լինելու երրորդ կողմը, մասնավորապես ՀՎԷԷ ֆինանսավորման հիմնադրամը, որը ներկայումս հասանելի է առևտրային բանկերում:

Հիմք ընդունելով հանրային, քաղաքային շենքերի ներկայիս էներգետիկ կատարողականը, Գյումրու քաղաքապետարանը արտաքին տեխնիկական օժանդակություն կփնտրի՝ շենքերը ստուգելու և դասակարգելու համար, ելնելով էներգախնայողության ամենամեծ ներուժից: Կանցկացվեն էներգետիկ աուդիտներ: Իրականացումը կարող է հիմնված լինել էներգետիկ կատարողականի պայմանագրերի վրա՝ մասնագիտական շինարարական ընկերություններից ջերմային արդիականացման ծառայությունների մրցակցային հիմունքներով ձեռքբերման համար, որոնք կմշակեն և կիրականացնեն ԷԱ միջոցառումները: Այս ծառայությունների դիմաց փոխհատուցումները կարող են մասամբ կապված լինել փաստաթղթավորված խնայողությունների հետ: Նվազեցված էներգետիկ հաշիվներից ֆինանսական խնայողությունները կօգտագործվեն ներդրումները մարելու և նմանատիպ ներդրումների համար ավելի շատ միջոցներ ստեղծելու համար:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ բարելավված անվտանգություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողի համար և տնտեսական աճ

Նույնականացման համար **A_BEL_06**		
Անվանում՝ Հանրային շենքերի ջերմային արդիականացման ծրագիր		
Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում		
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում		• Բնապահպանական՝ օդի բարելավված որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում		
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ քաղաքի ողջ տարածքում		
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ		
Կապիտալ ծախսեր (եվրո) 850,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 450,500,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 50,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 26,500,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և դոնորներ • Մասնավոր հատված
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2022 – 2027թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Էներգախնայողության հիմնադրամ (ESF), Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2), դոնորներ/ՄՖՀ-ներ, ՀԿ-ներ

Նույնականացման համար **A_BEL_07**
Անվանում՝ Շրջանակային փաստաթղթի մշակում՝ էներգաարդյունավետ ապրանքների ու ծառայությունների հանրային գնումների գործընթացում ավելացնելու համար
Դասակարգում՝ Պետական գնումներ
Նկարագրություն Այս գործողության շնորհիվ Գյումրին հնարավորություն կունենա մշակելու և ներդնելու «կանաչ» գնումների գործելակերպեր, էներգախնայողության կատարողականի պայմանագրեր, ինչպես նաև համայնքային ներդրումների՝ ամբողջ ժամանակահատվածի ծախսերի վրա հիմնված պլանավորում: Այն նաև կնպաստի էներգաարդյունավետության, ցածր ածխածնային և «կանաչ» ցուցանիշների ներառմանն ապրանքների և ծառայությունների գնումների նկարագրություններում՝ շենքերի, փողոցային լուսավորության և հանրային (համայնքային) փոխադրումների մասով: Գործողությունը ներառում է այնպիսի հայեցակարգային շրջանակի մշակում, որի նպատակն է ԷՊԿ-ներն ընդգրկել քաղաքային և ապրանքների ու ծառայությունների գնումներում՝ որպես սովորական հանրային գնումների մաս՝ արտադրանքի կամ դրա շահագործման ողջ ժամանակահատվածի մասով նվազագույն էներգատարությունն ու ածխածնային արտանետումները սահմանելու համար: Այն նաև կներառի ինստիտուցիոնալ զարգացման համապատասխան տարր: Նշում՝ Սա ազգային գործողություն է, որը պետք է ընդունվի տեղական մակարդակով: Հանրային գնումներին վերաբերող նոր օրենսդրական փաթեթը, որը ներկայումս կառավարության կողմից ընդունվելու փուլում է, նաև ներառում է չափորոշիչներ հանրային գնումների ոլորտում էներգաարդյունավետության կիրառման համար:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողի համար • Բնապահպանական՝ օդի բարելավված որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում	
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում	

Նույնականացման համար **A_BEL_07**		
Անվանում՝ Շրջանակային փաստաթղթի մշակում՝ էներգաարդյունավետ ապրանքների ու ծառայությունների հանրային գնումների գործընթացում ավելացնելու համար		
Դասակարգում՝ Պետական գնումներ		
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ		
Կապիտալ ծախսեր (եվրո) 50,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 26,500,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 5,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 2,650,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և դոնորներ • Մասնավոր հատված
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020թ. – առ այսօր		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Էներգախնայողության հիմնադրամ (ESF), Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2), դոնորներ/ՄՖՀ-ներ

Նույնականացման համար
A_BEL_08

Անվանում՝ «Կանաչ» շենքերի խրախուսում

Դասակարգում՝ Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր

Նկարագրություն

Այս գործողությունն ուսումնասիրություն է՝ միտված սահմանելու բոլոր նոր կառուցվող շենքերի և վերակառուցման նախաձեռնությունների մասով «գրեթե զրոյական» էներգասպառման և «կանաչ» ճարտարապետության սկզբունքների կիրառության պահանջները, դրանց գործնական կողմերը և օգուտները: Այն կխթանի նմուշային «կանաչ» շենքի մշակումը՝ որպես այս մոտեցումը ցուցադրելու և խրախուսելու միջոց: Շենքի կառուցման համար կօգտագործվեն տեղական արտադրության, հեշտ կիրառություն ու բարձր էներգաարդյունավետություն ունեցող շինարարական նյութեր: Նմանատիպ բազմաթիվ համակարգեր են մշակվել, ինչը հնարավորություն է ընձեռում համագործակցելու ներգրավված կազմակերպությունների հետ: Քաղաքը պետք է.
փնտրի համայնքային գործիքներ՝ այդպիսի ներդրումները խրախուսելու նպատակով (օրինակ՝ շինարարության արագացված գնահատում և թույլտվությունների տրամադրում, ինչպես նաև գույքահարկի տեղական դրույքաչափերի կիրառում); և մշակի ազգային կանոնակարգեր՝ կանաչ շինարարությունը խթանելու համար:

-
- հաստատի գործընկերություն դոնորների ու նվիրատուների հետ՝ ֆինանսական մասնակցություն ապահովելու նպատակով,
- ներդնի էներգախնայողության ու վերականգնվող էներգիայի աղբյուրների (ՎԷԱ) մասով պահանջներ շինարարության թույլտվություններ տրամադրելու գործընթացում,
- պարտադիր կիրառի շենքերի ԷԱ չափորոշիչներ նոր շինարարություններում և կապիտալ վերակառուցումներում, ինտեգրի կանաչ շինարարության տեխնոլոգիաներ,
- ապահովի համայնքային շինարարության վերահսկողությունն ու շահագործումը՝ էներգաարդյունավետության տեխնոլոգիաների պատշաճ ինտեգրումն ապահովելու նպատակով:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ բարելավված անվտանգություն, «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն • Տնտեսական՝ աշխատատեղերի ստեղծում և տնտեսական եկամուտներ ներդրողների համար • Բնապահպանական՝ օդի բարելավված որակ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ և ուժեղացված դիմակայունություն կլիմայական փոփոխությունների նկատմամբ
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում	

<table>
<tr><td colspan="3">Նույնականացման համար
A_BEL_08</td></tr>
<tr><td colspan="3">Անվանում՝ «Կանաչ» շենքերի խրախուսում</td></tr>
<tr><td colspan="3">Դասակարգում՝ Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր</td></tr>
<tr><td colspan="2">SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում</td><td rowspan="2"></td></tr>
<tr><td colspan="2">SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ</td></tr>
<tr><td>Կապիտալ ծախսեր (եվրո)
120,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
63,600,000</td><td>Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)
5,000
Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)
2,650,000</td><td>Ֆինանսավորման տարբերակներ
• ՄՖՀ-ներ և դոնորներ
• Մասնավոր հատված</td></tr>
<tr><td colspan="3">Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2021թ. – առ այսօր</td></tr>
<tr><td>Գործողության պատասխանատու՝
Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին</td><td>Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝ դոնորներ/ՄՖՀ-ներ</td><td>Հիմնական շահագրգիռ կողմեր՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2), մասնավոր հատված</td></tr>
</table>

Նույնականացման համար
A_BEL_09

Անվանում՝ Քաղաքի փողոցային լուսավորության էներգաարդյունավետ արդիականացում

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում

Նկարագրություն

Այս գործողությունը կներառի համապարփակ վերաքարտեզագրում և մոդելավորում, ինչպես նաև ենթակառուցվածքների արդիականացում Գյումրու արտաքին փողոցային լուսավորության ենթակառուցվածքների մասով: Սա նոր գործողություն չէ, սակայն դրա արդյունքում կընդլայնվի ՎԶԵԲ-ի կողմից արդեն իսկ իրականացվող գործողությունը: Իրականացվելու են հետևյալ գործողությունները .

- լուսավորության համակարգերի ԷԱ վերափոխումների մասով կարիքների, այդ թվում՝ լուսավորության նորմերին ներկայացվող պահանջների, անվտանգության, էսթետիկայի վերաբերյալ տեխնիկական մասնագրերի մշակումն ու շրջանակի սահմանումը,
- ներդրումային կարիքների, ակնկալվող էներգախնայողության ու ֆինանսական խնայողությունների գնահատում,
- փողոցների լուսավորության ցանցում «խելացի» տեխնոլոգիաների ինտեգրում (ինչպիսիք են աղոտացումը, հեռակառավարումը, շարժման սենսորները և ճանապարհային երթևեկության լուսավորության հետ ինտեգրումը).
- համապատասխան ֆինանսավորման սխեմայի նախագծում ու մշակում (ինչպես, օրինակ, Գյումրիում փողոցային լուսավորության լուսադիոդային վերափոխումն իրականացնելու համար ինտեգրված ֆինանսական ֆոնդ),
- համայնքային բյուջեից բացի, այլ՝ արտաքին ֆինանսավորման աղբյուրների փնտրտուք (այդ թվում՝ դրամաշնորհներ, վարկեր, պետական-մասնավոր հատված համագործակցություն/ էներգախնայողության կատարողականի պայմանագրերի սխեմաներ),
- նյութատեխնիկական շրջանակի մշակում և գնահատում՝ արդյունավետ լուսավորության շրջանառու հիմնադրամին էներգախնայողության հասույթներ բերելու համար, որոնք կկուտակվեն լուսավորության բոլոր վերափոխումներից, նախ՝ ցանկացած վարկային դրամական միջոցներ վերադարձնելու, ապա՝ բավարար ռեսուրսներ ստեղծելու նպատակով՝ ընդլայնելու համար էներգաարդյունավետության վերափոխումները քաղաքային տնտեսության մյուս ոլորտներում:

Գործողության արդյունքում Գյումրիում կնկատվի փողոցային լուսավորության մասով էներգաարդյունավետության մակարդակի բարձրացում, ինչպես նաև լուսավորվող օբյեկտների քանակի ավելացում: Սա թույլ կտա, որ Գյումրին պահպանի կամ կրճատի ամբողջ ծառայության էներգասպառումը՝ միևնույն ժամանակ բարձրացնելով լուսավորության որակը և հարմարավետությունը քաղաքացիների համար:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ բարելավված անվտանգություն, «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողի համար և տնտեսական աճ • Բնապահպանական՝ օդի բարելավված որակ և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	

Նույնականացման համար **A_BEL_09**		
Անվանում՝ Քաղաքի փողոցային լուսավորության էներգաարդյունավետ արդիականացում		
Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում		
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում		
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում		
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ		
Կապիտալ ծախսեր (եվրո) 6,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 3,180,000,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 150,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 79,500,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և դոնորներ
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** ՄՖՀ-ներ/ դոնորներ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Նույնականացման համար
A_BEL_10

Անվանում՝ Վերականգնվող էներգիայի միջին և խոշոր համակարգերի (ՎԷՀ) ներդրում

Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ

Նկարագրություն

Այս գործողության նպատակն է ընդլայնել Գյումրիում միջնամասշտաբ և մեծամասշտաբ ՎԷՀ-երի ներդրումը՝ հասանելի ռեսուրսները գնահատելու, համապատասխան պետական-մասնավոր հատված համագործակցության հնարավորություններ փնտրելու, ինչպես նաև քաղաքում և նրա շրջակայքում վերականգնվող էներգիայի մեծամասշտաբ համակարգերի ներդրման բիզնես մոդելն ուսումնասիրելու միջոցով: Այս գործողության արդյունքում կգնահատվի բոլոր տեսակի ՎԷՀ-երի օգտահանման ներուժը, սակայն ներդրման ենթակա համակարգերը հավանաբար կներառեն միջնամասշտաբ և մեծամասշտաբ հողմային էներգիա, արևային ֆերմաներ, երկրաջերմային էներգիա, հիդրոէներգիա, ջերմային պոմպեր և կենսազանգված: 47.5 ՄՎտ հզորությամբ կայանը կարող է մատակարարել մոտավորապես 66,400 մեգավատ ժամ (ՄՎտժ), որը համարժեք է Գյումրու տարեկան էլեկտրականության պահանջարկի 20 %-ին:

Քաղաքը կֆինանսավորի ռեսուրսների գնահատումը և շուկայի ուսումնասիրությունները, կաջակցի ՎԷՀ-ի ներդրումների հետ կապված փափուկ ֆինանսավորման ծախսերին, համայնքային հողեր կհատկացնի բարենպաստ պայմաններով, հնարավոր է՝ մասնակիորեն համաֆինանսավորի աննշան մասնաբաժնով: Ներդրումների մեծ մասը պետք է որոնել մասնավոր ներդրողներից:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ բարելավված անվտանգություն, «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողների համար և տնտեսական աճ • Բնապահպանական՝ օդի բարելավված որակ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ և ուժեղացված դիմակայունություն կլիմայական փոփոխությունների նկատմամբ
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում	
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում	
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
300,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 159,000,000	25,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 13,250,000	• Քաղաքապետարանի բյուջե • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ • Մասնավոր հատված

Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2), դոնորներ/ՄՖՀ-ներ

Գյումրին կվերականգնի իր արդյունաբերական ոլորտը՝ խթանելու տնտեսական աճը և օգնելու աշխատատեղերի ստեղծմանը, կենտրոնանալով մաքուր արտադրության (ջուր, օդ, հող), ռեսուրսների արդյունավետության, արտադրության նորարարական և գիտելիքահենք ոլորտների վրա, ներդրողներին ներգրավելով թեթև արդյունաբերության, ՏՏ և նորարարությունների, ծառայությունների և կիրառելի լավագույն տեխնոլոգիաների մեջ: Գյումրու քաղաքապետարանը կկառուցի տեղական կանաչ բիզնեսի խթանման, ներկայացման և ցուցադրման համար հարթակ:

5.2.3. Արդյունաբերություն

Գյումրու արդյունաբերական ոլորտի համար ԿՔԳԾ-ի գործընթացի միջոցով մշակվել է հինգ գործողություն քաղաքապետարանի և շահառուների հետ համատեղ: Հինգ գործողություններից մեկը ներառված է գործողությունների առաջնահերթ ցանկում:

ԿՔԳԾ-ի՝ արդյունաբերությանն առնչվող գործողությունները կենտրոնանում են երկու առանցքային բնագավառների վրա:

Առաջինը նպատակ ունի Գյումրու արդյունաբերական ոլորտում (հիմնականում կենտրոնացած թեթև արդյունաբերության վրա) անցում կատարելու դեպի ավելի «կանաչ» բիզնես մոդելների, ինչի արդյունքում նախատեսվում է աջակցել ոլորտի աշխուժացմանը և խթանել այն: Այս անցումը հիմնականում կապահովվի քաղաքապետարանի ռազմավարական-քաղաքական առաջնորդների կողմից աջակցություն ստացող բիզնեսի միջև առավել սերտ համագործակցության միջոցով՝ «Կանաչ բիզնես» հայեցակարգի տեսքով, ինչպես նաև արդյունաբերական/ փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) էներգակառավարման համակարգերի միջոցով:

Երկրորդը նպատակ ունի անդրադառնալու աղտոտված հողատարածքների խնդրին, որը կապված է նախկինում քաղաքում առկա ծանր արդյունաբերական տարածքների հետ: Ներկայումս ընդունվում է այն փաստը, որ քաղաքի մի քանի տարածքներ աղտոտված են, սակայն աղտոտված տարածքների հստակ վայրն ու մասշտաբը հայտնի չեն: Ուստի արդյունաբերական ոլորտի մասով առաջին գործողությունը քաղաքի մանրամասն քարտեզագրում ու ուսումնասիրություն (սքրինինգ) ձեռնարկելն է՝ տարբեր տարածքների բացահայտման նպատակով, որպեսզի հնարավոր լինի վերականգնմանն ուղղված լիարժեք աշխատանք իրականացնել:

Աղյուսակ 5.5. Արդյունաբերությանն առնչվող գործողություններ

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
Առաջնահերթ գործողություններ			
A_IN_04	Աղտոտված արդյունաբերական տարածքների հետազոտում և ռիսկերի նվազեցում	SO_SL	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում Գույքագրված, քարտեզագրված և գնահատված աղտոտված տարածքների մասնաբաժնի մինչև 50% ավելացում
Լրացուցիչ գործողություններ			
A_IN_01	Գյումրու «կանաչ» գործարարության հայեցակարգ	SO_AQGHG SO_WR SO_SL SO_GSBIO SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի մինչև 0.15 մգ/մ^3 նվազեցում, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20% նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, արդյունաբերական ոլորտում էներգասպառման 5% նվազեցում ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի հաշվով՝ համեմատած 2015թ. մակարդակի հետ, Վերամշակված արդյունաբերական թափոնների մասնաբաժնի ավելացում՝ որպես արտադրված ընդհանուր արդյունաբերական թափոնների մասնաբաժնի 25%, արդյունաբերական ջրի սպառման կրճատում՝ որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման 25%-ով նվազեցում:
A_IN_02	«Գյումրու «կանաչ» տնտեսության ակումբ» «կանաչ» գործարարության համակարգման հարթակ	SO_AQGHG SO_WR SO_SL SO_GSBIO SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի մինչև 0.15 մգ/մ^3 նվազեցում, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20% նվազեցում՝ համեմատած 2014թ. մակարդակի հետ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում,

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
Առաջնահերթ գործողություններ			
			արդյունաբերական ոլորտում էներգասպառման 5% նվազեցում ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի հաշվով՝ համեմատած 2015թ. մակարդակի հետ: Վերամշակված արդյունաբերական թափոնների մասնաբաժնի ավելացում՝ որպես արտադրված ընդհանուր արդյունաբերական թափոնների մասնաբաժնի 25%, արդյունաբերական ջրի սպառման կրճատում՝ որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման 25%-ով նվազեցում:
A_IN_03	Էներգիայի կառավարման համակարգի աջակցության տրամադրում արդյունաբերական ոլորտին/ ՓՄՁ-ներին	SO_AQGHG SO_WR SO_SL SO_AR SO_GSBIO SO_WR SO_AR	Փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի մինչև 0.15 մգ/մ^3 նվազեցում, CO_2-ի՝ ՀՆԱ-ի միավորի հաշվով տարեկան արտանետումների 20% նվազեցում՝ 2014թ. Համեմատությամբ, CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեքի տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, արդյունաբերական ոլորտում էներգասպառման 5% նվազեցում ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի հաշվով՝ 2015թ. համեմատությամբ, վերամշակված արդյունաբերական թափոնների մասնաբաժնի ավելացում՝ որպես արտադրված ընդհանուր արդյունաբերական թափոնների մասնաբաժնի 25%, արդյունաբերական ջրի սպառման կրճատում՝ որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման 25%-ով նվազեցում:
A_IN_05	Նախկին արդյունաբերական տարածքների առողջացում՝ քաղաքային միջավայրի վերականգնման համար	SO_SL SO_GSBIO SO_WR SO_AR	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թվի մինչև 40% կրճատում՝ համեմատած 2017թ.տվյալների հետ:



Գծապատկեր 5.3. Արդյունաբերական ոլորտի գործողությունների ծրագիր

Նույնականացման համար
A_IN_04

Անվանում՝ Աղտոտված արդյունաբերական տարածքների հետազոտում և ռիսկերի նվազեցում

Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ

Նկարագրություն

Այս գործողության՝ հետազոտմանն (սքրինինգ) առնչվող բաղադրիչը կներառի տեղի աղտոտված արդյունաբերական տարածքների գույքագրում (հաշվառում) և տվյալների շտեմարանի մշակում, ինչը կնպաստի այդ տարածքների հետագա վերականգնմանն ու «կանաչեցմանը»: Դա նաև կներառի հետազոտության (սքրինինգ) գործընթաց, աղտոտված արդյունաբերական տարածքների քարտեզագրում, ինչպես նաև դրանց դասակարգում՝ ըստ աղտոտվածության մակարդակի: Գործողության երկրորդ մասը՝ «ռիսկերի նվազեցումը», կհանգեցնի նախկինում վտանգավոր նյութեր պարունակող արդյունաբերական հողերի առողջացմանն ուղղված վերականգնման ծրագրի մշակմանը՝ ապահովելու համար աղտոտող նյութերի հեռացումն այդ տարածքներից: Այդ ծրագրով կառաջարկվի կիրառել ռիսկերի նվազեցման ամենաժամանակակից տեխնոլոգիաներ՝ աղտոտման սպառնալիքները չեզոքացնելու նպատակով, կսահմանվեն տարածքների այլընտրանքային օգտագործման եղանակներ, ինչպես նաև կներկայացվի աշխատանքը միջազգային բնապահպանական չափանիշներին համապատասխան իրականացնելու պահանջ:

Նշում: Այս գործողությունը վերաբերում է լքված արդյունաբերական տարածքներին, նախկին արտադրական ձեռնարկություններին և այլ աղտոտված տարածքների (այդ թվում՝ ինքնաբուխ, ապօրինի արդյունաբերական/շինարարական աղբավայրերին) և դրանց կառավարմանը: Այն չի վերաբերում գոյություն ունեցող արդյունաբերական ռեսուրսների արդյունավետությանը կամ աղբավայրերին:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_GSBIO Հողի պաշտպանված, բարելավված և վերականգնված որակ ողջ քաղաքում	• Սոցիալական՝ բարելավված անվտանգություն • Տնտեսական՝ տնտեսական աճ • Բնապահպանական՝ հողի բարելավված որակ
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում	
SO_AR Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքի և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
250,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 132,500,000	20,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)**	• Քաղաքապետարանի բյուջե • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ • Մասնավոր հատված

Նույնականացման համար A_IN_04		
Անվանում՝ Աղտոտված արդյունաբերական տարածքների հետազոտում և ռիսկերի նվազեցում		
Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ		
	10,600,000	
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** ՀՀ կառավարություն	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** մասնավոր հատված, ՄՖՀ-ներ/ դոնորներ

«Գյումրին կսպասարկվի թափոնների կառավարման՝ միջազգային չափանիշներով գործող ժամանակակից ընդհանուր համակարգի կողմից: Սա կտանի քաղաքը դեպի շրջանաձև տնտեսություն, որի դեպքում վերամշակման ենթակա բոլոր թափոնները կսորտավորվեն, կհավաքվեն և կվերամշակվեն»:



5.2.4. Կոշտ թափոններ

ԿՔԳԾ-ի օգնությամբ քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի հետ համատեղ Գյումրու կոշտ թափոնների ոլորտի համար մշակվել է վեց գործողություն: Նրանցից հինգը ներառված են գործողությունների առաջնահերթ ցանկում, իսկ մեկ գործողություն ներկայացվում է որպես լրացուցիչ:

Գյումրիում թափոնների կառավարումը ներկայումս աչքի է ընկնում աղբահանության ոչ պատշաճ մակարդակով, այդ թվում՝ գերակշռող ապօրինի բաց աղբավայրերով, ինչպես նաև ցածր նյութական արդյունավետությամբ, ինչը հանգեցնում է տնտեսական կորուստների ու բացասական բնապահպանական ազդեցությունների:

Ոլորտի առաջնահերթ համարվող գործողությունները **ապօրինի բաց աղբավայրերի հեռաց**ումն է, ինչը նաև կներառի թափոնների համար նախատեսված՝ աղտոտված տարածքների վերականգնումը:

Դրանք նաև կկենտրոնանան թափոնների **հեռացման ու վերամշակման համակարգերն ինտեգրելու** և Գյումրին դեպի ավելի շրջանաձև տնտեսություն ուղղորդելու վրա, ինչը կօգնի նվազեցնել թափոնների արտադրությունը՝ վերամշակման ու կրկնակի օգտագործման սկզբունքին հետևելու միջոցով, մի գործելակերպ, որը ներկայումս չի կիրառվում Գյումրիում: Գյումրու համար վերամշակման հաջողված համակարգ ապահովելու նպատակով պահանջվում է գործող համակարգերի մանրամասն ուսումնասիրություն և այդ ուսումնասիրության արդյունքների հիման վրա **համապատասխան ենթակառուցվածքի ստեղծում**: Այդ առնչությամբ մշակվել են գործողություններ, որոնք ներառում են թափոնների հավաքման ու վճարման ներկայիս համակարգերի վերանայում, որոնց կավելանա թափոնների հավաքման առանձին համակարգ՝ նախատեսված վերամշակման ենթակա աղբի համար: Նաև առաջարկվում են խոշոր կապիտալ ներդրումներ՝ քաղաքային կոշտ կենցաղային թափոնների հեռացման ու վերամշակման նոր ենթակառուցվածքներ ստեղծելու միջոցով, ինչի իրականացման տարբերակները կարող են ներառել աղբի տեսակավորման գործարանի (ԱՏԳ) և ջերմային մշակման միջոցով թափոններից էներգիայի ստացման (ԹԷՍ) գործարանի, ինչպես նաև օրգանական թափոնների վերամշակման կայանքների ստեղծումը:

Թափոնների վերամշակման ու հեռացման ենթակառուցվածքի գործարկումը նաև պահանջում է հատուկ գիտելիքներ և փորձառություն հենց քաղաքապետարանի շրջանակներում, որպեսզի նախագծի իրականացման ողջ ընթացքում առկա լինեն արդյունավետ կառավարում և առաջնորդություն: Նաև անհրաժեշտ է հանրության շրջանում ընդլայնել վերամշակման վերաբերյալ գիտելիքներն ու ընկալումը մասնավորապես աղբն առանձնացնելու անհրաժեշտության և մեթոդների մասով: Սա որոշիչ ազդեցություն կունենա արդյունավետ վերամշակման համակարգը գործարկելու առումով: Հետևաբար՝ նոր ենթակառուցվածքի ներդրումից բացի, անհրաժեշտ կլինի Գյումրու բնակչության շրջանում, ինչպես նաև բիզնեսի և արդյունաբերության ոլորտում իրականացնել **վարքագծային փոփոխություններ,** իսկ քաղաքապետարանում ապահովել կարողությունների զարգացում: Ուստի թափոնների հեռացման, մշակման ու

վերամշակման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված տեղեկատվական արշավներն ու կարողությունների զարգացումը առանցքային գործողություններ են՝ ոլորտում փոփոխություններ խթանելու համար:

Աղյուսակ 5.6. Կոշտ թափոններին առնչվող գործողություններ

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
Առաջնահերթ գործողություններ			
A_SW_02	Ապօրինի բաց աղբավայրերի վերացում և աղտոտված տարածքների վերականգնում, գործող աղբավայրի պատշաճ կառավարում	SO_AQGHG SO_SL SO_WR	CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թվի 40% կրճատում՝ համեմատած 2017թ. տվյալների հետ, ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր հեռացվող և տեղափոխվող ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր (ՎԹ) մինչև 95% ավելացում:
A_SW_03	Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում	SO_AQGHG SO_SL SO_WR	CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցության մինչև 25% ավելացում, թափոնների հեռացման վճարովի, գործարքային ծառայությունից օգտվող թափոն արտադրողների ավելացում մինչև 80%:
A_SW_04		SO_AQGHG	

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
Առաջնահերթ գործողություններ			
	Քաղաքային կոշտ թափոնների հեռացման և վերամշակման նոր ենթակառուցվածքի հիմնում	SO_SL SO_WR	CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր հեռացվող և տեղափոխվող, ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր (ՎԹ) մինչև 95% ավելացում, Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թվի 40% կրճատում՝ համեմատած 2017թ. տվյալների հետ:
A_SW_05	ՔԿԹ մորֆոլոգիայի ուսումնասիրություն և վերամշակման ենթակա նյութերի շուկայական հետազոտություն և թափոնների որակին առնչվող արձանագրություններ մշակում	SO_AQGHG SO_SL SO_WR	CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցության մինչև 25% ավելացում, վերամշակված արդյունաբերական թափոնների մասնաբաժնի ավելացում՝ որպես արտադրված ընդհանուր արդյունաբերական թափոնների մասնաբաժնի 25%:
A_SW_06	Իրականացնել թափոնների կառավարման իրազեկման պարբերական արշավները (5R)	SO_AQGHG	CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցության մինչև 25% ավելացում, վերամշակված արդյունաբերական թափոնների մասնաբաժնի ավելացում՝ որպես արտադրված ընդհանուր արդյունաբերական թափոնների մասնաբաժնի 25%:

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
Առաջնահերթ գործողություններ			
Լրացուցիչ գործողություններ			
A_SW_01	Թափոնների վերամշակման և հեռացման հնարավորությունների տեխնիկական հիմնավորում, Գյումրու համար թափոնների կառավարման ընդհանուր ծրագրի մշակում և կոշտ թափոնների՝ հանրությանը հասանելի տվյալների բազայի ստեղծում	SO_AQGHG SO_SL SO_WR	CO_2-ի՝ մեկ շնչի հաշվով համարժեք տարեկան արտանետումների նվազեցում մինչև 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով, ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր հեռացվող և տեղափոխվող ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր (ՎԹ) մինչև 95% ավելացում, տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցության մինչև 25% ավելացում, վերամշակված արդյունաբերական թափոնների մասնաբաժնի ավելացում՝ որպես արտադրված ընդհանուր արդյունաբերական թափոնների մասնաբաժնի 25%, Աղտոտված և պոտենցիալ աղտոտված տարածքների թվի 40% կրճատում՝ համեմատած 2017թ. տվյալների հետ, այդ թվում մինչ նոր աղբավայրերի շահագործումը գործող աղբավայրերի նվազագույն նորմերին համապատասխանեցում (ցանկապատում, կշեռքի տեղադրում, տեղադրված թափոնների պարբերաբար տոփանում և հողի շերտով ծածկում՝)



Գծապատկեր 5.4. Կոշտ թափոններին առնչվող ծրագիր

Նույնականացման համար
A_SW_02

Անվանում՝ Ապօրինի բաց աղբավայրերի վերացում և աղտոտված տարածքների վերականգնում

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում

Նկարագրություն

Բաց աղբանետումը թափոնների հեռացման ամենատարածված տեսակն է Գյումրիում, իսկ ապօրինի աղբավայրերը թափոնների հավաքման պաշտոնական ենթակառուցվածքի ու հետևողականության բացակայության հետևանքն են: Այս գործողությունը միայն կներառի ապօրինի աղբավայրերի հեռացման և աղտոտված տարածքների վերականգնման առաջին փուլի իրականացումը: Այնուամենայնիվ, եթե այդ փուլի իրականացումից հետո աղբանետման նոր դեպքեր են գրանցվում, խորհուրդ է տրվում ապահովել այս գործողության շարունակականությունը, ինչը կպահանջի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների սահմանում: Այս գործողությունը ենթադրում է հետևյալ առաջադրանքները.

- դրանց գեոտեղորոշումը.
- ապօրինի բաց աղբավայրերը բացահայտող Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) տվյալների շտեմարանի ստեղծումը,
- յուրաքանչյուր աղբավայրում առկա թափոնների առանձնահատկությունների բնութագրումը,
- թափոններին հեռացումն ու աղբավայրերում տեղադրումը,
- սանիտարական մաքրման և վերականգնման ենթակա տարածքները,
- բացահայտված տարածքների մշտադիտարկումը՝ ապագայում նմանատիպ ապօրինի աղբանետման դեպքերից խուսափելու նպատակով:

Վերազինման ենթակա կայքերին առաջնահերթություն կտրվի դասակարգման համակարգի հիման վրա, որը հաշվի կառնի.

- Վերականգնվող տարածքի մակերեսները.
- Նորմերին համապատասխան հեռացման թափոնների զանգվածը.
- Վտանգավոր թափոնների պարունակությունը, և
- Բնակելի վայրերից անմիջական հարևանությամբ գտնվող տարածքները:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհով տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն, բարելավված անվտանգություն • Տնտեսական՝ տնտեսական ներառում • Բնապահպանական՝ ջրային ռեսուրսների և հողի բարելավված որակ
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
1,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 530,000,000	50,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 26,500,000	• Քաղաքապետարանի բյուջե • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ

Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, ՄՖՀ-ներ/դոնորներ, ՀՀ կառավարություն

Նույնականացման համար
A_SW_03

Անվանում՝ Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն
Թափոնների հավաքման և դրանց վճարային գործող համակարգերի վերանայում

Գյումրու քաղաքապետարանն ընդունել է Թափոնների կառավարման ինտեգրված ծրագիր, սակայն անհրաժեշտ է իրականացնել թափոնների հավաքման գործող համակարգի վերանայում՝ շեշտը դնելով թափոնների հավաքման մեքենաների առկա շարժակազմի ու սարքավորումների վրա: Պետք է գնահատվեն թափոնների հավաքման համար նախատեսված մեքենաների և աղբարկղերի ու բեռնարկղերի քանակն ու վիճակը՝ երկու հոսքերի (այն է՝ վերամշակման ենթակա աղբ, մնացորդային աղբ, ինչպես նաև հնարավոր օրգանական թափոններ) հավաքումն ապահովելու համար պահանջվող բարելավումների անհրաժեշտությունը պարզելու նպատակով: Որպես այս գործողության մաս՝ նաև կպահանջվի վերանայել թափոնների հավաքման ներկայիս վճարային համակարգը, ինչպես նաև սահմանել վճար թափոններով աղտոտման համար:

Վերամշակման ենթակա թափոնների համար առանձին հավաքման համակարգի գործարկում

Վերամշակման ենթակա թափոնների առանձին հավաքման համար կարող են կիրառվել տարբեր համակարգեր տարբեր արդյունքներով: Դա ներառում է վերամշակման ենթակա թափոնների պահման համար նախատեսված լրացուցիչ աղբամանների տեղադրում կամ հատուկ գունավոր պարկերի օգտագործում, որոնք տեղադրվում են մնացորդային աղբի համար նախատեսված աղբամաններում: Ամենահամապատասխան համակարգի կիրառումը կախված է այն գործարանից, որտեղ թափոնները մշակման են ենթարկվելու: Այնուամենայնիվ, նախընտրությունը պետք է տրվի թափոնների աղբյուրների՝ ավելի մեծ թվով հոսքերի բաժանմանը, քանի որ վերջինս փոխկապակցված է վերամշակման ավելի բարձր ցուցանիշների հետ. մեկ հոսքով վերամշակման ենթակա աղբի հավաքումը խորհուրդ է տրվում միայն այն ժամանակ, երբ երկու հոսքով հավաքման համակարգի կիրառումը գործնականում անհնար է: Որոշ համայնքներում հիմնվել են վերամշակման կենտրոններ (այսպես կոչված «կանաչ կղզյակներ»), սակայն արդյունքները հիասթափեցնող են. ոչ հստակ ձևակերպումների հետևանքով դրանք միանգամից սկսել են օգտագործվել որպես ՔԿԹ-ների համար նախատեսված խառը բեռնարկղեր, ուստի այս գործողության շրջանակներում պետք է հաշվի առնել այդ փորձը՝ դասեր քաղելով դրանից:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն, քաղաքացիների ներգրավվածություն ու մասնակցություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողների համար, աշխատատեղերի ստեղծում • Բնապահպանական՝ ջրային ռեսուրսների և հողի բարելավված որակ
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	

Նույնականացման համար **A_SW_03**		
Անվանում՝ Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում		
Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում		
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում		
Կապիտալ ծախսեր (եվրո) 1,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 530,000,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 100,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 530,000,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** ՄՖՀ-ներ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, մասնավոր հատված, ՀԿ-ներ, ՀՀ կառավարություն

Նույնականացման համար
A_SW_04

Անվանում՝ Քաղաքային կոշտ թափոնների հեռացման և վերամշակման նոր ենթակառուցվածքի կառուցում

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն

Հատուկ նախագծված աղբավայրի (այդ թվում՝ երկշերտանի աղբավայր, որը բարելավում և վերագործարկում է աղբավայրի գազահավաքման և վերականգնման, ինչպես նաև զտահեղուկի հավաքման ու մշակման համակարգը) կառուցումը Գյումրու համար կարճաժամկետ և միջնաժամկետ առաջնահերթություն է: Հնարավոր տարբերակները ներառում են աղբի տեսակավորման գործարանի (ԱՏԳ), ջերմային մշակման կայանքներ (օրինակ՝ թափոններից էներգիայի ստացման), ինչպես նաև օրգանական թափոնների վերամշակման կայանքներ (օրինակ՝ անաէրոբ մշակում (ԱՄ)): Այս գործողությունն անդրադառնում է Գյումրիում բաց աղբավայրերի հետևանքով առաջացած օդի աղտոտվածությանը և տարածվող տհաճ հոտին վերաբերող մտահոգություններին: Կստեղծվի տեսակավորման և վերամշակման ընդհանուր համակարգ, ինչի արդյունքում եկամուտները կվերադառնան ՔԿԹ-ների կառավարման համակարգ (ՔԿԹ-ների կառավարման տարեկան ծախսերի 10%-ից ավելի): Կատարյալ պայմաններում մշակման նոր ենթակառուցվածքի ստեղծումը պետք է հիմնված լինի թափոնների մշակման ու հեռացման մասով տեխնիկատնտեսական հիմնավորման արդյունքների, առաջարկվող լրացուցիչ գործողության (A SW 01), ինչպես նաև թափոնների վերաբերյալ տվյալների հավաքագրման վրա:

Գործողության իրականացումը վերահսկելու համար դիտարկվել են հետևյալ փուլանիշները.
• 2022 թ.՝ Նախագծված աղբավայրի շինարարության ավարտ.
• 2025 թ.՝ ԿԿԹ մշակման ենթակառուցվածքի ընթացիկ շինարարություն (օրինակ ՝ նյութերի վերամշակման գործարան /MRF –Material Recovery Facility/);
2027թ.՝ ԿԿԹ մշակման ենթակառուցվածքի շինարարության ավարտ:

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)	• Սոցիալական՝ բարելավված անվտանգություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողների համար, աշխատատեղերի ստեղծում և տնտեսական աճ • Բնապահպանական՝ ջրային ռեսուրսների, հողի և օդի բարելավված որակ, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
50,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 26,500,000,000	5,000,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)**	• ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ • Մասնավոր հատված

	2,650,000,000	
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2027թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** ՄՖՀ-ներ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, մասնավոր հատված, ՀՀ կառավարություն

Նույնականացման համար A_SW_05		
Անվանում՝ ՔԿԹ մորֆոլոգիայի ուսումնասիրություն և վերամշակման ենթակա նյութերի շուկայական հետազոտություն և թափոնների որակի վերաբերյալ արձանագրությունների մշակում		
Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ		
Նկարագրություն Շուկայական և ոլորտային զարգացումը խթանելու նպատակով կարևոր է ստեղծել տեղական շուկա վերամշակման ենթակա նյութերի համար: Ուստի պետք է հիմնական թիրախային նյութերին առաջնահերթություն տալուն ուղղված ուսումնասիրություն իրականացնել՝ նախ գնահատել քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կազմությունը (մորֆոլոգիան), ապա սահմանել վերամշակման շուկայի համար նախնական թիրախ նյութերը : Այդ ուսումնասիրությունը կիրականացվի այս գործողության շրջանակներում, որի արդյունքում նաև կմշակվեն թափոնների որակի վերաբերյալ արձանագրություններ՝ կիրառելով համագործակցային գործընթաց ու հիմնվելով շահագրգիռ կողմերի լայն ներգրավվածության վրա, որպեսզի ապահովվի վերամշակման ենթակա նյութերի՝ որպես նոր ռեսուրսների օգտագործում արդյունաբերության մեջ: Այս գործողությունը փոխկապակցված է վերամշակման ենթակառուցվածքի ստեղծման հետ, ինչպես առաջարկվում է A SW 04-ում, սակայն դրա ստեղծման հետ կապված ծախսերը ներառված չեն կապիտալ ծախսերի նախահաշվի մեջ:		
Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)		**Հիմնական օգուտներ** • Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն, քաղաքացիների ներգրավվածություն ու մասնակցություն, ինչպես նաև սոցիալական դիմակայունություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողների համար, աշխատատեղերի ստեղծում • Բնապահպանական՝ ջրային ռեսուրսների, հողի և օդի բարելավված որակ, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ
SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)		
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում		
SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում		
Կապիտալ ծախսեր (եվրո) 1,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 530,000,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 300,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 159,000,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և դոնորներ
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** մասնավոր հատված	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզային վարչակազմ, ՄՖՀ-ներ

Նույնականացման համար A_SW_06	
Անվանում՝ Պարբերաբար իրականացնել թափոնների կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված արշավներ (5R)	
Դասակարգում՝ Իրազեկում, ցուցադրում և ինստիտուցիոնալ զարգացում	
Նկարագրություն **Քաղաքապետարանում հիմնել թափոնների հարցերով զբաղվող բաժին** Անհրաժեշտ է Գյումրու քաղաքապետարանում հիմնել թափոնների հարցերով զբաղվող բաժին, որը պատասխանատու կլինի՝ Գյումրիում թափոնների հավաքման, վերամշակման և հեռացման համար, իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված այնպիսի ռազմավարություն մշակելու համար, որով հնարավոր կլինի բնակչությանը տեղեկացնել շրջակա միջավայրի վրա թափոնների ոչ ճիշտ կառավարման հետևանքով առաջացած ազդեցության և այն մասին, թե ինչ կարող են անել քաղաքացիները՝ այդ ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար: Թափոնների վարչության կողմից իրականացվելիք որոշ գործառույթները կներառեն՝ թափոնների սակագների սահմանումը, թափոնների հավաքման պլանավորումը և թափոնների օբյեկտների կառավարումը: Անհրաժեշտ կլինի իրականացնել աշխատակիցների կարողությունների զարգացում, իսկ հարկ եղած դեպքում նաև վարձել լրացուցիչ անձնակազմ: Առաջարկվում է, որ ստորև նկարագրված «Կանաչ քաղաքի իրազեկման կենտրոնը» (ԿՔԻԿ) աջակցի քաղաքապետարանին համապատասխան փորձաքննությամբ: **Իրականացնել թափոնների կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված կանոնավոր տեղեկատվական արշավներ** Կստեղծվի ԿՔԻԿ, որը կաջակցի Գյումրու՝ այս գործողությամբ սահմանվող՝ թափոններով զբաղվող բաժնին՝ քաղաքացիներին շրջակա միջավայրի վրա թափոնների կառավարման ազդեցության վերաբերյալ տեղեկատվական արշավներ մշակելու և իրականացնելու համար: Այդ տեղեկատվական արշավների ընթացքում հատուկ ուշադրություն կդարձվի վերամշակման ենթակա աղբի աղբյուրների բաժանմանը և թափոնների առավելագույն նվազեցմանն ուղղված միջոցառումներին: Իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված արշավների միջոցով կոշտ թափոնների նվազեցման, կրկնակի օգտագործման, տեսակավորման ու վերամշակման խթանումը ներկայացնում են ԿՔԳԾ-ի ցուցանիշների տվյալների շտեմարան ներառված երկու «Արձագանքի» ցուցանիշները: Քաղաքապետարանը ԿՔԻԿ-ի հետ համատեղ կմշակի և կիրականացնի նման արշավներ, որտեղ ԿՔԻԿ-ը կստանձնի նաև կամավորներին, ՀԿ-ներին, ուսանողներին և լրատվամիջոցներին ներգրավելու դերը: Քարոզարշավը կկիրառի միջազգայնորեն տարածված 5R սկզբունքը՝ 1. Reduce – Նվազեցնել 2. Reuse – Վերօգտագործել, 3. Recycle – Վերամշակել, 4. Recover – Վերականգնել, 5. Residue management – Մնացորդների կառավարում:	
Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**

<table>
<tr><td colspan="2">SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների նվազեցված քանակություն (տեղական և ամբողջ աշխարհում տարածված աղտոտիչներ)</td><td rowspan="3">• Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն, քաղաքացիների ներգրավվածություն ու մասնակցություն, ինչպես նաև սոցիալական դիմակայունություն
• Տնտեսական՝ աշխատատեղերի ստեղծում
• Բնապահպանական՝ ջրային ռեսուրսների, հողի և օդի բարելավված որակ, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների նվազեցված մակարդակ</td></tr>
<tr><td colspan="2">SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում</td></tr>
<tr><td colspan="2">SO_SL Պաշտպանվող, պահպանվող, բազմազանեցված և բարելավված բնական ակտիվներ, այդ թվում՝ կանաչ և կապույտ ենթակառուցվածքներ, քաղաքի ողջ տարածքում</td></tr>
<tr><td>Կապիտալ ծախսեր (եվրո)
220,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
116,600,000</td><td>Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)
50,000
Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)
26,500,000</td><td>Ֆինանսավորման տարբերակներ
• Քաղաքապետարանի բյուջե
• ՄՖՀ-ներ և դոնորներ</td></tr>
<tr><td colspan="3">Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.</td></tr>
<tr><td>Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին</td><td>Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝ ՄՖՀ-ներ</td><td>Հիմնական շահագրգիռ կողմեր՝ Շիրակի մարզային վարչակազմ, մասնավոր հատված, ընդհանուր հանրություն</td></tr>
</table>

<<Գյումրին կունենա մաքուր ջրի մատակարարում, ԵՄ չափանիշներին համապատասխանող ջրահեռացման և անձրևաջրերի հեռացման՝ բոլորին հասանելի, արդյունավետ համակարգ: Ջրի կենցաղային ու ոչ կենցաղային օգտագործման վարքագիծը նույնպես կբարելավվի:>>

5.2.5. Ջուր

Գյումրու ջրային ոլորտի համար ԿՔԳԾ-ի գործընթացի միջոցով մշակվել է տասներկու գործողություն քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի հետ համատեղ: Տասներկուսից տասը ներառված են գործողությունների առաջնահերթ ցանկում, իսկ մնացած երկուսը ներկայացվում են որպես լրացուցիչ գործողություններ:

Ջրային ոլորտի մասով Գյումրու համար սահմանված գործողությունները նպատակ ունեն քաղաքի մեծ մասում ընդլայնելու անվտանգ ու հուսալի ջրամատակարարումը, ջրահեռացման համակարգը, ինչպես նաև այն ավելի լավ կապելու կեղտաջրերի մաքրման վերանորոգված և ընդլայնված կայանքին, ինչը կհանգեցնի գետաջրերի որակի բարձրացման ու էկոհամակարգերի բարելավման: Ստորգետնյա ջրերի մատակարարման, կեղտաջրերի հեռացման և ջրահեռացման համակարգերի ցանցերի մշակումը կհամակարգվի քաղաքում կանաչ տարածքները ընդլայնմանը միտված ծրագրերի միջոցով՝ քաղաքային կանաչ ենթակառուցվածքի համար կայուն քաղաքային ջրահեռացման և բնահեն լուծումներ ներառելով:

Բարելավված քաղաքային ջրի որակը, կեղտաջրերի հեռացման և ջրահեռացման ենթակառուցվածքը կհանգեցնեն բնակիչների կենսապայմանների բարելավման, կաջակցեն տնտեսական աճին, կնվազեցնեն ոչ պատշաճ սանիտարական մաքրման հետևանքով առաջացող առողջական խնդիրները, ինչպես նաև կմեծացնեն դիմակայունությունը հեղեղների և կլիմայական փոփոխությունների նկատմամբ, վերջինս հաճախ կարող է դառնալ սաստիկ տեղումների և օդի ջերմաստիճանի բարձրացման պատճառ, որոնց ազդեցությունը կարելի է որոշ չափով մեղմել ստվեր ու ծորանցում ապահովող բուսականության միջոցով:

Ջրերի և կեղտաջրերի ենթակառուցվածքի կառուցումը բավականին թանկ է և կարող է խոչընդոտել այնպիսի նպատակների իրականացումը, ինչպիսիք են տրանսպորտն ու քաղաքաշինությունը, քանի որ քաղաքում ճանապարհներ և որոշակի տարածքներ փորելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Այդ պատճառով գործողությունները պետք է զգուշորեն պլանավորել՝ ամենաարդյունավետ միջամտություններին առաջնահերթություն տալու նպատակով: Պլանավորումը պետք է հիմնվի ստորգետնյա և վերգետնյա առկա ակտիվների տեղանքի ու վիճակի պատշաճ ընկալման վրա:

Հետևաբար, առաջին առաջադրանքը կլինի մշակել ԱՏՀ և ակտիվների կառավարման համակարգեր, որոնք կհիմնավորվեն ուսումնասիրություններով և ջրերի ու կեղտաջրերի ցանցերի աշխատանքը հսկելու մշտադիտարկումներով: Ջրամատակարարման ցանցում ջրաչափերի տեղադրումը հնարավորություն կտա հասկանալու աշխատանքը տեղական մակարդակով՝ սպառողների կողմից գրանցված ցուցմունքների համեմատությամբ: Արտահոսքի ուսումնասիրությունները կարող են օգնել վթարված խողովակներ հայտնաբերելու ու նպատակային նորոգումներ իրականացնելու հարցում: Ջրահեռացման համակարգի դեպքում հոսքերի ուսումնասիրությունը կարող է օգնել համակարգի աշխատանքը հասկանալուն, իսկ հոսքերի ու բեռնվածության ուսումնասիրությունների արդյունքում տեղեկություններ կտրամադրվեն կեղտաջրերի մաքրման գործընթացների մշակման համար: Անհրաժեշտ է կիրառել համակարգչային մոդելավորման համակարգեր՝ այդ տեղեկատվությունը մեկնաբանելու և ճարտարագետներին արդյունավետ լուծումներ պլանավորելու ու մշակելու հնարավորություն տալու համար: ԱՏՀ և ակտիվների կառավարման համակարգերը կարող են նաև միացվել սպառողների կառավարման համակարգերին՝ ամբողջ տեղեկատվության կապվածությունը, հաշիվների դուրսգրման, ինչպես նաև անհատ ու առևտրային սպառողներից եկամուտների հավաքագրման արդարացիությունն ու համակողմանիությունն ապահովելու համար:

Ջրային ենթակառուցվածքի ոլորտում խոշոր ներդրումների լավագույն ֆինանսավորման ու պայմանագրերի կնքման մասով առկա են բավականին բարդ մարտահրավերներ: Դրանք եկամուտ ստեղծող հուսալի ակտիվներ են, և պատշաճ կարգավորող միջավայրի պարագայում հնարավոր է պետական ու մասնավոր կապիտալի համատեղ կիրառում՝ կոնցեսիոն պայմանագրերի միջոցով ներդրումները ֆինանսավորելու և ջրային ծառայությունների արդյունավետ շահագործումը խրախուսելու համար: Այդ պատճառով նաև ներառվում է Գյումրիում ջրային ծառայությունների հնարավոր իրավական ու ֆինանսական տարբերակները գնահատելուն ուղղված գործողություն:

Ջրերի և կեղտաջրերի հեռացման համակարգերի համար քաղաքը պետք է մշակի ակտիվների վիճակի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրեր՝ յուրաքանչյուր թաղամասում կատարողականի թիրախներն իրականացնելու նպատակով, մշակի գործողությունների ծրագրեր՝

հիմնվելով կոնցեսիոն պայմանագրերի ու իրավական շրջանակների համատեքստի վրա, ինչպես նաև մրցույթներ նախապատրաստի առկա ակտիվների նորոգման կամ նոր ակտիվների կառուցման համար՝ գործողությունների ծրագրերով նախատեսված փուլային ծրագրերն իրականացնելու նպատակով: Գործողությունների ծրագրերով պետք է նկատի առնվեն միջամտությունները հնգամյա ԿՔԳԾ-ում, ինչպես նաև քաղաքի ջրային ռեսուրսների կառավարման և կլիմայական փոփոխություններին հարմարեցման քսանամյա գնահատման ու տեսլականի համատեքստում:

Գործողությունների ծրագրերն իրականացվելու են նորոգումների ու ակտիվների ընդլայնման պայմանագրերի միջոցով՝ փուլային ծրագրերին համապատասխան: Կապալառուների և հենց ակտիվների կատարողականները կանոնավոր կմշտադիտարկվեն, իսկ դրանց արդյունքները կկիրառվեն՝ ծրագրերը հետագա փուլերի համար վերանայելու ու հարմարեցնելու՝ նախնական կամ վերանայված թիրախներն ապահովելու նպատակով: Քաղաքային կանաչ ենթակառուցվածքի բաղադրիչների պարագայում սա կարող է այլ քաղաքաշինական տարբերակների համար ավելի լուրջ համակարգում պահանջել և դասվել ջրերի ու կեղտաջրերի ակտիվներից տարբերվող ինստիտուցիոնալ պարտականությունների շարքում:

Աղյուսակ 5.7. Ջրին առնչվող գործողություններ

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
Առաջնահերթ գործողություններ			
A_WR_01	Գյումրու ջրամատակարարման ցանցի ենթակառուցվածքի և ակտիվների համար գույքագրման և ԱՏՀ-ի (GIS) նախապատրաստում	SO_WR	Չհաշվառված ջրի մինչև 25-35% նվազեցում: ԱՏՀ-ում ներառված ջրային ռեսուրսների, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվության 100% ավելացում մինչև 2021թ.:
A_WR_02	Ջրամատակարարման և ջրի պահանջարկի վերաբերյալ բարելավված տվյալներ և վերլուծություն	SO_WR	Չհաշվառված ջրի մինչև 25-35% նվազեցում, ԱՏՀ-ում ներառված ջրային ռեսուրսների, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվության 100% ավելացում մինչև 2021թ., ջրի սպառումը քաղաքի ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով, կենցաղային օգտագործողների դեպքում ջրի սպառման օրական մինչև 120 լիտր նվազեցում յուրաքանչյուր շնչի հաշվով:
A_WR_03	Արտահոսքի նվազեցման գործողությունների ծրագրի (ԱՆԳԾ) մշակում	SO_WR SO_AR	Չհաշվառված ջրի մինչև 25-35% նվազեցում, ԱՏՀ-ում ներառված ջրային ռեսուրսների, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվության 100% ավելացում մինչև 2021թ., ջրամատակարարման ցանցերի ծածկույթը և արդյունավետությունը պլանների և ներդրումների միջոցով բարելավվում են 75%-ով, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև 12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների մինչև 12% նվազեցում:

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
			ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորման ավելացում՝ ԱՌՆ-ի մասով տեղական ծրագրերի իրականացման համար բավարար մակարդակով:
A_WR_04	ԱՆԳԾ-ի իրականացման համար իրավական և ֆինանսական մեխանիզմների մշակում	SO_WR SO_AR	Չհաշվառված ջրի մինչև 25-35% նվազեցում, ԱՏՀ-ում ներառված ջրային ռեսուրսների, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվության 50% ավելացում մինչև 2021թ., ջրամատակարարման ցանցերի ծածկույթը և արդյունավետությունը պլանների և ներդրումների միջոցով բարելավվում են 75%-ով, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների մինչև 12% նվազեցում, ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորման ավելացում՝ ԱՌՆ-ի մասով տեղական ծրագրերի իրականացման համար բավարար մակարդակով:
A_WR_05	Մատակարարման համակարգի՝ արտահոսքի ամենաբարձր մակարդակ ունեցող մասերի նորոգում և վերականգնում	SO_WR SO_AR	Չհաշվառված ջրի մինչև 25-35% նվազեցում, ԱՏՀ-ում ներառված ջրային ռեսուրսների, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվության 50% ավելացում մինչև 2021թ., Ջրամատակարարման ցանցերի ծածկույթը և արդյունավետությունը պլանների և ներդրումների միջոցով բարելավվում են 75%-ով, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների մինչև 12% նվազեցում:
A_WR_06	Պատրաստել գույքագրում և ԱՏՀ (GIS) կեղտաջրերի ենթակառուցվածքի համար	SO_WR SO_SL SO_AR	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թվի մինչև 40% նվազեցում՝ 2017թ. մակարդակի համեմատությամբ, ԱՏՀ-ում ներառված ջրային ռեսուրսների, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվության 50% ավելացում մինչև 2021թ.:

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
A_WR_07	Կեղտաջրերի վերաբերյալ գործողությունների ծրագրի և մրցութային փաստաթղթերի կազմում ենթակառուցվածքի առաջարկվող արդիականացման համար	SO_WR SO_SL SO_AR	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով տարեկան քանակի 50% նվազեցում 2017թ. մակարդակի համեմատությամբ, կիրառելի ազգային չափանիշների համաձայն՝ մաքրվող կենցաղային և առևտրային ԿՋ-ի տոկոսի մինչև 30% ավելացում, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների մինչև 12% նվազեցում, ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորման ավելացում՝ ԱՌՆ-ի մասով տեղական ծրագրերի իրականացման համար բավարար մակարդակով
A_WR_08	Ջրհեռ համակարգերի վերականգնում և ընդլայնում	SO_WR SO_SL SO_AR	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի՝ մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով տարեկան քանակի 50% նվազեցում 2017թ. մակարդակի համեմատությամբ, աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թվի մինչև 40% նվազեցում 2017թ. մակարդակի համեմատությամբ, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում:
A_WR_09	Կեղտաջրերի մաքրման համակարգի վերականգնում և ընդլայնում	SO_WR SO_SL SO_AR	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, Կիրառելի ազգային չափանիշների համաձայն՝ մաքրվող կենցաղային և առևտրային ԿՋ-ի տոկոսի մինչև 30% ավելացում, աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թվի մինչև 40% նվազեցում 2017թ. մակարդակի համեմատությամբ, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում,
A_WR_10	Կանաչ տարածքներում	SO_WR SO_GSBIO	Անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով տարեկան քանակի 50% նվազեցում 2017թ. մակարդակի համեմատությամբ:

Գործողության նույնացուցիչ	Գործողության անվանում	Ռազմավարական նպատակներ	Համապատասխանեցում 2025թ. միջնաժամկետ թիրախներին
	հանրային օգտագործման ջրի ենթակառուցվածքի արդիականացում	SO_AR	Ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում:
Լրացուցիչ գործողություններ			
A_WR_11	Ստեղծել պիլոտային տարածք «Խելացի քաղաք» գործողության համար	SO_WR SO_GSBIO SO_AR	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում, ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների մինչև 12% նվազեցում, ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորման ավելացում ԱՌՆ-ի մասով տեղական ծրագրերի իրականացման համար բավարար մակարդակով
A_WR_12	Մշակել գործողություն-ների ծրագիր գետերի համար	SO_WR SO_GSBIO SO_AR	Ամոնիումի (NH_4) կոնցենտրացիայի մինչև 0.4-1.2 մգ/լ նվազեցում գետերում և լճերում , ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի մինչև12% նվազեցում, բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված գնահատված տնտեսական վնասի՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմասի մինչև 1% նվազեցում, ռիսկի ենթակա տնային տնտեսությունների մինչև 12% նվազեցում, ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորման ավելացում՝ ԱՌՆ-ի մասով տեղական ծրագրերի իրականացման համար բավարար մակարդակով :
A_WR_13	Ջրօգտագործման վարքագծի թիրախներ բնակիչների համար	SO_WR SO_AR	Հաղորդակցման և իրազեկման արշավի մշակում ջրի խնայողության ու կրկնակի օգտագործման համար, ջրի սպառման՝ քաղաքի ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով մինչև 00.4 մ^3/տարի նվազեցում, կենցաղում օգտագործվող ջրի սպառման օրական մինչև 120 լիտր նվազեցում յուրաքանչյուր շնչի հաշվով:



Գծապատկեր 5.5. Ջրին առնչվող գործողությունների ծրագիր

Նույնականացման համար
A_WR_01

Անվանում՝ Գյումրու ջրամատակարարման ցանցի ենթակառուցվածքի և ակտիվների համար գույքագրման և ԱՏՀ-ի նախապատրաստում

Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ

Նկարագրություն

Այս գործողությունը կներառի ջրային ենթակառուցվածքի վերաբերյալ ԱՏՀ եղանակով տվյալների ցուցադրման կենտրոնական գույքագրման (տվյալների շտեմարանի) մշակում: Այն հիմնված կլինի առկա տեղեկատվության համադրման և ակտիվների վիճակի ու կատարողականի տվյալների բացակայության բացահայտման վրա: Այնուհետև անհրաժեշտության դեպքում բացթողումների ուսումնասիրության արդյունքների հիման վրա կիրականացվեն ակտիվների ուսումնասիրություններ՝ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի վիճակն ու կատարողականը որոշելու ու գնահատելու համար: Գույքագրումը կհամալրվի սպառողների և ակտիվների կառավարման համակարգերով, որոնք նույնպես կսահմանվեն այս գործողությամբ: Տվյալների շտեմարան ներառման ենթակա ջրամատակարարման ենթակառուցվածքի և ակտիվների շրջանակը հետևյալն է՝ ջրային ռեսուրսներ (ջրհորերից և ջրառներից), տեղափոխում դեպի մաքրման ու աղտահանման համակարգեր, ջրամաքրման համակարգերի վիճակ, բաշխման ցանց, պոմպակայաններ, բաշխիչ ջրամբարներ, որոնք կապվում են առևտրային կամ կենցաղային սպառողներին: Այս գործողությամբ անդրադարձ է կատարվում ՉՀՋ-ի տեղանքը և ջրի կորստի համար իրավական ու ֆինանսական առումով պատասխանատվություն կրողներին բացահայտելու պահանջին (աշխատաժողով 002):

Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին)	**Հիմնական օգուտներ**
SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում	• Սոցիալական՝ ուժեղացված սոցիալական դիմակայունություն • Տնտեսական՝ աշխատատեղերի ստեղծում • Բնապահպանական՝ բարելավված ջրային ռեսուրսներ

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման տարբերակներ**
150,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 79,500,000	20,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 10,600,000	• Քաղաքապետարանի բյուջե • ՄՖՀ-ներ և դոնորներ

Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.

Գործողության պատասխանատու՝	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝**	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝**
Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	մասնավոր հատված, ՄՖՀ-ներ/դոնորներ

Նույնականացման համար A_WR_02		
Անվանում՝ Ջրամատակարարման և ջրի պահանջարկի վերաբերյալ բարելավված տվյալներ և վերլուծություն		
Դասակարգում՝ Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ		
Նկարագրություն Այս գործողությունը կբարելավի ջրի չափումը՝ ցանցի ռազմավարական կետերում ջրաչափերի տեղադրման և արտահոսքի ու ապօրինի այլ միացումներից ՉՀՋ-ների օգտագործման մակարդակը գնահատելու նպատակով այդ չափիչներից ստացված տվյալներն օգտագործելու միջոցով: A WR 01-ի շրջանակներում մշակված ԱՏՀ-ի և հավաքված չափման տվյալների հիման վրա՝ կկիրառվեն ջրամատակարարման ցանցի մոդելավորման գործիքներ՝ համակարգում ջրի հոսքը, ինչպես նաև ընդհանուր և թաղամասերի մակարդակով առաջարկ-պահանջարկ հարաբերակցությունը հասկանալու համար: Դա կօգտագործվի ջրի կորստի ամենաբարձր մակարդակ կամ ոչ բավարար վիճակում գտնվող ակտիվներ ունեցող տարածքները որոշելու համար: Նաև կիրականացվեն արտահոսքի նպատակային ուսումնասիրություններ՝ արտահոսքի կետերը որոշելու համար ձայնային ուսումնասիրությունների ու այլ տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչպես նաև կիրականացվեն ջրի որակի ուսումնասիրություններ: Այս գործողությունը կընդլայնվի՝ ապահովելով սպառողների կառավարում, որը հատուկ նախատեսված է առաջարկ-պահանջարկի մասով կանխատեսումների համար՝ ընդլայնվող ծածկույթի հիման վրա: Այս գործողությամբ անդրադարձ է կատարվում ՉՀՋ-ի տեղանքը և ջրի կորստի համար իրավական ու ֆինանսական առումով պատասխանատվություն կրողներին բացահայտելու պահանջին (աշխատաժողով 002):		
Բնապահպանական կատարողական (համապատասխանեցում ԿՔԳԾ-ի նպատակներին) SO_WR Ջրամատակարարման, ջրի (այդ թվում՝ մակերևութային ջրերի) որակի և օգտագործման արդյունավետության բարելավում ու չհաշվառված ջրի ընդհանուր կորստի նվազեցում		**Հիմնական օգուտներ** • Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն • Տնտեսական՝ տնտեսական եկամուտներ ներդրողի համար • Բնապահպանական՝ բարելավված ջրային ռեսուրսներ
Կապիտալ ծախսեր (եվրո) 400,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 212,000,000	**Տարեկան շահագործման ծախսեր (եվրո)** 60,000 **Տարեկան շահագործման ծախսեր (ՀՀ դրամ)** 31,800,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2023թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Իրականացնող գործընկեր (գործընկերներ)՝** «Վեոլիա Ջուր» ՓԲԸ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Գյումրու քաղաքապետարան, ՀՀ կառավարություն, մասնավոր հատված, ՄՖՀ-ներ/դոնորներ

Նույնականացման համար
A_WR_03

Վերնագիր: Հոսակորստի նվազեցման գործողությունների ծրագրի (ՀՆԳԾ) մշակում

Դասակարգում՝ Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր

Նկարագրություն

Այս գործողությամբ մշակվում է ՀՆԳԾ, որը նախատեսված է 20 տարի ժամանակահատվածի համար: Այն կներկայացնի հնգամյա փուլային ծրագիր՝ հիմնված յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկված ռազմավարությունների վրա, հետևյալ խնդիրների հետ կապված.

- ջրային կորուստների նվազեցում/ՋԿ,
- դիմակայունության բարելավում,
- ջրամատակարարման հուսալիության և ջրի որակի բարելավում համակարգն ընդարձակելով՝ նոր հաճախորդներ ներգրավելու հաշվին,
- ակտիվների վերանորոգում և փոխարինում,
- ճնշման կառավարում:

ՀՆԳԾ-ն ներառելու է ակտիվների երկարաժամկետ կառավարման նախագիծ՝ համապատասխան գույքով և ակտիվների նախօրոք փոխարինման ծրագրով: Նախատեսվում է մշակել ակտիվների կառավարման թվային համակարգեր՝ հիմնված Իրերի ինտերնետ (IoT) տեխնոլոգիայի միջոցով ակտիվների վիճակի խելացի մոնիթորինգի վրա: Առաջարկվել է ՀՆԳԾ-ի նախապատրաստման ընթացքում ավելացնել առավել լուրջ հոսակորուստների նպատակային վերանորոգման աշխատանքը:

Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ)		**Հիմնական օգուտները**
SO_WR Ջրամատակարարման և ջրի որակի բարելավում (այդ թվում՝ մակերևութային ջրերի), արդյունավետ օգտագործում և ընդհանուր ջրային կորուստների նվազեցում		• Սոցիալական՝ կանաչ վարքագիծ և տեղեկացվածություն • Տնտեսական՝ տնտեսական շահույթը ներդրողի համար • Բնապահպանական՝ բարեկարգված ջրային ռեսուրսներ և դիմակայություն կլիմայի փոփոխության նկատմամբ
SO_AR Բնական աղետների նկատմամբ Գյումրիի սոցիալական, տնտեսական և ֆիզիկական ենթակառուցվածքների առավել բարձր դիմակայություն		
Կապիտալ ծախսեր (եվրո) 100,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 53,000,000	**Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)** 20,000 **Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)** 10,600,000	**Ֆինանսավորման այլընտրանքները** • Կառավարություն • ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ
Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2021 – 2022 թթ.		
Գործողության սեփականատեր Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, Գյումրիի քաղաքապետարան	**Իրականացման գործընկեր/ներ՝** Վեոլիա Ջուր ՓԲԸ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Գյումրիի քաղաքապետարան, կառավարություն, ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ, մասնավոր հատված

Նույնականացման համար A_WR_04		
Վերնագիրը՝ ՀՆԳԾ-ն գործարկելու իրավական և ֆինանսական մեխանիզմները		
Դասակարգումը՝ Չափանիշներ, ուղեցույցներ և կանոնակարգեր		
Նկարագրություն A WR 03 –ում առաջարկվող ՀՆԳԾ-ն ուժի մեջ դնելու իրավական և ֆինանսական մեխանիզմները կմշակվեն Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և Գյումրու ջրամատակարարման ընկերության միջև կոնցեսիոն համաձայնագրի ընդունման ծրագրի հիման վրա: Կվերլուծվեն ՀՆԳԾ-ն գործարկելու իրավական և ֆինանսական առկա մեխանիզմները, և կառաջարկվեն նոր մեխանիզմներ: Տվյալ գործողությունը կապված է այն պահանջի հետ, որ պետք է սահմանվի, թե որտեղ են առաջանում ՋԿ-ներ, և ով է այդ կորուստների իրավական և ֆինանսական պատասխանատուն (սեմինար 002):		
Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ) SO_WR Ջրամատակարարման և ջրի որակի բարելավում (այդ թվում՝ մակերևութային ջրերի), արդյունավետ օգտագործում և ընդհանուր ջրային կորուստների նվազեցում SO_AR Բնական աղետների նկատմամբ Գյումրու սոցիալական, տնտեսական և ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների առավել բարձր դիմակայություն		**Հիմնական օգուտները** • Սոցիալական՝ բարեկարգված սոցիալական դիմակայություն • Տնտեսական՝ տնտեսական շահույթ ներդրողի համար • Բնապահպանական՝ բարեկարգված ջրային ռեսուրսներ
Կապիտալ ծախսեր (եվրո) 50,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 26,500,000	**Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)** 0 **Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)** 0	**Ֆինանսավորման այլընտրանքները** • Կառավարություն • ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ
Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2020 – 2022թթ.		
Գործողության սեփականատեր Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, Գյումրու քաղաքապետարան	**Իրականացման գործընկեր/ներ՝** Վեոլիա Ջուր ՓԲԸ	**Հիմնական շահագրգիռ կողմեր՝** Գյումրու քաղաքապետարան, կառավարություն, ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ, մասնավոր հատված

Հղման համար
A_WR_05

Վերնագիր՝ Ջրամատակարարման համակարգի առավելագույն հոսակորուստ ունեցող մասերի վերանորոգում և վերականգնում

Դասակարգում՝ Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում

Նկարագրություն

Քայլ 1. Իրագործելիության ուսումնասիրություն և գնումների նախապատրաստում

Ջրամատակարարման համակարգի վերականգնման համար կիրականացվի, ապա կօգտագործվի իրագործելիության ուսումնասիրություն, A WR 03-ում մշակված ՀՆԳԾ-ի հետ միասին՝ ջրամատակարարման համակարգի վերականգնման և ընդլայնման կապալառուների համար գնումների ընթացակարգ և մրցութային փաստաթղթեր նախապատրաստելու, ինչպես նաև հետազոտական ծառայություններին աջակցելու նպատակով: Աշխատանքը կիրականացվի կոնցեսիոն պայմանագրի համաձայն՝ փուլային ծրագրում:

Քայլ 2. Ջրամատակարարման համակարգի մասերի վերանորոգման և վերականգնման գնումներ:

Ջրամատակարարման համակարգի առավելագույն հոսակորստով մասերի վերանորոգման և վերականգնման պայմանագրերը կստորագրվեն մրցութային հիմունքներով՝ ՀՆԳԾ –ում մշակված մոտեցումն իրականացնելու համար: Անհրաժեշտ կլինի ներդնել ակտիվների կառավարման համակարգեր, բնորոշել ջրամատակարարման համակարգի առավելագույն հոսակորուստ ունեցող մասերը և սկսել վերանորոգման աշխատանքները: Ամենամեծ հոսակորուստների աշխատանքները կսկսվեն 2020 թվականին նվազագույն ծախսերով: Բոլոր հետազոտությունները, թաղամասային տարածքներով ջրաչափման աշխատանքներն ու մոդելավորումն ավարտելուց հետո կարելի է իրականացնել ՀՆԳԾ-ն և սկսել աշխատանքները՝ մրցութային գործընթացի համաձայն:

Քայլ 3. ՀՆԳԾ-ն իրականացնող կապալառուների աշխատանքի վերահսկումը:

Հոսակորուստների նվազեցման նպատակներով մոնիթորինգից ստացված հետադարձ կապի հիման վրա անհրաժեշտ կլինի նորացնել և ընդլայնել ՀՆԳԾ-ն և քաղաքի համար ներառել ակտիվների ներդրման ծրագիրը: Անհրաժեշտ կլինի հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են ջրի որակը, մատակարարման հուսալիությունը, ջրային կորուստների մակարդակը, և վերանայել դրանց նպատակները՝ հավաստիանալու համար, որ նրանք համապատասխանում են նոր իրավիճակին: Կապալառուների կողմից իրականացվող աշխատանքների որակը պետք է ենթարկվի շարունակական վերահսկման:

Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ)	**Հիմնական օգուտները՝**
SO_WR Ջրամատակարարման և ջրի որակի բարելավում (այդ թվում՝ մակերևութային ջրերի), արդյունավետ օգտագործում և ընդհանուր ջրային կորուստների նվազեցում:	• Սոցիալական՝ բարեկարգված սոցիալական դիմակայություն • Տնտեսական՝ տնտեսական շահույթ ներդրողի համար • Բնապահպանական՝ բարեկարգված ջրային ռեսուրսներ և դիմակայություն կլիմայի փոփոխության նկատմամբ
SO_AR Բնական աղետների նկատմամբ Գյումրու սոցիալական, տնտեսական և ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների առավել բարձր դիմակայություն	

Կապիտալ ծախսեր (եվրո)	**Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)**	**Ֆինանսավորման այլընտրանքները**
Հիմնական խնդիրը Գյումրիում օդի որակի մասին տեղական, բարձրորակ տվյալների բացակայությունն է: Ընդ որում որոշ տվյալներ առկա են, սակայն հարց է, թե արդյոք դրանք ամբողջական են կամ հուսալի: ԿՔԳԾ-ն առաջարկում է գործողություններ, որոնք մասնավորապես վերաբերում են օդի որակի՝ համայնքի մակարդակով վերահսկման անհրաժեշտությանը, ինչպես նաև ուղղիչ համակարգի ստեղծմանը՝ քաղաքի օդի որակի հետ կապված խնդիրներին անհապաղ արձագանքելու համար: Ըստ ԿՔԳԾ-ի առաջնահերթ գործողությունների՝ օդի որակի մոնիթորինգի համակարգը համայնքի մակարդակով ծրագրի առաջարկվող հիմնական գործողություններից է:

Մյուս գործողությունները, որոնք ներկայացված են որպես միջոլորտային միջոցառումներ, վերաբերում են հողի որակին, որը պետք է իրականացվի միջազգային կանոնակարգերի ընդունմամբ և ելակետային տվյալների ուսումնասիրությամբ, որի նպատակն է ավելի խորը հասկանալ քաղաքի կենսաբազմազանության տեսակները և մակարդակները, թեև այս երկուսն էլ ներառված չեն առաջնահերթությունների ցանկում:

Ծրագրի հիմնական բաղադրիչը կլիմայի փոփոխության նկատմամբ քաղաքի հարմարվողականությունն ու դիմակայությունն է: Որպես այդպիսին, ծրագիրը ներառում է այն գործողությունները, որոնք մասնավորապես վերաբերում են տվյալ տարածաշրջանում շրջակա միջավայրի մարտահրավերներին: Սա ներառում է ջրի, տրանսպորտի, կոշտ թափոնների և շենքերի, էներգիայի և լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների՝ կլիմայի պաշտպանության ծրագրի մշակումը: Այս դիագնոստիկական գործողությունների ծրագիրը քաղաքին հնարավորություն կտա հատկացնելու նպատակային ներդրումներ այն միջոցառումների համար, որոնք կավելացնեն քաղաքի՝ կլիմայի փոփոխությունների դիմակայությունը:

Աղյուսակ 5.9. Միջոլորտային գործողություններ

Գործողության հղումը	Գործողության վերնագիրը	Ռազմավարական նպատակները	Միջնաժամկետ նպատակների հետ համաձայնեցում 2025թ. համար
Առաջնահերթ գործողություններ			
A_AQGHG_01	Մշակել համայնքի օդի որակի վերահսկման համակարգ	SO_AQGHG	Օդի աղտոտման աղբյուրների բացահայտման և վերահսկման մասնաբաժնի մեծացում մինչև 30%
A_AR_01	Իրականացնել կլիմայի ռիսկի գնահատում ջրի, տրանսպորտի, կոշտ թափոնների և շինարարության, էներգիայի և լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների համար	SO_AR	Հանրային ռիսկային ենթակառուցվածքների նվազեցում մինչև 12%, ռիսկային տնային տնտեսությունների նվազեցում մինչև 12%, բնական աղետներից՝ ջրհեղեղ, երաշտ, երկրաշարժ առաջացած հաշվարկված տնտեսական վնասի նվազեցում՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, մինչև 1%, ավելացնել ԱՌՆ-ի համար նախատեսվող ֆինանսավորումը և բարելավել դիմակայությունը, ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում՝ մինչև տեղական ԱՌՆ-ի իրականացման համար անհրաժեշտ մակարդակը:
A_AR_02	Նախապատրաստել կլիմայի նկատմամբ Գյումրու ենթակառուցվածքի դիմակայության բարձրացման գործողությունների ծրագիր	SO_AR	Հանրային ռիսկային ենթակառուցվածքների նվազեցում մինչև 12%, ռիսկային տնային տնտեսությունների նվազեցում մինչև 12%, բնական աղետներից՝ ջրհեղեղ, երաշտ, երկրաշարժ, առաջացած հաշվարկված տնտեսական վնասի նվազեցում՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, մինչև 1%, ավելացնել ԱՌՆ-ի համար նախատեսվող ֆինանսավորումը և բարելավել դիմակայությունը, ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում՝ մինչև տեղական ԱՌՆ-ի իրականացման համար անհրաժեշտ մակարդակը:
A_AR_03	Մշակել արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործողությունների ծրագիր	SO_AR	Հանրային ռիսկային ենթակառուցվածքների նվազեցում մինչև 12%, ռիսկային տնային տնտեսությունների նվազեցում մինչև 12%, Բնական աղետներից՝ ջրհեղեղ, երաշտ, երկրաշարժ, առաջացած հաշվարկված տնտեսական վնասի նվազեցում՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, մինչև 1%,

Գործողության հղումը	Գործողության վերնագիրը	Ռազմավարական նպատակները	Միջնաժամկետ նպատակների հետ համաձայնեցում 2025թ. համար
			Ավելացնել ԱՌՆ-ի համար նախատեսվող ֆինանսավորումը և բարելավել դիմակայությունը ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում՝ մինչև տեղական ԱՌՆ-ի իրականացման համար անհրաժեշտ մակարդակը:
A_AR_04	Ներդրումներ կլիմայի փոփոխության հարմարվողականության և դիմակայության միջոցառումների համար	SO_AR	Հանրային ռիսկային ենթակառուցվածքների նվազեցում մինչև 12%, ռիսկային տնային տնտեսությունների նվազեցում մինչև 12%, բնական աղետներից՝ ջրհեղեղ, երաշտ, երկրաշարժ, առաջացած հաշվարկված տնտեսական վնասի նվազեցում՝որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, մինչև 1%, ավելացնել ԱՌՆ-ի համար նախատեսվող ֆինանսավորումը և բարելավել դիմակայությունը ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում՝ մինչև տեղական ԱՌՆ-ի իրականացման համար անհրաժեշտ մակարդակը:
Լրացուցիչ գործողություններ			
A_AQGHG_02	Ստեղծել օդի որակի ուղղիչ համակարգ	SO_AQGHG	Փոշու միջին տարեկան կուտակումների նվազեցում մինչև 0.15 μg/ մ^3, CO_2-ի միջին տարեկան արտանետումների նվազեցում՝ մեկ միավորի ՀՆԱ-ի 20%-ի չափով, CO_2-ի 2014թ.մակարդակի համարժեք արտանետումների նվազեցում՝ մեկ շնչի հաշվով մինչև 3.0 տ/տարի:
A_SL_01	Ընդունել և ուժի մեջ դնել հողի որակի միջազգային կանոնակարգերը	SO_SL	Աղտոտված և հնարավոր աղտոտվող տարածքների քանակի նվազեցում 40%-ով՝ 2017 թ. մակարդակի համեմատությամբ:
A_SL_02	Գնահատել հողի և օդի որակները և արդյունքներն ընդգրկել քաղաքի զարգացման համար որոշումներ կայացնելու մեջ	SO_SL	Աղտոտված և հնարավոր աղտոտվող տարածքների քանակի նվազեցում 40%-ով՝ 2017 թ. մակարդակի համեմատությամբ:
A_GSBIO_01	Ստեղծել քաղաքի կենսաբազմազանության ելակետային տվյալներ	SO_GSBIO	Ավելացնել թռչնատեսակների ուսումնասիրությունները



Նկար 5.7. Միջոլորտային գործողությունների ծրագիր

Նույնականացման համար՝
A_AQGHG_01

Վերնագիրը՝ Մշակել օդի որակի մոնիթորինգի համայնքային համակարգ

Դասակարգումը՝ Մոնիթորինգ, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ

Նկարագրությունը
Այս գործողությունը ներառում է օդի աղտոտման կառավարման համապատասխան համակարգի մշակումը և ներդրումը Գյումրիում օդի որակի հաշվետվություն տեղական կարիքների հիման վրա: Այն նաև ներառում է հետևյալ գործողությունների իրականացումը.

1. քաղաքը պետք է ստեղծի օդի որակի մոնիթորինգի համապատասխան համակարգ և օդի աղտոտվածության մոդելավորում, այդ թվում՝ օդի աղտոտման առցանց ինտերակտիվ քարտեզ, ինչպես նաև երթևեկության մոնիթորինգի մոդելավորում: Համակարգը պետք է հիմնված լինի քաղաքի օդի որակի տվյալների մասնագիտական վերլուծության կարիքների վրա՝ կապված քաղաքի զարգացման միտումների և կանաչ գործառնական գոտիների հետ:
2. Քաղաքը պետք է ձեռք բերի օդի աղտոտման՝ իր սեփական ստացիոնար/շարժական մոնիթորինգի համակարգը, որը հավաքում է կարճաժամկետ ժամանակահատվածի տվյալներ (օրինակ՝ 20 բոպեանոց ցուցանիշներ, որոնք կարող են համեմատվել EU/ WHO-ի, ինչպես նաև ազգային ստանդարտների հետ) իր բյուջեի սահմաններում կամ արտաքին առկա ֆինանսավորման միջոցով:
3. Քաղաքը պետք է աշխատանքի վերցնի տեխնիկական մասնագետների՝ ապահովելով նրանց անհրաժեշտ վերապատրաստումը, որը նրանց հնարավորություն կտա գործարկելու համակարգը: Արտաքին փորձագետները կներկայացնեն անհրաժեշտ սարքավորումների շրջանակը, մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ հիմնված քաղաքի կարիքների վրա, ինչպես նաև տեղական մոնիթորինգային համակարգի հետ խաչաձև հղումների անհրաժեշտությունը, հասարակական տեղեկատվության փոխանակումը/զեկուցումը և տվյալների՝ առցանց հարթակում հասանելի դարձնելը:

Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ)		**Հիմնական օգուտները**
SO_AQGHG Փոշու ծավալի նվազեցում և օդը աղտոտող այլ արտանետումների նվազեցում (տեղական և գլոբալ աղտոտող նյութեր)		• Սոցիալական՝ կանաչ վարքագիծ և տեղեկացվածություն, քաղաքացիների մասնակցություն և ներգրավում • Տնտեսական՝ տնտեսական ներգրավում և աշխատատեղերի ստեղծում • Բնապահպանական՝ ավելի բարեկարգված օդի որակ և ջերմոցային գազերի արտանետման նվազեցում
Կապիտալ ծախսեր (եվրո) 200,000 **Կապիտալ ծախսեր (եվրո)** 106,000,000	**Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)** 20,000 **Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)** 106,000,000	**Ֆինանսավորման այլընտրանքները** • Համայնքային բյուջե • Կառավարություն • ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ
Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2021 – 2023թթ.		
Գործողության պատասխանատու Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, Գյումրու քաղաքապետարան:	**Իրականացման գործընկեր/ներ՝** Կառավարություն	**Հիմնական շահագրգիռ կողմերը՝** Հիդրոմետ ծառայություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ

Նույնականացման համար՝ A_AR_01
Վերնագիրը՝ Իրականացնել ջրի, տրանսպորտի, կոշտ թափոնների, շինարարության, էներգիայի, լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների կլիմայի ռիսկի գնահատում
Դասակարգում՝ Ռազմավարություններ, նախագծեր, ծրագրեր
Նկարագրություն Հայաստանն աշխատել է մի շարք միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի և JICA-ի հետ՝բնական աղետների իր ռիսկերի գնահատման համար:Արդյունքները ներառում են 2018թ՝ Գյումրու աղետների ռիսկերի նվազեցման ծրագիրը (ԱՌՆ), որտեղ ներկայացված են կլիմայի հետ կապված վտանգները, ինչպես օրինակ՝ ցրտահարությունը, տեղումները, ուժեղ քամիները և անտառային հրդեհները, և դասակարգում են հարակից ռիսկերը, ինչպես օրինակ՝ ճանապարհների անսարք վիճակը և արտաքին լուսավորությունը: Այդուհանդերձ, պարզվում է, որ դեռևս առկա են խնդիրներ՝ կապված Գյումրու ջրամատակարարման, տրանսպորտի, կոշտ թափոնների, շինարարության, էներգիայի, լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների ավելի խորը և նպատակային մեկնաբանությունների հետ: Այս համատեքստում, համապատասխան քայլերի ընդունման մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով, գործողությունը ներկայացնում է չորս հիմնական արդյունք. • խոցելիության գնահատում, որը մանրամասն ներկայացնում է այս երեք ոլորտների դիմակայությունը կլիմայի մի շարք ռիսկերի նկատմամբ: • Մի շարք չափորոշիչների սահմանում, որոնք գործողության համար բնորոշում են հավանական «գործադրման» կետերը: • Հետագա խոցելիության գնահատում՝ օգտագործելով կլիմայի փոփոխության հեռանկարային կանխատեսումները: • Հնարավոր գործողությունների ցանկ, որոնք կարող են բարելավել դիմակայությունը և ստեղծել հարմարվողականության ներուժ: Գյումրու հիմնական խոցելի կողմերը ջրի, տրանսպորտի, շինարարության, էներգիայի, լուսավորության, կոշտ թափոնների ոլորտներն են, որը կլինի կլիմայի ռիսկի գնահատման հիմնական նպատակը՝ ներկայացնելով Գյումրիում առկա կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերն ու հնարավորությունները: Նախ՝ անհրաժեշտ կլինի իրականացնել Գյումրու ենթակառուցվածքների և ծառայությունների վրա կլիմայական երևույթների ազդեցությունների առկա տվյալների ու փաստերի նպատակային ուսումնասիրություններ տեղում, ապա՝ որոշել այն մի շարք չափորոշիչները, որոնք կարող են օգտագործվել՝ սահմանելու համար այն բեկումնային կետերը, որոնցից դուրս վտանգվում կամ փոփոխվում են ծառայությունների մակարդակները: Ապա անհրաժեշտ կլինի վերլուծել այն քանակական տվյալները, որոնք կապված են կլիմայի բացահայտված ռիսկերի հետ, որը հնարավորություն կտա կապ ստեղծելու կլիմայական տարբեր ռիսկերի (օրինակ՝ ջրհեղեղ, երկրաշարժ, տեղումներ և կարկուտ) և տնտեսական ազդեցությունների միջև: Այս գործընթացին պետք է մասնակցեն տեղական շահագրգիռ կողմերը, որոնք կարող են օգնել՝ ավելի խորը հասկանալու կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելի խնդիրները: Այս տվյալները, ինչպես նաև հնարավոր ռիսկերի փաստերը, կօգտագործվեն խոցելիության գնահատման համար, որը հետագայում կվերանայվի ենթակառուցվածքի ընթացիկ վիճակի համատեքստում, որն իր հերթին կունենա իր հետագա ազդեցությունը խոցելիության վրա: Ի վերջո, ստացված արդյունքները կարող են հիմք ծառայել՝ մշակելու այն հավանական միջոցառումների ցանկը, որի շնորհիվ կբարելավվի Գյումրու՝ կլիմայի նկատմամբ դիմակայությունը և կստեղծի հարմարվողականության ներուժ:

Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ)	**Հիմնական օգուտները**
SO_WR Ջրամատակարարման և ջրի որակի բարելավում (այդ թվում մակերևութային ջրերի), արդյունավետ օգտագործում և ընդհանուր ջրային կորուստների նվազեցում:	• Սոցիալական՝ բարեկարգված սոցիալական դիմակայություն և անվտանգություն • Տնտեսական՝ տնտեսական աճ

<table>
<tr><td colspan="2">SO_GSBIO Պահպանված, բարեփոխված և վերականգնված հողի որակ՝ քաղաքի ողջ տարածքում</td><td rowspan="2">• Բնապահպանական՝ Կլիմայի փոփոխության հարմարվողականության ավելի մեծ հնարավորություն և բնական աղետներին դիմակայելու պատրաստվածություն</td></tr>
<tr><td colspan="2">SO_AR Բնական աղետների նկատմամբ Գյումրու սոցիալական, տնտեսական և ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների առավել բարձր դիմակայություն</td></tr>
<tr><td>Կապիտալ ծախսեր (եվրո)
500,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
265,000,000</td><td>Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)
0
Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)
0</td><td>Ֆինանսավորման այլընտրանքներ
• Համայնքային բյուջե
• Կառավարություն
• ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ</td></tr>
<tr><td colspan="3">Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2020 - 2021</td></tr>
<tr><td>Գործողության պատասխանատու
Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, Գյումրու քաղաքապետարան</td><td>Իրականացման գործընկերներ՝
ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ</td><td>Հիմնական շահագրգիռ կողմերը՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Շիրակի մարզպետարան, ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ</td></tr>
</table>

Նույնականացման համար՝
A_AR_02

Վերնագիրը՝ Կլիմայի փոփոխության նկատմամբ Գյումրու ենթակառուցվածքի դիմակայության բարեկարգման գործողությունների ծրագրի նախապատրաստում

Դասակարգում՝ Ռազմավարություններ, նախագծեր և ծրագրեր

Նկարագրություն

Այս գործողությունների ծրագիրը պետք է հիմնվի A_AR_01-ում ներկայացված և գնահատման եղանակով իրականացված կլիմայի ռիսկի գնահատման արդյունքների և հնարավոր գործողությունների ցանկի վրա, որոնք կարող են իրականացվել՝ Գյումրու դիմակայությունը և հարմարվողականության ներուժը բարելավելու համար: Սա կլինի ԿՔԳԾ, ԿԷԶԳԾ և ՍՇԿԳԸ (SECAP) գործառույթների հետ համագործակցությամբ և կարող է ընդգրկել հողօգտագործման պլանավորումը, ջրհեղեղի և էրոզիայի վերահսկումը, շենքերի նախագծումը, վերանորոգումը, կառույցների դիմակայության բարելավումը, ենթակառուցվածքի դիմակայությունը (օրինակ՝ պահեստային էներգամատակարարում, անվտանգություն, ջրամատակարարման անվտանգություն, աղտոտման վերահսկում) և բնական ռեսուրսների կառավարումը (գյուղատնտեսական դիմակայություն, վերականգնվող էներգիայի օգտագործում):

Գործողությունների ծրագրի շրջանակը կհամաձայնեցվի հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ազդեցություններ՝ կապված նվազեցված զգայունության հետ, կլիմայի փոփոխության ռիսկերի ազդեցություն կամ ավելի մեծ հարմարվողականության ներուժ՝ սահմանված հիմնական խոցելի հարցերին արձագանքելու հնարավորությունը, ծախսերը, օգուտները (այդ թվում՝ վերակառուցման այն ծախսերը, որոնցից կարելի է խուսափել, խախտումներ, որոնցից հնարավոր է խուսափել, ավելի քիչ օգտագործում և ներդրում՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական ավելի մեծ նպատակների նկատմամբ և իրականացման ժամանակացույցը):

Գործողությունների ծրագիրը կներկայացնի հարմարվողականության առաջնահերթ միջոցառումները, ինչպես նաև դրանց ծախսերի, օգուտների, իրականացման, խոչընդոտների, ռիսկերի, նաև գործընկերների մասին տեղեկատվություն: Ծրագիրը նաև պարունակում է այլ տարածաշրջանների/երկրների լավագույն փորձի օրինակներ, որի նպատակն է ներկայացնել, որ առաջարկված գործողությունները կարող են կատարվել, և նախնական առաջարկություններ ներկայացվել իրականացման հաջորդ քայլերի վերաբերյալ, օրինակ՝ կապված ֆինանսավորման հնարավոր աղբյուրների և մեխանիզմների հետ:

Սա նախատեսում է իրականացման պայմանների և ԱՏՀ միջոցառումների ներգրավումը համայնքի բյուջե: Այն նաև ներառում է պատրաստվածության ցուցանիշներ (հետևել հարմարվողականության գործողություններին և դրանց հետ կապված ռիսկերին, հնարավորություններին և ազդեցություններին) և ավելի ընդարձակ առաջարկություններ՝ հարմարվողականության գործողությունների ծրագրի ազդեցությունները վերահսկելու և գնահատելու համար:

Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ)	**Հիմնական օգուտները**
SO_GSBIO Պահպանված, բարեփոխված և վերականգնված հողի որակ քաղաքի ողջ տարածքում	• Սոցիալական՝ բարեկարգված սոցիալական դիմակայություն և անվտանգություն • Տնտեսական՝ տնտեսական աճ
SO_AR Բնական աղետների նկատմամբ Գյումրու սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների առավել բարձր դիմակայություն	

Նույնականացման համար՝ A_AR_02		
Վերնագիրը՝ Կլիմայի փոփոխության նկատմամբ Գյումրու ենթակառուցվածքի դիմակայության բարեկարգման գործողությունների ծրագրի նախապատրաստում		
Դասակարգում՝ Ռազմավարություններ, նախագծեր և ծրագրեր		
		• Բնապահպանական՝ Կլիմայի փոփոխության հարմարվողականության ավելի մեծ հնարավորություն և բնական աղետներին դիմակայելուն պատրաստվածություն
Կապիտալ ծախսեր (եվրո) 500,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 265,000,000	**Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)** 0 **Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)** 0	**Ֆինանսավորման այլընտրանքներ** • Համայնքային բյուջե • Կառավարություն • ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ
Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2021 – 2022թթ.		
Գործողության պատասխանատու Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, Գյումրու քաղաքապետարան	**Իրականացման գործընկերներ՝** ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ	**Հիմնական շահագրգիռ կողմերը՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Շիրակի մարզպետարան

Նույնականացման համար
A_AR_03

Վերնագիրը՝ Նախապատրաստել արտակարգ իրավիճակների պատրաստվածության գործողությունների ծրագիր

Դասակարգում՝ Ռազմավարություններ, նախագծեր և ծրագրեր

Նկարագրություն

Հայաստանն աշխատել է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ բնական աղետների ռիսկերի մեղմացման և արտակարգ իրավիճակների պատրաստվածության ծրագրեր մշակելու նպատակով, այդ թվում՝ բնական աղետների վտանգների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամը (GFDRR): Սա ներառում է 2018թ. «Գյումրու աղետների ռիսկերի նվազեցման ծրագիր»-ը:

Այդուհանդերձ, պարզվում է, որ արտակարգ իրավիճակների պատրաստվածության գործողությունների ծրագիր չկա Գյումրու համար:

Այս գործողությամբ քաղաքի համապատասխան հաստատությունների հետ սերտ համագործակցելով (ներառյալ հասարակական կազմակերպությունները, կրթական և նախակրթական հաստատությունները, հանրային/կենցաղային ծառայությունները, համայնքային խմբերը, ՀԿ-ները)՝ մշակելու է տվյալ ծրագիրը, որը ներառելու է աղետների ռիսկի նվազեցման, կառավարման պլանները և արձանագրությունները, այդ թվում՝ պրակտիկ տարհանման դրույթները: Ծրագրի մշակումը նաև ուղղված կլինի կլիմայի փոփոխությունների ռիսկերի մասին Գյումրու բնակիչների տեղեկացվածության բարձրացմանը:

Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ)		**Հիմնական օգուտները**
SO_GSBIO Պահպանված, բարեփոխված և վերականգնված հողի որակ քաղաքի ողջ տարածքում		• Սոցիալական՝ բարեկարգված սոցիալական դիմակայություն և անվտանգություն և քաղաքացիների ներգրավում և մասնակցություն • Տնտեսական՝ տնտեսական աճ • Բնապահպանական՝ Կլիմայի փոփոխության հարմարվողականության ավելի մեծ հնարավորություն և բնական աղետների պատրաստվածություն
SO_AR Բնական աղետների նկատմամբ Գյումրու սոցիալական, տնտեսական և ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների առավել բարձր դիմակայություն		
Կապիտալ ծախսեր (եվրո) 500,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 265,000,000	**Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)** 0 **Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)** 0	**Ֆինանսավորման այլընտրանքներ** • Համայնքային բյուջե • Կառավարություն • ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ
Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2023 – 2024թթ.		
Գործողության պատասխանատու Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, Գյումրու քաղաքապետարան	**Իրականացման գործընկեր/ներ՝** ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ	**Հիմնական շահագրգիռ կողմերը՝** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Շիրակի մարզպետարան

Նույնականացման համար՝
A_AR_04

Վերնագիրը՝ Կլիմայի փոփոխության հարմարվողականության դիմակայության միջոցառումների համար ներդրում

Դասակարգումը՝ Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն

Այս գործողությունը կնպաստի A_AR_01-ում սահմանված և A_AR_02-ում որպես առաջնահերթություն դասակարգված միջոցառումների իրականացմանը՝ հաշվի առնելով նրանց ներուժը՝ կապված Գյումրու դիմակայության բարձրացման և հարմարվողականության մեծացման համար համապատասխան ներդրումների պահանջների հետ՝ ջրամատակարարման, տրանսպորտի, կոշտ թափոնների, շենքերի, էներգիայի, լուսավորության ոլորտներում:

Հետևաբար, դեռևս չեն սահմանվել համապատասխան ներդրումները, սակայն դրանք կսահմանվեն՝ հարմարվողականության և դիմակայունության տարրերը ԿՔԳԾ-ի միջոցառումներում ընդգրկելու հետ միասին:

Էկոլոգիական ցուցանիշները (ԿՔԳԾ-ի նպատակների հետ զուգահեռ)

SO_GSBIO Պահպանված, բարեփոխված և վերականգնված հողի որակ քաղաքի ողջ տարածքում

SO_AR Բնական աղետների նկատմամբ Գյումրու սոցիալական, տնտեսական և ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների առավել բարձր դիմակայություն

Հիմնական օգուտները

- Սոցիալական՝ բարեկարգված սոցիալական դիմակայություն և անվտանգություն
- Տնտեսական՝ տնտեսական շահույթ ներդրողի համար, տնտեսական աճ և աշխատատեղերի ստեղծում
- Բնապահպանական՝ Կլիմայի փոփոխության հարմարվողականության ավելի մեծ հնարավորություն և բնական աղետներին դիմակայելու պատրաստվածություն

Կապիտալ ծախսեր (եվրո)
15,000,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
7,950,000,000

Տարեկան գործառնական ծախսեր (եվրո)
0
Տարեկան գործառնական ծախսեր (ՀՀ դրամ)
0

Ֆինանսավորման այլընտրանքներ

- Համայնքային բյուջե
- Կառավարություն
- ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ
- Մասնավոր հատված

Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2024թ. - շարունակական

Գործողության պատասխանատու
Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, Գյումրու քաղաքապետարան

Իրականացման գործընկեր/ներ՝
ՄՖՀ/դոնոր կազմակերպություններ

Հիմնական շահագրգիռ կողմերը՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Շիրակի մարզպետարան, մասնավոր հատված

6.Մոնիթորինգ

Անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՔԳԾ-ի իրականացման գործընթացը, գնահատել նրա ազդեցությունը, նպատակներին հասնելու հավանականությունը, ինչպես նաև բարեփոխումների իրականացման հնարավորությունները: Սա պետք է իրականացվի ԿՔԳԾ-ի գործողությունների մոնիթորինգի միջոցով՝ հաշվի առնելով առաջընթացին և միջնաժամկետ ու երկարաժամկետ նպատակներին հասնելու համար դրանց նպաստող գործոնները: Շահագրգիռ կողմերին պետք է տեղեկացնել և վերջիններին ներկայացնել մոնիթորինգի արդյունքները: Ստացված արդյունքները հնարավորություն կընձեռեն պարբերաբար վերանայելու և հնարավորինս կատարելագործելու ԿՔԳԾ-ի մարտահրավերները, նպատակները, գործողություններն ու թիրախները:

Այս գլխում ներկայացված է մոնիթորինգի գործընթացի ամփոփ նկարագիրը, որը կծառայի որպես տվյալ գործընթացի և նրա հետ կապված կառավարման մեխանիզմների ուղեցույց: Այն նաև ներկայացնում է հաշվետու կամ պատասխանատու, կամ այն շահագրգիռ կողմերին, ում տրամադրվում կամ շարունակվելու է տրամադրվել մոնիթորինգի, հաշվետվության և ստուգման գործընթացի հետ կապված խորհրդատվություն (մոնիթորինգ, հաշվետվություն, վերահսկում և վավերացում-ՄՀՎ):

6.1. Մոնիթորինգ, հաշվետվություն, վավերացում և գործընթաց

Նշանակված պաշտոնատար անձը (ՄՀՎ համակարգող) Գյումրու քաղաքապետարանում (հնարավոր է՝ բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության վարչությունից) պատասխանատու է ԿՔԳԾ-ի գործողությունների իրականացման նպատակով ՄՀՎ-ի՝ պատշաճ ժամկետներում ապահովելու, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներին հասնելու համար այդ գործողությունների նպաստման, ինչպես նաև ԿՔԳԾ-ի նպատակների իրականացմանը հասնելու հավանականության համար: Նրանք պետք է ստանձնեն համակարգողի դերը, որը կիրականացվի քաղաքապետարանի ավելի լայն, ավելի բարձրաստիճան մարմինների մասնակցությամբ, ինչպես ներկայացված է նկար 6 . 1.-ում: Առաջարկվում է, որ այդ դերը հանձնվի անհատի լավագույն փորձին համապատասխան, այդուհանդերձ, առաջարկված մոտեցման բոլոր տարրերի համաձայն, այս հարցը պետք է քննարկվի՝ քաղաքում մոնիթորինգի գործընթացը լիովին հաստատվելուց հետո: Օրինակ, համաձայն ռեսուրսների պահանջների, ավելի նպատակահարմար է տվյալ դերը բաշխել նույն բաժանմունքում աշխատող մի քանի անհատների միջև: Տվյալ դերը նախատեսում է հետևյալ գործողությունների իրականացումը .

1. կապ հաստատել ԿՔԳԾ-ի համակարգողի, քաղաքապետի գլխավոր խորհրդականի հետ՝ տվյալների հավաքագրման պահանջները հաստատելու (այդ թվում՝ հաճախականությունը և որակը) ԿՔԳԾ-ի գործողությունների իրականացումը և ազդեցությունը, ինչպես նաև դրանց ժամկետները, բյուջեի և ընդհանուր առմամբ ԿՔԳԾ-ի գնահատման նպատակով: Սա պետք է ներառի յուրաքանչյուր ԿՔԳԾ-ի գործողությունների շնորհիվ նպատակային և բաղադրիչ ցուցանիշներին հասնելու վերլուծությունը, ինչպես նաև յուրաքանչյուր նպատակային ցուցանիշների միջոցով լուծվող նպատակները, որոնք ներկայացված են Գլուխ 5-ում: Այս քայլը կօգտագործվի նաև այլ քաղաքի հետ համագործակցության հաստատման, առավել ընդարձակ ներքին գործընթացների և արձանագրությունների, ինչպես նաև յուրաքանչյուր գործընթացի համար պատասխանատու շահագրգիռ կողմին օժանդակելու համար (տե՛ս նաև բաժին 6.2.):
2. ԿՔԳԾ-ի գործողություն(ների) իրականացման համար պատասխանատու յուրաքանչյուր բաժնում սահմանել և նշանակել պաշտոնատար անձ (ՄՀՎ փորձագետ)՝ գործողությունները ՄՀՎ ենթարկելու նպատակով: Ամենայն հավանականությամբ տվյալ անձը կլինի բաժնի ղեկավարը (տե՛ս աղյուսակ 6.1.): Նախատեսվում է, որպեսզի հիմնականում, եթե ոչ բոլոր դեպքերում, այս անձը կլինի Գյումրու քաղաքապետարանի համապատասխան բաժնի ԿՔԳԾ-ի գործողությունների իրականացման համար նույն պատասխանատու («ԿՔԳԾ գործողության պատասխանատու») անձը: Ընտրված պաշտոնյաները պետք է իրականացնեն մոնիթորինգ, հաստատեն տվյալները և ներկայացնեն հաշվետվություն հետևյալի վերաբերյալ .

   ա) յուրաքանչյուր գործողության իրականացման առաջընթացը,

բ) յուրաքանչյուր գործողության բյուջեի ծավալը և իրականացման ծրագիրը,

գ) յուրաքանչյուր գործողության ազդեցությունը՝ համապատասխան նպատակային ցուցանիշների հետ կապված:

3. Սահմանել և նշանակել պաշտոնատար անձ («Տվյալների հավաքագրման պատասխանատու»)՝ ԿՔԳԾ-ի յուրաքանչյուր ցուցանիշի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության պատասխանատվությամբ:
4. ՄՀՎ-ի փորձագետների և տվյալների հավաքագրման համապատասխան պատասխանատուների միջև ստեղծել կապի պաշտոնական ուղիներ:
5. Պարբերաբար կապ հաստատել ՄՀՎ-ի պատասխանատու պաշտոնյաների հետ՝ հավաստիանալու համար, որ վերջիններս պատշաճ տեղեկացված են, վերապատրաստված և ստանում են համապատասխան այլ օժանդակություն՝ իրենց դերն արդյունավետ, թափանցիկ և հետևողականորեն կատարելու համար: Սա պետք է ներառի պրոֆորմաների և դրանց հետ կապված ուղեցույցների մշակում և տարածում, որը, ԿՔԳԾ-ի մեթոդների պահանջներին համաձայն, կօժանդակի համապատասխան և հաջորդական տվյալների ՄՀՎ-ի իրականացմանը: Տվյալ կապի իրականացման նպատակն է նաև հավաստիանալ, որ ՄՀՎ-ի փորձագետների և տվյալների հավաքագրման պատասխանատուներն իրենց հանձնարարությունները կատարում են ԿՔԳԾ-ի համակարգողի կողմից սահմանված որակի, ժամանակացույցի և բյուջեի համապատասխան:
6. Սահմանել և կիրառել ԿՔԳԾ-ի յուրաքանչյուր գործողությանը և ցուցանիշին վերաբերող կանոնավոր հաշվետվություն ներկայացնելու ժամկետները:
7. Համեմատել ՄՀՎ-ի փորձագետների կողմից ներկայացված ելակետային տվյալները՝ յուրաքանչյուր ԿՔԳԾ-ի գործողության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ԿՔԳԾ-ի առաջընթացի և ազդեցության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու նպատակով և արդյունքները ներկայացնել ԿՔԳԾ-ի համակարգողին՝ քաղաքապետի գլխավոր խորհրդականին: Քաղաքապետի գլխավոր խորհրդականն իր հերթին տվյալ արդյունքները կներկայացնի այլ շահագրգիռ անձանց (տե՛ս բաժին 6 . 2.), մասնավորապես տվյալ արդյունքների հիման վրա որոշում կայացնելու պատասխանատվություն ունեցող ներքին և արտաքին կառույցներին:



* Եթե տարբերվում են նշանակված ՄՀՎ-ի համակարգողից և ՄՀՎ-ի փորձագետներից:

Նկ. 6.1. ՄՀՎ-ի գործընթացի գլխավոր մասնակիցները և այդ գործընթացների իրականացման կառավարման մեխանիզմները

ԿՔԳԾ ՄՀՎ-ի գործընթացի տարրերի համար պատասխանատու կամ հաշվետու շահագրգիռ կողմերի կամ որպես այդ գործընթացի մաս խորհրդատվություն ստացող կամ ստանալիք շահագրգիռ կողմերի ցուցակը ներկայացված է բաժին 6.2.-ում:

Աղյուսակ 6.1. ՄՀՎ-ի համար պատասխանատու գերատեսչություններն ըստ ԿՔԳԾ ոլորտի

ԿՔԳԾ ոլորտ	**ՄՀՎ-ի համար պատասխանատու ոլորտ**
Շենքեր, էլեկտրաէներգիա լուսավորություն	Կոմունալ, բնակարանային և շրջակա միջավայրի պաշտպանություն
Արդյունաբերություն	Առևտրի և ծառայությունների համակարգման վարչություն
Հողօգտագործում	Քաղաքային շինարարություն և ճարտարապետություն
Կոշտ թափոններ	Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պաշտպանության
Տրանսպորտ	Տրանսպորտ
Ջրամատակարարում	Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պաշտպանություն

ՄՀՎ-ի փորձագետները, որոնք նշանակվել են ՄՀՎ համակարգողի կողմից՝ ԿՔԳԾ-ի որոշակի ոլորտներում ՄՀՎ-ի գործողությունների համար պատասխանատվություն ստանձնելու, պետք է.

1. խորապես հասկանան իրենց ԿՔԳԾ-ի գործողությունների համապատասխան թիրախներն ու ցուցանիշները, և թե ինչ եղանակով են ստացվում և վավերացվում յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու տվյալները: Սա պահանջում է համագործակցություն տվյալների համակարգողի և տվյալների հավաքագրման պատասխանատուի հետ:
2. Կանոնավոր կապ հաստատել ԿՔԳԾ-ի յուրաքանչյուր գործողության իրականացման համար պատասխանատու անձի հետ («ԿՔԳԾ գործողության պատասխանատու»), ինչպես նաև, տարբերության առկայության դեպքում, վերանայման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև յուրաքանչյուր գործողության բյուջեի, ծավալների և պլանավորման վերահսկման համար պատասխանատու անձանց հետ:
3. Ծանոթանալ յուրաքանչյուր տարրի համար տվյալների հավաքագրման անհրաժեշտ մեթոդներին հաճախականությանը: ԿՔԳԾ-ի գործողությունների իրականացման մոնիթորինգի հետ կապված տվյալների հավաքագրումը պետք է բոլոր դեպքերում լինի շարունակական՝ իրականացման ողջ ժամանակահատվածի ընթացքում, իսկ յուրաքանչյուր ցուցանիշի համար տվյալների հավաքագրման հաճախականությունը կարող է տարբեր լինել: Օրինակները ներկայացված են աղյուսակ 6.2-ում՝ ԿՔԳԾ-ի հատուկ գործողությունների համատեքստում:
4. Կապ հաստատել տվյալների հավաքագրման պատասխանատուների հետ՝ հավաստիանալու համար, որ ցանկացած գործոն, որը կարող է ազդել տվյալների որակի կամ դրանց հասանելիության վրա, ՄՀՎ-ի համակարգողի կողմից սահմանված ժամկետների պահանջները բավարարելու համար պատշաճ ժամկետում բացահայտվում են՝ այլընտրանքային եղանակ ներկայացնելու նպատակով:
5. Ստանձնել պատասխանատվություն բոլոր տվյալների վավերացման համար՝ կապված ԿՔԳԾ-ի յուրաքանչյուր գործողության հետ, վերանայելով ստացված տվյալները, երաշխավորելու համար, որ դրանք ամբողջական են, համապատասխանեցված և բոլոր առումներով մանրամասն մշակված:
6. Վերլուծել և համեմատել տվյալների հավաքագրման պատասխանատուների և «ԿՔԳԾ-ի գործողությունների սպատասխանատուի» ներկայացված տվյալները, ԿՔԳԾ-ի յուրաքանչյուր գործողության առաջընթացի և ազդեցության, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու նպատակով;
7. Փոխանցել ՄՀՎ-ի արդյունքները ՄՀՎ-ի համակարգողին:

Աղյուսակ 6.2. ԿՔԳԾ-ի գործողության համար պայմանական մոնիթորինգի սխեման A_TR_15

Ցուցանիշ	Տվյալների հավաքագրման հաճախականություն	Տվյալների հավաքագրման եղանակը	Պատասխանատու գերատեսչությունը
Փոշու կուտակման միջին տարեկան	Շարունակական	Ստացիոնար (ակտիվ նմուշառման) ավտոմատ դիտակայաններ, որոնք վերահսկում են փոշին (այլ աղտոտող նյութեր) ամեն օր՝ օգտագործելով առկա կայանները և A-AAGHC-01-ում	Առկա դիտակայանները կառավարվում են բնապահպանական մոնիթորինգի և տեղեկատվության պետական կենտրոնի կողմից (SEMIC) պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ), որը հաշվետու է բնապահպա-նության նախարարությանը և կապված է Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պաշտպանության վարչության հետ
ՀՆԱ-ի մեկ միջավայրի համար CO_2-ի տարեկան արտանետումները	Տարեկան	Ազգային վիճակագրություն ը հրապարակում է ՀՆԱ-ի տվյալները։ CO_2-ի արտանետումները հաշվարկվում են (օգտագործելով IPCC ուղեցույցները)՝ վերլուծելով մի շարք աղբյուրներից ստացված գործունեության տվյալները, այդ թվում՝ կոմունալ ընկերություններ, այլ մասնավոր ձեռնարկություններ ի և կառավարության գերատեսչությունների հաշվետվությունները[46]	Ազգային վիճակագրական կոմիտեն ծառայության (հողումը՝ ՀՆԱ-ի տվյալներ) և Եվրոպական գիտությունների ինստիտուտը, որը ներկայումս համակարգում է CO_2-ի արտանետումների տվյալների հավաքագրումը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պաշտպանության և վարչության կլիմայի փոփոխության հարցերով զբաղվող կենտրոնը նույնպես ունի մուտքի թույլտվություն։
Մեկ շնչի հաշվով CO_2 –ի համարժեք	Տարեկան	ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեն	ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեն

[46] Գործունեության տվյալների հիմնական աղբյուրներն են՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանն առընթեր «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն, Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ն և Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ)։ Այս տեղեկատվությունը լրացվում է նախարարությունների կողմից ներկայացվող տվյալներով, այդ թվում ՝ ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունները։

Ցուցանիշ	Տվյալների հավաքագրման հաճախականություն	Տվյալների հավաքագրման եղանակը	Պատասխանատու գերատեսչությունը
տարեկան արտանետումները		հրապարակում է ազգաբնակչության տվյալները: CO_2-ի արտանետումները հաշվարկվում են (օգտագործելով IPCC ուղեցույցները)՝ վերլուծելով մի շարք աղբյուրներից ստացված գործունեության տվյալները, այդ թվում՝ կոմունալ ընկերություններ, այլ մասնավոր ձեռնարկությունների և կառավարության գերատեսչությունների հաշվետվությունները[47]	(հղումը՝ ազգաբնակչության տվյալները), Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, որը ներկայումս համակարգում է CO_2-ի արտանետումների տվյալները կամ Բնապահպանության նախարարությունը, որը ներկայումս իրականացնում է CO_2-ի տարեկան արտանետումների տվյալների հավաքագրման վերահսկողությունը Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների ոլորտում

Ցուցանիշ	Տվյալների հավաքագրման հաճախականություն	Տվյալների հավաքագրման եղանակը	Պատասխանատու գերատեսչությունը
Հասարակական տրանսպորտային միջոցների՝ ըստ տեսակների բաշխումը (մեքենա, մոտոցիկլետ, տաքսի, ավտոբուս, մետրո, տրամվայ, հեծանիվ, հետիոտն)	Տարեկան	Հարցում[48]	Տրանսպորտի վարչություն, Գյումրու քաղաքապետարան

Այս ԿՔԳԾ–ում ներկայացված է ցուցանիշների ամբողջությունը (վիճակ, ճնշում և արձագանք), որն օգտագործվել է՝ Գյումրու առջև ծառացած բնապահպանական խնդիրները բացահայտելու, գնահատելու և դրանց առաջնահերթությունները սահմանելու համար, ինչպես նաև տեղեկատվություն ներկայացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների զարգացման և միջնաժամկետ ու երկարաժամկետ թիրախների վերաբերյալ, որոնց հիման վրա դրանք պետք է գնահատվեն: Ինչպես վերևում նշվեց, հավաքագրված տվյալները ներկայացվել են համաշխարհային հենակետային արժեքներով (մեծություններով)՝ տվյալների շտեմարանում, ՎԶԵԲ-ի կողմից ընդունելի աղյուսակային տարբերակի հիման վրա, որը սահմանում է այն ելակետային ցուցանիշները, որոնց

[47] Տե՛ս նախորդ հղումը:
[48] Այս տվյալները պետք է հավաքագրվեն A_TR_12-ի ծրագրի շրջանակներում, որը կստեղծի տվյալների հավաքագրման համաքաղաքային ծրագիր, ըստ որի՝ նախատեսվում է ուսումնասիրել փոխադրամիջոցների՝ սկզբնակետից դեպի վերջնակետ երթևեկության վերաբերյալ իրականացված տարեկան ուսումնասիրության վերլուծությունը, ինչպես նաև հասարակական տրանսպորտի և տաքսիների ուղևորափոխադրումների և դեպի աշխատավայրերն ուղևորությունների ուսումնասիրություններ:

համաձայն կարելի է գնահատել ԿՔԳԾ-ի գործողությունների ազդեցությունը: Մոնիթորինգի ընթացքում հավաքագրված տվյալները պետք է համապատասխանեն այն ցուցանիշներին, որոնք ձևավորում են այս ելակետային ցուցանիշները, և, այդպիսով, տվյալների բազան կշարունակի օգտագործվել ՄՀՎ-ի գործընթացում: Նկար 6.2.-ում պատկերված է տվյալների բազայի էկրանի նկարի պատճենը: ՄՀՎ-ի պահանջները չեն առաջացնում բոլոր ցուցանիշների նորացման պահանջ, այն ցուցանիշների, որոնք համեմատվել են ԿՔԳԾ-ի գործողությունների ու նպատակային ցուցանիշների հետ, ներկայացված են բաժին 5-ում, և դրանք ամենայն հավանականությամբ պետք է կատարելագործվեն (նաև նվազեցվի քանակը), քանի որ ցուցանիշների օպտիմալ փաթեթի մասին ընկալումը տեղի է ունենում ՄՀՎ-ի գործընթացի ժամանակ: Այդուհանդերձ, առաջարկվում է, որպեսզի ֆինանսավորումն ապահովագրված լինի՝ տվյալների բազայի ցուցանիշի համընդհանուր նորացումը երաշխավորելու համար, որը կարող է օգտագործվել ԿՔԳԾ-ի մարտահրավերների, նպատակների, գործողություններ և թիրախների պարբերական ստուգումների և տվյալների վերջնական թարմացման վերաբերյալ տեղեկատվություն տալու նպատակով:

Այս ՄՀՎ-ի գործընթացում տվյալների բազայի ցուցանիշի օգտակարության բարձրացման նպատակով այն կընդլայնվի՝ ի լրումն տարիների արժեքների նորացման ցուցանիշի: Ընդլայնումը և կատարելագործումը, համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում, անհրաժեշտ կլինեն.

- տվյալների ներկայացման բացերը լրացնելու համար (օրինակ՝ թռչնատեսակների քանակության տարեկան փոփոխության վերաբերյալ):
- Գյումրու համար առկա տվյալների հետ կապված պատժամիջոցների և սահմանափակումների խնդիրները լուծելու համար, ինչպես ներկայացված է ԿՔԳԾ-ի տեխնիկական գնահատման հաշվետվությունում:
- Յուրաքանչյուր ԿՔԳԾ-ի գործողության ցանկը լրացնելու համար, ինչպես նաև այն ցուցանիշները, որոնք օգտագործվում են՝ նրանց ազդեցությունը գնահատելու համար:

Նույնականացման համար	P/S/R	Տեսակ/ոլորտ	Առարկա /աղբյուր	Ցուցանիշ	Միավոր	Դասակարգում	Կանաչ հենանիշ	Դեղին հենանիշ	Կարմիր հենանիշ	Ազգային չափանիշ	Տվյալների առկայություն (0/1)	2015	2016	2017	2018	2019	2020	Վերջին տարին՝ հասանելի տվյալներով	Ցուցանիշի մեծությունը (վերջին տվյալներով)	Ցուցանիշի վիճակ	Միտում	Հետևանքները	Սոց. սնշանակությունը	Պատասխանատու մարմին	Հարակից ցուցանիշներ	Տվյալների աղբյուրը (եթե հնարավոր է, նշել հղումը)	Ծանոթություններ
1.2	Պետություն	Բնապահպանական ակտիվների որակ	Օդ	SO_2-ի միջին օրական կոնցենտրացիան	μg/m³	Կամընտիր	20/	20 – 50	50	50	1	80	69	37				2017	36.70	Դեղին	Տատանվող			Բնապահպանության նախարարություն		Բնապահպանության նախարարություն	
1.3	Պետություն	Բնապահպանական ակտիվների որակ	Օդ	NOx-ի միջին օրական կոնցենտրացիան	μg/m³	Կամընտիր	40	40 – 80	80	40	1	13	15	19				2017	18.60	Կանաչ				Բնապահպանության նախարարություն		Բնապահպանության նախարարություն	
1.1.1	Պետություն	Բնապահպանական ակտիվների որակ	Օդ	TSP-ի միջին տարեկան կոնցենտրացիան	μg/m³	Լրացուցիչ	30	30 – 70	70	150	1	280.1	174.8	325.6				2016	325.6	Կարմիր						Բնապահպանության նախարարություն	

Նկար 6.2. Գյումրու համար առկա տվյալների բազայի ցուցանիշի էկրանի նկարը

ՎՁԵԲ-ը սահմանել է հաշվետվություն ներկայացնելու պահանջները, որոնք կիրառելի են բոլոր ԿՔԳԾ –ների համար: Սա պահանջում է ԿՔԳԾ–ում ընդգրկված գործողությունների իրականացման կարգավիճակի վերաբերյալ նպատակային հաշվետվության ներկայացում, ինչպես նաև մեկ այլ՝ երկրորդ հաշվետվություն, որը վերաբերում է ԿՔԳԾ–ում սահմանված հեռանկարներին և նպատակներին հասնելու կարգավիճակին կամ հավանականությանը: ԿՔԳԾ–ի գործողությունների իրականացման փաստացի իրավիճակի մոնիթորինգի արդյունքները փոխանցելու նպատակով օգտագործվել է և կշարունակվի օգտագործվել նկար 6.3.-ում ներկայացված մոդելը («Զարգացման մոնիթորինգի պլանը» (ԶՄՊ): Ինչպես նշված է նկար 6.3.-ում, այն լրացվել է՝ ներառելով ԿՔԳԾ-ի հեռանկարները, թիրախները և գործողությունները, ինչպես նաև ԿՔԳԾ-ի գործողություններն իրականացնող մարմինների կոնտակտային տվյալները: ՄՀՎ-ի համակարգողը պետք է նորացնի այս հաշվետվությունը ավագանու կողմից այն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում և դրանից հետո, տարեկան առնվազն մեկ անգամ, սահմանելու համար, թե ԿՔԳԾ-ի որ գործողությունն է ենթակա հետևյալ մեկնաբանություններին՝ «Գործողությունը պետք չէ», կամ «նախապատրաստական փուլում է», «իրականացման ընթացքում է» կամ «ավարտված է»: Յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է տրամադրել բացատրական ծանուցում, իսկ ԿՔԳԾ-ի այն գործողությունների համար, որոնք իրականացման ընթացքում են կամ ավարտվել են, տվյալ ծանուցման մեջ պետք է նշվի այն բոլոր սոցիալական, տնտեսական և բնապահպանական օգուտները, որոնք գրանցվել են: Հաշվետվությունում պետք է նաև նշվի ԿՔԳԾ-ի յուրաքանչյուր գործողության համար նախատեսված նպատակներին հասնելու հավանականությունը՝ յուրաքանչյուրի վերաբերյալ բացատրություն տրամադրելով: Յուրաքանչյուր ԶՄՊ պետք է ներկայացվի ՎՁԵԲ-ին և տրամադրվի առավել ընդգրկուն շահագրգիռ կողմերին:

Քաղաք	Երկիր	Ոլորտ	Կոդ	Կանխատեսում	Թիրախ	Գործողություններ	Ներդրում/քաղաքականություն	Իրականացնող մարմին	Ֆինանսավորման աղբյուր	Հնարավոր օժանդակություն	Իրականացման կարգավիճակ	Ծանոթություն	Ամսաթիվ	Հեղինակ	Ստուգելի նպատակ	Կարգավիճակին համապատասխանող նպատակներ	Կապիտալ ծախսեր (€)	Գործառնական ծախսեր (5 տարի և ավելի) (€)	Զարգացում/Խորհրդատվություն և այլ ծախսեր	Ֆինանսավորման անհրաժեշտություն

Նկար 6.3. Զարգացման մոնիթորինգի պլանի (ԶՄՊ) հաշվետվության մոդելը

Ինչ վերաբերում է երկրորդ հաշվետվության պահանջներին, ԿՔԳԾ-ում սահմանված հեռանկարներին և նպատակներին հասնելու իրական վիճակին և հավանականությանը, ապա լրացվել է նմանատիպ մոդել՝ «Ազդեցության մոնիթորինգի պլան» (ԱՄՊ) (տե՛ս նկար 6.4.) և պետք է նորացվի երեք և հինգ տարի անց՝ ԿՔԳԾ-ի կողմից իրականացված բնապահպանական բարեփոխումների մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակով: Այս մոդելը լրացվել է՝ տվյալների բազայում համապատասխան տվյալի ցուցանիշի նշումով և պետք է օգտագործվի՝ ծանուցելու համար, թե արդյո՞ք ԿՔԳԾ-ի ցուցանիշները «կարմիր» են, «դեղին» կամ «կանաչ»: Հաշվետվությունում փորձագետների համար պետք է ներկայացվեն համապատասխան տվյալների աղբյուրները և կոնտակտային մանրամասները՝ կապված յուրաքանչյուր ցուցանիշի հետ, որը հնարավորություն կտա ՎՁԵԲ-ին և այլ ընտրված շահագրգիռ կողմերին՝ իրականացնելու պատշաճ վերահսկողություն:

Ցուցիչ կոդ (ցուցիչ տվյալների շտեմարանից)	Առարկա/ոլորտ	Ճնշում-Վիճակ-Արձագանք	Միտում [առկա չէ, բացասական կամ դրական]	Գունային կոդ [կարմիր, դեղին, կանաչ]	Թիվը (ցուցիչ տվյալների շտեմարանում)	Տվյալների աղբյուր	Հարակից գործողություններ (մեծ ազդեցություն)	Հարակից գործողություններ (միջին ազդեցություն)	Հարակից գործողություններ (թույլ ազդեցություն)	Տվյալների աղբյուր_ կոնտակտ / ԾԹ
1	Օդ	Վիճակ			667 μg/մ³ միջին տարեկան՝ 2011-2015թթ.					
1.1	Օդ	Վիճակ								
1.1.1	Օդ	Վիճակ								
2.1	Ջուր	Վիճակ								
10	Տրանսպորտ	Ճնշում								
10.1	Տրանսպորտ	Ճնշում								

Թիվը (ԿՔԳԾ-ի վերջնականացումից 3 տարի հետո)	Գունային կոդ	Թիվը (ԿՔԳԾ-ի վերջնականացումից 5 տարի հետո)	Գունային կոդ
667 μg/m³ միջին տարեկան՝ 2011-2015թթ.	Կարմիր	667 μg/մ³ միջին տարեկան 2011-2015թթ.	Կանաչ

Նկար 6.4. Ազդեցության մոնիթորինգի պլանի (ԱՄՊ) հաշվետվության ներկայացման մոդել

ԿՔԳԾ-ի գործողության քայլ 3-ի ժամանակ հաշվետվության ներկայացման ցանկացած լրացուցիչ պահանջ պետք է սահմանվի ԿՔԳԾ-ի սեփականատիրոջ կողմից, որը, ամենայն հավանականությամբ, կլինի քաղաքապետի գլխավոր խորհրդականը, սակայն նկարներ 6.3.-ում և 6.4.-ում, ներկայացված մոդելների համաձայն, այդ հաշվետվությունները պետք է լինեն հակիրճ և առարկայական՝ ներկայացնելով ԿՔԳԾ-ի գործողությունների իրականացման առաջընթացի և ազդեցությունների վերաբերյալ տվյալները, որոնք ցույց կտան, թե ինչ դրական փոփոխություններ են եղել, և թե որտեղ կա բարեփոխումների անհրաժեշտություն: Ինչ վերաբերում է ժամկետներին, ապա ԿՔԳԾ-ի համեմատաբար կարճատև գործողությունների մասին հաշվետվությունը պետք է ներկայացվի տվյալ գործողության ավարտին, իսկ առավել երկարատև գործողությունների մասին հաշվետվությունը պետք է ներկայացվի կատարման յուրաքանչյուր տարվա վերջին:

6.2. Շահագրգիռ կողմերի մասնակցությունը

Այս ծրագրի շրջանակներում շահագրգիռ կողմերի մասնակցության նկարագիրը ներկայացված է գլուխ 2.-ում, իսկ ներգրավված շահագրգիռ կողմերի ցուցակը՝ հավելված բ-ում: Շահագրգիռ կողմերի լայն շրջանակին տրամադրվել է խորհրդատվություն, և նրանք ընտրվել են շահագրգիռ անձանց քարտեզագրման միջոցով, որի նպատակն է երաշխավորել, որպեսզի ԿՔԳԾ-ի գործընթացի հենց սկզբից սահմանվեն և ներգրավվեն (Վիճակի, Ճնշման և Արձագանքի հետ կապված) թե՛ հիմնական շահագրգիռ կողմերի խմբերը, թե՛ այդ խմբերի անհատները: Սա հնարավորություն տվեց գործընթացում ներգրավելու տեղական գիտելիքների և հետաքրքրությունների առավել լայն և խորը մեկնաբանությունները. շահագրգիռ կողմերի շահերի հիման վրա գերակայությունների սահմանումը մարտահրավերների և գործողությունների նույնականացման և վերլուծության հիմնական բաղադրիչն է, իսկ հետադարձ կապի միջոցով հաստատվեցին և համատեքստում վերլուծվեցին տեխնիկական գնահատման արդյունքները: Սա նաև հանգեցրեց ԿՔԳԾ-ի օժանդակության և նրա նկատմամբ պատասխանատվության մեծացմանը, որը, ինչպես նախատեսվում է, առավել դյուրին կդարձնի ծրագրի իրականացումը: Շահագրգիռ կողմերի դերը կարևոր է մնում ՄՀՎ-ի գործընթացում: ՄՀՎ-ի գործընթացի պատասխանատուն Գյումրի համայնքն է, և, ինչպես նշվել է բաժին 6.1.-ում, արտաքին և ներքին բազմաթիվ շահագրգիռ կողմեր ունեն իրենց դերը:

Յուրաքանչյուր ԿՔԳԾ-ի մասնակցության մոդել և ԿՔԳԾ-ի յուրաքանչյուր ոլորտ տարբեր են, իսկ աղյուսակ 6.3.-ում ներկայացված է տեղական հիմնական շահագրգիռ կողմերի ամփոփ նկարագիրը, որոնք հաշվետու, պատասխանատու են, ստանում կամ շարունակելու են ստանալ խորհրդատվություն ՄՀՎ-ի գործընթացի հետ կապված:

Խորհրդատվություն ստացած շահագրգիռ կողմերի դերը ներառում է տվյալների լրացուցիչ աղբյուրների, ինչպես նաև ֆինանսական միջոցների բացահայտմանը օժանդակություն՝ ցուցիչի տվյալների շտեմարանի նորացման և ընդլայնման գործընթացին նպաստելու նպատակով, այդ թվում՝ օգտագործելով նորարարական ֆինանսական մեխանիզմներ:

Աղյուսակ 6.3. ՄՀՎ-ի գործընթացի տեղական շահագրգիռ կողմերը

Սահմանումներ

Հաշվետու: Պատասխանատու է ճիշտ, մանրամասն և համապարփակ ՄՀՎ-ի գործողության համար: Հաշվետու շահագրգիռ կողմը պետք է վավերացնի և ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերջնական հաստատի ցանկացած պատասխանատու շահագրգիռ կողմի (երի) գործողությունները: Հաշվետու և պատասխանատու (տե՛ս ստորև) դերերը հաճախ բաշխվում են, թեև դրանք կարող են լինել նույն կազմակերպության (կազմակերպություն, որն ընդունում է մյուս կազմակերպության աշխատանքը) տարբեր անհատներ կամ վարչություններ:

Պատասխանատու : ՄՀՎ-ի աշխատանքներն իրականացնող կամ ղեկավարող: Սա կարող է իրականացվել՝ չսահմանափակվելով կամ սահմանափակվելով մեկ այլ՝ ավելի բարձր (հաճախ հաշվետու) շահագրգիռ կողմի պայմաններով, կանոններով կամ կանոնակարգերով:

Խորհրդատվություն ստացած: Երկկողմանի հաղորդակցության միջոցով ՄՀՎ-ի վերաբերյալ կարծիք կամ համագործակցության ձեռքբերում:

Ոլորտ	Գյումրու քաղաքապետարանի վարչություն				Շիրակի մարզ[49]	Նախարարություններ		Վեոլիա Ջուր Շիրակ ՓԲԸ[50]	Գազպրոմ [51] (Շիրակի մարզի մասնաճյուղ)	Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ (ԱրմԷՑՆետ), հյուսիսային մասնաճյուղ	Հատուկ հանձնաժող-ողովներ[52]	ՀԿ-ներ և համայնքայի ն այլ խմբեր[53]	Տեղական ակադեմիա[54]
	Բնակկոմու-նալ և շրջակա միջավայրի պահպանու-թյան	Քաղաքա շինության և ճարտարապե-տության	Գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման	Տրանսպորտի		Շրջակա միջավայրի նախարարու թյուն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք ների նախ.						
Շենքեր, էներգիա, լուսավորությ ուն	Հաշվետու և պատասխան ատու	Պատասխանատ ու	-	-	-	Խորհրդատվ ություն ստացած [55]	Խորհրդատվությո ւն ստացած [56]	-	Խորհրդատվու թյուն ստացած	Խորհրդատվություն ստացած	Խորհրդատվությ ուն ստացած [57]	Խորհրդատվ ություն ստացած	Խորհրդատվությ ուն ստացած
Արդյունաբերո ւթյուն	Պատասխան ատու	-	Հաշվետու և պա-տասխանատու	-	-	-	-	-	-	-	Խորհրդատվությ ուն ստացած	Խորհրդատվ ություն ստացած	Խորհրդատվությ ուն ստացած
Հողօգտագործ ում	Հաշվետու և պատասխան ատու	Պատասխանատ ու	-	-	-	-	-	-	-	-	Խորհրդատվությ ուն ստացած	Խորհրդատվ ություն ստացած	Խորհրդատվությ ուն ստացած
Կոշտ թափոններ	Հաշվետու և պատասխան ատու	-	-	-	-	-	-	Խորհրդատվ ություն ստացած	-	-	-	-	-
Տրանսպորտ	Պատասխան ատու	-	-	Հաշվետու և պատասխան ատու	Խորհրդատ վություն ստացած	-	Խորհրդատվությո ւն ստացած [58].	-	-	-	-	-	-
Ջրամատակա րարում	Հաշվետու և պատասխան ատու	-	Պատասխանատ ու	-	-	-	-	-	-	-	-	-	-

[49] Ներառյալ մարզպետարանի տրանսպորտի վարչությունը:
[50] Գյումրիին սպասարկող ջրմուղ-կոյուղի ընկերությունը:
[51] Գյումրիին սպասարկող գազի և էլեկտրաէներգիայի ընկերությունը:
[52] Ներառյալ քաղաքային զարգացման պետական կոմիտեն, ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեն, ՀՀ կադաստրի կոմիտեն և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (R2E2);
[53] Ներառյալ Հ. Դ. Սախարով, «Առավոտ» բարեգործական, «Բիոսֆիա կոմպաս»,« Կոնտակտ պլյուս»,« Էներգախնայողության հիմնադրամ»,« Գյումրու ԵՆԿՀԿ»,« Մեղվիկ»,« Ազգային արժեք ակումբ» ՀԿ,« Շրջակա միջավայրի տարածքային կենտրոն»,« Կայունության առաջընթաց», «Երրորդ բնություն» ՀԿ և «Վանանդ »:
[54]Ներառյալ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնը:
[55] Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնը;
[56] Էլեկտրաէներգիայի վարչությունը:
[57] Տեխնիկական քաղաքականության վարչությունը:
[58] Ճանապարհների տեխսպասարկման վարչությունը և Տրանսպորտային քաղաքականության վարչությունը

7.ԿՔԳԾ-ի ծախսերն ու ֆինանսավորման տարբերակները

ԿՔԳԾ-ի այս գլուխը ներկայացնում է կապիտալ և գործառնական ծախսերի նախնական հաշվարկը, ինչպես նաև բարձր մակարդակի մեկնաբանություններ ներդրումներ պահանջող առաջնահերթ գործողությունների համար հնարավոր ֆինանսական աղբյուրների վերաբերյալ: Սա հիմնականում քաղաքային ակտիվների արդիականացման, վերականգնման, վերակառուցման կամ քաղաքի համար նոր ակտիվներ ձեռք բերելու նպատակով է: Քաղաքային ակտիվ կարող են լինել Գյումրու կառուցապատված տարածքների բարեփոխումները, ինչպես նաև տեխնոլոգիական միջամտությունները: Այս գործողությունները նաև ներառում են տեղեկացվածության բարձրացում և տեղեկատվական քարոզչական գործունեություն, հիմնական շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացում՝ կապված այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք են քաղաքի բնապահպանական ռեսուրսների պատշաճ պլանավորումը, կառավարումը և պահպանումը:

Նույնկերպ նմանօրինակ գործողությունները, որոնք ֆինանսավորում են պահանջում, ներառում են ռազմավարությունների, քաղաքականությունների և ծրագրերի մշակում, որն իր հերթին կօգնի վերացնել խոչընդոտները և ստեղծել բարենպաստ պայմաններ՝ ԿՔԳԾ-ի միջոցառումների համար լրացուցիչ ներդրումների հոսք ապահովելու նպատակով:

Հաճախ այսօրինակ միջոցառումները, ինչպիսիք են՝ իրազեկության բարձրացումը, տեղեկացվածությունն ու քաղաքականությունը, օրենսդրական կամ նորմատիվ միջոցառումներն այն նախապայմաններն են, որոնք օժանդակում են առանձին կամ խմբային կապիտալ ներդրումների միջոցառումներին:

Գործողության դասակարգումը

Ներդրումներ պահանջող առանձին գործողություններ դասակարգվել են ըստ տեսակների, հետևյալ կերպ.

- մոնիթորինգ, տվյալների հավաքագրում և ուսումնասիրում:
- Տեղեկացվածություն, ցուցադրում և իրազեկության բարձրացում:
- Չափանիշներ, ուղեցույցներ և կանոնակարգումներ:
- Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր:
- Ապրանքների և ծառայությունների պետական գնումներ:
- Կապիտալ ներդրումներ քաղաքի նոր ակտիվների, ենթակառուցվածքի կամ տեխնոլոգիայի համար:
- Կապիտալ ներդրումներ քաղաքի առկա ակտիվների, ենթակառուցվածքների կամ տեխնոլոգիաների համար:

Համայնքի բյուջեն

Ինչպես ներկայացված է փաստաթղթի գլուխ 3.-ում, Գյումրու համայնքի տարեկան բյուջեն կազմում է մոտ 6 մլն եվրո (3, 200,000,000 ՀՀ դրամ), որից մոտ երկու երրորդը սուբսիդավորվում է ՀՀ պետական բյուջեից: Այս ծրագրով ներկայացված համայնքի բազմաթիվ կարիքները և նոր առաջնահերթությունները հիմնված են Կանաչ քաղաք մարտահրավերների վրա: Համայնքի բյուջեի հիմնական մասը ծախսվում է համայնքային ծառայությունների շարունակական գործողությունների վրա, ինչպես օրինակ՝ մանկապարտեզները, մշակութային և մարզական կենտրոնները, համայնքի շինարարական ֆոնդի և ենթակառուցվածքի ընթացիկ տեխսպասարկման արդյունքները: Եթե համայնքին անհրաժեշտ է առկա ակտիվների կապիտալ վերանորոգում, ապա համայնքը դիմում է՝ պետական լրացուցիչ սուբսիդավորում, դոնորական դրամաշնորհներ կամ վարկեր ստանալու համար: Համայնքի համար անհրաժեշտ է նաև մասնավոր հատվածի ներդրումների հետ կապված տարբերակների քննարկումը: Ֆինանսավորման տարբերակները ներկայացված են հաջորդ բաժնում:

Ֆինանսավորման տարբերակները

A_WR_07 Կեղտաջրերի գործողությունների ծրագրի և մրցութային փաստաթղթերի նախապատրաստում առաջարկված ենթակառուցվածքի համար:	Ռազմավարություն, ծրագրեր, պլաններ	2021 – 2022թթ.	300,000	159,000,000	300,000	159,000,000	10,000	5,300,000	Կապիտալ ծախսերը հաշվարկվել են՝ տեղական աջակցության փորձագետներ ձեռք բերելու համար, կեղտաջրերի գործողության ծրագիր (ԿԳԾ) նախապատրաստելու նպատակով, օգտագործելով ԱՏՀ-ի և մոդելավորման մեխանիզմներ, որոնք մշակվել են WR_08-ում: Հաշվարկվել են սարքավորումների ձեռքբերման ծախսերը: Կոյուղաջրերի հետազոտություն, մոդելավորում, կեղտաջրերի մաքրման նախագիծ, տիղմի մաքրման տեխնիկական բոլոր պայմանները անհրաժեշտ են: Ներառում է նաև գնումների փաստաթղթերի նախապատրաստման ծախսերը:	Ոչ		✓	✓		Կոմունալ ջրամատակարարումը կատարվում է մեկ՝ պետական արտոնագրի համաձայն, ֆինանսավորվում է ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից և ջրամատակարարման/ջրահեռացման ենթակառուցվածքների հասույթներից: Ուստի, ֆինանսավորումը կարող է լինել պետության կամ ՄՖՀ-ների/դոնոր կազմակերպությունների կողմից:

Գործողության հղում և վերնագիր	Գործողության դասակարգում	Իրականացման ժամանակացույց	Ընդհանուր կապ. ծախսերի նախահաշիվ		Միջնաժամկետ կապ. ծախսերի նախահաշիվ		Տարեկան գործառնական ծախսեր		Կապ. ծախսերի նախահաշվի ծանոթություններ	Եկամուտների ստացում կամ խնայողություն	Ֆինանսավորման հնարավոր աղբյուրը				Ֆինանսավորման հնարավոր տարբերակները
			Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ			Համայնքի բյուջե	Կառավարություն	ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ	Մասնավոր հատված՝	
A_WR_08 Դրենաժային համակարգերի վերականգնում և ընդլայնում	Կապիտալ ներդրումներ համայնքի առկա ակտիվներում	2021 – 2025թթ.	13,000,000	6,890,000,000	13,000,000	6,890,000,000	260,000	137,800,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը հիմնված է եվրոպական հանձնաժողովի բնապահպանության գլխավոր վարչության (ԳՎ) «Քաղաքային կեղտաջրերի մաքրման ծախսերի համապատասխանության հրահանգ»-ի վրա, սեպտեմբեր, 2010թ, ՔՕՎԻ։ Ընդունենք 28750 մարդու հաշվարկով, (որը կազմում է 115,000 ազգաբնակչության 25%-ը) կեղտաջրերի հավաքման համակարգի համար նախնական լրացուցիչ պահանջարկը կազմում է 874 եվրո/մարդ։ Ընդունենք՝ 20% նյութեր և 80% տեղական պայմանագրեր, իսկ Հայաստանի գնանշումը քաղաքացիական պայմանագրերի համար եվրոյի նորմայի 50%-ն է ։ Սպառողական գնի ինդեքսը 2008 –2018թթ. դանիական 1.15 ցուցանիշի համաձայն՝ կազմում է 13 մլն եվրո ծախս։	Այո		✓	✓	✓	Կոմունալ ջրամատակարարումը կատարվում է մեկ՝ պետական արտոնագրի համաձայն, ֆինանսավորվում է ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից, իսկ ջրամատակարարման/ջրահեռացման սարքավորումների ներդրումները կատարվում են պետական պաշտոնատար անձանց հրահանգների, պետական երաշխիքով վարկերի և պետականորեն ընդունված ներդրումային ծրագրերի հիման վրա։ Այդուհանդերձ, մեծ հնարավորություն կա մասնավոր հատվածի ներդրումների համար ՊՄԳ-ի կամ ԿՇՓ (BOT)-ի միջոցով, սակայն սա պետք է քննարկվի համաձայնություն ձեռք բերելու մեխանիզմի հետ միասին, որի համաձայն՝ իրականացվում են ջրամատակարարման ծառայությունները։

Գործողության հղում և վերնագիր	Գործողության դասակարգում	Իրականացման ժամանակացույց	Ընդհանուր կապ. ծախսերի նախահաշիվ		Միջնաժամկետ կապ. ծախսերի նախահաշիվ		Տարեկան գործառնական ծախսեր		Կապ. ծախսերի նախահաշվի ծանոթություններ	Եկամուտների ստացում կամ խնայողություն	Ֆինանսավորման հնարավոր աղբյուրը				Ֆինանսավորման հնարավոր տարբերակները
			Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ			Համայնքի բյուջե	Կառավարություն	ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ	Մասնավոր հատվածՀ	
A_WR_09 Կեղտաջրերի մաքրման համակարգի վերականգնում և ընդլայնում	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2021 – 2025թթ.	14,000,000	7,420,000,000	14,000,000	7,420,000,000	700,000	371,000,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը հիմնված է եվրոպական հանձնաժողովի բնապահպանության գլխավոր վարչության (ԳՎ) «Քաղաքային կեղտաջրերի մաքրման ծախսերի համապատասխանության հրահանգ»-ի վրա, սեպտեմբեր, 2010թ, ՔՕՎԻ։ ընդունենք՝ 115,000 մարդ, առաջադեմ երկրորդական վերամշակման, նիտրացման և P –ի հեռացման հաշվարկված ծախսը կազմում է 138 եվրո/մարդ՝ 2008 DK գնային սանդղակով։ Ծախսերի 35%-ը եվրոպական գներով է, 65%-ը տեղական քաղ. պայմանագրերն են՝ Եվրոստատի գների 50% արժեքով։ Սպառողի գնային ցուցանիշը (CPI) 2008-2018-ի 1.15 դանիականն է։ Կեղտաջրերի մշակման ընդհանուր արժեքը = 12մլն եվրո։ Ավելացրեք 2մլն եվրո տիղմի ջրազերծման և կայունացման համար։ Ընդամենը 14մլն եվրո։	Այո		✓	✓	✓	Կոմունալ ջրամատակարարումը կատարվում է մեկ՝ պետական արտոնագրի համաձայն, ֆինանսավորվում է ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից, իսկ ջրամատակարարման/ջրահեռացման սարքավորումների ներդրումները կատարվում են պետական մարմինների հրահանգների, պետական երաշխիքով վարկերի և պետականորեն ընդունված ներդրումային ծրագրերի հիման վրա։ Մեծ հնարավորություն կա մասնավոր հատվածի ներդրումների համար՝ ՊՄԳ-ի կամ ԿՇՓ-ի միջոցով։
A_WR_10 Հանրային օգտագործման ջրամատակարարման ենթակառուցվածքի բարեփոխումը կանաչ տարածքներում	Կապիտալ ներդրում քաղաքի առկա ակտիվներում	2021 – 2025թթ.	2,000,000	1,060,000,000	2,000,000	1,060,000,000	60,000	31,800,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը հիմնված է աշխատանքների փուլային ծրագրերի վրա։	Այո	✓	✓	✓		Համայնքի բյուջեյի ռեսուրսները կարող են համալրվել պետբյուջեյի սուբսիդիաների միջոցով, կարելի է դիմել բնապահպանական ծրագրերի դրամաշնորհների՝ քաղաքի կանաչապատման բարեփոխմանը օժանդակելու նպատակով։

Գործողության հղում և վերնագիր	Գործողության դասակարգում	Իրականացման ժամանակացույց	Ընդհանուր կապ. ծախսերի նախահաշիվ		Միջնաժամկետ կապ. ծախսերի նախահաշիվ		Տարեկան գործառնական ծախսեր		Կապ. ծախսերի նախահաշվի ծանոթություններ	Եկամուտների ստացում կամ խնայողություն	Ֆինանսավորման հնարավոր աղբյուրը				Ֆինանսավորման հնարավոր տարբերակները
			Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ			Համայնքի բյուջե	Կառավարություն	ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ	Մասնավոր հատված	
A_LU_01 Գյումրի քաղաքի համար մշակել քաղաքային կայուն նախագծման չափանիշ, ներառյալ գլխավոր հատակագիծը և զոտևորման կանոնակարգերը	Ռազմավարություն, պլաններ և ծրագրեր	2020 – 2021թթ.	800,000	424,000,000	800,000	424,000,000	10,000	5,300,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը ներառում է երկու քայլ, այդ թվում՝ բազմաոլորտային նախագծման քաղաքականություն և գլխավոր հատակագիծը՝ ներառյալ զոտևորման ծրագրերը: Ծախսերի հիմնական մասը նախատեսվում է մասնագետների վարձավճարների և տվյալների հավաքագրման համար:	Ոչ	✓	✓	✓		Համայնքի բյուջեի ռեսուրսները կարող են համալրվել պետբյուջեի սուբսիդիաների միջոցով , ինչպես նաև դոնոր կազմակերպությունների դրամաշնորհների միջոցով, որտեղ կիրառելի է:
A_LU_02 Գյումրի քաղաքի համար մշակել ԱՏՀ-ի վրա հիմնված հողօգտագործման տվյալների բազա և քաղաքի տեղեկատվական մոդել (ՔՏՄ)	Մոնիթորինգ, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	2021 – 2023թթ.	1,000,000	530,000,000	1,000,000	530,000,000	10,000	5,300,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը ներառում է ԱՏՀ-ի հողօգտագործման, բնապահպանական տվյալների բազայի, կայքէջի վրա հիմնված հարթակի մշակումը: Աշխատանքի հիմնական մասը կապված է մասնագետների վարձավճարների հետ:	No	✓		✓		Համայնքային բյուջեի ռեսուրսները պետք է համալրվեն դոնոր կազմակերպությունների դրամաշնորհներով:
A_LU_03 Ստեղծել քաղաքային նախագծման նպատակային ուղեցույց և մեխանիզմներ	Չափանիշներ, ուղենիշներ և կանոնակարգեր	2022 – 2023թթ.	400,000	212,000,000	400,000	212,000,000	15,000	7,950,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը հիմնված է նախագծման ուղեցույցի երկու փաստաթղթի, իրագործելիության ուսումնասիրության և/կամ պիլոտային ծրագրի վրա: Աշխատանքի հիմնական մասը կապված է մասնագետների վարձավճարների հետ	Ոչ	✓		✓		Համայնքային բյուջեի ռեսուրսները պետք է համալրվեն դոնոր կազմակերպությունների դրամաշնորհներով:

Գործողության հղում և վերնագիր	Գործողության դասակարգում	Իրականացման ժամանակացույց	Ընդհանուր կապ. ծախսերի նախահաշիվ		Միջնաժամկետ կապ. ծախսերի նախահաշիվ		Տարեկան գործառնական ծախսեր		Կապ. ծախսերի նախահաշվի ծանոթություններ	Եկամուտների ստացում կամ խնայողություն	Ֆինանսավորման հնարավոր աղբյուրը				Ֆինանսավորման հնարավոր տարբերակները
			Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ			Համայնքի բյուջե	Կառավարություն	ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ	Մասնավոր հատվածՖ	
A_LU_04 Գործարկել ծրագրման քաղաքականություն և շինարարական կանոնակարգեր	Չափանիշներ, ուղենիշներ և կանոնակարգեր	2021թ.- 2030 թ.	200,000	106,000,000	200,000	106,000,000	20,000	10,600,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը ներառում է արբանյակային պատկերների ձեռքբերում, ծրագրային ապահովում, համակարգչային ծրագրեր և դրանց հետ կապված մասնագիտական վարձավճարներ	Այո	✓	✓	✓		Համայնքային բյուջեն կարող է համալրվել պետական սուբսիդիաներից՝ ընդլայնված բնապահպանական մոնիթորինգի իրականացման համար, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հնարավոր դրամաշնորհներից
A_LU_05 Քաղաքային նախագծում և կայուն զարգացում, հանրային ոլորտի ներուժի ավելացում	Տեղեկացվածություն, ցուցադրում և ներուժի ավելացում	2020թ.- շարունակական	100,000	53,000,000	100,000	53,000,000	20,000	10,600,000	Կապիտալ ծախսեր- թվային հարթակ ստեղծելու ծախսեր՝ ներուժի ստեղծման նյութերը և մասնագիտական վարձավճարները բաշխելու համար	Ոչ			✓		Դրամաշնորհային ֆինանսավորման ծրագրերին բնորոշ նախաձեռնություն, որը կարող է օժանդակություն ստանալ դոնոր կազմակերպությունների տեխնիկական օգնության դրամաշնորհների միջոցով:
A_LU_06 Հանրային այգիների և կանաչ տարածքների կառավարման ռազմավարություն	Մոնիթորինգ, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ	2020թ. -2029 թ.	50,000	26,500,000	50,000	26,500,000	40,000	21,200,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը կենտրոնացված է մասնագիտական ծառայությունների օգտագործման մեկանգամյա ծախսերի վրա՝ համապատասխան ընթացակարգեր սահմանելու նպատակով	Ոչ	✓	✓		✓	Համայնքային բյուջեի ռեսուրսները կարող են համալրվել պետական սուբսիդիաներով: Հնարավորություն կա նաև մասնավոր հատվածի ընկերությունների հետ կնքել պարբերական տեխսպասարկման ենթապայմանագրեր:
A_LU_07 Կանաչ ենթակառուցվածքի, զբոսայգիների և բաց տարածքների ապահովում	Ներդրումներ համայնքի նոր ակտիվներում	2020 – 2025թթ.	3,000,000	1,590,000,000	3,000,000	1,590,000,000	30,000	15,900,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը կազմված է մոտ 40 հա նոր հասարակական զբոսայգիների և կանաչ ենթակառուցվածքի նախատեսմամբ՝ 7.57.5 եվրո/մ² հաշվարկով	Ոչ	✓	✓		✓	Համայնքային բյուջեի ռեսուրսները կարող են համալրվել պետբյուջեից սուբսիդավորմամբ: Պետք է ուսումնասիրել մասնավոր հատվածի ներդրումը՝ անվանակոչման, գովազդի և առևտրային իրավունքների հետ կապված:

Գործողության հղում և վերնագիր	Գործողության դասակարգում	Իրականացման ժամանակացույց	Ընդհանուր կապ. ծախսերի նախահաշիվ		Միջնաժամկետ կապ. ծախսերի նախահաշիվ		Տարեկան գործառնական ծախսեր		Կապ. ծախսերի նախահաշվի ծանոթություններ	Եկամուտների ստացում կամ խնայողություն	Ֆինանսավորման հնարավոր աղբյուրը				Ֆինանսավորման հնարավոր տարբերակները
			Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ			Համայնքի բյուջե	Կառավարություն	ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ	Մասնավոր հատված	
A_AQGHG_01 Մշակել համայնքային օդի որակի մոնիտորինգի համակարգ	Մոնիթորինգ, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություններ	2021 – 2023թթ.	200,000	106,000,000	200,000	106,000,000	20,000	10,600,000	Կապիտալ ծախսերի նախահաշիվը ներառում է համակարգի ներդրման ծախսերը, մեթոդաբանության, մոնիթորինգի, տվյալների զեկուցման, սարքավորումների և համակարգչային ծրագրերի օժանդակության ծախսերը:	Ոչ	✓	✓	✓	✓	Համայնքային բյուջեի ռեսուրսները կարող են համալրվել պետբյուջեի սուբսիդավորմամբ՝ շրջակա միջավայրի համապարփակ մոնիթորինգի համար, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հնարավոր դրամաշնորհներով:
A_AR_01 Իրականացնել կլիմայական պայմանների ազդեցության գնահատում ջրամատակարարման, տրանսպորտի, կոշտ թափոնների, շենքերի, էներգիայի և լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների համար	Ռազմավարություն, պլաններ և ծրագրեր	2020 – 2021թթ.	500,000	265,000,000	50,000	265,000,000	0	0	Կապիտալ ծախսերի նախահաշիվը հիմնված է կլիմայական պայմանների ազդեցությունների նմանօրինակ գնահատականների ձեռքբերման և իրականացման փորձի վրա, խորհրդատվական ծառայությունների համար ծախսվող ֆինանսական միջոցներով	Ոչ	✓	✓	✓		Քաղաքապետարանը և պետությունը սովորաբար օգտագործում են դոնոր կազմակերպությունների տեխնիկական օժանդակությունը՝ նմանօրինակ տեխնիկական ուսումնասիրությունները ֆինանսավորելու համար, այնուամենայնիվ, որոշ ֆոնդեր կարող են հասանելի լինել համաֆինանսավորման կամ զույգային ներդրումների միջոցով:
A_AR_02 Նախապատրաստել կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայության բարձրացման գործողությունների ծրագիր՝ Գյումրու ենթակառուցվածքի համար	Ռազմավարություն, պլաններ և ծրագրեր	2021 – 2022թթ.	500,000	265,000,000	500,000	265,000,000	0	0	Կապիտալ ծախսերի նախահաշիվը հիմնված է նմանօրինակ գործողությունների ծրագրի ձեռքբերման և իրականացման փորձի վրա՝ խորհրդատվական ծառայությունների վրա ծախսվելիք ֆինանսական միջոցներով	Ոչ	✓	✓	✓		Քաղաքապետարանը և պետությունը սովորաբար օգտագործում են դոնոր կազմակերպությունների տեխնիկական օժանդակությունը՝ նմանօրինակ տեխնիկական ուսումնասիրությունները ֆինանսավորելու համար, այնուամենայնիվ որոշ հասանելի ֆոնդեր կարող են հասանելի լինել համաֆինանսավորման կամ զույգային ներդրումների միջոցով:

Գործողության հղում և վերնագիր	Գործողության դասակարգում	Իրականացման ժամանակացույց	Ընդհանուր կապ. ծախսերի նախահաշիվ		Միջնաժամկետ կապ. ծախսերի նախահաշիվ		Տարեկան գործառնական ծախսեր		Կապ. ծախսերի նախահաշվի ծանոթություններ	Եկամուտների ստացում կամ խնայողություն	Ֆինանսավորման հնարավոր աղբյուրը				Ֆինանսավորման հնարավոր տարբերակները
			Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ	Եվրո	ՀՀ դրամ			Համայնքի բյուջե	Կառավարություն	ՄՖՀ և դոնոր կազմակերպություններ	Մասնավոր հատված	
A_AR_03 Նախապատրաստել արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործունեության ծրագիր	Ռազմավարություն, պլաններ և ծրագրեր	2023 – 2024թթ.	500,000	265,000,000	500,000	265,000,000	0	0	Կապիտալ ծախսերի նախահաշիվը հիմնված է արտակարգ իրավիճակների պատրաստվածության նմանօրինակ գործունեության ծրագրերի ձեռքբերման և իրականացման փորձի վրա՝ խորհրդատվական ծառայությունների վրա ծախսվելիք ֆինանսական միջոցներով	Ոչ	✓	✓	✓		Քաղաքապետարանը և պետությունը սովորաբար օգտագործում են դոնոր կազմակերպությունների տեխնիկական օժանդակությունը՝ նմանօրինակ տեխնիկական ուսումնասիրությունները ֆինանսավորելու համար, այնուամենայնիվ որոշ հասանելի ֆոնդեր կարող են հասանելի լինել համաֆինանսավորման կամ գույքային ներդրումների միջոցով:
A_AR_04 Կլիմայական պայմանների փոփոխություններին հարմարվողականության և դիմակայության միջոցառումներում ներդրում	Կապիտալ ներդրում համայնքի նոր ակտիվներում	2024թ. - շարունակական	15,000,000	7,950,000,000	15,000,000	7,950,000,000	0	0	Մշակվել է համամասնական հաշվարկ՝ օգտագործելով հարմարվողականության համար տեղական ներդրումների կարիքները (Համաշխարհային բանկ (2010թ., կլիմայի փոփոխություններին հարմարվողականության տնտեսությունը) և Գյումրու ազգաբնակչության (2016թ.) հարաբերությունը երկրի ազգաբնակչության հետ (2017թ.)	Yes	✓	✓	✓	✓	Միջազգային դոնոր կազմակերպություններից ստացված կլիմայի փոփոխությունների համար ֆինանսական միջոցները պետք է օգտագործվեն հարակից ֆինանսավորման համար, օրինակ՝ դրամաշնորհների ձևով, արտոնյալ կամ շուկայական դրույքաչափի պարտավորության ձևով, բաժնետիրական կապիտալի կամ համայնքային և պետական համաֆինանսավորման հետ միասին:
Ընդհանուր			**205,990,000**	**109,174,700,000**	**171,630,000**	**90,963,900,000**	**10,557,500**	**5,595,475,000**							

8.Հաջորդ քայլերը

8.1. ԿՔԳԾ-ն և նրա կարգավիճակը

ԿՔԳԾ-ն ռազմավարական ծրագրման փաստաթուղթ է և պետք է օգտագործվի Գյումրի քաղաքի կողմից՝ Կանաչ քաղաքի՝ իր ձգտումների մասին տեղեկացնելու, ինչպես նաև որպես գործողությունների պլան՝ այդ ձգտումներն իրականացնելու համար: Այստեղ ներկայացված են համայնքի բարձր ձգտումները և համապատասխան գործողություններն ու ներդրումային առաջնահերթությունները կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում:

Բնապահպանական, տնտեսական և սոցիալական բարեփոխումները, որոնք կլինեն Գյումրիում ԿՔԳԾ-ն իրականացնելու շնորհիվ, ներկայացված են նպատակների և թիրախների ցուցանիշներ բաժնում, որը կօգտագործվի՝ ԿՔԳԾ-ի առաջընթացը գնահատելու համար, սակայն ծրագրի ներուժն իրականացնելու համար անհրաժեշտ է պահպանել այն շարժիչ ուժը, որը ստեղծվել է նրա մշակման ընթացքում:

Ակնկալվում է, որ ԿՔԳԾ-ն կընդունվի ավագանու կողմից, և մարզպետարանն այժմ այն կօգտագործի որպես հիմք՝ Գյումրու տարեկան բյուջեն և միջնաժամկետ ու երկարաժամկետ զարգացման ծրագրերը մշակելու համար: Սա կարևոր հանգամանք է քաղաքական օժանդակության համար: Անհրաժեշտ է միասնական ջանքեր գործադրել՝ երաշխավորելու համար, որ Կանաչ քաղաք-ի իրականացման ժամանակահատվածի առաջին փուլում ԿՔԳԾ-ի գործընթացի Քայլ 3-ի գործողությունները կսկսվեն ծրագրված ժամկետում՝ 2020 թվականի սկզբներին: Սա սկիզբ կդնի 60-72 ամիս տևողությամբ ծրագրի իրականացման ժամանակաշրջանին, որի ընթացքում կիրականացվեն մի շարք ԿՔԳԾ գործողություններ՝ օգտագործելով ամբողջական և համընդգրկուն մոտեցում, որը լիովին համաձայնեցված է և ներդրված իր՝ ավելի ընդարձակ շրջանակներում:

8.2. ԿՔԳԾ-ի իրականացման պլանավորում

Քաղաքապետարանը պետք է որոշի, թե ԿՔԳԾ-ի որ գործողությունը պետք է իրականացվի: Սրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր առաջարկի լրացուցիչ վերլուծություն, այդ թվում՝ հաշվի առնելով ֆինանսավորման կարիքները և հասույթ ստեղծելու՝ նրանց ներուժը, ինչպես նաև այս ծրագրով առաջարկված ֆինանսական աղբյուրների որոնումը: Որպես այս գործընթացի մաս՝ անհրաժեշտ կլինի իրականացնել իրագործելիության ուսումնասիրություններ, որոնք առաջարկված միջոցառումների նպատակահարմարության օբյեկտիվ գնահատականն են: ԿՔԳԾ-ի մշակման ընթացքում մենք հանդիպեցինք բազմաթիվ օրինակների, թե ինչպես էին վտանգվում, իսկ որոշ դեպքերում դադարեցվում ուսումնասիրված միջոցառումների իրականացումը և ներդրումը, մի շարք գործոնների պատճառով, ինչպիսիք են ոչ բավարար քաղաքական օժանդակությունը, օժանդակ գործողությունները, ինստիտուցիոնալ կառուցվածքը, մատչելիությունը, շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը և տվյալները: Մենք փորձել ենք հաշվի առնել ԿՔԳԾ-ի մշակման ընթացքում ձեռք բերված համապատասխան եզրակացությունները: Օրինակ՝ իրականացվել են ներուժի ավելացման նպատակային գործողություններ, սահմանվել են գործողությունների սխեմաներ, միջոցառումների միջև օժանդակ կապեր, ինչպես նաև դրանք իրականացնելու ծախսերը և հնարավոր ֆինանսական աղբյուրները: Նախագծվել և իրականացվել են նաև շահագրգիռ կողմերի մասնակցությամբ գործողություններ, որն ընդգրկել է հիմնական որոշում կայացնողներին՝ ԿՔԳԾ-ի նպատակակետերի և գործողությունների իրականացման համար քաղաքական օժանդակություն ձեռք բերելու նպատակով: Այդուհանդերձ, ծրագրի գործարկման համար անհրաժեշտ է բնորոշել դրա հետ կապված ռիսկերը, մանրամասն ուսումնասիրել դրանք Քայլ 3-ի իրականացման սկզբում, ինչպես նաև յուրաքանչյուր նախագծված և ընդունված ծրագրի համար, ռիսկերի մակարդակը նվազեցնելու միջոցառումները: Ռիսկերի մակարդակը նվազեցնելու արդյունավետությունը ակնհայտ կդրսևորվի Կանաչ քաղաք-ի հաշվետվության Քայլ 4-ում, որտեղ կվերլուծվի ԿՔԳԾ-ի առաջընթացը և այդ գործողությունների ազդեցությունը:

8.3. ԿՔԳԾ-ի հաշվետվություն

Կանաչ քաղաք հաշվետվությունը ներկայացնում է արդյունքները և այդ արդյունքներին հասնելու եղանակները, ինչպես նաև յուրաքանչյուր ժամանակահատվածի հաջողություններն ու դրանց բարելավման հնարավորությունները: Այս գործընթացը ղեկավարելու գործողությունները կքննարկվեն և կկատարելագործվեն նախնական փուլում, իսկ ԿՔԳԾ-ի

մշակման ընթացքում ձևավորված և գլուխ 6-ում ներկայացված պայմանական մոտեցումը կօգտագործվի որպես մեկնարկային կետ: Կանաչ քաղաք հաշվետվությունը ԿՔԳԾ-ի գործընթացի 4-րդ և վերջին քայլն է, իսկ ԿՔԳԾ-ի մեթոդաբանությունը պարբերական է և անհրաժեշտ կլինի պարբերաբար վերանայել ԿՔԳԾ-ի մարտահրավերները, նպատակները, գործողությունները և թիրախները՝ բնորոշելու համար «Վիճակ, ճնշում և Արձագանք» ցուցանիշները, որոնք կարող են պահանջել վերանայել մոտեցումները և նորացնել ԿՔԳԾ-ն: Այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է քաղաքական մշտական օժանդակությամբ և մարզպետարանի՝ իր գործին նվիրված և շահագրգիռ աշխատակցի գործունեությամբ:



Նկար 8.1. ԿՔԳԾ-ի Քայլ 3-ի (Կանաչ քաղաք իրականացում) և Քայլ 4-ի (Կանաչ քաղաք հաշվետվություն) գործողությունների ծրագիր

Հավելվածներ

Հավելված Ա. Լրացուցիչ գործողություններ

Հավելվածում ներառված գործողությունները ներկայացված են որպես լրացում գլուխ 5-ում մանրամասն նկարագրվածների: Տեխնիկական, շահագրգիռ կողմերին վերաբերելի և քաղաքական առաջնահերթությունների սահմանման գործընթացի արդյունքում հատկորոշված չլինելով որպես խիստ առաջնահերթություններ՝ այս գործողություններն, այդուհանդերձ, ներկայացված են որպես ԿՔԳԾ-ի բաղկացուցիչ մաս, քանի որ դրանք մշակվել են ԿՔԳԾ-ի թիմի կողմից՝ ուղղված լինելով քաղաքում վերհանված բնապահպանական խնդիրների լուծմանը, և որպես այդպիսիք քաղաքային լիազոր մարմինների կողմից կարող են հայեցողաբար դասվել առաջնահերթությունների շարքում՝ ըստ անհրաժեշտության:

Այս հավելվածում ներկայացված են 18 լրացուցիչ գործողություն, որոնք վերաբերում են հետևյալ ոլորտներին.

- տրանսպորտ – 6 գործողություն,
- արդյունաբերություն – 4 գործողություն,
- կոշտ թափոններ – 1 գործողություն,
- ջուր – 3 գործողություն,
- օդի որակ – 1 գործողություն,
- հողեր - 2 գործողություն,
- կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր – 1 գործողություն:

A.1.1. Տրանսպորտին առնչվող գործողություններ

Տրանսպորտի ուղղությամբ լրացուցիչ գործողությունները ներառում են տրանսպորտային նոր հանգույցներով, հեծանվային ենթակառուցվածքներով ապահովումը, քայլելու և հեծանվավարման խթանման արշավները, քաղաքի փողոցների վերափոխումը հետիոտնայինի, արտանետումների ցածր մակարդակով գոտիների ուսումնասիրությունը, քաղաքային փոխադրամիջոցների շարժունությունը բարելավող թվային հավելվածների ներդրումը և հասարակական տրանսպորտի շարժակազմի թարմացումը նվազ արտանետումներ ունեցող տրանսպորտային միջոցներով:

A.1.2. Արդյունաբերությանն առնչվող գործողություններ

Արդյունաբերության ուղղությամբ լրացուցիչ գործողությունները ներառում են «կանաչ բիզնեսի» գաղափարների մշակումը և «կանաչ տնտեսության ակումբների» ստեղծումը, արդյունաբերական/ ՓՄՁ-ների էներգակառավարման համակարգերի և հետազոտությունների իրականացումը, արդյունաբերական թափոնների հեռացման վայրերի նախնական ուսումնասիրությունը և վերականգնումը:

A.1.3. Կոշտ թափոններին առնչվող գործողություններ

Կոշտ թափոնների ուղղությամբ լրացուցիչ գործողությունները ներառում են թափոնների հեռացման և վերամշակման եղանակների իրագործելիության ուսումնասիրությունները, Գյումրի քաղաքի համար թափոնների կառավարման ինտեգրացված պլանի մշակումը և կոշտ թափոնների վերաբերյալ հասանելի հավաստի տվյալների բազայի ստեղծումը:

A.1.4. Ջրային ռեսուրսներին առնչվող գործողություններ

Ջրային ռեսուրսներին առնչվող լրացուցիչ գործողությունները կուղղվեն «Խելացի քաղաքի» փորձացուցադրական տարածքի հատկացմանը (ջրային ռեսուրսների ուղղվածությամբ) և գետերի կառավարման գործողությունների պլանի մշակմանը:

A.1.5. Օդի որակին առնչվող գործողություններ

Օդի որակին առնչվող լրացուցիչ գործողությունները կուղղվեն օդի որակի ուղղիչ միջամտությունների համար ստեղծված մշտադիտարկման քաղաքային համակարգերի ու մեխանիզմների մշակմանը:

A.1.6. Հողերին առնչվող գործողություններ

Հողի որակին առնչվող լրացուցիչ գործողությունները ներառում են հողի որակին վերաբերող միջազգային կանոնակարգերի տեղայնացումն ու գործարկումը, ինչպես նաև հողի որակին առնչվող խնդիրների ներառումը քաղաքային զարգացմանը միտված որոշումների կայացման մեջ՝ ներառյալ համընդհանուր իրազեկվածության աստիճանի բարձրացումը:

A.1.7. Կանաչ տարածքներին, կենսաբազմազանությանը և էկոհամակարգերին առնչվող գործողություններ

Կանաչ տարածքներին և կենսաբազմազանությանն առնչվող գործողությունը կլինի քաղաքի կենսաբազմազանության ելակետային տվյալների ամրագրմանը նվիրված ուսումնասիրություն, քանի որ Գյումրի քաղաքի կենսաբազմազանության վերաբերյալ առկա տեղեկությունները խիստ սահմանափակ են:

ԿՔԳԾ-ի լրացուցիչ գործողությունների համար անհրաժեշտ ծախսերը և համապատասխան ֆինանսավորման տարբերակները թվարկված են աղյուսակ A-1-ում, որին հաջորդում են յուրաքանչյուր լրացուցիչ գործողության մանրամասն նկարագրությամբ ձևանմուշները:

ԱՂՅՈՒՍԱԿ Ա.1. Լրացուցիչ ԿՔԳԾ գործողություններ. կապիտալ և շահագործման ծախսեր (արտահայտված եվրոյով և ՀՀ դրամով) և ֆինանսավորման տարբերակներ

Նույնականացման համար	Գործողության անվանում	Դասակարգում	Իրականացման ժամանակահատված	Կապիտալ ծախսերի ընդհանուր գնահատական		Կապիտալ ծախսերի միջանկյալ գնահատական (եվրո)		Շահագործման ծախսերի տարեկան գնահատական (եվրո)		Նշումներ գնահատված ծախսերի մասին	Եկամուտի գոյացում	Ֆինանսավորման հնարավոր աղբյուր				Ֆինանսավորման հնարավոր տարբերակներ
				Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ			Քաղաքային բյուջե	ՀՀ կառավարություն /պետական բյուջե/	ՄՖՀ և դոնորներ	Մասնավոր հատված	
A_TR_03	Հասարակական տրանսպորտի նոր հանգույցներ	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020-2024 թթ.	5,000,000	2,650,000	5,000,000	2,650,000	350,000	185,500,000	Կապիտալ ծախսերի գնահատականը հիմնված է համանման տրանսպորտային հանգույցների ներդրման մոտավոր արժեքների վրա:	Կա		✓	✓	✓	Ֆինանսավորում պետական սուբվենցիաների, ՄՖՀ-ի վարկավորման, պոտենցիալ կայուն լուծումներին ուղղված «կանաչ» դրամաշնորհների միջոցով, ինչպես նաև ՊՄԳ/ԿՇՀ-ի (կառուցում և շահագործման հանձնում)՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ:
A_TR_07	Քաղաքի փողոցների վերափոխում հետիոտնայինի	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020-2024 թթ.	1,000,000	530,000,000	1,000,000	530,000,000	50,000	26,500,000	Կապիտալ ծախսերի գնահատականը ներառում է մինչև 5 փողոցի վերափոխման ծախսերը՝ ներառյալ նոր կահավորումը, սալարկումը, լուսավորությունը և մուտք գործելու նկատմամբ վերահսկողության համակարգը:	Չկա	✓	✓	✓		Այս գործողությունը կարող է մասնակիորեն ֆինանսավորվել քաղաքային միջոցներից՝ ուղեկցվելով պետական սուբվենցիաներով, ՄՖՀ-ի վարկերով՝ որպես տրանսպորտային ներդրումների մաս, ինչպես նաև պոտենցիալ կայուն լուծումներին ուղղված «կանաչ» դրամաշնորհների միջոցով ստացված հնարավոր ֆինանսավորումով:
A_TR_08	Արտանետումների ցածր մակարդակով գոտիներ Գյումրի քաղաքի կենտրոնում	Չափորոշիչներ, ուղեցույցներ և կանոնակարգեր	2020-2024 թթ.	5,000,000	2,650,000,000	5,000,000	2,650,000,000	1,000,000	530,000,000	Կապիտալ ծախսերի գնահատականը հիմնված է արտանետումների ցածր մակարդակով գոտու ենթակառուցվածքի համար անհրաժեշտ ներդրումային ծախսերի փորձագիտական գնահատման վրա:	Կա		✓	✓	✓	Ֆինանսավորում պետական սուբվենցիաների, ՄՖՀ-ի վարկավորման, պոտենցիալ կայուն լուծումներին ուղղված «կանաչ» դրամաշնորհների միջոցով:

Նույնականաց-ման համար	Գործողության անվանում	Դասակարգում	Իրականացման ժամանակահատված	Կապիտալ ծախսերի ընդհանուր գնահատական		Կապիտալ ծախսերի միջանկյալ գնահատական (եվրո)		Շահագործման ծախսերի տարեկան գնահատական (եվրո)		Նշումներ գնահատված ծախսերի մասին	Եկամուտի գոյացում	Ֆինանսավորման հնարավոր աղբյուր				Ֆինանսավորման հնարավոր տարբերակներ
				Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ			Քաղաքային բյուջե	ՀՀ կառավարություն /պետական բյուջե/	ՄՖՀ և դոնորներ	Մասնավոր հատված	
A_TR_10	Քարշեյրինգի (ավտոմոբիլային համատեղված փոխադրման) քաղաքային մեխանիզմ	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2021-2023 թթ.	500,000	265,000,000	500,000	265,000,000	50,000	26,500,000	Կապիտալ ծախսերի գնահատականը ներառում է մեխանիզմի մշակման համար խորհրդատվական ծառայությունների միանվագ վճարը: Կապիտալ ծախսերը ենթադրում են նաև հանրային ներգրավվածություն և խորհրդատվություն, ինչպես նաև համացանցային կամ հավելվածային տեխնոլոգիայի ապահովման համար կատարվող ներդրում:	Կա	✓	✓		✓	Քաղաքը կարող է հետամուտ լինել այս գործողությունը մասնակիորեն ֆինանսավորելու պետական սուբսիդավորման միջոցներով: Հնարավոր է նաև քարշեյրինգի մեխանիզմների ստեղծման համար ստանալ ներդրումներ մասնավոր հատվածից, ինչի փորձը առկա է այլ քաղաքներում:
A_TR_11	Քաղաքի տրանսպորտային շարժունությանն օժանդակող թվային հավելված	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2022-2026 թթ.	3,000,000	1,590,000,000	0	0	600,000	318,000,000	Շահագործման ծախսերի տարեկան գնահատականը հաշվարկված է որպես կապիտալ ծախսերի 20% և ներառում է շահագործման և մշտադիտարկման ընդհանուր արժողությունները:	Կա	✓	✓		✓	Քաղաքը կարող է հետամուտ լինել այս գործողությունը մասնակիորեն ֆինանսավորելու պետական սուբսիդավորման միջոցներով: Հնարավոր է նաև ստանալ մասնավոր հատվածի ներդրումներ համացանցային հավելվածի մշակման համար, որը կարող է ծառայել որպես եկամտի աղբյուր մարքեթինգի և գովազդի միջոցով:
A_TR_13	Քաղաքային տրանսպորտային միջոցների շարժակազմի մասնակի փոխարինում էլեկտրական տրանսպորտային միջոցներով	Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում	2020-2021 թթ.	100,000	53,000,000	100,000	53,000,000	10,000	5,300,000	Կապիտալ ծախսերի գնահատումը հիմնված է մեկ միավոր տրանսպորտային միջոցի արժեքի վրա (ընդամենը՝ երկու տրանսպորտային միջոց):	Չկա	✓		✓		Քաղաքային ավտոմոբիլային շարժակազմի համար էլեկտրական տրանսպորտային միջոցների գնման ծախսերը պետք է կատարվեն քաղաքային բյուջեից, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների կողմից համաֆինանսավորման տարբերակների միջոցով:

Նույնականաց-ման համար	Գործողության անվանում	Դասակարգում	Իրականացման ժամանակահատված	Կապիտալ ծախսերի ընդհանուր գնահատական		Կապիտալ ծախսերի միջանկյալ գնահատական (եվրո)		Շահագործման ծախսերի տարեկան գնահատական (եվրո)		Նշումներ գնահատված ծախսերի մասին	Եկամուտի գոյացում	Ֆինանսավորման հնարավոր աղբյուր				Ֆինանսավորման հնարավոր տարբերակներ
				Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ			Քաղաքային բյուջե	ՀՀ կառավարություն /պետական բյուջե/	ՄՖՀ և դոնորներ	Մասնավոր հատված	
A_IN_01	Գյումրի քաղաքի «Կանաչ բիզնեսի» հայեցակարգ	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2020թ.-ից՝ շարունակական	90,000	47,700,000	90,000	47,700,000	5,000	2,650,000	Կապիտալ ծախսեր. քաղաքապետարանի անձնակազմի կամ ներգրավված արտաքին փորձագետների վճար՝ դոնորների, ՄՖՀ-ների, ՀԿ-ների հետ համատեղ 3-ամյա հիմնական ծրագրի հայեցակարգի մշակման համար:	Չկա			✓	✓	Ռազմավարության մշակմանն ուղղված աջակցության ֆինանսավորումն ակնկալվում է մաքուր արտադրությունների օրակարգով հետաքրքրված դոնորներից/ՄՖՀ-ներից, ինչպես նաև արդյունաբերական ոլորտի գործընկերների կողմից հնարավոր համաֆինանսավորումից:
A_IN_02	«Կանաչ բիզնեսի» համակարգման հարթակ՝ «Գյումրի քաղաքի «կանաչ» տնտեսության ակումբ»	Իրազեկվածություն, ցուցադրում և կարողությունների զարգացում	2020թ.-ից՝ շարունակական	120,000	63,600,000	120,000	63,600,000	5,000	2,650,000	Կապիտալ ծախսերի գնահատումը ներառում է տեղացի կամ օտարերկրյա խորհրդատուների անձնակազմի վճարը՝ ծրագրի և կանոնակարգերի մշակման համար, ֆոնդերի հավաքագրումը, կամավորական հիմունքներով համաձայնագրերի, «կանաչ արտոնագրման» մեխանիզմների մշակման իրավաբանական ծախսերը, տեղեկատվական հանգույցի ստեղծման հետ կապված ծախսերը:	Կա			✓	✓	Ռազմավարության մշակմանն աջակցության ֆինանսավորումն ակնկալվում է մաքուր արտադրությունների օրակարգով հետաքրքրված դոնորներից/ՄՖՀ-ներից, ինչպես նաև արդյունաբերական ոլորտի գործընկերների կողմից հնարավոր համաֆինանսավորումից:

Նույնականացման համար	Գործողության անվանում	Դասակարգում	Իրականացման ժամանակահատված	Կապիտալ ծախսերի ընդհանուր գնահատական		Կապիտալ ծախսերի միջանկյալ գնահատական (եվրո)		Շահագործման ծախսերի տարեկան գնահատական (եվրո)		Նշումներ գնահատված ծախսերի մասին	Եկամուտի գոյացում	Ֆինանսավորման հնարավոր աղբյուր				Ֆինանսավորման հնարավոր տարբերակներ
				Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ			Քաղաքային բյուջե	ՀՀ կառավարություն /պետական բյուջե/	ՄՖՀ և դոնորներ	Մասնավոր հատված	
A_IN_03	Էներգակառավարման համակարգերի գծով աջակցության տրամադրում արդյունաբերական սուբյեկտներին/ ՓՄՁ -ներին	Իրազեկվածություն, ցուցադրում և կարողությունների զարգացում	2020-2025 թթ.	250,000	132,500,000	250,000	132,500,000	25,000	13,250,000	Կապիտալ ծախսերի գնահատումը ներառում է արտաքին մասնագիտական ծառայությունների արժեքը արդյունաբերական էներգակառավարման ծրագրի մշակման համար, տարեկան 10 ձեռնարկություններում էներգետիկ նմուշային աուդիտի անցկացման ծախսերը, ինչպես նաև ներդրումների տեսանելիության ապահովման ծախսերը՝ ուղղված մասնավոր (սեփական կապիտալ կամ փոխառու միջոցներ) կամ դոնորային ֆինանսավորումների խթանմանը:	Կա			✓	✓	Ռազմավարության մշակմանն աջակցության ֆինանսավորումն ակնկալվում է մաքուր արտադրությունների օրակարգով հետաքրքրված դոնորներից/ՄՖՀ-ներից, ինչպես նաև արդյունաբերական ոլորտի գործընկերների կողմից հնարավոր համաֆինանսավորումից:
A_IN_05	Նախկին արդյունաբերական տարածքների ռեկուլտիվացիա՝ վերականգնման նպատակով	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	2022-2025 թթ.	1,000,000	530,000,000	1,000,000	530,000,000	25,000	13,250,000	Կապիտալ ծախսերը գնահատված են միայն այն տեղանքների հաշվարկով, որոնք մնալու են որպես սեփականություն և որոնց կառավարումը կպահանջի հատուկ միջոցների կիրառմամբ ռեկուլտիվացիա և կանաչ տարածքների մշակում: ՊՄԳ-ների (պետություն-մասնավոր գործընկերություն) դեպքում Կապիտալ ծախսերը կգնահատվեն առանձին-առանձին դիտարկման հիմունքով:	Կա	✓	✓	✓	✓	Կատարվում է քաղաքային բյուջեի և պետական սուբվենցիաների միջոցներով՝ ՄՖՀ-ների հնարավոր վարկավորման հետ համատեղ: Մասնավոր հատվածի կողմից արդյունաբերական լքված տարածքների վերականգնման նկատմամբ մասնավոր հատվածի հետաքրքրության դեպքում ՊՄԳ-ն կարող է գործել որպես ֆինանսավորման հնարավոր մեխանիզմ:

Նույնականաց-ման համար	Գործողության անվանում	Դասակարգում	Իրականացման ժամանակահատված	Կապիտալ ծախսերի ընդհանուր գնահատական		Կապիտալ ծախսերի միջանկյալ գնահատական (եվրո)		Շահագործման ծախսերի տարեկան գնահատական (եվրո)		Նշումներ գնահատված ծախսերի մասին	Եկամուտի գոյացում	Ֆինանսավորման հնարավոր աղբյուր				Ֆինանսավորման հնարավոր տարբերակներ
				Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ			Քաղաքային բյուջե	ՀՀ կառավարություն /պետական բյուջե/	ՄՖՀ և դոնորներ	Մասնավոր հատված	
A_SW_01	Թափոնների հեռացման և մշակման եղանակների իրագործելիության ուսումնասիրություն, Գյումրի քաղաքի համար թափոնների կառավարման ինտեգրացված պլանի մշակում և կոշտ թափոնների վերաբերյալ հանրայնորեն հասանելի տվյալների բազայի ստեղծում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	2020-2023 թթ.	1,000,000	530,000,000	1,000,000	530,000,000	50,000	26,500,000	Կապիտալ ծախսերը գնահատված են նախկին ծրագրերի փորձի հիման վրա՝ իրագործելիության համեմատական ուսումնասիրություն ների և պլանների առաջադրման նպատակով:	Կա	✓	✓	✓		Կատարվում է քաղաքային բյուջեի և պետական սուբվենցիաների միջոցներով՝ ՄՖՀ-ների հնարավոր վարկավորման հետ համատեղ:
A_WR_11	«Խելացի քաղաքի» պիլոտային գործողությունների տարածքի հիմնում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	2020-2022 թթ.	20,000	10,600,000	20,000	10,600,000	0	0	Կապիտալ ծախսերի գնահատման մեջ հաշվի են առնված պիլոտային «Խելացի քաղաքների» ջրային սեկտորի որոշարկման և ուսումնասիրության ծախսերը:	Չկա	✓	✓	✓		Քաղաքի բյուջետային ռեսուրսներին կարող են հավելվել պետական բյուջեի սուբվենցիաները կամ ՄՖՀ-ների/դոնորների ֆինանսավորումը:

Նույնականաց-ման համար	Գործողության անվանում	Դասակարգում	Իրականացման ժամանակահատված	Կապիտալ ծախսերի ընդհանուր գնահատական		Կապիտալ ծախսերի միջանկյալ գնահատական (եվրո)		Շահագործման ծախսերի տարեկան գնահատական (եվրո)		Նշումներ գնահատված ծախսերի մասին	Եկամուտի գոյացում	Ֆինանսավորման հնարավոր աղբյուր				Ֆինանսավորման հնարավոր տարբերակներ
				Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ			Քաղաքային բյուջե	ՀՀ կառավարություն /պետական բյուջե/	ՄՖՀ և դոնորներ	Մասնավոր հատված	
A_WR_12	Գետերի կառավարման գործողությունների պլանի մշակում	Ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր	Քայլ 1. 2020-2022 թթ. Քայլ 2. 2020-2026 թթ. Քայլ 3. 2020-2022 թթ.	Քայլ 1. 50,000 Քայլ 2. 50,000 Քայլ 3. 50,000	Քայլ 1. 26,500,000 Քայլ 2. 26,500,000 Քայլ 3. 26,500,000	150,000	79,500,000	15,000	7,950,000	Կապիտալ ծախսերի գնահատումը կատարված է 3 քայլերի հիման վրա. **Քայլ 1**. շահագրգիռ կողմերի ներգրավում և հետազոտություններ ի նախապատրաստում : **Քայլ 2.** հետազոտություններ ի նախաձեռնման ծախսեր՝ պատշաճ մշտադիտարկման կազմակերպման նպատակով: Բուն մշտադիտարկման ծախսերն ընդգրկված չեն, քանի որ դրանց ապագա ծավալները հայտնի չեն: **Քայլ 3.** որոշ միջազգային մասնագետների և տեղացի աջակցող թիմի մասնակցությամբ գործողությունների պլանի կազմմանն ուղղված փոքրիկ հետազոտության անցկացման ծախսեր:	Կա	✓	✓	✓		Քաղաքի բյուջետային ռեսուրսներին կարող են հավելվել պետական բյուջեի սուբվենցիաները: Կարող են հայթայթվել բնապահպանական դրամաշնորհներ՝ ի աջակցություն բնապահպանական օգուտների մոնետիզացիայի:
A_WR_13	Բնակիչների ջրօգտագործման վարքագծային նպատակակետեր	Իրազեկվածություն, ցուցադրում և կարողությունների զարգացում	2020-2026 թթ.	100,000	53,000,000	100,000	53,000,000	5,000	2,650,000	Կապիտալ ծախսերի գնահատումը ներառում է փոքրածավալ հետազոտության անցկացման և շահագրգիռ կողմերի ներգրավման հետ կապված ծախսեր:	Կա	✓	✓	✓		Քաղաքի բյուջետային ռեսուրսներին կարող են հավելվել պետական բյուջեի սուբվենցիաները: Կարող են հայթայթվել բնապահպանական դրամաշնորհներ՝ ի աջակցություն բնապահպանական օգուտների մոնետիզացիայի:
A_AQGHG_02	Օդի որակի բարելավման համակարգի ստեղծում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	2020-2024 թթ.	200,000	106,000,000	200,000	106,000,000	20,000	10,600,000	Կապիտալ ծախսերի գնահատումը ներառում է ուղղիչ գործողությունների ծրագրի կազմումը:	Կա	✓	✓	✓		Բնապահպանական ուժեղացված մշտադիտարկման համար քաղաքի բյուջետային ռեսուրսներին կարող են հավելվել պետական սուբսիդիաներ, ինչպես նաև պոտենցիալ դոնորներից ստացված դրամաշնորհներ՝ ուղղված բնապահպանական ազդեցությունների մեղմացմանը:

Նույնականաց-ման համար	Գործողության անվանում	Դասակարգում	Իրականացման ժամանակահատված	Կապիտալ ծախսերի ընդհանուր գնահատական		Կապիտալ ծախսերի միջանկյալ գնահատական (եվրո)		Շահագործման ծախսերի տարեկան գնահատական (եվրո)		Նշումներ գնահատված ծախսերի մասին	Եկամուտի գոյացում	Ֆինանսավորման հնարավոր աղբյուր				Ֆինանսավորման հնարավոր տարբերակներ
				Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ	Եվրո	ՀՀ ԴՐԱՄ			Քաղաքային բյուջե	ՀՀ կառավարություն /պետական բյուջե/	ՄՖՀ և դոնորներ	Մասնավոր հատված	
A_SL_01	Հողի որակին վերաբերող միջազգային կանոնակարգերի տեղայնացում և կիրարկում	Չափորոշիչներ, ուղեցույցներ և կանոնակարգեր	2020թ.-ից՝ շարունակական	150,000	79,500,000	150,000	79,500,000	20,000	10,600,000	Կապիտալ ծախսերի գնահատումը ներառում է մեթոդաբանության մշակման և հաստատման, քարտեզագրման, պարբերական փորձարկումների, տվյալների բաց հարթակում զեկույցների զետեղման ուղղությամբ իրականացվող արտապատվիրված (outsourced) ծառայությունների արժեքը:	Չկա	✓	✓	✓		Բնապահպանական ուժեղացված մշտադիտարկման համար քաղաքի բյուջետային ռեսուրսներին կարող են հավելվել պետական սուբսիդիաներ, ինչպես նաև պոտենցիալ դոնորներից ստացված դրամաշնորհներ՝ ուղղված բնապահպանական ազդեցությունների մեղմացմանը:
A_SL_02	Հողի որակի գնահատում և ստացված տեղեկությունների ներառում քաղաքային զարգացմանը միտված որոշումների կայացման մեջ	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	2021թ.-ից՝ շարունակական	150,000	79,500,000	150,000	79,500,000	20,000	10,600,000	Կապիտալ ծախսերով նախատեսված է, որ հարթակի մշակումը կարող է արտապատվիրվել գիտակրթական ոլորտի կամ քաղհասարակության գործընկերների, սակայն պարբերական փոխհաղորդակցությունը պետք է վարվի քաղաքային լիազոր մարմինների կողմից:	Կա	✓	✓	✓		Բնապահպանական ուժեղացված մշտադիտարկման համար քաղաքի բյուջետային ռեսուրսներին կարող են հավելվել պետական սուբսիդիաներ, ինչպես նաև պոտենցիալ դոնորներից ստացված դրամաշնորհներ՝ ուղղված բնապահպանական ազդեցությունների մեղմացմանը:
A_GSBIO_01	Քաղաքի կենսաբազմազա-նության ելակետային տվյալների ամրագրում	Մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն	2021թ.-ից՝ շարունակական	300,000	159,000,000	300,000	159,000,000	15,000	7,950,000	Կապիտալ ծախսերով նախատեսված է ապահովել գիտահետազոտական հիմնարկների մրցունակ ծառայությունները՝ կենսաբազմազանության գնահատման, գոտևորման և քարտեզագրման, քաղաքին առնչվող ցուցանիշների տվյալների բաց բազայում պարբերաբար կատարվող թարմացումների ուղղությամբ:	Կա	✓	✓	✓		Բնապահպանական ուժեղացված մշտադիտարկման համար քաղաքի բյուջետային ռեսուրսներին կարող են հավելվել պետական սուբսիդիաներ, ինչպես նաև պոտենցիալ դոնորներից ստացված դրամաշնորհներ՝ ուղղված բնապահպանական ազդեցությունների մեղմացմանը:

Նույնականացման համար
A_TR_03

Անվանում: Հասարակական տրանսպորտի նոր հանգույցներ

Դասակարգում: Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն
Այս գործողությամբ նախատեսվում է քաղաքում հանրային տրանսպորտի երկու նոր հանգույցի ստեղծում, որոնցից մեկը կլինի մյուսից ավելի մեծ և կկազմի արդիականացված երկաթուղային կայարանի մի մաս, իսկ երկրորդ՝ ավելի փոքր հանգույցը կզբաղեցնի առավել կենտրոնական դիրք քաղաքում կամ կտեղակայվի գլխավոր ավտոկայանում: Օբյեկտներից յուրաքանչյուրը հագեցած կլինի տրանսպորտային միջոցների, ուղևորների և շահագործման համար պատշաճ հարմարություններով՝ ներառյալ նստատեղերը, մանրածախ/առևտրային կետերը և ոտքով կամ հեծանիվով տեղաշարժման այլ գոտիներ: Տեխնոլոգիական բաղադրիչը կազմելու է տրանսպորտային հանգույցների ձևավորման և շահագործման անբաժանելի մաս: Հողօգտագործման այլ նախագծերի (ներառյալ՝ զարգացման տարանցիկ միջանցքները) հետ համալիր պլանավորման դեպքում այս օբյեկտները կընձեռեն հասարակական տրանսպորտի օպտիմալ երթուղավորման (TOD) մշակման հնարավորություն:

Բնապահպանական կատարողական (համապատասխանություն ԿՔԳԾ-ի նպատակներին)

SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների (տեղային և համընդհանուր աղտոտման նյութեր) ծավալների նվազեցում

SO_AR Գյումրի քաղաքի սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ

Առանցքային օգուտներ
- Սոցիալական՝ անվտանգության, սոցիալական ներգրավվածության բարելավում, «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն
- Տնտեսական՝ աշխատատեղերի ստեղծում
- Բնապահպանական՝ օդի որակի բարելավում և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում

Կապիտալ ծախսեր (եվրո)
5,000,000
Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)
2,650,000,000

Շահագործման տարեկան ծախսեր (եվրո)
350,000
Շահագործման տարեկան ծախսեր (ՀՀ դրամ)
185,500,000

Ֆինանսավորման տարբերակներ
- ՀՀ կառավարություն
- ՄՖՀ-ներ և դոնորներ
- Մասնավոր հատված

Իրականացման մեկնարկը և ավարտը՝ 2020 – 2024թթ.

Գործողության պատասխանատու
Գյումրու քաղաքապետարան, Տրանսպորտի բաժին

Իրականացնող գործընկեր(ներ)՝
Հասարակական տրանսպորտի օպերատորներ

Առանցքային շահագրգիռ կողմեր՝ Շիրակի մարզպետարան, ՀՀ կառավարություն, ՄՖՀ-ներ/ դոնորներ, մասնավոր հատված

Նույնականացման՝ A_TR_07		
Անվանում: Քաղաքի փողոցների վերափոխում հետիոտնայինի		
Դասակարգում: Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում		
Նկարագրություն Հետիոտնային փողոցները քաղաքի այն տարածքներն են, որոնք նախատեսված են միայն հետիոտնային անցման համար, և որտեղով տրանսպորտային միջոցների անցումը մեծամասամբ կամ առհասարակ արգելված է: Նման մեխանիզմը նպատակ ունի հետիոտների համար ապահովելու ավելի լավ անցանելիություն և շարժունություն, բարձրացնելու տվյալ տարածքում գործարար/առևտրային գործունեության որակը և ծավալները և/կամ բարելավելու տվյալ միջավայրի գրավչությունը, այդ թվում՝ օդի նվազ աղտոտվածության, աղմուկի նվազեցման և անվտանգության առավել բարձր աստիճանի հասնելով: Այս գործողությամբ նախատեսված է հետիոտնային փողոցների բացումը Գյումրի քաղաքի կենտրոնում, բայց նախևառաջ անհրաժեշտ կլինի վերլուծել երթևեկության տեղաշարժի ազդեցությունը ինչպես շրջակա տարածքների, այնպես էլ գործարար/առևտրային գործունեության վրա, հատկապես ավտովարման ընթացքում կատարվող արագ առևտրի և առաքման ծառայությունների լոգիստիկ խնդիրների առումներով: Ներկայացված է առաջարկ, ըստ որի՝ քաղաքի կենտրոնի նոր հետիոտնային գոտին կզբաղեցնի Արագածի, Ռիժկովի և Աբովյան փողոցների երթուղիների և դրանց շրջակա տարածքը: Այդուհանդերձ, հետիոտնայինի վերափոխված գոտիների ճշգրիտ մակերեսի ու զբաղեցրած տարածքի հաշվարկը պահանջում է իրագործելիության առավել խոր վերլուծություն և խորհրդատվություն տեղական մասնագետների կողմից: Այս սխեման կարող է ընդգրկվել այլ գործողությունների՝ ներառյալ քաղաքաշինական պլանավորման և վերականգնման նոր սխեմաների մեջ, ինչպիսիք են արտանետումների ցածր մակարդակով գոտիները (A TR 08) կամ քայլելու և հեծանվային ուղիները (A TR 04), ինչպես նաև զբոսաշրջիկների համար նախատեսված հարմարությունների և փողոցային տեսարանների բարելավման պլաններում(A TR 05):		
Բնապահպանական կատարողական (համապատասխանություն ԿՔԳԾ-ի նպատակներին) SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների (տեղային և համընդհանուր աղտոտման նյութեր) ծավալների նվազեցում SO_AR Գյումրի քաղաքի սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ		**Առանցքային օգուտներ** • Սոցիալական՝ սոցիալական ներգրավվածության բարելավում, «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն, առողջության հետ կապված ռիսկերի նվազեցում: • Տնտեսական՝ տնտեսական ներառականություն: • Բնապահպանական՝ օդի որակի բարելավում և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում:
Կապիտալ ծախսեր (եվրո) 1,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 530,000,000	**Շահագործման տարեկան ծախսեր (եվրո)** 50,000 **Շահագործման տարեկան ծախսեր (ՀՀ դրամ)** 26,500,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • Քաղաքային բյուջե • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.		

Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարան, Տրանսպորտի բաժին	**Իրականացնող գործընկեր(ներ)՝** ՄՖՀ-ներ/ դոնորներ	**Առանցքային շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզպետարան, տեղական բիզնեսի սուբյեկտներ, ՀԿ-ներ, հանրային և մասնավոր տրանսպորտի օպերատորներ, ՀՀ կառավարություն, մասնավոր հատվածի այլ ներկայացուցիչներ

Նույնականացման համար՝
A_TR_08

Անվանում: Արտանետումների ցածր մակարդակով գոտիներ Գյումրի քաղաքի կենտրոնում

Դասակարգում: Չափորոշիչներ, ուղեցույցներ և կանոնակարգեր

Նկարագրություն

Արտանետումների ցածր մակարդակով գոտին այնպիսի տարածք է, որտեղ մոտորային տրանսպորտային միջոցների վարորդներից գանձվում է վճար՝ քաղաքի հատուկ գոտում նախատեսված որոշակի չափանիշներ չպահպանելու համար: Դրանք հիմնականում տեղակայված են քաղաքի կենտրոնում, որտեղ տրանսպորտային փոխադրամիջոցների հոսքն ամենաինտենսիվն է, իսկ գործարար հատվածի ու զբոսաշրջիկների հետիոտնային անցուդարձը՝ ամենախիտը:
Գոտիները կարող են ունենալ որոշակի ժամային սահմանափակումներ օրվա ընթացքում: Այս գործողության շրջանակում նախատեսվող գոտում վճարների գանձումը կմշտադիտարկվի և կիրականացվի հատուկ տեխնոլոգիայի կիրառմամբ: Ըստ տրանսպորտային միջոցի տեսակի՝ իրականացվող գանձումը կհամապատասխանեցվի հստակ չափորոշիչների, օրինակ՝ վճար կգանձվի «եվրո 6» ստանդարտներին չհամապատասխանող կամ աղտոտման բարձր ցուցանիշով դիզելային տրանսպորտային միջոցներից:
Նման գոտու համար առանձնացվող տարածքը ենթակա է մանրամասն հետազոտության: Այդուհանդերձ, ամենայն հավանականությամբ, այն կներառի Վարդանանց հրապարակի և/կամ Անկախության հրապարակի հարակից տարածքները:

Բնապահպանական կատարողական (համապատասխանություն ԿՔԳԾ-ի նպատակներին) SO_AQGHG Փոշու և օդն աղտոտող այլ արտանետումների (տեղային և համընդհանուր աղտոտման նյութեր) ծավալների նվազեցում SO_AR Գյումրի քաղաքի սոցիալական, տնտեսական, ֆիզիկական ենթակառուցվածքների և բնապահպանական ակտիվների ուժեղացված դիմակայունություն բնական աղետների նկատմամբ		**Առանցքային օգուտներ** • Սոցիալական՝ «կանաչ» վարքագիծ և իրազեկվածություն: • Տնտեսական՝ տնտեսական ներառականություն, տնտեսական ներդրումների ունեցած վերադարձեր: • Բնապահպանական՝ օդի որակի բարելավում և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում:
Կապիտալ ծախսեր (եվրո) 5,000,000 **Կապիտալ ծախսեր (ՀՀ դրամ)** 2,650,000,000	**Շահագործման տարեկան ծախսեր (եվրո)** 1,000,000 **Շահագործման տարեկան ծախսեր (ՀՀ դրամ)** 530,000,000	**Ֆինանսավորման տարբերակներ** • ՀՀ կառավարություն • ՄՖՀ-ներ և դոնորներ • Մասնավոր հատված
Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.		
Գործողության պատասխանատու՝ Գյումրու քաղաքապետարան, տրանսպորտի բաժին	**Իրականացնող գործընկեր(ներ)՝** Գյումրու քաղաքապետարան, Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին	**Առանցքային շահագրգիռ կողմեր՝** Շիրակի մարզպետարան, տեղական բիզնեսի սուբյեկտներ, ՀԿ-ներ, հանրային և մասնավոր տրանսպորտի օպերատորներ, ՀՀ կառավարություն, մասնավոր հատվածի այլ ներկայացուցիչներ, ՄՖՀ-ներ/ դոնորներ

Նույնականացման համար՝
A_TR_10

Անվանում: Քարշեյրինգի (ավտոմոբիլային համատեղված փոխադրման) քաղաքային մեխանիզմ

Դասակարգում: Կապիտալ ներդրում քաղաքի նոր ակտիվներում

Նկարագրություն

Քարշեյրինգի (համատեղ ավտոմոբիլային փոխադրման) քաղաքային մեխանիզմը մի կողմից միտված է ավտոմոբիլների օպտիմալ զբաղվածությանը՝ ցածր զբաղվածությամբ ավտոերթևեկների կրճատման միջոցով, մյուս կողմից՝ ավտոսեփականատիրության կրճատմանը՝ ավտովարձույթի խթանման միջոցով: Այս մեթոդը կոչված է՝ խրախուսելու ավտովարորդներին՝ առաջարկելու համատեղ ուղևորություն այլ մարդկանց, որոնց երթուղին կհամընկնի վարորդի ուղղության հետ կամ կունենա վերջինիս ճանապարհին մերձակա նպատակակետ:

Այս գործողության շրջանակում կներդրվի և կխթանվի մի մեխանիզմ, որը կընձեռի կարճ ժամանակահատվածներով ավտովարձույթի ճկուն հնարավորություններ: Խոշոր սխեմաներ գործարկող օպերատորները, ինչպին «Zip Car»-ն է, առաջարկում են վարձակալման հարթակներ առցանց հավելվածների միջոցով և տալիս են ոչ ֆիքսված տեղանքներով և նախնական ամրագրմամբ փոխադրումների հնարավորություն: Գյումրու դեպքում ընտրված սխեմայի հանրայնացումը կապահովվի լրատվության տարբեր միջոցների, բաժանվող գովազդային թերթիկների, հեռուստատեսության և ռադիոյի գովազդի և փողոցային գովազդային վահանակների, ինչպես նաև բիզնես գրասենյակներում անցկացվող գովազդային արշավների միջոցով՝ գործընկերների հետ դեպի աշխատավայր և դեպի տուն համատեղ ուղևորությունների խրախուսման նպատակով: Կկիրառվեն նաև այդ գործելակերպը աշխատավայրերում խթանող ծրագրեր, որոնք կխրախուսեն աշխատակիցների կողմից միմյանց ավտոմոբիլներ տրամադրվելը կամ այլ անվճար մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ ավտոմոբիլային խմբակների հնարավոր բացումը, որի անդամները կարող են վերցնել մեքենաներ կարճաժամկետ վարձակալման հիմունքներով՝ժամավարձով կամ օրավարձով: Այս գործողությունը կարող է ներառվել քաղաքային տրանսպորտային շարժունության որևէ այլ տիպի հավելվածի մեջ (A TR 11):

Բնապահպանական կատարողական (համապատասխանություն ԿՔԳԾ-ի նպատակներին)		**Առանցքային օգուտներ**
